

9(47-925)21

3.9.9

15-23

ՅԱԼԻԿԱՆ Հ 1961 թ.

լրաց,

9(47)21

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊԱՐԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

32.52

15-23

1920—1930

ՀԱՅ ՀԱՅ ՀԱՅ

A ^{III}
2534


(ՀԱՅՈՂԻԹՑՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԴՈԿԱՄԵՆՏՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՅՈՒՆ)



ՀԱՅՈՂԻԹՑՈՒՆ



—



Կ Ե Տ Տ Գ Ա Տ Տ 3 = 1 9 3 0 = 3 6 9 6 4 Ա 6

11848-47/3



Հրատ. № 1302

Գրասեպ. № 5154 (ր). Պատվ. № 484. Տիրամ 4000

Պետհրատի յերկըորդ տպարան Յերկանում.

Մ Ա Յ Ի Ս Լ

Լրացակ մայիսյան ապստամբության տասնամյակը։ Տասը տարի սրանից առաջ՝ Հայաստանի բանվորությունը, աշխատավորության և զինվորության մի խոշոր հատվածի հետ միասին, փորձեց խորտակել դաշնակցական, խմբապետական կառավարության լուծը։

Հայաստանի համարյա բոլոր գավառներում, բռնկվեց ու ծավալվեց ըմբոստացման հուրը, վառելով մասսաների սիրար նոր, զունեղ ու փայլուն հեռանկարներով։ Մակայն առաջին փորձը ձախողեց, մասսայական շարժումը պարտվեց և Հայաստանի հորիզոնների վրա նորից շողզողաց իր արյունոա փայլով մասունքի բիստական-խմբապետական դաշույնը։ Առաջին փորձն եր մայիսը, առաջին ծանր մկրտությունը մեր կուսակցության ու նրա շուրջը համախմբված մասսաների համար քաղաքացիակոն կովի բովում։ Մայիսյան ապստամբությունը վերջնականապես ճեղքեց «հայ ժողովուրդը» յերկու հակառակորդ բանակների՝ շահագործողների և շահագործվողների, ստեղծեց մի անանցանելի վիճ նրանց միջև, վերացնելով բոլոր տեսակի տատանումները, թերահավատությունները, անվճռականությունն ու անվորնշությունները։

Այսոր արդեն միայն անուղղելի ոպորտունիստներն ու բացարձակ հականեղափոխականները կարող են բացասել այն անժխտելի պատմական փաստը, վոր մայիսյան ապստամբությունը լայն մասսայական շարժում ե յեղել։ Նրա արմատները խոր թաղված եյին 1914—20 թվականների վայրիվերումներում, մնում եյին տարիների ընթացքում մասսաների մեջ կուտակվող հուսախարությունը, դժգոհությունը և ցասումը հայ բուրժուազիայի կուսակցության՝ դաշնակցության ու նրա վոճրագործ կառավարության հանդեպ։

Վորոնչ եյին մայիսյան ապստամբության պատճեները

Աջիատավոր գյուղացիությունը մատնված եր կուլակի, վաշխառույի, խմբապետի քմահաճույքին։ Ազգամիջյան պատերազմներըն ավերում եյին սահմանամերձ շրջանները, հրի ու սրի մատնում կամ տեղահանում բնակչությունը, սահմանները փակված եյին, արդյունաբերական ապրանքների ներմուծումը ցամաքած, Բագվին և Թիֆլիսին սպասարկող բանվորական ճեռքերը պարապ մնացած,

սահմանից այս կողմը Քաղցից, զրկանքներից և զյուդացու իրավագործից զբությունից ոպավելով, տիրով զատակարգերն իրենց ձեռքին եյին կենարունացնում հողերը, զաշնակ հանրապետության մեջ, խմբավեաները, որինքից բարձր գասելով, առանց փորհե ձեւվականությունների զյուդացիներին, զրկում եյին նրանց ապրելու վերջին հստավորություններից։ Դյուզի լավագույն աշխատունակ մասը հավաքված եր բանակում և կոտորվում եր սոհմանների վրա ու «ներքին թուրքի» գեմ մզգով անմերջ կափվերամ։

Բանակը բարոյակեցած եր կանոնավոր զրբերը արտահայտում եյին զյուդացիության տրամադրությունը Անկանոն զորքը՝ խմբերը գիտեյին միայն թալանել Սպայությունը դժոն եր խմբավեաններից ինչպես և բանակն առհասարակ դժոն եր խմբերից։

Բանվորությունը փոքր շերտ եր կազմում այն շրջանի Հայաստանում, կենուրունացած յերկաթուղու շուրջը Անտեսելի տնտեսական պայմաններում ապրելով, նա կրում եր ծեծն ու հայնոյանքը յենթարկվելով անտանելի հալածանքների Դաշնակների արհամարհանքն ու անարգանքը «մրունների» Նկատմամբ ավելի ևս շեշտվում եր նրանով, վոր հայկ. բուրժուազիան վոչ միայն չեր մտածում ստեղծել նոր արդյունաբերություն, այլև նպաստում եր յեղածիքայքայմանը՝ դնելով յերկիրը անտեսական հետազիմության ճանապարհի վրա։ Այս պայմաններում զարմանալի չե, վոր բանվորությունը լցվում եր դժոնությամբ և ստվար խմբերով զալիս, լրացնում կոմմոնիստական կուսակցության շարքերը։

Աշխատավոր գյուղացիության, բանվորության ու զինվորական մասսայի դժոնությունն անխուսափելիորեն հեղափոխական խմորման եր վերածվում, յերբ վրա հասած 1920 թ. ապրիլի 28-ին Աղբեցանի խորհրդայնացումը արագացրեց դեպքերը։ Բագլի ան կումից հետո Հայաստանը դարձել եր դինոմիտի սի պահեստ։ Մայնամեկյան տօնակատարությունն այս կայծօն էր, վորով ևս բռնկվեց։

Իրավացի յեր մեր կուսակցության Հայաստանի կոմիտեն, շեշտելով, վոր մայիսը պատահական, արմատազուրկ ապստամբությունն չեր։ Մայիսյան ապստամբությանը ուժ եր տալիս մասսաների ամենալայն համակրանքն ու մասնակցությունը։ Բացի այդ, կային մի շաբք նպաստավոր պայմաններ։ Աղբեցանի խորհրդայնացումը հստակոր եր զարձնում կարմիր բանակի ոգնությունը, իշխող կուսակցությունը՝ դաշնակցությունը կորցրել եր իր հավասարակշռությունը և շփոթի մեջ ընկել։ Աղեքսպուլում ապստամբներն ունեյին իրենց տրամադրության տակ զրահապատ գնացքը և վճռական նշանակություն ունեցող զորամասեր, յերկաթուղին համարյա ամբող-

ջովին նրանց տրամադրության տակ եր, գաշնակները չեյին կարող փորեե զգալի ուժ հակաղբել ապստամբներին, բացի մի քանի խմբերից:

Ապստամբության ընթացքը բարգացնող պայմաններն եյին՝ պարենի կարիքը, մենշևիլյան Վրաստանի գոյությունը, վորն աշխատում եր ամեն կերպ վիժեցնել նորասահեղծ խորհրդային իշխանությունը, Յերևանի և Եջմիածնի շրջանների ուժեղ կուլակության հավանական գիմաղբությունը և այն: Բայց այս պայմանները վճռական նշանակություն չունեյին և կարող եյին իրենց բացասական կշիռը հայտնաբերել միայն հետապայում: Բայց այդ, կարենը եր նաև այն, վոր ապստամբությունը հանկարծակի բերեց կուսակցական ղեկավարությանը: Նա բավարար չափով նախապատրաստված չեր նախորդ ամիսների ընթացքում քաղաքականորեն և կաղմակերպչորեն:

Գյուղացիության ու բանակի մեջ տարվելիք աշխատանքի վորոշ թերագնահատում կար անցյալում:

Աննպաստ եր նայե այն հանգամանքը, վոր մեր կուսակցությունը խոշոր ազգեցություն ձեռք բերելով, առանձնապես 1920 թ. սկզբներին, չեր կարողացել դեռ այդ ազգեցությունը կազմակերպչությունները ամրացնել: Կուսակցական կազմակերպությունները փոքրաթիվ եյին, մեր ազգեցության տակ գտնվող անկուսակցական մարմինները դեռ եյին ձևավորվում: Այս ամենով հանդերձ ուժերն ու հանգամանքները մեծագույն չափով հեղափոխության կողմն եյին և վճռական քաղաքականությունը կարող եր ապահովել հաղթանակը: Սակայն այդ վճռականությունը հանդես չբերվեց վոչ Արմենկոմի (կուսակցության Հայաստանի կոմիտեյի), վոչ ել ուղմահեղկոմի կողմից:

Այս բոլորի հետևանքը յեղավ հապաղումներն ու դանդաղումները: Մայիսի մեկից հետո, յերբ դեռ դաշնակ կառավարությունը չեր սթափվել ու չեր սկսել հավաքել իր ուժերը, ամենահարմար պայմաններն եյին ստեղծվել ապստամբության համար: Սակայն թե Արմենկոմը, թե Խաղմանեղափոխական կոմիտեն շարունակում եյին դանդաղել առաջինը՝ մինչև ամսի 5—6-ը, իսկ վերջինը՝ մինչև 10-ը, այն ժամանակ, յերբ հեղափոխության համար ամեն մի ժամը թանգ արժեր: Դաշնակցական կառավարությունը հետզետե ուշքի յեր գալիս, ցըռում պարլամենտը, հայտարարում բյուրոյի գիլտատուրան, զինում խմբապետ Սեպուհին, չեղոքացնում ու կանխում շարժումը Հարաքիլիսայի նման խոշոր ստրատեգիական նշանակություն ունեցող կետում:

Այդպիսով որ որի պակասում ելին հեղափոխական շարժման հաղթանակի շահնաերը, վարժնք մցւիտի 3—4-ին անհամեմատ ավելի մեծ ելին և անհամեմատ ավելի անվիճելի Հայաստանի կոմիտեի այն կարծիքը, զոր ապաստամբության համար անհրաժեշտ եր ժամանակ շահել և վոր յերկու շաբաթ հետո գրամբյունն ավելի նպաստավոր կլիներ, դա նրա կողմից թերահասումն եր ուժերի զառավորման, հատագումը կազմարուծում եր հեղափոխությունն ուժերը, վորից ժամանակ եր շահնում հականեղափոխությունը:

Ամսի 10-ին իշխանությունը վերցնելուց հետո, Ռազմիկեղկոմը անվճանանություն և հայանարերում Գյուղացիությունը չիմացափթե ինչ եր բերում իրեն Խորհրդայն իշխանությունը: Զինվորները, վորոնց հեղափոխական արամազրությունը վասվել եր ընդամենը մի քանի որվա ընթացքում, մի յերկու քաղաքական լոգունդով, անդորդության մատանված՝ թրջում եր զիրքերում, հորդ անձրևի տակ Բանավորական շտղակը բանակում բացակայում եր, իսկ սպայությունը մնացել եր ամբողջովին իր տեղում, կազմալուծելով ու քայլայելով բանակի ռազմունակությունը: Հականեղափոխությունն առանց նեղվելու, բացարձակորեն հավաքվում եր իր ուժերը հենց Ալեքսանդրում:

Սակայն, այս սխալներից ավելի ևս կարեոր ու վճռական նշանակություն ուներ այն, զոր Ռազմիկեղկոմը զանգազում եր հարձակման անցնելի Սկզբից և յեթ նա պաշտպանողական դիրք բռնեց պաշտակ կառավարության հանդեպ, անզիտանալով վոր ապստամբությունները միայն արագ ու աներենը հարձակմամբ կարող են հաղթեր: Այդ պաշտպանողական դիրքից բզինում եր նահանջի հողերանությունը, վորը համակել եր ապստամբության զեկավարներից մի քանիսին, վորոնք չունեցան բայլշեիկլյան հաստատակամություն՝ այնելու բոլոր կամուրջները: Խելդելու վտանգավոր մեծահոգությունը գեղափառ հակառակորդը: Ճիշտ եր Ազմենկոմը, յեթ արձանազրում եր, զոր «յեթե նրանք (Ռազմիկեղկոմը) լուրջ մտադրություն ունենալիս լինելին, ապա գեպերի ընական ընթացքով» նրանք պետք ե իրենց հաջողությունը դարպացնելին և ծավալելին մոտակա շըջանների վրա, կապվելին մյուս շըջանների հետ և նույնիսկ առաջ խաղային Յերևանի ուղղությամբ: Ապստամբության ժամանակ շահած բարոյական ու ռազմական գիտակցությունը, մասսաների հանդես բերած հերոսական անձնվիրությունը չոգտագործվեցին:

Հակառակ Ալեքսանդրի կուսակցական կազմակերպության պահանջներին ու պնդումներին, Ռազմիկեղկոմը շարունակում եր պահ-

սլանել, մինչև վերջին վարկյանը խաղաղ յեթի հույսն իր մեջ Փոխանակ անմիջապես շարժվելու Դարձվիսայի վրայով գեպի Դիլիջան, յերկաթզծով դեպի Յերեան ու փոխանակ կապվելու Կարսի ու Սարբարձիշի հետ, մեր ուժերն անզործության եյին մասնվել Ալեքսովում:

Ապստամբությունը պարտվեց Ալեքսովում, այս արդեն կանխորոշում եր նրա պարտությունը, Սարիգամիշում, Նոր-Բայալպետում և այլ շրջաններում: Դազախի ու Նոր-Բայալպետի զյուղացիական ռեղերվելու հասան այն ժամանակ, յերբ արդեն Ալեքսովում տեր ու տիրական եր դարձել Սեպուհը կորցնելով յուր բնական կենարոնը—Ալեքսովը, ապստամբությունը մտավ ցաք ու ցրիվ, անջատ, թե՛ հաճախ հերոսական պարտիզանական պայքարի շրջանը: Ողոտագործելով նույն Սեպուհի ուժերը սեակցիան կարողացավ ջախջախել մեկը մյուսի հետեւից հեղափոխական ջոկատները:

Մասաների հեղափոխական անփորձության, կամ կազմակերպությունների անբավարար կազմակերպվածության, իր դեկավորության սխաների և այլ որյեկտիվ պատճառների հետևանքով, պարտվեց մայիսյան ապստամբությունը, բայց պըոլետարիատի դեկավար բայլէկիցյան կուսակցությունը չընկճվեց ու ավելի սեղմելով իր շարքերը ձեռնարկեց նոր պայքարի գործը: Թանգ նստեց մայիսյան պարտությունը Հայաստանի աշխատավոր մասսաներին: յեթե մայիսաը հաղթեր, չեր լինի հայտաճակական վերջին պատերազմը, չեյին վողջակեզվի հայ բուրժուազիայի սեղանին տասնյակ հոգարավոր մարդկի չեյին ավերվի հարցուրավոր գյուղեր, չեր բնանջվի սահմանամերձ շրջանների հայ և թուրք զյուղացիությունը:

Խոշոր դաս յեղավ մայիսյան ապստամբությունը թե մեր կուսակցության և թե աշխատավոր մասսաների համար: Մայիսը մեր կացըք գասակարգային պայքարը իր իսկական գույներով, հիմնահատակ քանդեց ու սրբեց բոլոր տեսակի յերկմատությունները, կասկածներն ու նախապաշարումները, գիմակազերծ արեց դաշնակցության թե աշ և թե «Ճախ» թերը, հիմքից յերեան հանելով նրա ջարդարար, գաղանաբարո, այլանդակ հականեղափոխական գեմքը: Մայիսի սխաներով ու դասերով սովորեց մեր բանվորն ու աշխատավոր գյուղացին կուվել ու շեշտակի հարվածել գասակարգային թշնամուն: Վեց ամիս անց բարձրացավ, այս անգամ ավելի մտսայական և ուժին թափով և յեղբայրական կարմիր բանակի ոգնությամբ, նրանք խորտակեցին դաշնակ տիրապետությունը, գաղույնի ու մառզերի թաղավորությունը, փոխարինելով մուրճի և մանգաղի իշխանությամբ:

Այսոր, 10-ը առարի անց, սոցիալիստականան շինարարության բարդ, դժվարին հոյակապ շրջանում, դաշնակցական Հայաստանը պատկերանում և մեր նոր սերնդին իրեն հեռավոր անցյալի մշուշի մեջ կորչող մի հրեշտավոր յերազ։ Սակայն այն յերազ չեր, այլ գայան մի իրականություն, նույնպան ռեալ, վորքան ռեալ և զեսիս այսոր մեզ շրջապատող կապիտալիստական աշխարհը։ Մեր հեղափոխական սերդի պայքարով և արյունով են ձեռք բերվել սոցիալիզմի կառւցման այսորպի նախապայմանները նախկին ցարական Ռուսաստանի բոլոր մասներում։ Ռուսական հոկտեմբերից ծնունդ առած մայիսն եր, վոր հիմքից սասանեց կապիտալիստան կարգերը Հայաստանում և պատրաստեց նոյեմբերյան հաղթական արշավը, խորհրդայնացումը։ Մայիսի վորձով ու տրագիֆիաններով թափանցվում և և թափանցվելու յե մեր վողջ բարվորական ու աշխատավորական գյուղացիական մասսան, վորովինակ մայիսին սկսված գործը գեռ ավարտված չե. պայքարը շարունակվում և նոր պայմաններում, նոր ձեերով, նոր ավելի կատարելագործված ու հատուգենքերով։

ԱՐՄԵՆԿՈՄԻ ԿԱԶՄԸ



Կոստանդնուպոլիսի Հայկակ



Կառյան Ս.



Ալիք Նուռիքանյան



Մոավյան Ա.
(Ժամացած)



Ալբանիերդյան Ս.
(Գնդականարդյան)



Դուկասյան Դ.
«Ազարտակից» (ազանված)



Շահվերդյան Դ.



Տ.-Միմոնյան Տ.

ՄԱՅԻՍԻՆԻՑԵՐՆ ՏՈՒԾ ԵԵՐԵՎԱՆՈՒՄ

Հայաստանում բայլշեկիների զեկավարությամբ, 1920 թ. մայիս-մեկան տոնակատարությունները վերածվեցին հոկայական խաղաղ ցույցերի, վորից հետո և սկսվեց մայիսյան ապստամբությունը: Վորովես «Սպարտակ» կազմակերպության անդամ, այդ ժամանակ գտնվելով Յերևանում, փորձում եմ վերիշել թե ինչ եր ներկայացնում իրենից այդ որը՝ մայիսի 1-ին Յերևանը և նրա փողոցները:

Մայիսի 1-ը մեզ համար ուժերի գորատեսի որ պետք է լիներ. այսանդ պետք եր ավելի թեքեյինք մասսաների տրամադրությունը զեպի ձախութեամբ Մայիս 1-ի ցույցը միանդամայն ապացուցեց այդ հանգամանքը:

Մայիսի 1-ի առ. ժամի 8-ին, պիտի հավաքվեյինք Թարթանցյան փողոցի անկյունը, (մոտավորապես այժմյան կենտ. կոմ. շենքի դիմաց):

Նշանակված ժամին այդտեղ հավաքվում են յերկաթուղու և գարաժի բանվորները, իրենց զարդարված զրուղավիկներով, վորոնցից մեկում գտնվում եր զնդանը, բանվորը և զյուղացին: Գալիս եւ պըռպագանդիստական գրուպպան: Քիչ հետո միանում ե մեզ (նախորդ պատրաստված եր) արական գիմնազիայի յերաժշտական խումբը՝ ընկ. Միշա Յենգիբարյանի զեկավարությամբ: Նվազախմբի ներկայությունը բարձրացնում ե ընկերների տրամադրությունը:

Այդտեղից, մոտ ժամը 10-ին—11-ին «Էնտերնացիոնալ» և «Վարչավյանկա» յերգելով, նվագելով շարժվում ենք զեպի պարլամենտի շենքի դուռը, վորտեղ պիտի լիներ միտինզը: Մեր նվատակն եր միտինզը խլել դաշնակների ձեռքից և այդպես ել արինք:

Ահա խոսում ե դաշնակցական մի հոետոր. մենք ներքեից լոգունգներ ենք բաց թողնում, «կեցցե Խորհրդային Հայաստանը», «Կորչի Զանգիբասարի թալանչիների կառավարությունը», «Կեցցե 3-րդ հնատերնացիոնալը»: Մեր այս լոգունգներն ուժեղ արձագանք եյին գտնում մասսայի մեջ: Հոետորին լսող չկար: Նա զգալով, վոր իզուր և կոկորդը պատռում, հեռանում ե: Յենում ե մեկ ուրիշը. նրան ևս շվացնելով և «կորչի»-ներով փախցնում ենք. դուրս ե դալիս յերրորդը. մասսան նորից աղմուկ ե բարձրացնում, ներքեից գոչում. «կորչեն թալանչիները», «կեցցե բոլշևիկյան կուսակցությունը» և այլն:

Վերջապես արիրունի վրա յե յերնում ընկ. Սաոյպա Ալլահվերդյանը. նրա յերևալը, վորպես ճանաչված բայց կիկի, արդեն բավական եր մասսայի ուշագրությունը զրավիկու համար.

Ընկ. Ալլահվերդյանը իր հսկողութական տաղանդով և հնչեղ ձայնով իսկույն աիրում և ունկնդիրների ուշագրությունը Դաշնակներըն ել իրենց հերթին եյին աշխատում խանգարեք բայց դա չի հա-

ՍՊԱՐՏԱԿ ԿԵԶՄԱԿՆՊԱԼԹՅԱՆ ՊԵԿԱՎԱՐ ԿԵԶՄՈՒ ՅԵՐԵՎԱՆԻՒՄ



Խանջյան Ա.



Բաղդյան Արմենիակ
(Գնդական առարկան)



Վարդանյան Համո



Դավորյան Մհակ



Պետրոսյան Պետրի
(Նոր-Բայազետից)

Հողվում նրանց, վորովհնուն բացարձակ մեծամանությունը լարված ուշագրությամբ լսում եր նրան, բացի զրանից այնքան ել հեշտ չեր խանգարել Սայուպային, վորն իր ուժգին, մետաղյա ձայնով հեղափոխական համոգեցուցչի խոսք եր ասում:

Դեռ հիշում եմ նրա հետեւյալ խոսքերը (նա հայերեն լավ չտէրապիտելու պատճառով խոսում եր ոռւսերեն) «Ծնկնընթե՛ր, մում եք հանձնել ձեր բաղդը, մարդկանց, վորոնք իրականության մեջ պա-

բարում են թալանով, ավագակությամբ, իսկ այստեղեց լրաբար ճառ են տառմա, ցույց և տալիս մի շարք կառավարական անդամների վրա, վորմաք կանդնած եցին նրա մոտ՝ պատշտամբում:

Այդ ժամանակ խիստ աղմուկ են բարձրացնում զանակները, ճշմարտության խոսք առվեց նրանց մասին մասայի առջև Սահայն ելի նրանց չի հաջողվում լսեցնել Ալլահիվերդյաննին, և նու իր խոսքը լրիվ վերջացնում է, բացականչելով, Շիրքի ովագակների կառավարությունը, և կեցցել Խորհրդայինն Հայուսաւանը, և կեցցել Խորհրդայինն Անդրկովկասը, և կեցդե, անդրկովիկասյան ժողովուրդների յեղբայրական կազմը:

Դաշնակները նորից փորձում են խոսել, բայց չի հաջողվում. սահպված յեղան հայուսարարելու և միաբնակը փակ եւ, բայց մենչ հայուսարնեցինք վոր միաբնակը շարունակվում, և և այլանդոց շարժվում ենք թուրքական թաղը (ուր զաշնակները ավելարդ եցին համարել միտիգ գումարելը) և հակայտիան մասայի յերեք չորրորդ մասը զալիս և մեր յետեցից: Մենք կանգնում ենք Կոմիլին Փանտիխանի բուլվարում, վորանդ խոսում են մի քանի ընկերներ՝ Թավաքալյանը, Ստամբուլյանը և մի քանի բանվոր. այդանդոց ցույցը շարժվում և գեափ զարած. այստեղ նույնպես խոսում են միշտնի ընկերներ և մոտ ժամը 4-ին միաբնակը փակված ենք հայուսարում և ցրվում:

Ցույցի հաջողությունը սլարդապես ապացուցեց, վոր դաշնակցական կառավարությունը կորցրել եր հողը լայն մասսաների մեջ, վոր աշխատավորությունը չեր վատահում նրան, բանվորների, զյուղացիության ու զորքի անքավականության չափն անցել եր սահմանից:

Մայիսյան ուժեղ ցույցերից հետո, մի շարք դավանանքում ծայր առավ մայիսյան շարժումները, վոր զեկավարվում եր կոմմունիստական կուսակցության կողմից:

Մայիսյան ապստամբության հետևանքով Հայուսաւանի կոմկուսակցությունը կորցրեց իր լավագույն ընկերներին, հանձինս Ալլահիվերդյանի, Ղուկաս Ղուկասյանի, Մուսայիլյանի, Սաբուխանյանի, Բատիկյանի և մյուսների:

Դրանք հայ աշխատավորության անդրանիկ զոհերն են:

15. Ին ժարտի 30 թ.

Բագու.

Ա. Պագարյան

1920 ԹՎԻ ՄԱՅԻՍԻ 1-Ը ՑԵՐԵՎԱՆՈՒՄ

Կարելի յե տունց սխալանքի տոել վոր Ցերեանի բանվորությունն առաջին անգամ տանեց մայիսի մեկը, այդ միջադրային բանվորական որը, նրա գասահարդային բովանդակ իմաստով, 1920 թվին Այդ ժամանակ Հայաստանի Կոմմունիստական կազմակերպությունները ղեկավարող Հայաստանի Կոմիտեն—Արմենկոմը, տպրիլի 18-ին կայացած նիստում վորոշել եր մայիսի մեկին կուսակցության ընդհատակյա կազմակերպությունները և բանվորական կազմակերպությունների համակրանքն ու կապը կոմմունիստական կուսակցության հետ չդրսեորել վորովհետեւ Արմենկոմը պատրաստվում եր համահայաստանյան ապստամբության կազմակերպման Խակ մեր կուսակցության կանխաժամ փողոց գուրս գալը, թեկուզ խաղաղ շքերթով, կարող եր հզի գառնալ ապագա ապստամբական շարժումը վտանգող հալածանքներով ու կազմակերպությունների հայտնաբերությամբ։

Այս տեսակետն ուներ Արմենկոմը մեր կուսակցության մայիսի մեկի տոնին մասնակցելու նկատմամբ։ Սակայն այդ չեր նշանակում, թե Հայաստանի Կոմմունիստական կազմակերպությունները չպետք ե մասնակցելին, թեկուզ դաշնակցության ձեռքով կազմակերպված բանվորական շքերթներին։ (Դաշնակցության որոք Հայաստանում մայիսի մեկին միայն արհեստակցական միությունների շքերթներ եյին լինում և վոչ բանվորական ցույցեր ու բողոքներ)։

Արմենկոմի վորոշմամբ պետք եր կոմմունիստական կուսակցության համակրող և հարող բանվորական մասսաները կոմմունիստական դրոշակների տակ առնել, տալով նրանց համապատասխան լոգունգներ։

Այս ուղղությամբ Արմենկոմը ապրիլի 20-ից ձեռնարկում և համապատասխան կազմակերպչական-տեխնիկական աշխատանքների։

Այդ ժամանակ գարաժում աշխատող ընկ. Գ. Դանելյանի, Հայկ Զարգարյանի, Ռայկակու և ուրիշ կուսակցական ընկերների միջոցով, պարզվում ե, վոր գարաժի 300 բանվորները մտադրված են և վորոշած փողոց գուրս գալ կոմմունիստական կուսակցության դրոշակներով և լոգունգներով։ Նույնպիսի տեղեկություններ ստանում և տպագրական բանվորների կողմից, վորոնց մեջ կուսակցական ակտիվ աշխատանք եյին տանում ընկեր Սամսոն Աստվածատրյանը և հանգուցյալ ընկ. Գարեգինը (զոհվեց փետրվարյան ավանտուրայի ժամանակ)։ Ապրիլի վերջերին շիկանում են և յերկաթուղագծի ու Ցերեանի կայարանի բանվորների տրամադրությունները։

Մի խոսքով, սկսած ապրիլի 25-ից Յերևանի սակավաթիվ բանվորության ներկայացուցիչները, թե կուսակցական կազմակերպիչների միջոցով և թե անձամբ սկսում են պաշարել Արմենկոմի գաղտնի բնակարաններից մեկը՝ վորտեղ տողերիս գրողն եր ապրում և Արմենկոմի մյուս անդամ ընկ. Հ. Կոստանդանը (Մայարսկայա փ. № 4 նկուղ աջ թեկի վրա), և պահանջում մեզնից դրոշակներ, լողունգ, թռուցիկներ և հոետորներ:

Բանվորական մասսաների այդ հախուռն, բարձր հեղափոխական արամագրությունը մարեցնել չեր կարելի, և ահա թե ինչու Արմենկոմը ապրիլի 25-ի նիստին վորոշում եւ ու հանձնարարում կուսակցությանն անցնել մայիսի մեկին բանվորական ցույցի զլուխը և գեկավարել այդ ցույցը: Ցույցի կազմակերպումը և գեկավարությունը հանձնվում ե ընկ. ընկ. Սերգո Մարտիկյանին և լ. Հովհաննիսյանին: Ընկ. Մարտիկյանը իրեն հատուկ վոգերությամբ և թափով ձեռնարկում ե գրոշակների, կոմմունիստական կուսակցության լիդերների նկարների պատրաստման և մի շարք այլ ձեռնարկությունների: Խնձ և հանգուցյալ Ա. Մելքոնյանին հանձնարարվում ե, վորպես «Գյուղացու ձայն» վերտառությամբ շարաթաթերթի խմբագիրների՝ հերթական համարը նվիրել մայիսի մեկին, ու մի քանի հեղափոխական բրոցուրներ բաց—թողնել այդ որը:

Սկսած ապրիլի 26-ից մինչև 30-ը Մայարսկի փողոցի հիշատակած նկուղը մի նախապատրաժտական վոգեշունչ, խանդավառ աշխատանքի տեղ եր դարձել:

Որական տասնյակ մարդիկ մտնում եյին այդ նկուղը, կարում, գրում, թարգմանում, սրբագրում, նկարում, պատմում, նախագծեր կազմում: Մի խոսքով շնչում և ապրում գալիք որերի պայծառ հեռանկարներով:

Ապրիլի յերեսունին վերջացած ե նախապատրաստական աշխատանքը. Բագվում արդեն Խորհրդային իշխանությունը, Կարմիր բանակը հաղթանակի փայլուն դավինիներով են պսակված: Այդ ամենը ելեկտրականացրել ե Յերևանի ճահճոտ, նեխված մթնոլորտը, թևավորել կոմմունիստներին և բանվորներին ու ցնցել քաղքենու սպեկուլյանտի թմրած ուղեղը:

Ապրիլի 30-ին Արմենկոմի նիստը նվիրված եր քաղաքական գրության և հաջորդ որվա շքերթին: Վորոշվում ե այդ որը մի ընկերոջ ուղարկել Ղազախ, Արմենկոմի անդամ և Ղազաղի լիազոր ընկ. Շ. Ամիրխանյանի միջոցով կապ հաստատելու Կարմիր Բանակի ու Աղքաբաջանի Խորհրդային իշխանության հետ: Մայիսի մեկի նկատմամբ առաջարկվում է կոմմունիստական կազմակերպության և մեր կուսակցության համակիր բանվորների հավաքատեղին ընտ-

ըել Աստաֆյան և Թարխանյան փողոցների անկյունը, խամավել դաշնակցական մասսայի հետո Հավաքությունը ժամը 8-ին և նշանակվում:

Մայիսի մեկին առավագայն 8-ից, կուսակցական ընկերները և բանվարները սկսում են հավաքվել Թարխանյան և Աստաֆյան փողոցների ուղղությամբ:

Ժամը 9-ին բազմությունը խանում է, սկսվում և աշակերտական յերաժառիչությունը նվազածությունը, այդ յերաժառախումը իսպան եր ընկել Պ. Յենգիբարյանը, զարը դիմումադիմյի աշակերտ եր և իր ընկերներին սովորեցրել եր «Ենակենացիոնալի» յեղանակը ժամը 4-ին Թարխանյան փողոց են գալիք գարաժի բեմնատար ավտոմոբիլները գարգարված ծաղիկներով, կարմիր կտորով, նողափոխական լոգունուներով և նկարներով: Բենակիր ավտոմարդիկներից մեկի վրա գարգնոց եր արբիւծ՝ քուրայով ու աշխատող բանվրներով: Այս ավտոմարդիլը սիմվոլիկ արաւելայտությունն եր աշխատանքի իշխանությամբ:

Ինը և կեսին հավաքվում է մոտ հազար հոգուց բաղկացած մի մասսա, զար սկսում և շարժվել «Ենակենացիոնալի» նվազածությունը գեղի գաշխակցական պարլամենտի շենքը: Շքերթի առջևից զնում էլին Արմենիամի անդամները, ուղեկցությունը յերկու բանվրի, վորոնք կըում եքին նոր, չափաղանց շքեղ պատրաստված, կոմմոնիքատական կուսակցության գրաշակը, զորի վրա դրված եր՝ «Խուսափանի Կոմմոնիքատական Կուսակցության Հայաստանի կոմիտե»: Աստաֆյան փողոցի վրա չհասած դաշնակցական կառավարության նախագահ Ա. Խատիսյանի բնակարանը, տեսնում ենք նրան պատշաճամբում միշտը պաշտպաների և զինվորականների հետ:

Շքերթի չափաղանց գեղեցիկ արտաքինը և առաջ ընթացող մասսայի կուռ շարքերը գրավում են Խատիսյանի և նրա հետ կանգնած խմբակի ուշաղրությունը: Խատիսյանը կարծում է, վոր դաշնակցության մասսան և անցնում, սակայն միքանի ամիսներ անց Խատիսյանի անձնական աղյուսանան ինձ պատմում եր, վոր յերը մենք բոլորս և Ա. Խատիսյանն մոտից տեսնաք կոմմոնիքատական գրոշակներն ու մասսան, Խատիսյանն ահարեկված, գողալով մտավ պատշաճամբից իր սենյակը, սառը ջուր խնդրեց և հեռախոսով հայտնեց Ռուբեն Փաշային, (գաշնակցության զինվորական նախարար և Հայաստանի փաստական դիկտատոր) խնդրելով համապատասխան միջոցներ ձեռնարկել:

Ծուրքն փաշան հավաքելով անմիջապես դաշնակցության բյուրոյի նիստը, վերջնիս սանկցիայով հրամայում և Ցերեանի կայազորի գնդացիք խումբը գուրս հանել գրավել մի շարք հենակետեր և պատրաստ լինել զինվորական մարմինների հրամանին:

Շքերթը Աստաֆյան փողոցը փողողելով թռուցիկներով, լրագրերով և բրոցյուրներով, համսում և պարզամենտի շինքը, վորի առջեկանգնած և յիշն դաշնակցական արհեստակցական միությունները:

Կոմմունիստական խոշոր մասսայի կազմակերպված հանդես գուլ խլրոտում և առաջ բերում դաշնակցական միությունների և դըլիակարապես զորքի շարքերում:

A III 2039

Հարյուրավոր մարդիկ և զինվորներ թողնում են իրենց միություններն ու զինվորական միավորները, մասնում կոմմունիստական մասսայի շարքերը, պահանջելով թռուցիկներ ու լոգունգներ ու վառ զրույց սկսելով մեր ընկերների հետ: Միքանի բողեյի ընթացքում դաշնակցական զորքի հեծելազորի ու հրետանիի ձիերը դարդարվում են մեր լոգունգներով և շքահանգույցներով: Դաշնակցական զրոշակների տակ կանգնած մասսայի շարքերն աստիճանաբար սկսում են նորանար, իսկ ընդհակառակն կոմմունիստական մասսայի շարքերը՝ խտանար, Դաշնակցության արհետակցական միությունների դեպի մեր կողմն անցնող բանկության և զորքի տրամադրությունը գառնում են ծայր աստիճանի լարված և հեղափոխական:

Պարլամենտի պաշտամբից միտինգը բացում և Խառիսյանը մի դեմագոգիկ ճառով:

Նա հայտարարում է ընկ. Որջոնիկիձեյի խեղաթյուրված հեռագիրը Զանդեզուրի և Ղարաբաղի դեպքերի մասին, աղդաբարում Միացյալ Հայաստանը ճանաչելու մասին Ահարոնյանից ստացած հեռագիրը, ճղնելով դեպի կոմմունիստաները և հատկապես դեպի Խորհրդային Ռուսաստանն առաջ բերել թշնամական տրամադրություն:

Խառիսյանից հետո խոսք ե տրվում Վրաստանի հայտնի մենշևիկի Խսիդոր Ռամիշվիլուն, վոր յեկել եր Թիֆլիսից մի հատուկ հանձնախումբի հետ, «Փաղաղ» կերպով լուծելու Հայաստանի և Նախիջևանի մեջ ծագած թյուրիմացությունները ի. Ռամիշվիլին իր ճառում մենշևիկներին հատուկ կեղծավորությամբ, խոսում և ազգերի համերաշխության, դեմոկրատիայի և քաղաքակրթության վտանգ սպառնացող բոլշևիկների մասին:

Ռամիշվիլու ճառից հետո խոսք ե առնում Արմենկոմի անդամ ընկ. Ստեփան Ալլահվերդյանը, վորի յերևալը պատշգամբում առաջ ե բերում կատարյալ խանդավառություն և ծափերի տարափ: Ըսկ Ալլահվերդյանը հուետորին հատուկ վարպետության և պերճախոսությամբ հարձակվում ե թե դաշնակցության, թե մուսալաթիսաների վրա. Նա հիշեցնում ե բոլորին Անդրկովկասի այդ յերեք կուսակցության դավաճանությունը ոռևսական հե-

դափոխության հանդեպ, անվերջ կոստրածներն ու կոփվերն այդ նույն կուսակցությունների ձեռքով կազմակերպված և վերջացնում ե իր ճառը իրեն շրջապատճ մառզերիսաների բառնցքների ու մառզերների հարվածների առակ, կոչելով, «Կեցցե Կոմմունիստական ինտերնացիոնալը, կեցցե Կոմմունիստական հեղափոխությունը»:

Ընկ. Ալլահվերդյանից հետո խոսում են մի շարք դաշնակցական և եսեր հոեւսորներ:

◀ Կոմմունիստական գրոշակների առակ համախմբված մասսան չըսպասելով գաշնակցականների միախնդիր վերջին, թուղնում և այդ միախնդր, առանձնանում և շարժվում գեղի Տեր-Դուկասյան փողոց: Պարլամենտի շենքից մինչև Տեր-Դուկասյան փողոցը բաւրվարի ողակով ձգված զորքերը մեզ հանդիպելիս հարհոյում եյին իրենց սպաններին, գաշնակցությանը և հայտնում իրենց համակրանքը մեր ցույցին ու լոգունգներին:

Կոմմունիստաների շքերթը հասավ Փանախանի հրապարակը ու կանդ առավ այսաեղ. յերը կոմմունիստաների միախնդր շարժվում եր պարլամենտի շենքից գեղի Փանախանի հրապարակը, արժե հիշատակել ։ Չուխտ ու կենտ եսերների դիրքը: Միքանի ես-եր տեսնելով կոմմունիստաների և բանվորական խոշոր մասսայի առանձնանալը դաշնակցության միախնդիր, միքանի քայլ անցան կոմմունիստաների հետ, հետո փոշմանեցին և վերադարձան գեղի գաշնակցականները:

Վարչակի բնորոշ փաստ և այդ, բնորոշագրելու ես-երների և հատկապես Հայաստանի ես-երների յերերուն և տատանվող գրությունը:

Կոմմունիստաների միախնդր Փանախանի հրապարակում բացում ե ընկ. Պ. Ստամբոլյանը, խոսում են մի շարք բնկերներ, վորոնցից մեկը և թուրքերեն:

Մինչ այդ, տանից փողոց գուրս չեկած և ահարեկված թուրքերը յելել եյին փողոց՝ լսելու կոմմունիստական կուսակցության ներկայացուցիչներին:

Փանախանի այգում կոմմունիստաների միախնդր վերջանում և ժամը 4-ին, վորից շքերթը ցրվում ե:

Դաշնակցականները կատարելապես պարտված, առանց զորահանդեսի, մի կերպ վերջացնում են իրենց զժուույն միախնդր և անմիջապես բյուրոյի նիստ հրավիրում՝ «քնննելու» ստեղծված դրությունը:

Նիստից հետո գաշնակցական կառավարությունը յերկու կոմմունիստ բնկերոջ միջոցով հայտնում է, զոր նա ցանկանում և բանակցել Արմենկոմի ներկայացուցիչների հետ:

Արմենկոմը ուղարկում է տեսակցության ինձ և ընկ. Ալլահվերդյանին: Մենք ժամը 3-ին ընդունվում ենք Հ. Ոհանջանյանի

կողմից, վորը ցանկանում եր լսել մեր տեսակետը Ղարաբաղի և Զանգեզուրի գրության մասին, ու Խորհրդային Խշանության ննարավորությունների մասին Հայաստանում:

Մենք հայտարարում ենք, վոր Հայաստանի բոլոր կնճռոտ հարցերն ընդունակ ե լուծելու միայն Խորհրդային Խշանությունը և մեր՝ կոմմունիստներիս կարծիքով դաշնակցության խշանությունը դեպի անդունդ և տանում Հայաստանի բանվորությանը և գյուղացիությանը:

Հ. Ոհաննջանյանը ձևանալով համակիր Խորհրդային Խշանության, հայտնում ե իր «անհատական» կարծիքը Խորհրդային Բժիշկանության անհրաժեշտության մասին, և «խոստանում» ե համոզել կառավարությանը՝ «հանձնելու» Խշանությունը կոմմունիստներին։ Դրանով ել վերջացավ մեր զրույցը Հ. Ոհաննջանյանի հետ։ Ոհաննջանյանի կարինեաից մենք վերադարձանք Արմենկոմի գաղտնի բընակարանը (Աստաֆյան փ. Քնքուշյանի տունը), վորտեղ Արմենկոմի նիստին զեկուցեցինք Ոհաննջանյանի հետ տեղի ունեցած բանակցությունների մասին։

Արմենկոմը շատ ճիշտ գտավ, վոր այդ բոլորը հերթական պրովոկացիա յե դաշնակցության կողմից, և վոր անհրաժեշտ ե ամբողջովին անցնել ընդհատակյա աշխատանքի, կազմակերպությունները պահպանելու դաշնակցության ապագա անխուսափելի հալածանքներից։

Եերեկոյան ժամը 6-ին, նիստից հետո Քնքուշյանի բնակարանն են գալիս ընկ. ընկ. Դ. Շահվերդյանը, և Ս. Մարտիկյանը, վորնիստից հետո գնացել ելին քաղաք՝ ժանոթանալու մեր միտինգի թողած ազգեցության մասին։

Ըսկերները հայտնում են, վոր պարլամենտի դահլիճում բացվել ե դաշնակցության փակ միտինգը (իսկ այդ միտինգին Արմենկոմի վորոշմամբ մեր կազմակերպությունը չպիտի մասնակցեր) և վոր դաշնակցականները ամենախայտառակ պրովակացիայով աշխատում են վարկաբեկել մեզ և առավոտյան միտինգի ազգեցությունը նսեմացնել։

Քնքուշյանի բնակարանում գտնվող ընկերները վորոշում են ընկ. Հ. Կոստանյանին և ինձ ուղարկել յերեկոյան միտինգին խոսելու և հականարդած տալու դաշնակցության պրովակացիային։ Առաջինը խոսում ե ընկ. Կոստանյանը, վորից հետո յես եմ խոսք առնում։ Յես իմ ճառը սկսում եմ Ղարաբաղի գեպքերի մերկացումով, հաղորդում եմ Ոհաննջանյանի գիմելը Արմենկոմին, նրա «խոստումները». ճառի ընթացքում, ավելացնում եմ, թե յերկար չի կարող տեսել դաշնակցության խշանությունը և կոմմունիստներն են, վոր

իշխելու յեն դաշնակցության գիտակների վրա։ Այս նախադասությունից հետո առանձակ մասով երիտասաներ, կառավարության անդամներ, հարձակվում են ինձ վրա՝ կինչի դատաստան անելու՝ բայց ինձ հաջողվում և անվտանգ հեռանար:

1-ն Մայիսի
1923 թիվ

Դ. Տիր-Սիմոնյան

ՀԱՅՈՎԱԿԻԹՅԱՒՆՆԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԽԱՍՏԱԿԱՆ ԱՌԽԱՍՏԱԿԱՆ ԵՐԻՑ

Յես Յըրեվան յեկա 1920 թ. փետրվար ամսին, մինչև այդ 1919 թ. Յերեվանի փոստ հեռագրատան յերկու գործադրուներից հետո փախել եցի նախ Լենինական, այստեղից ել բանտարկիվելուց խուսափելով, փախա յեկ տեղափորձեցի Սանահին-չեղոք դանայում վորովե հեռագրիչ Ահարոնեան ծածկանուով։ Սանահինում աշխատելիս, կապված եցի ընկ. Խուբեն Վուկանյանի, Վարդան Գևիորգյանի Գեղորդ Յուղացյանի հետ, վերջին յերկուուր յերկաթուուզու հեռագրի մեխանիկներ ելին։ 1919 թ. Յուլակ Միքոզյանի միջոցով տեղափոխվեցի Յերեվան, կայարանում հեռագրչի պաշտոնով։ կարճ ժամանակում կայարանում սահմանուով տեղադրեցինք ուժեղ բջիջ։

Այդ բջիջի կազմից հիշում եմ հետեւյալ ընկերներին՝ Վարդան Գեղվորգյան, Մամիկոն Կորիմաղյան, Գյորգի Սայդանով, Արամ Մանուչարյան, Խօրայել Գյուրգիջյան, Շաքրո Մինասյան, Վարդան Աքրհամյան—Ստեփան Սարգսյան, Կարապատ Խաչատրյան, Խրիստափոր Բեկուշելի, Առուստամ Ղազարյան, յերկու ուսու հեռագրիչներ, Մարգո յեկ Դորա, Գեղվորդ Հակոբյան, Համբարձում Աղաջանյան, Վարդան (ազգանունը չեմ հիշում)։

Յերեվան գալուց առաջ կուսակցական կոնֆերանսը վերջացած եր. մենք իսկույն կապվեցինք Յերեվանի կոմիտեյի հետ, վորի կազմի մեջ կայարանի բջիջից անցա յես. Յերեվանի կոմիտեն 1920 թ. փետրվարից մինչև մայիսի վերջը ունեցել ե հետեւյալ կազմը՝ Թավագալյան, Աղասի Խոնջյան, Սերգո Մարտիկյան, Գագեղին Հարությունյան, (տպագրական բանվոր), Գեղվորդ Դանելյան (գարաժից) յեկ Արամ Մանուչարյան։

Մեր ժողովները լինում ելին Գարեգին Հարությունյանի տանը—Թարխանյան (Քնունի) փողոցի տուպիկում։ Այդ ժողովները լինում ելին շատ գաղտնի և զգուշ. Ըսկ. Գ. Հարությունյանի մորը հանձնարարում ելինք բակը հսկելու։

1920 թ. գարնանը Աղբբեջանի խորհրդայնացումից դեռ առաջ,

մեր կուսակցությունը ուժեղացրել եր յուր աշխատանքները. Ցերեանի կոմիտեն ասլրիլի վերջերին շարաթական 3—4 նիստեր եր ունենում, իսկ կազմակերպության անդամներն այդ որերին հավաքվում ենին ամեն որ Բաթանյանի փող. № 4տունը, պատրաստվում ՄԱՅԻՍՅԱՆ մեկը տօնելու:

Մայիսի մեկի տոնը մեծ հաջողությամբ անցկացրինք. մասնաների արամագրությունը գեղի մեզ եր. Այդ որը լելույթ ունեցան Ազիգրեկովի հրապարակում Պետրոս Պետրոսյանը, Պարույր

ԵՐԵՎԱՆԻ ԸՆԴՀԱՏՎԿԵՍ ԿՈՄԻՏԵՅԻ ԿԱԶՄԸ



Մարտիրոս Ս.



Խանջյան Ա.



Մանուչարյան Ա.



Գարգարյան Հ.



Հարուրունյան Գար.



Դանիելյան Գև.

Ստամբուլյանը յեկ մի լատիշ բանվոր. Պետական թատրոնի մոտ խոսեցին դաշնակցականները, վրաց մենշևիկներից իսկուր Ռամիշիլին, վոր յեկել եր դաշնակցականների հետ դաշն կապելու՝ իրենց մոտեցող «բոլշևիկյան վառնողի» գեմ կովելու համար:

Դաշնակցականները այդ որն իրենց զենք եյին ծառայեցնում ընկ. Հուսեյնովի Ղարաբաղին և Զանգեզուրին վերաբերվող հեռագիրը, աղավաղելով այդ հեռագրի բովանդակությունը. Մեր կուսակցության կողմից դուրս յեկավ խոսելու, դաշնակցականներին ու

մենշվարկներին՝ պատասխանելու ընկ. ԱԼԱՀՎԵՐԴՅԱՆՆ, վորն իրեն հասուն կրակու ճառով խոսեց գաջնակցության վարած քաղաքականության մասին, պատասխանեց իսիդոր Ռամիշվիլուն, խոսեց 2-րդ ինտերնացիոնալի գավաճան քաղաքականության մասին, առևլով. «2-րդ ինտերնացիոնալի յաւր գեղնած դրոշակը դրել ե բուրժուազիայի փոստի տակ»:

Ընկ. Սայուլայի ճառը մեծ ազգեցություն թողեց, յեզ գաշնակցականների մեջ շփոթություն առաջացրեց. Կրանք սափազված յեղան զորքը իսկույն զորանոց տանել. Նրանք չեյին սպասում, վոր մենք այնպիսի հաջողություն կունենանք: Հայաստանի մյուս վայրերում, նաևմանավանդ Լենինականում ավելի մեծ հաջողություններ ե ունեցել մայիսի մեկը: Մեր կուսակցության կազմակերպություններն արգեն պատրաստվում եյին ապստամբության մայիսի 2-ին—3-ին. Ցերվանի կոմիտեն վորոշեց առաջարկել բոլոր կուսակցական ընկերներին զինվել:

Մայիսի 6-ից սկսվեց ձերբակալությունները—չբանապրկված ընկերները խոկույն ընդհատակյա աշխատանքների անցան: Արմենկոմից և Յերվանի կոմիտեյից համարյա վոչ վոք չեր բանտարկված: Մի խումբ բանտարկյանների տարան Սեան, վորոնք հետազոտման վեղափոխվեցին Յերեանի բանտը Մնացած ընկերները հավաքվում եյին նիստերին՝ քննելու ստեղծված դրությունը: Մայիսյան ապրամբությունը ճնշելուց հետո ընկ. Ալահվերդյանը և Մարտիկյանը համարյա որեկան մի տեղ եյին փոխազրկում: Արմենկոմից, այդ յերկու ընկերներն եյին ակախվ աշխատում:

Մայիսի վերջին և հունիսի սկզբին բանտարկվեց ընկ. Ալահվերդյանը. արդեն Արմենկոմից վոչ վոք չեր մնացել և մի քանի ընկերներ ընկ. Ալահվերդյանի համաձայնությունը վերցնելով, բանտից կազմեցինք ժամանակավոր կոմիտե, վորի մեջ մասն ընկերներ Աղասի Խանջեան, Վահան Շահգելյան, Հարություն Հասրաթյան, Անն Հովհաննիսյան, և Արամ Մանուչարյեան: Կազմեցինք «Կարմիր խաչ»՝ բանտարկյաններին ողնելու: Մեր ժողովները տեղի յեր ունենում նախակին խորածափ ակումբի շենքում, վորն այն ժամանակ հիվանդանոց եր. այդտեղ աշխատում եր Վահան Շահգելյանը: Մենք անցել եյինք գաղտնի դրության. ընկերների մեծ մասն արդեն բանտարկվել եյին:

Բանտառմ ունեցինք բանտային կոմիտե հետևյալ կազմով՝ Ալահվերդյան, Մուսայելյան, Մարտիկյան, Ղարիբջանյան, Ա. Մանուչարյան. Կոմիտեյի քարտուղարությունը, գանձապահությունը և դրան կապը հանձված եր ինձ. բանտարկված եյինք մոտ 90—95 հոգի՝ Հայաստանի գանձապան վայրերից:

Դատավարության որերին եր, յերբ ոդոսառուի 12-ին դրսից մեր ընկերներից նամակ ստացանք, վորոնք զգուշացնում եյին «դատավարության գնալիս զգույշ լինել ուժեղ պահակ պահանջել, թե չե կարող եյին պրովակացիայի յենթարկելով, անկյունից խփելու»: Այդ փորձը ընկ. Արտաշես Մելքոնյանի գնդակահարելուց հետո ունեցինք: Այդ որը ժամը 7-ին բանտապետը կանչեց ընկ. ընկ. Ալանիվերդյանին, Մուսայելյանին և Դարիթջանյանին, ու հայտնեց, վոր հավաքեն իրերը և գան բանտի զրասենյակը. նրանց հարցին, թե ինչո՞ւ, ո՞ւր են գնալու, բանտապետը պատասխանեց, թե անհայտ ուղղությամբ: Այդ բավական եր, վոր մենք ամեն ինչ հասկանացինք: Յերբ մեր ընկերները վերադարձան՝ իրերը հավաքելու, մենք նրանց արգելեցինք գնալ, հայտնելով այդ մասին բանտային վարչությանը:

Այդ զիշեր մենք մեր ընկերներին շավինք, վոր տանեն: Գիշերը խորհրդակցությունից հետո ընարեցինք մի զեկավար մարմին ընկ. Մինչյան կիպարիս, Նալբանդյան Լևոն, Խարբանդարյան Վաղինակ Սերգո Մարտիկյան և յետ Իսձ հանձնարարից կազ պաշտպանել զրաի հետ. Առավույան ընկ. Յերզնկյան պետք ե բաց թողնելիքներ: Ընկ. Յերզնկյանը համառում եր, չեր ուղում գուրս գալ, ասելով, վոր յեթե մեր ընկերներին տանում են գնդակահարելու, չեմ դուրս դա. մենք համոզեցինք, վոր նրա դուրս գալը անհրաժեշտ ե. մի հեռազիր ուղարկեցնինք թիֆլիզ ընկ. Ապանապ Մասլյանին Հակոբ Հակոբյանի հասցեով—հետեւալ բովանդակությամբ—«Մայոպան մահամերձ ե, դրությունը լուրջ—Մաթո». ՍԱԹՌ ստորագրությունը դրեցինք ընկ. Ա. Մարտիկյանի խորհրդով. նա ասեց, վոր ընկերները կհասկանան:

Ոգստոսի 13-ին մինչև ժամը 2-ը մեզ մոտ վոչ վոք չեկավ. ժամը 3-ին մեզ մոտ լցվեցին մատուցերիսաները, միլիցիոներներ և զինվորներ—թվով մոտ 70 հոգի ուղերձի միլիցիայի քննիչ Դաստիարյանի զիսավորությամբ, դմերը փակած բանակցում եյինք մենք վերեկ հարկից, նրանք բակից. բանակցությունները տեսեց մոտ մեկ և կես ժամ և վոչ մի արդյուք չտվեց: Մենք կատեզորիկ կերպով մերժեցինք դուռը բանալ. նրանք կացինով դուռը կորեցին, ներս մտան և սկսեցին նորից համոզել մեր յերեք ընկերներին տար. Մենք մերժեցինք և պահանջեցինք կրակ բաց անել մեզ վրա: Այդ ժամանակ ընկ. Ալանիվերդյանը խլեց միամտաքար կանդինած ընկերոջ ձեռքից կամերայի դռան բալանին, դուռը բացեց և յուրահատուկ համարձակությեամբ հայտարարեց, վոր ինքը գնում է մեռնելու, նրան հետեւեցին ընկ. ընկ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆԻ և ԴԱՐԻԹՋԱՆ-

Աղոստոսի 14-ին առավոտյան ժամը 4-ին այդ յերեք ընկերներին տարան և Քանաքեռի ճանապարհին գնդակահարեցին:

Այդ որը մի հեռազիր ևս ուզարկեցինք Թիֆլիս, նույն հասցեյով հետեւյալ բովանդակությամբ—«Սայուպան մեռավ, դրությունը լուրջ է, ձեռք առեք միջոցներ ՍԱԹՈ»:

Աղոստոսի 15-ի առավոտյան տարան ընկերներից յերկորդ խումբ.—Վարդան Գեորգյանին, Արմենակ Գալստյանին, Դարսից շափեր Լևոն Հովհաննիսյանին և Ալեքսանդր Զմշկյանին:

Մյուս որը Աղոստոսի 15-ին Թիֆլիս ուզարկեցինք 3-րդ հեռազիրը—«համաճարակը շարունակվում է, անհրաժեշտ և շատապ միջոցներ ՍԱԹՈ»:

Մինույն ժամանակ ընկ. Լևոն Հովհաննիսյանին հաջողվեց հեռազրատանից (նա այնտեղ աշխատում եր) կապվել Թիֆլիսում Լեզրանի միսիայի հետ, և հայտնել նրանց իրերի գրությունը. Լեզրանի միսիան անմիջապես ճնշում և գործ գնում Թիֆլիսում գտնընդող Զամայյանի վրա. Նա զարով Յերևան, գնդակահարումը դադարեցնում է:

Այնուհետև բանտառմ քեզրեսիաները շարունակվում են, ճաշեր բերդիներին բանում են: Խոկ նոյեմբերի 20-ին, թե 21-ին 18 ընկերների կանչում են և հայտնում, վոր տանում են Ախտա: Այդ նշանակում եր, վոր պետք և 18 հոգու ևս գնդակահարեցին. այդ համոզմունքով և արամագրությամբ մենք դուքս յեկանք գեպի Ախտա:

Ախտա գնացողները հետեւյալ ընկերներն եյին (1. Թավաքայան Մնացական, 2. Աղասի Խանջյան, 3. Արաքս Մուրագյան, 4. Լիպարիս Միջյան, 5. Լևոն Նալբանդյան, 6. Փորժիկ Իշխանյան, 7. Արամ Մանուչարյան, 8. Սաթո Զոլախյան, 9. Սաեփան Խուդագրյան, 10. Ալեքսանդր Լազարյան, 11. Մնացած 8 հոգուն չեմ հիշում):

Ն. Ախտայում մեզ պահեցին մինչեւ դեկտեմբերի 3-ը. դեկտեմբերի 3-ին հասանք արգեն խորհրդային կարմիր Յերևան:

Ա. Մանուչարյան.

ԱԼԵՔ-ՊՈԼ

ՄԱՅԻՍՅԱՆ ԹՐԵՐԸ ԱԼԵՔ-ՊՈԼՈՒՄ

Արմենկոմի ցուցմունքներին մենք բավականաչափ սպասեցինք:
Դեռ 1920 թ. ապրիլի 30-ին, յերեկոյան կուսակցության կո-
միտեն Մուսայելյանի մասնակցությամբ, քննելով հետեւյալ որը
սպասվող կարելիույթյունների խնդիրը, միաձայն յեկավ այն
յեզրակացության, վոր մայիսի 1-ի յերթը խաղաղ բնույթ պետք է
կրի: Իսկ յեթե գաշնակները փորձ կանեն զինված ուժ գործ դնել
մենք աշխատելու յենք միջադեպեր չառաջացնել և միայն ծայրա-
նեղ դեպքում, յերբ խաղաղ լիկվիդացիայի բոլոր միջոցները կսպառ-
վեն, ոտիպված կլինենք մարտահրավերն ընդունել: Այսպես եր բո-
լոր ընկերների միաձայն կարծիքը:

Մայիսի 1-ից հետո պարզ յերեաց, վոր մոտակա որերում
ապստամբությունն անխուսափելի յե, հակառակ նույնիսկ մեր
ջանքերի՝ հետաձգել այն ճիշտ ե, մենք ևս կողմնակից յենք իշխա-
նության անհապաղ զրավման և ահա թե ինչու մենք տեսնում
ենքնք, վոր ապստամբությունն անխուսափելիորեն լինելու յե, մի-
որից կամ թե մի շաբաթից հետո միենույն ե: Մինչդեռ գաշնակ-
ները վոչնչացնում և թուլացնում եյին պարենմթերքների պահեստ-
ները, կազմակերպվում եյին, իսկ այդ անորոշ դրությունը անպայ-
ման քայլայիշ կերպով եր ազգում բանակի վրա, վոր կազմակերպ-
ված դուրս գալու փոխարեն, հետագայում, անխուսափելիորեն
հանդես դալու միջոցին կարող եր թալան ու բոնություններ գոր-
ծադրել: Թաշնակների ձեռքով պարենպահեստների թալան տալը
մենք հաստատել եյինք:

Այսուհետեւ, մենք հետաձգելու և ձգձգելու վոչ մի անհրաժեշ-
տություն չեյինք տեսնում, ինչպես խորհուրդ եր տալիս մեզ Ար-
մենկոմը, քանի վոր ուժը մեր կողմն եր գանվում. իսկ Արմենկոմի
առաջարկած ապստամբության ծրագիրը (պլանը) (ապստամբու-
թյունը՝ սկզբում իջևանում, այսուհետեւ Թիվիջանում, այսուհետեւ
Ղարաքլիսայում, Աղեքպոլում և այլն, հետևում թիվունքը պահած
լինելու նպատակով), մենք հեքիաթ և ֆանտազիա եյինք համարում:
Այս բոլորի մասին մենք հայտնել եյինք Արմենկոմին. նախազգու-
շացնում եյինք, վոր գաշնակները փորձում են դրահապատ գնացքը:

զրավել և խնդրում եյինք զրահապատը ձեռք ձգելու փորձ անելու գեպքում, մեղ թույլատրվի հականարված տալ և զրավել իշխանությունը, սակայն Արմենկոմը մեղ հրահանդեց. «Միշտն հիվանդ ե», փոր կնշանակեր իշխանությունը զրավելուց յետ պահեցեք ձեզ, ութե նունիսկ զրահապատը հանձնելու անհրաժեշտություն լինի:

Դրանից հետո, մայիսի 7-ին Արմենկոմի կողմից Ալեքսանդր յեկան ը. ը. Դր. Տեր-Սիմոնյանն և Արտաշես Մելքոնյանը և Ալեքսանդրում և Յերևանում իրերի գրության մասին արած փոխադարձ ինֆորմացիաներից հետո, միաձայն վորոշեցին իշխանությունը զրավել: Դրա հետ Դր. Տեր-Սիմոնյանը ասաց, փոր իրենց լիազորությունների համաձայն, իրենք Արմենկոմի ներկայացուցիչները վավերացնում են իշխանությունն ձեռք ձգելու մասին արած մեր վորոշումը: Այստեղ ևեթ կազմակերպվեց Հեղկոմը և նշանակումներ յեղանու:

Այս ասածներիցն արդեն մասամբ պարզ է, փոր զրահապատը չեր հրահրում, առաջ չեր մղում գեպքերը Բայց և այնպես առաջ կբերեմ զրանի լրացուցիչ տվյալներ: Շարժումն ինքնըստինքյան նախապատրաստվում եր գեպքերի որյեկտիվ ընթացքով, մասնավանդ 1920 թվի առաջին կիսին Ազգաբարձրաց 1920 թվի սկզբներին, ազգայնական կոփմերի մշտական վտանգը, առանձինայ կուլակ տարրերի և վերին խավերի վարքագիծը, փորով թալանի եյին տալիս ազգաբնակությունը, գաշնակցության բանվորական և հողային քաղաքականությունը և վերջապես Ազգբեջանի խորհրդացնացումը: Յետ ինքս, ակտիվ մասնակցող լինելով, զրահապատի մասին իմացա մայիսի 1-ից մի շաբաթ առաջ, յերբ ինձ հրայիթեցին զինվորական կազմակերպություն, իսկ մասսաներն իմացան միայն միայնպի վերջը, մայիսի 1-ին, ըսկ. Մուսայելյանի Սեերսկի գորանոցների առաջ միայնպում իր ճառով գուրս գալուց հետո Մինչդեռ զրանից առաջ յերթին մասնակցում եր մի քանի հազար (5000) բանվոր, զինվոր և քաղաքացի. իսկ՝ գաշնակների հետեւց գուգանեռ փողոցներով գնում եյին մի քանի հարյուր խամսութպան: Յերթի հենց սկզբին, միայնպին հանդես յեկան բանվորները, զինվորները ու մեր ընկերները. նետում եյին լոգունքներ՝ «կորչեն գաշնակները», «Կեցցե կոմունիստական կուսակցությունը», «Մուսաֆաթն ընկափ, հերթը գաշնակներինն ե», «կորչն ազգայնական պատերազմներ ստեղծող կառավարությունները», «Կեցցե Խորհրդային իշխանությունը» և այլն:

Այս լոգունքներին դիմավորում եյին ընդհանուր վոգեվորությամբ, ուսացի կանչերով և ովացիաներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄՔԵՂԿՈՄԻ ԿԱԶՄԸ



Ավագ Նուրիջանիստիան



Մուռայելյան Ս.
(դնդակահարգված)



Մելքոնյան Ա.
(դնդակահարգված)



Գոգունց Ա.



Տ.-Մահմալյան Ա.



Տ.-Միմոնյան Դ.



Ուլիբեկյան Լ.



Պետրոսյան Պիտիկ



Սարգսյան Գ.

Մայիսի 1-ի առավոտյանը, յերթից զեռ առաջ, գաշնակները չափուշին ուղարկում են շրջելու քաղաքը. նա հայտնում եր, թե Խորհրդային Ազգային Հայաստանին պատերազմ է հայտարարել: Չափուշին կանայք գլխավոր փողոցում ծեծում են:

Զնայած հրամկազմի մի մասի (մասնավորապես գնդապետ Կորպանովի) կողմից գործադրած ճնշումներին, զինվորները փողոց թափեցին ցուցարարներին ընդունած: Յեվ անա այդ բոլորից հետո, յերբ միտինդն արդեն վերջացել եր, հրապարակ և զալիս Մուսայելյանը բնին ընկ. Մուսայելյանը գրանից հետո մի քանի անգամ ասել եր, վոր նո հարկադրված եր հանդես գալ, խռով գիտցիսինայի անհրաժեշտության մասին, վորովիեան իրենից առաջ գուրս յեկար զինվորները չափազանց սուր կերպով ելին արտահայտվում և ընդեմ դիցիպիլնայի: Այսպիսով ընկ. Մուսայելյանը միտինդին գուրս գալով սանձում եր մասսային և փոչ թե գրգռում: Դրանից հետո պարզ է, վոր գրահապատը չեր շտապեցնում դեպքերը, այլ ավելի շոււա գործում եր բանվորների և զինվորների ճնշման առակ:

Մուսայելյանը մինչև մայիսի 1-ը գրահապատ դնացրի հրամանատարն եր: Հեղիսմբ նրան նշանակեց Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակի հրամանատար: Մուսայելյանը անձնվեր և ազնիվ աշխատող եր: Շնորհիվ իր բանվորության և իր անձնական հատկությունների, նո բանվորների և զինվորների սիրելին դարձագի: Մուսայելյանը Հեղիսմի անդամ եր:

Ազիսը ապստամմության հոդին եր: Նո Արմենիոմի Ավելպուի կուսակցության կոինաեցի և Հեղիսմի անդամ եր: Հալածանքը, ձերբակալությունը և փախուստը ավելի ևս ժողովրդական դարձրին ընկ. Ավիսին՝ կուսակցական և անկուսակցական բանվորական մասայի աշքում:

Կորդանովը մինչև մայիսի 1-ը հեծյալ գնդերից մեկի հրամանատար եր. իշխանության գրավումից հետո ապատամբյալ բանակի շտաբի պետն եր: Մայիսի 1-ի որը Կորպանովը թույլ չուվեց հեծելագնդի զինվորներին փողոց գուրս գալ և ցուցարարներին միանալ, իսկ մի քանի որից հետո նույն Կորպանովը ապստամմր բանակի շտաբի պետ դարձագի: Խորամարկել և պրովակատորը լինելով, նո կարողացավ, ինչպես հետո պարզվեց, քայլայել մեր ծրագրներն և բոլոր մեր նախադումների մտաին հայտնելիս և յեղել գաշնակներին:

Գեներալ Խաչատուրովը գաշնակների ժամանակ կայագորի պետն եր: Ապստամմության որերին Խաչատուրովը վորոշ պաշտոն չունեն դրամած: Խաչատուրովը քաղաքականությանը ուսար լինելով հանդերձ, չեր, հավանում գաւնակներին, սակայն միենաւըն ժամա-

նակ իրրե դաշնակներին հետ ծառա, չեր կարող յերևակայել, վոր կարող և ապստամբություն և իշխանության զբայում տեղի ունենալը ֆեռ մայիսի 1-ին Սևերսկի զորանոցների առաջ, նա հազորդում եր և ինքորում եր մեղ՝ կառավարության դեմ լորունակներ չարձակել և ինչպես ինքն ասում եր, իրեն անհարմար դրության մեջ չձգել Սակայն մեկ անդամ մեղ հետ միանարով, Խաչատուրով այրեց իր հետեւց կամուրջները և իր բաղզը կապեց մեզ հետ:

Իշխանության զբայումը հարբեցրեց զեկավարներին: Զանազան պաշտոններ զբայող պատասխանատու ընկերները՝ զավատական կոմիսար, Փամբիլիցիապետ և այլն վոչչչով իրենց չեյին զգացնել տալիս. քաղաքում չեյին յերեւամ և մշտավես նատած եյին կայարանում կամ զբանապատում: Խորհրդային շնորհարության մեջ փորձառություն չունենալով, նրանք չեյին իմանում, թե ինչից սկսեն, իսկ վոր ամենազդավորն ե աշխատանքի չեյին լծվում:

Հեղկումը թմբած եր և թույլ նրա կազմակերպչական աշխատանքը քաղաքում սահմանափակվեց ընկերներին այս կամ այն աշխատանքի նշանակելով, բայց հեղկումը միջոցներ ձեռք չտուակ տոիպերու այդ աշխատակիցներին, վոր մի վորեն գործ շինեն, ապարատը դնեն, կամ գոնե մի փոքր իրենց շորոհը ցույց տան: Կապ եր պահպանվում Ղարսի հետ (ճիշտ ե թույլ կապ), սակայն զրեթե վոչ մի կապ չկար մեղ շրջապատող զյուղերի և շրջանների հետ, փորտեղ դաշնակներն ուժեղ կերպով կազմակերպվում եյին:

Ղարաքիլիսայի կամ Յերևանի վրա առաջ գնալու նախկին մտադրությունը շիրագործվեց. վիճում ելին թե գեպի վեր կողմը առաջ խաղալ Մինչդեռ Ալիքպոլի շուրջը ողակը նեղանում եր: Մեր մի փոքր զրաբանումը Ղարաքիլիսայի լծով զբավեց մի կայարան (անունը չեմ ճիշում): Այդ կայարանը ռազմական նշանակություն ուներ: Յեզ ահա Կորգանովը հեռագործ հրամայում ե զորախմբին, Մուսայելյանի անունից, թողնել կայարանը և հետ դար Հետապայում պարզվում ե, վոր Մուսայելյանը այդպիսի հրաման չեր ավելի Պարզ ե, վոր այդ բանի մեջ կորդանովը պրովակաւատորի դեր եր կատարում: Յեթե բռնվում եյին գաշնակների գործակալները, հաղորդագրությունների և նամակների հետ միասին, այդ բոլորը տանում եյին կորդանովի մոտ, իբրև շտաբի պետի, վորը հարց ու փորձ եր անում ձերբակալվածներին, նայում եր հաղորդագրություններն և այլն: Հեղկումը ուշքի յեկավ Մայիսի 12-ին, յերբ զբանապատի և Սեպուհի զորամասերի միջև կովկի տեղի ունեցավ և այդ որն առաջին անգամ խոսք յեղավ բանակի գլխին վճռական անձնավորություն ունենալու անհրաժեշտության մասին: Խոսք յեղավ նաև արշավելու անհրաժեշտության մասին (Ղարաքիլիսայի

կամ Յերեանի կողմի, չեմ հիշում): Միենույն ժամանակ գաշնակները բանգաների հետ թալանի եցին տալիս պարենավորման և սերմանապահնեամները շրջաններում, և ավելի ու ավելի առաջ եցին զալիս զեղի Ալեքսանդր, զբավելով հարեան գյուղերը: Այսպես եր մեր պարտությունը նախապատրաստով զործերի վիճակը:

Միուս շրջաններում յեղած շարժումների մասին ձշղրիտ և արժեքավոր տեղեկություններ չեմ կարող տալ: Մենք այն ժամանակ կազ աւնենք Դարսի հետո: Մենք գիտեցինք այնաեղի ապաստմբության և ամրոցը զբավելու մասին: Սակայն տարածում և թույլ Հեղկոմն իր ժամանակին զբանապար չուզարկեց՝ քաղաքը վերջնականացնե զբավելու համար, վորպեսի այնուհետեւ մի ճակատ, ուժենացինք մի ճակատ, ուժեղացնելինք մեր ուժերը և հոգամասը՝ այս կամ այն զործովությունների համար:

Արմենկոմը զեմ եր Ալեքսանդրում իշխանությունը զբավելուն, վորովհետեւ ինքն Արմենկոմը պատրաստված չեր և չեր կարող իրեն յերեակայել մի այնպիսի զրություն», վոր Ալեքսանդրի բանվորները և կոյագորը մեր կողմը լինեցին անցուծ: Արմենկոմը Ավիսին համարում եր ատրփող, վոգեսրող և մեր ուժերը զերազանցնող: Հատկապես Արմենկոմի վրա ազգեց այն հանգամանքը, վոր մեր կարեփոր հաղորդագրություններից մեկը ուղարկված եր ընկ. Սաթո Զուլախյանի միջացով, վորը բանավոր կերպով ևս հաղորդել եր Արմենկոմին Ալեքսանդրի զրության մասին: Արմենկոմը չեր հավատացել և այս ինֆորմացիային, քանի վոր Սաթո Զուլախյանին ել ելին «վոգեսրփող» համարում:

Ի՞նչո՞ւ ուրեմն Արմենկոմը նախապատրաստված չեր: Իմ խորհին համոզմունքն ե, վոր Արմենկոմը հեռու յեր կանոնած բանվորական և զինվորական մասսաներից: Յերեանի խանութպանների մանը բուրժուական մասսան Արմենկոմի համար ընդհանրապես մասսայի պատրաստականության չափանիշ՝ եր հանդիսանում: Մյուս կողմից՝ Արմենկոմը յենթագրում եր հեղափոխությունը կոտարել չափած—ձևած կերպով նախ՝ ապատամբություն Քարքանսարայում, այնտեղ անմիջապես մտնում են ոռուական կարմիր մասերը Դապախից: Այսուհետեւ այդ թիկունքի վրա հենվելով, ապատամբում և Դիլիջանը, այնտեղ անմիջապես մտնում են ոռուական կարմիր մասերը Դապախից: Այսուհետեւ այդ թիկունքի վրա հենվելով, ապատամբում և Դիլիջանը, այնտեղ ել նունակես մտնում են Քարքանսարայից ոռուական մասերը և այն և այն. այլ կերպ առած, Արմենկոմը յենթագրում եր քաղաքացիական կովի ամրող քեռք գնել ոռուական կարմիր բանակի վրա: Արմենկոմը փորձ եր անուն նույնիկ կանգնեցնել և կասեցնել Ալեքսանդրի շարժումը, վոր ժողովրդական տարերային բնույթը եր կրում: Հաշիվը մտածված և ձիշտ չեր:

Դաշնակցական (այսպես կոչված կանոնավոր) գորքը ամբողջովին մեր կողմն եր Միայն խմբավետների բանդաներն ելին մեր դեմ արամազրված:

Աֆիցերությունը չեր կարող տանել խմբավետներին և պարտիզանական բանակին և սպաները ճնշող մեծամասնությամբ միացան մեզ:

Տաճկահայերի մասսաները մեր դեմ ելին, և դա հասկանալի յէ. նրանք գեռ զնում ելին դաշնակներից կաշառված հին ղեկավարների յետելից: Միուս կողմից դաշնակները կոմունիստների և Քեմալի դաշնակցության մասին տարածած պրովակացիաներով, թե կումունիստները մատղիր են Տաճկիներին կանչել Հայաստան և այն, կարողացան այդ տաճկահայերի անկազմակերպ մասսան զի՞նել մեր գեմ:

Յեթե տեղական հայերը, բանվորներն ու զինվորները միայն խորհրդային իշխանության մեջ ելին տեսնում ազգայնական պատերազմների լիկվիդացիաների հնարավորությունը, ապա տաճկահայերը դաշնակցական պրովակացիայի ազգեցության տակ, իրենց դրություն վերականգումն պատկերացնում ելին տաճիկների, իրրև իրենց դարավոր Թշնամիների հետ պատերազմելու մեջ Յեթե սրան ավելացնելու լինենք նաև Տաճկահայաստանի հարցը, պարզորոշ կլինեն տաճկահայերի նման գործելակերպի պատճառները:

Վորպեսզի ավելի պարզ լինի Ալեքպոլի ապստամբության լիկվիդացիայի պատկերը, առաջ կրերեմ դարձյալ մի քանի մանրամասնություններ: Յերբ մայիսի 12-ին զրահապատի մեջ խոսք յեղագի կամ Ալիբրեշտանի կողմը նահանջելու անհրաժեշտության մասին, յես ասացի, վոր դժվար թե բանակը մեզ հետ նահանջելու լինի, քանի վոր նա պրոլետարական մասսա չի, կազմած լինելով հողին, չի անցել քաղաքացիական կովի դպրոցը և այն: Յերբ մայիսի 13-ի ուշ գիշերը Հեղիկոմի նիստին նույն հարցն եր դրված, յես արդեն վճռականորեն դեմ արտահայտվեցի հետևյալ նկատառությունը: յես հավասար աեղեկալ գործակություններ ունեյի, վոր մեղանից հինգ վերստի վրա գտնվող զյուղերը գրավված են դաշնակներով: յես զգում եյի, վոր մեր մեջ մի դավաճան կա (թեպետ այն ժամանակ և յերկու ամիս ել դրանից հետո յես չեյի կարծում, վոր այդպիսին հանդիսանում ե կորցանով) և ահա այդպիսի պայմաններում յես չեյի ցանկանում ըսկի գնալ և զորքը կորսայան մատնել: Այդ մասին յես ասացի Ալիսին, Թր. Տեր-Սիմոնյանին և այլոց: Ապստամբության լիկվիդացիայից հետո յես իմացա, վոր 13-ի լույս 14-ի գիշերը Պոլիգոնի վրայով Ալեքպոլ եր մտել 150

մարդուց կազմված մի խումբ, վորն առաջին գաշնակյական խումբն եր, վոր գրավել եր քաղաքը՝ Սյդ մասին մենք ինարիկ չգիտեցինք և չեյինք յենթագրում։ Մայիսի 13-ի դիշերը հաստատվեց ինձ մոտ յեղած տեղեկաթյունները։ Քաղաքից մի քանի վերստ հետավորության վրա բոլոր կողմերից իրենց ուժերն առաջ քաշող գաշնակները ազգանշանի բակեաներ եյին բաց թողնում։

Սեպտեմբերական գրահապատից յերկուուր կրելով յերկաթուղու ճանապարհով չեր առաջանում։ Իր ուժերի զինավոր մասը նա շարժում եր մեր ձախ թեր շրջափակելով և մտավ Աղեքպոլ նրանից հետո, յերք քաղաքը դրավիկել եր զյուղերից մոտած խմբերի ձեռքով։

Հետ նայելով անցած ճանապարհը, խիստ գատելով բոլորին և ինքս ինձ, յետ գալիս եմ այս յեղբակացության։

ա) Ապատամբությունը մի ժողովրդական շարժում եր։

բ) Արմենկամը քաշըում եր, վորավ գաշնակներին ճանապարհություն եր տալիս կազմակերպվելու և պաշարները վաչնչացնելով մեզ սովոր առաջ կանգնացնելու։ սովոր վոր մեր միակ թշնամին եր։

գ) Հեղիսմի տարտամբությունը, նրա անփորձությունը, անվճռականությունը պակաս չափով չնպաստեցին ապատամբության միկրոգիային։

դ) Սյդ ապատամբության շուրջը յեղած բոլոր խոսակցությունները, մասնակիցների և ժամանակակից կուսակցական անդամների փոխադարձ նախատիմաքնները, մասնակիցների և կազմակերպողների հասցեին, այդ ամենը պարագային հետևանքն եյին, քանի վոր շարժման հաջողության գետքում հիասթափության տեղիք չեր լինի, տեղի չեյին ունենալ նաև հարձակումները և ինքնարդարացման և այլոց գատապարտելու փորձերը։

Ա. Տեր Ասմակյան

1922 թ. հունիսի 17 Յերևան

ՀՈՒՃԵՐ ՔԱՂԹԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՐՁԱՆԻՑ

Դեռ նոր եր կազմվել դաշնակ կառավարությունը, յերբ մասսայական գժգոհություններն իրենց զգալ տվին։

Յես հիշում եմ 19 թ. դաշնակցական պարլամենտի վերընտրությունները Անդինականի գավառում։ Անդապատճեմ կազմակերպված գյուղացիական միության կենտրոնը, կոմմունիստների աղդեցության տակ, վորոշում ե բոյկոտի յենթարկել պարլամենտական ընտրությունները։ Անգավառի շատ գյուղեր ամբողջությամբ հրաժարվում են ընտրություններին մասնակցելուց։ Պարլամենտական

ընտրություններին գյուղացիական միության թերթը («Գյուղացիական միություն») իր տիրաժով բացառիկ տեղ եր բնուում (3000—3500 որինակ), Գյուղացիական միության ազիտատորներն ու կազմակերպիչները հսկայական աշխատանք տարան ընդում Դաշնակցության և նրա ընտրություններին, բավական ե հիշել Արթիկ գյուղը, մինչ այդ դաշնակները պարծենում եյին, վոր Արթիկն իրենց ամենալաւուրջ հենարանն ե, սակայն նույն Արթիկ գյուղում ծեծում ե գուրս են քշում գյուղից Դաշնակցության պարլամենտական թեկնածու և կոմիտեյի անդամ Թալանյանին (վորն իսկապես աչքի ընկնող թալանչի յեր, այդ շատ լավ գիտեն Լենինականի գյուղացիները):

Դաշնակցությունը շատ քիչ ձայն ստացավ գյուղերում, և ձայն տվողներն ել տերակերները, խանութպաններն ու կուկակներն եյին.

ՔՅՈՎ. ԹՒՇԻՆԻ ԶՐՅԱՆԻ ԹԱԶՄ; ԵՊԿՈՄԻ ԿԱԶՄԻ



Փանյան Ա.



Կուրդինյան Ն.



Մովսիսյան Ա.

այսպիսով գյուղի նեույ մեծամասնությունն արձագանքեց բոյկոտի մեր լողունդին: 19 թ. հունիսի 18-ն եր, Լենինականում հրավիրված եր գյուղացիական միության 2-րդ համագումարը, գյուղերեց յեկել եյին մոտ 200 պատգամավոր և բազմաթիվ հյուրեր: Համագումարի առաջին խակ նիստում հայտնաբերվեցին արամադրությունները՝ կոմմունիստական և գաշնակցական: Քվեարկության ժամանակ Դաշնակցության ցուցակը տապալվում ե՝ ստանալով մի քանի ձայն միայն, այնունետեւ դաշնակները սկսում են խանգարել. համագումարը վորոշում ե բոլոր դաշնակներին, հետացնել համագումարից, և չնայած նրանց սպառնալիքներին՝ համագումարը ցըել նույնիսկ զենքով բայց և այնպիս շվացների ու ծիծաղի տարափի տակ հեռացվում են դաշնակները, գլխավորությամբ դաշնակցական գավառային կոմիսար Լոռեցյանի, դաշնակցական գավառային կոմիտեյի անդամների և մյուսների: Համագումարը շարունակելով իր աշխատանքները՝ ընդունեց մի շաբթ բանաձեռ և միության ծրագիրը՝ կազմված մեր կողմից: Թե այդ ծրագրից և թե

ընդհանրապես զյուղացիական միությունից, գմբախտաբար վոչ մի փաստաթուղթ չի մնացել բայց յես շատ լավ հիշում եմ ծրագրի առաջին նախադասությունը, ուր ասված եր—«Շիրակի զյուղացիական միությունն իր նպաստակն և դնում տապալել դաշնակցական կառավարությունը ու հիմնել բանվորների ու զյուղացիների խորհուրդների իշխանություն»:

Կարծեմ 19 թ. հուլիս ամիսն եր, հրավիրված եր յերկաթուղային բանվորների կոնֆերանս: Գյուղացիական միության կողմից ներկայացուցիչը այդ կոնֆերանսին միակ կոմմունիստ պատղամափոր ընկեր Վախտանգի հետ միասին քիչ անախորժություններ չըպատճառեց կոնֆերանսը զեկավարող դաշնակցականի զայրացած հայտարարությունը—«Գյուղացիական միության արեխավոր ներկայացուցիչն ուղղակի փորձանք գուրս յեկավ մեր զվահին, լավ կլիներ թույլ չըտայինք նրան ներկա լինել մեր կոնֆերանսին»: Բայց մեր ներկանացուցիչը մինչեւ վերջը մասնակցեց կոնֆերանսին ու բավական խմբում առաջացրեց այնտեղ: Այս բոլորը դալիս են առելու, վոր կոմմունիստաների աշխատանքների համար բավական մեծ հող կար և վոր մայիսյան դեմքերն անխուսափելի յելին:

Դաշնակցության որոք ինտելիգենցիայի, հատկապես նրացարքային մասի, արամադրություններն այնքան ել հոգուա Դաշնակցության չելին: Այս դրության հետևանքով եր, վոր 19—20 թվին միքանի ամիսներում մեզ, կոմմունիստաներիս հաջողվեց բավականաշափ ընկերներ ընդունել մեր շարքերը (հատկապես ուսուցիչներից), վորոնցից շատերն այժմ նվիրված և պատասխանատու աշխատանքներ են առնում: 19 թ. վերջերին կազմակերպվեց Լենինականի զավաոի ուսուցչական միությունը, վորի վարչության կազմից յոթ հոգուց հինգը կոմմունիստներ և համակրողներ եյին: 19 թ. նոյեմբերից 2—3 կոմմունիստ ընկերներով, մեզ հաջողվեց ամենակարճ ժամանակում կազմակերպել մի շարք բջիջներ: մեր աշխատանքները մեծ թափ ստացան մանավանդ 19 թվի Կարմիր բանակի ուժեղ առաջխաղացումով և Դեկտեմբերի պարտությամբ: զյուղի զրությունն ել ինքնին նպաստում եր մեր աշխատանքների ծավալմանը: Կարճ ժամանակամիջոցում մեզ հաջողվեց ստեղծել կուսակտիվ 2-րդ գավմասում:

20 թ. վետրվար ամսին մենք ունեյինք արգեն 10-ից ավելի բջիջներ: ունեյինք մեր գավմասի (այն ժամանակ Հաջիսալիին առանձնացած չեր) վարձու կուս: հրահանգիչը ստեղծված եր ուժեղ կապ բջիջների միջև, կանոնավորված եր նրանց աշխատանքը: 20 թ. մարտ ամսին մենք 2-րդ գավմասից ուժեր նետեցինք Մոլլա-Գյոք-

չայի շրջանը, բայց հետագա զարգացող դեպքերը մեզ հնարավորություն չտվին ծավալել մեր աշխատանքը: Այս շրջանի հետ կապված մեր խնդիրն եր՝ աշխատանք տանել տաճկահայ զաղթականության մեջ, քանի վոր մենք հավատացած եյինք, վոր դաշնակները նրանց հետամնացությունն ու առանձնացած դրությունը կողտագործեն մեր գեմ: Քյաֆթապուլուի շրջանում այս բանը մեզ հաջողվում եր արդեն, և մենք ունեյինք բավական վստահելի տաճկահայ ընկերներ, վորոնցից շատերը Մայիսյան որերին մեծ աշխատանք կատարեցին: Քյաֆթապուլուն հետզետե դառնում եր շրջանի համար կոմմունիտական շտաբ: Յեթե սկզբնական 3—4 ամիսներում մենք գործադրում եյինք ամենախիստ գաղտնապահություն՝ մեր աշխատանքների մեջ՝ մարտ և հետագա ամիսներին մենք արդեն այնքան ուժեղ եյինք զգում մեզ, վոր շատ հաճախ հանդես եյինք գալիս բոլորովին բացահայտ: Նույն 20 թ. մարտ ամսին վորոշված եր հրավիրել գավառի կուսկոնֆերանս: Նախապարաստական բոլոր աշխատանքները տարգում եյին դադանի: Կոնֆերանսի հրավիրման տեղը հայտնվեց միայն ընտրություններից հետո և այն ել միմիայն պատղամավորներին: Նիստը տեղի ունեցավ մարտ ամսին Խաչաքիսա գյուղում, վորին ներկա յեյին 30-ից ավելի ընկերներ:

Բոլորն ուրախ եյին, դեմքերը հանդիսավոր, չնայելով շատերը վոտքով անցել եյին 10—20 վերստ: Սկսվում է կոնֆերանսն. առանց վողույնի ճառերի, հայտարարվում որակարգը: Կոնֆերանսի աշխատանքները տևեցին մինչև յերեկոյան ժամը 5—6-ն առանց ընդահատումների: Գլխավոր հարցը, վոր կար որակարգում, դա մեր աշխատանքների ծավալման և նորանոր գյուղեր ու շրջաններ ընդգրկելու հարցն եր: Տեղերից տրվող զեկուցումներն ընդհանուր առմամբ ընդգրկում եյին մեր նվաճումները և գյուղացիության լավ վերաբերմունքը դեպի մեզ:

Կոնֆերենցիան իսկապես նոր զարկ տվեց մեր աշխատանքներին: Ապրիլ ամսին անցանք մի շարք գյուղեր՝ գործնական աշխատանքների: Մեր բջիջների միջոցով կարողացանք գյուղի հասարակական կազմակերպությունները մեր ձեռքը գցել: Առաջին հերթին կոռպերացիան: Մի քանի գյուղերում կոռպվարչություններից քշեցինք այնտեղ նստած կուլակներին և տերտերներին, որ. Պարնի, Քյաֆթապու, Ղուլիշան և այլն:

Մոտենում եր մայիսի 1-ը: Կազմված եր տոնակատարության ծրագիր. ծրագրված եր, վոր բացի բջիջներում զեկուցումներ դնելուց, պետք ե մայիսի 1-ին բոլոր գյուղերից հավաքվեյին Քյաֆթապու: Նախորոք մտածված եր զբոշակների, լողումագների և անհրաժեշտ կազմակերպչական խնդիրների մասին:

Ապրիլի 30-ին, մեզ Լենինականի հետ կապող ընկեր «պրտիչկան» լուր և բերում, վոզ Ագրբեջանը խորհրդայնացել ե. իսկույն այդ լուրը տարածում ենք բոլոր գյուղերը։ Այդ լուրը մայիսի 1-ին մեղ կարող եր կանգնեցնել յերկու փաստի առաջ, կամ՝ գաշնակցական կոմիտարը, ստանալով կենարոնից հրահանդ, չպետք է մեղ թույլ տար տանելու, և կամ ել՝ պետք է հեռու քաշվեր. խսկ քանի վոր մենք լույլ եյինք ճանաչում նրանց կոմիտարներին իրենց վախկառությամբ հանգերձ, հավատացած եյինք, վոր ընդհակառակը՝ Ագրբեջանի խորհրդայնացման լուրն առնելով՝ Դաշնակաները կորցնելու յեն իրենց զլուխը։ Մայիսի 1-ին, վաղ առավոտան, գյուղերից գալիս են զյուղացիական խմբեր գրոշակներով, յերգելով, ուրախ արամադրությամբ։ Հավաքվել եր խոշոր բազմություն, հրապարակում տեղ չկար կազմել եյինք խսողների ցանկը, տեղ եյինք թողել նաև գաշնակներին, վարկարեկելու նպատակով։

Միտինդը սկսվում է ժամը 12-ին, վորը բացվում է մեր կողմից. ուսաներն ու կեցցեները թնդացնում են ողը։ Քյաֆթառուկի համար գա նորություն եր Խոսում են մեր ընկերները մեկը մժուսի հետեւից, ավելի խիստ տանով քննադատում, սխտորում են դաշնակներին։ Նրանք քաշվել եյին մի կողմը, կախ զցած ականջներով լուսմ եյին։ Խոսում ե նաև նրանց կոմիտարը, զգում է իրեն անզոր։ Հայտարարվում ե, վոր Բաղուն խորհրդայնացել ե. ուսաներ. ընդունվում ե բանաձե, ու Դաշնակցության դլիս վրայից յեղբայրական վողջույններ ենք հղում Բագվի պղութետարբատին ու Կարմիր բանակին։ Քյաֆթառուն խոսք ե տալիս Բագվից հետ չմնալ։

Միտինդը վերջացած ե. մոտենում ե ինձ գաշնակցական կոմիտարը և շնորհավորում մեր հաղթանակը։ Յես իրոնիայով շնորհակալություն եմ հայտնում։

Մայիսի 1-ից հետո փաստորեն դրության տերը մենք եյինք։ Վարչական կենարոնը Նորաշենումն եր, բայց գաշնակ կոմիտարն այլևս չեր աշխատում, վոչ վոր նրան չեր լսում։ Այժմ կենարոնը Քյաֆթառուն ե. բոլորը մեղ մոտ են դալիս։ Ստանում ենք տեղեկություններ Լենինականից և մյուս գավառներից։ Նույն հաջողությունը, իշխանությանը վերցնելու հարցը կոնկրետ դրված եր մեր առաջ։

Մյուս կողմից՝ շրջանում դրությունը գնալով բարդանում եր կենարոնից ուղարկված սերմացուն գաշնակների դեկավար որդանները վորոշել եյին հետ տանելու Պաշտոնական զրությունը ստացված եր, ժամանակ եր արված 2—3 որ։ Անհրաժեշտ եր խանգարել սերմացուն պետք եր բաժանել չքավորներին, և վորոշում ենք՝ վերց-

նել սերմացույի պահեստները դաշնակներից։ Հրավիրվում ե չքափորներից ու մեր բջիջներից խորհրդակցություն։ Ընտրվում ե կոմիսարիա ընկ. ընկ. Փանյան, Նահապետ, և Մ. Ասլանյան, և յերկու ուրիշ ընկերներ։ Զինված կոմմունիստների միջոցով պահեստները վերցվում են։ հրահանգվում ե զյուղերին չքափորների ցուցակները ներկայացնել և սերմացու ստանալ Դաշնակները դիմում են միվեցիայի ողնության, բայց նախորոք մեր ուղարկած ընկերները միվեցիային համոզել եյին Քյաֆթառլույի վրա չգալ։ Միվեցիան հրաժարվում ե զար Մայիսի 6-ի յերեկոյան եր կարծեմ, «պատիշեկան» բերում ե զրություն ընկեր Ավիսից, վորով ինձ հրավիրում են շտապ Լենինական։ Գնում եմ, առանց սպասելու, Լենինականում դրությունը շատ խառն ե, ողը ելեքտրականացած ե, սպասվում ե ինչ վոր մեծ բան։ Խսկույն անցնում եմ ընկեր Խվանի մոտ, վորտեղ և Ավիսն եր, ու միասին մեկնում ենք Մուսայելյանի զբահապատ գնացքը։

Գիշեր ե. զրահապատի մի վագոնում, թույլ լուսավորված մի փոքրիկ սենյակում 7—8 հոգի վճռում են ապստամբություն բարձրացնել։ Բոլորն ել զգում են, վոր դրությունը շատ բարդ ե, վոր շտապելը կխասի, իսկ դանդաղելը կարող ե մեզնից մասսաներին հիասթափեցներ։ Հիշում եմ, խոսում եր ընկեր Դրաստամատը, խոսում եր մեր ուժերի քիչ լինելու մասին։ Հենց այդ ժամանակ ինձ կանչում են դուրս. զյուղերից են յեկել պատմում են, վոր այնտեղ դաշնակցակաների հետ կովի յեն բռնվել. կան նույնիսկ սպանված և վիրավորներ։ Ժողովին հայտնում եմ ստեղծված զրության մասին. ուրեմն քաղաքը մենակ չե, զյուղը նույնպես շարժվել ե. Անհրաժեշտ ե կազմակերպչորեն գործողությունները շաղկապել և ապստամբվել, սպասել որվան։ Խորհրդակցությունը տեվեց մինչև լուսարաց։ Բոլորը բեզարած եյին, բայց քնել հսարավոր չե, պետք ե աշխատել. իսկույն մեկնում եմ զյուղ. ակտիվի խորհրդակցությանը շատ կարճ ինֆորմացիա յեմ տալիս։ Հենց այդտեղ ել ընտրվում ե հեղկոմ՝ կազմված յերեք ընկերներից։ Մեր ունեցած զենքերի հաշվառում ե կատարվում, նաև այն զենքերի, վորոնք պետք ե գրավվեյին։

Շըջանում մենք իշխանությունը գրավելու և դաշնակցական պաշտոնյաներին հեռացնելու հրամանը տվեցինք մայիսի 10-ին, բայց, ինչպես ասացի, փաստորեն մենք իշխանության տերն եյինք մայիսի 7-ից։ Մայիսի 10—14-ը մեզ համար անցավ հաջող։ Այս չորս որվա ընթացքում մենք կովի բռնվեցինք դաշնակցական խմբերի հետ միքանի անգամ, և միշտ ել մեզ հաջողվում եր հետ շարտել նրանց։

Միաժամանակ մենք տեղում տանում եյինք կազմակերպչական աշխատանք, հեռացնելով գաշնակցական պաշտոնյաներին և նրանց փոխարեն նշանակելով մեր ընկերներին:

Մայիսյան ապահանքության ժամանակ մեր բջիջները հանդես բերեցին մեծ նվիրվածություն, շատ ու շատ ընկերներ կանգ չառնելով վորեե վտանգի առջե, կատարում եյին ամենածանր և պատասխանատու հանձնարարությունները: Մենք ունեցանք նաև գոհներ, վորոնք միշտ ել անմոռաց կմնան մեր հեղափոխական սերունդների համար: Հատկապես ընկեր Փանյանի անունը, վոր կազմած և մայիսի հետ՝ կիշշի վողջ աշխատավորությունը:

Ն. Կուրդինյան.

ՀԱՇՈՊԱԼԻԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅԻՍԸՆ ԱՐԵՐԻՑ

1919 թվից Քյալիթառու զյուղում մի քանի հոգուց բաղկացած կուսրջիջ ունեինք: Հետագայում մի քանի անգամ մեզ մոռ յեկավ ընկ. Ավիսը, վոր տեղյակ եր պահում մեզ յերկրում կատարվող անց ու դարձին: Ավիսը ժողովներում կրակուա կերպով միշտ կոչ եր անում, վոր պիտի պատրաստվել ապստամբվերու Խատիսյանի կառավարության գեմ. այդ որերում մենք ստացանք Լենինականի կաղմակերպության կողմից բաց թողած 1-ին բոլշևիկյան «Ալիք» թերթը, վորը յեղավ վերջին ու առաջին համարը: Այդ թերթում մերկացվում եր գաշնակների վարած քաղաքականությունը ու նրանց բռնություններն ու թալանը հանդեպ աշխատավորության:

Բջջիջի ազգեցությունը հետզետե սկսվեց տարածվել զավառակի մի շարք զյուղերում, և 20 թվի սկզբին արդեն շրջանի զյուղացիությունը բավական չափով համակվել եր բոլշևիկական տրամադրություններով: 1919 թվի վերջերին ունեցանք Խաչիլիսա զյուղում շրջանի կաղմակերպության անդամների կոնֆերանս, վորտեղ մասնակցում եյին շրջանի 6 զյուղերի կաղմակերպության անդամները և համակրող յերիտասարդությունը, վորտեղ մշակվեց մի շարք գործնական անելիքներ՝ յեկող մայիսին ունենալիք յելույթների և հետագայում կաղմակերպվելիք ապստամբության մասին: Այդ կոնֆերանսից հետո գավառում զյուղացիության տրամադրությունն ավելի բարձրացավ և մի շարք զյուղերում սկսվեց կաղմակերպվել չքավորներից կոմքջիջներ. մեր զյուղի բջջիջ մեջ մտնում եյին ըսկզբից 9 հոգի, հետագայում այդ թիվը հասավ 30—40 հոգու: Քանի կարմիր բանակը ավելի յեր մոտենում Բագվին, այնքան ավելի յեր բարձրանում մեր տրամադրությունները: Մենք կազմած լինելով

Եենինականի կոմիտեյի հետ, որեց որ ստանում ելինք նոր նոր թարմ լուրերը Կարմիր բանակի հաջողությունները և Դենիկինյան ու Բիշերախովի բանակների պարտություններն ավելի ևս վոգեռում եյին մեզ. յերկրում ափրող անարսիան, անընդհատ պատերազմները, սովոր անգործությունը և մառազերիստների բռնություններն առիթ եյին տալիս ել ավելի ամրապնդել մեր շարքերը:

Ապրիլ ամսի սկիզբներին դաշնակները սկսեցին ամրանալ շըջանի մի շարք զյուղերում, ամերիկական սպիտակ ալյուրը սերմացույով փոխանակելու համար. Այդ ալյուրի պահեստների գլուխն



Քյավրառ լուի տեսարանը

եյին կանգնած կուլակները—զորբանները. ալյուրը փոխանակում եյին հացահատիկի հետ ունեուները, իսկ չբավորները, վօրոնի չունեյին հացահատիկ, ալյուր չեյին ստանում. Մըզող դասակարգային գիտակցությունն ավելի ևս խորանում եր չքավոր զյուղացիության մեջ.

Ապրիլի 28-ին Կարմիր բանակը գրավեց Բագուն. այս լուրը մեզ ավելի վոգեռեց. Մայիսի 1-ի տոնը տոնվեց բավական համարձակ. Քյաֆթառլիյում, պրիստավի ներկայությամբ բացականչում եյին շրջանից յեկած զյուղացիները՝ «Կորչի Դաշնակցությունը, կեցցե Խորհրդային իշխանությունը», և մի շարք նման հեղափոխական լուգուններ. Պրիստավը իր ստրաժնիկներով ներկա յեր տոնակատարությանը, բայց չհամարձակվեց խանգարել:

Ապրիլի վերջերին Լենինականում հրավիրված եր նախկին «Շիրակ» կոոպերատիվի գավառային համագումարը յես մասնակցում ելի այդ համագումարին, շնորհիվ մեր կազմակերպության—Լենինականի կոմիտեյի. ինձ ընտրեցին Համահայաստանյան Հայկոպի համագումարի պատգամավոր, նպատակ ունենալով ինձ տալու մի շարք հանձնարարություններ: Յես Յերևանում առաջին անգամ տեսնվեցի Աշխեն Անդրիասյանի հետ, վորին նախորոք գրված եր իմ գնալու մասին. ծանոթանալով նրա հետ, միասին գնացինք Արմենկոմի անդամ Դրաստամատ Տեր-Միմոնյանի մոտ, վորին և հաղորդեցի ինձ հանձնարարված տեղեկությունները. Դ. Տեր-Միմոնյանից ստացած մի շարք կարեոր հրահանգներ և մի ամբողջ պարկ գրականություն՝ Լենինականի համար:

Մայիսի մեկը Յերևանում տոնվեց բավականին հաջող բոլշևիկների համար. պարլամենտի շենքի առաջ խոսում եյին դաշնակ լիգերները՝ Խատիսյանը, Ռիանջանյանը և Վրաստանից յեկած մենշևիկների մինիստր Ռամիշվիլին, սրանց խոսակցության ժամանակ ներքեռում մասսան բոլշևիկների հետ հաճախ բացականչություններ եյին անում դաշնակ կառավարության դեմ. բոլշևիկների կողմից, իբրև առանձին՝ կազմակերպված ուժ, աշքի յեյին ընկնում գարաժի բանվորներն ու աշխատավորները, վորոնք նախորոք պատրաստել եյին ավտոմոբիլների վրա գարբնոց և ցրում եյին բավականին բոլշևիկյան թուուցիկներ: Դաշնակցական շեֆերից հետո ձայն տրվեց խոսելու բոլշևիկ Սայոպա Ալլահվերդյանին, վորը սկսեց անփնտա մերկացնել մենշևիկ և դաշնակ կառավարություններին. նա ասում եր, թե նախոդ խոսող Խատիսովը ու Ռամիշվիլին մի քանի ամիս առաջ կոտորել եյին տալիս հայ ու վրացի աշխատավորությանը, սարքելով ազգամիջան կոփմեր, իսկ այսոր քողարկելով աշխատավորության աշքերը, խոսում են ազգերի համերաշխության մասին: Տոնակատարության հավաքված մասներին վորբանոցից դուրս բերած հասակավոր վորբերի միջոցով, խանգարում եյին Ալլահվերդյանի խոռություն, բացականչելով «Աղրբեջանի կողմից կաշառված, հայ ազգի դավաճան»:

Մայիսի 2-ին մասսաների հեղափոխականացան տրամադրությունները վերածվեցին քաղցած բունտերի, վորտեղ և կոտրատեցին մի շարք մթերքների պահեստներ, խանութներ և փոեր: Բունտը դադարեցնելու համար, հատկապես մասներիստական խմբեր հրավիրեցին, վորոնք ուժով ցրեցին գաղաղած ամբոխին:

Մինչև մայիսի 3-ը մեր համագումարի նիստերը չկայացան. համագումարի նախագահության անդամներն եյին դաշնակ ջոջերը, Հա-

մաղումարի կիսին, նրանք փակեցին համագումարը, հայտնելով, վոր հայրենիքը վտանգի մեջ ե, լենինականում բոլշևիկները ապստամբվել են և տիրացել կայարանին, պիտի ուշադրություններս դարձնենք Հայաստանը վրկելու բոլշևիկական վտանգից։ Դաշնակ դեկաֆարները այդ որվանից ցրվեցին գավառները՝ «բոլշևիկական վտանգի առաջն առնելու համար»։

Համագումարից հետո յես Արմենկոմից ստացած գրականությունը մի պարկի մեջ լցրած, այդպես ել բերեցի լենինական. — կայարանն արդեն արտասավոր տեսք ուներ։

Մայիսի 7—8-ին մեր գյուղն եյի։ Մայիսի 10-ին, յերեկոյան ժամը 6-ին լենինականից Ավիս ստորագրությամբ Ռազմա-հեղափոխական կոմիտեյի անունից հետեւյալ հեռախոսագիրն ստացանքու Ալեքսովը հայտարարվեց խորհրդային, վաղը պիտի հայուարարվի ամբողջ Հայաստանում խորհրդային իշխանություն, դուք այդտեղ կազմակերպեցեք Ռազմա-հեղափոխական կոմիտե և անցեք բոլոր հակառակորդ ուժերի զինաթափման աշխատանքներին։ Ինձ հրահանգվեց անմիջապես գնալ մեր գյուղը (Փ. Պարնի) և սկսել զինաթափումը՝ բոլոր աշջի ընկնող դաշնակների. ստացած զենքերը բաժանվեց անմիջապես չքավորներին ու կազմակերպության անդամներին. ամբողջ գիշերը սկսեցինք զինաթափումը, վորը շարունակվեց մինչև հետեւյալ որը։ Զինված չքավորության հետ շրջելով գյուղում, հավաքեցինք բոլոր զենքերը. գյուղի գլավինը, վորը դաշնակ մառուցերիստ եր, արդեն փախել եր գյուղից։ Գյուղի ամենամեծ շենքի ծայրին բարձրացրինք կարմիր դրոշակը, իսկ գյուղում յեղած սերմացույի ֆոնդը, մոտ 400 փութ ալպուրը բաժանեցինք չքավորությանը։ Զինված ապստամբներին հավաքել եյինք մի տեղ և ուղարկան դրություն հայտարարել. հաճախ զինված խմբերով դուրս եյինք գալիս դիմադրում գյուղի կամ շրջանի գյուղերի վրա հարձակվող դաշնակ հրոսակախմբերին։

Մայիսի 12-ին դաշնակ զորախմբերից հարձակվեցին Քյավթառվի վրա, շրջանի զինված գյուղացիությունը մեծ վոգեորությամբ հետ քշեց նրանց և հետապնդեց։ Նախքան ապստամբությունն, ամսի 9-ին ցերեկով նրանք սպանեցին Քյավթառվում մի գյուղացու (խմբապետ Ոհանի ձեռով)։

Մայիսի 14-ի ցերեկը սկսեցին լուրեր տարածել գյուղում, վոր քաղաքում իշխանությունը տապալվել ե. այս լուրը քանի գնաց, սկսեց համառ. կերպով տարածվել, գյուղից փախած դաշնակ զլավինը կապվելով Արթիկում 4-րդ գավմասից յեկած հաղահեղափոխականների հետ, սկսեց պանիկայի մատնել գյուղացիությանը. գյու-

դի ներքին բլուրների վրա նրանք կանգնեցրին սպիտակ դրոշակներ, վորոնք հետզետե մոռեցրին դյուզի ներքին թաղի կտուրների վրա, սկսվեց ծածանվել նրանց սպիտակ դրոշակները, իսկ մեր կարմիր դրոշակը, վորը ամբացրած եր դյուզի վերեկ մասում, սկսեց սրու- վակացիայի նյութ դառնալ դյուզի կուլակների համար։ Հիշյալ դր- լավու կողմից պատգամավորներ եյին ուղարկվում առելով «Յեթե բոլշևիկները չվերցնեն կարմիր դրոշակը՝ Սեպուհի խումբը գալիս ե և ամբողջ դյուզը կկոտորի, վորպես բոլշևիկների»։ Գյուղացիներն սկսեցին ինչպես զիմնել մեզ, վոր վերցնենք դրոշակը, քանի վոր խմբերը կկոտորեն իրենց, մենք մինչեւ վերջը համառությամբ չվեր- ցրինք դրոշակը, դյուզը ալեկոծգում եր պրովակացիայի ուժեղ ազ- գեցության տակ, վորին և յենթարկել եր մեր զինված ուժերի մի մասուն

Դյուզի դրությունը քանի դնում, ավելի լուրջ բնույթ եր ստա- նում. այս մամենակին պրովակացիան սկսվում է նաև Թյավթառվում, վարաեղ գտնվում եր շրջանի Ռազմահեղափոխական կոմիտեն, նրան ևս սկսել եյին պաշարել քաղաքից յեկած պրովակատորներն ու զին- ված ուժերը. մեր դյուզի դրության մասին հարկավոր եր հայտնել Ռազմահեղափոխական կոմիտեյին, վորի համար ել յես դիմեցի զեալի Թյավթառլու՝ ողնության։ Այստեղ յեղած հականեղափոխական- ներն արդեն հարձակվել եյին Ռազմահեղափոխական կոմիտեյի վրա և բանսարկել մի քանիսին. հրացանի կրակոցները լսվում եյին ան- ընդհատ մինչեւ իմ Թյավթառվին մոտենալլը Թյավթառվի մոտ պա- տահեցի Ա. Մովսիսյանին փախչելիս։ Նա իսձ հայտնեց Թյավթ- դրության մասին, վոր բժիշկ Փանյանին (Ռազմահեղափոխա- կան կոմիտեյի նախագահ) արդեն ձերբակալեցին։ Մենք այդ տե- ղից միասին փախանք սարերը՝ Զուլիջան դյուզի ուղղությամբ, ուր նույնպես կար ապստամք կազմակերպություն՝ ընկ. Սողոմոն Գալոյանի զեկավարությամբ։ Արդեն մութն եր, Զուլիջանի կողմից անցնելիս լսվում եյին հրացանի կրակոցները, այդտեղ ևս խմբերը տեսնում եյին իրենց սև գործը։ Մենք թագնվեցինք դյուղերում։ Ապստամբությունը ճնշելու համար յեկել եր մեր դյուզը պատժիչ զորամաս, խմբապետ Մուրադի ղեկավարությամբ։ Նրանք տարել եյին ապստամբության ղեկավար ընկերների աներից սերմացու ցորեն, տավար և այլն. բանսարկել եյին հիշված ընկերների ծնողներին, պահանջելով մեծամեծ կաշառքներ՝ պատաելու համար։

Յե. Գալոյան

**ՀԵՂՈՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԼԵՔՊՈԼԻ ԸՆԴՀԱՏՄԿԵՍ
ԸՃԽԾՏԸՆՔՆԵՐԻՑ**

Արհմիությունների յերկրային կոմիտեն ինձ առաջարկեց ցուցազգովել, զնալ Հայաստան գաղտնի աշխատանքի համար և տվեց հետեւյալ մանդատը՝

Մ ա ն դ ա ս

Անդրկովկասի և Դարպատանի պրոֆմիությունների Յերկրային գործադիր կոմիտեի համար և տվեց հետեւյալ մանդատը՝

1919 թ. 10 ապրիլի.
Նո-350

Բագու . . . Կ Ա Բ Ք.

Սույն ներկայացնող ընկ. Գոգունցը, հանդիսանում եւ Անդրկովկասի և Դարպատանի Արհմիությունների Յերկրային գործադիր ներկայացուցիչը Հայաստանի ամբողջ տերրիտորիայի վրա, պրոֆեսսունական գյուղացիական համագումարներ, բանվորական կոնֆերանսներ և այլն կազմակերպիչներ պելու գործում:

Նախագահ (ՖՐՈԼՈՎ)
Քարտուղար՝ Լ. ՄԻՒԶՈՅԱՆ

Ապրիլի վերջին մենք, թվով 38 մարդ ճանապարհվեցինք Բագրից, Դեռ զնացքում խոսակցություն բացվեց քաղաքական հարցերի շուրջը և այստեղ պարզվեց, վոր ուղերձների մեծ մասը Ռեկ(ր)է անդամներ են, վորոնց թվում հիշում եմ կային՝ Յեղոր Սեյանը, Ս. Սուրենյանը, Վաղարշակ Հովհաննիսյանը և այլն. Այդ առաջին բանվորական կորիգն եր, վորոնք Բագրից յեկան Հայաստան և ցըրվեցին յերկաթուղիների ամբողջ հայկական գծի վրա: Լենինականում դեռ մինչև մեր գալը կային կոմ. կուսի 6—8 անդամներ. գրանցից բյուրուի մեջ մտնում եյին Ղարիբջանյանը, Ռիանջանյանը, Վազգանուշ Հակոբյանը և այլն: Տեղի աշխատողները մեզ գիմավորեցին բավականին սառը, վորովհետև այդ ժամանակ նրանց մեջ տարածված եր այն մտայնությունը, վոր Հայաստանում անլեգալ աշխատանք տանել չի կարելի, քանի վոր սովի մատնված յերկիր ե. վորոն իր գոյությունը պահպանում ե միայն շնորհիվ Անդրկայի և Ամերիկայի ոգնության, վոր մեր առաջին պարտականությունը պետք ե լինի ոգնել և ոժանդակել գոյություն ունեցող կառավարությանը, յերկրի տնտեսական կյանքը, վերաշինելու համար:

Վորպեսզի կուսակցական աշխատանքում անցկացնենք մեր գիծը, մենք դրեցինք թշիջ կազմակերպելու և նոր կոմիտե ընտրելու համար կոնֆերանս հրավիրելու խնդիրը: Մինչև կոնֆերանսը նամակ գրեցինք Բագու, վորտեղից և մեզ ոգնելու համար ուղարկեցին ընկ-Սաշա Գրիգորյանին: Դեռ մինչև Սաշա Գրիգորյանի գալը, մեր կող-

մից արդեն կազմակերպված եր 20-ամսղամից բաղկացած յերկու բջիջ։ Սաշա Գրիգորյանի գալուց հետո արդեն սկսվեց յերկաթուղարինների 1-ին համագումարը, (գումարվեց նո. 61 ճաշարան—վագոնում), Այդ համագումարին մեզ թույլ եյին տվել մասնակցել, բայց հետագայում, ընտրությունների նախորյակին, մավզերների և բռունցքների սպառնանքի տակ մենք հեռացվեցինք։ Համագումարի պատգամավորները վոչ թե ընտրված եյին, այլ նշանակված։ Այդ համագումարին դաշնակների կողմից տրված եյին բավականին կեղծ մանդամաներ, համաձայն վորոնց զանազան անձնավորություններ հանդիսանում եյին տարրեր ցեխերի, կայարանների և այն ներկայացուցիչներ, թեե վոչ մի առնչություն չունեյին այն կազմակերպությունների և ձեռնարկությունների հետ։



Մայիսեկյան միտինգի վայրը Անդինականում։

Համագումարում ընտրվել եր Հայաստանի յերկաթուղարինների Միություն։ Այդ Միության կազմը միանգամայն համապատասխանում եր համագումարի կազմին։

Այդ ժամանակներում Հայաստանի բանվորների տնտեսական դրությունը սոսկալի յեր Բանվորները շաբաթներով հաց և այլ մթերքներ չեյին ստանում։ Բանվորներին հասանելիք բաց թողնված հացը և մթերքները վաճառվում եյին շուկաներում և Թիֆլիսում, և այդ գումարներով միության և կոոպերացիայի պատասխանատու աշխատողները Թիֆլիսում տներ եյին գնում (որինակ Համբոն, Մանուկ-Ռույանը և այլն)։ Բանվորների արդար պահանջների դեպ-

քերում բռնություններ եյին գործադրվում իշխանության կողմից։ Ազգպես բազմաթիվ բանվորներ ծեծվել եյին. ինչպես որինակ՝ պատահեց ընկ. Առն Ռուբեկյանի, Յեղոր Սեյանի և ուրիշների հետ Հետպհետե ուժեղանում եր բանվորական շարժումը, կոմ. կուսակցության ազդեցությունը, անընդհատ աճում եր նրա քանակը։ Յեղ այդ իսկ պահաճառով վորոշվեց հրավիրել շ-րդ կուս. կոնֆերենցիանու կոնֆերենցիան հրավիրվեց, վորտեղ և ընտրվեց Սլեքտոլի դավաորի շ-րդ կուսակցական կոմիտե՝ հետեւալ ընկերներից՝ Խանոյան Սերդո, Գողումյան Արշակ, Գրիգորյան Սաշա, Նուրիջանյան Ավիս, Ռուբեկյան Լևոն, Տեր Սահակյան Աշոտ, Ղարիբջանյան Բագրատ, Մանուկյան Թագեսոս, Սեյան, Հանեսովյան Գո. Տեղկանիների ընտրությանների ժամանակ դաշնակցական գեղին միությունները պարտություն կրեցին և կարողացան տեղկանիներում իրենց անդամներից անցկացնել շատ անհշան քանակությամբ մարդիկ։

Դաշնակցական յերկաթուղային արտակարդ կոմիտիան սկսեց ձերբակալություններ անել և ցրել նոր ընտրված, բայց իրենց կազմով «անհամապատասխան» տեղկանիները։

Այստեղ պետք է շեշտել վոր չնայած գաղնակների կողմից ձեռք առնված արագակարդ միջոցներին, պրոֆմիությունն ընդունեց մեր գիծը և մենք համարյա ամբողջովին գրավեցինք պրոֆմիությունները, իսկ զեղին միությունը մնաց, ինչպես ասում են, վորապես առանց բանակի գեներալ և սկսեց քայլել անել մեզ նետ հարցերի կոմպրոմիսային լուծման և միասին աշխատելու հնարավորության համար։ Բայց այդ նրան չհաջողվեց։

1920 թ. ապրիլ ամսին յերկաթուղայինների շ-րդ համազումարը փակվելուց հետո, Սլեքտոլի յերկաթուղային արհեստանույների տեղկոմը, զեղին միությանը բոյկոտ հայտարարեց, վորից հետո բանվորական ժողովներից հետաքրները եյին ստացվում, վորակող բերվում եյին նրանց վորոշումների գեղին միությանը բոյկոտի մասին։ Յերբ բանը հասավ այստեղ, դաշնակները զաղագած, ամբողջ յերկաթղթում և մի շարք քաղաքներում սկսեցին ձերբակալություններ անել։ Իրենց կուսակցությանն ոգնելու համար, լայն բանվորական մասսաների և քաղքենիության շրջաններում կառավարական մինիստրները զեկուցումներ եյին տալիս, վորտեղ խոսում եյին «ծովալից—ծովալ» մեծ Հայաստանի և մեր՝ բայլշեկիններիս մասին, մեզ համարելով տաճկական տվենաներ, վաճառված տաճկական վասկիներով։ Բայց, բանվորական ժողովներում այդ մինիստրներն ամենուրեք դիմադրության եյին հանդիպում։ Որինակ, հաղորդակցության մինիստր Զամայյանը յերկաթուղայինների ակումբում գեկու-

ցելիս, սուլոցներից բացի վոչինչ չստացավ: Բոյլշևիկներն սկսեցին սացարձակ յելույթներ ունենալ բոլոր ժողովներում, իսկ դաշնակերպի դեմքը, վորպես բուրժուազիայի լակեյներ, ավելի և ավելի յեր պարզվում:

Մայիսի մեկի նախորյակին, նորից սկսվեցին բոյլշևիկներին ձերբակալել և աքսորել Հայաստանի սահմաններից: Ձերբակարվեցին և աքսորվեցին ընկ. Ս. Խանոյանը, Սաշա Գրիգորյանը, և ուրիշները: Այդ ընկերները, բացի ընկ. Խանոյանից, վոր մնացել եր Դարբալիսայում, բոլորն զաղանի վերապարձան գեռ ապրիլի 29-ին: Այդ որն առաջին լուրն ստացանք բոյլշևիկների հաղթանակի և Աղրբեջանի խորհրդայնացման մասին: Դաշնակներն սկսեցին ձերբակալել արդեն միտության և աեղկոմի անզամներին, վորպեսզի ստորագրություն վերցնեն, մայիսի մեկին յելույթ չունենալու համար:

Մայիսի մեկին առավոտյան ժ. 9-ին յերկաթգծի արհեստանոցների բոլոր ցեխերում և քաղաքի ձեռնարկություններում զաղարեցին աշխատանքները: Բանվորները կարմիր դրոշակներով, Մարքսի, Լենինի և մյուս առաջնորդների նկարներով, սկսեցին միահինգը:

Այստեղ, արհեստանոցներում միաբնագը վերջանալուց հետո, յեկան գծի սպասարկության բանվորները, ինգրեցին ոգնել, վորովհետեւ զաշնակներն արգելում են նրանց մոտ ևս միաբնագ կազմակերպել: Այդպիսով մեզ միացան ավելի և ավելի շատ բանվորական խմբեր, և յերբ մենք կայարանի ուղղությամբ շարժվեցինք գեղաքաղաք, մեզ գեմ հանդիման յելան գաշնակ մասսաներն իրենց դրոշակներով: Գծի բանվորների և զաշնակների միջև բռունքամարտ տեղի ունեցավ. բանվորները խլեցին նրանց դրոշակները և արագությամբ պոկեցին դրոշակի ծայրերից կապած գեղին ժամավենները. և նրանց (կեցցե, «ծովից-ծով Հայաստանը» լողունգը ջնջելով, զծեցին «Կեցցե Խորհրդային Հայաստանը» լողունգը: Յերթը շարժվեց գեղի քաղաք և յերկաթգծի դպրոցի մոտ բացվեց միաբնագը: Դաշնակների կողմից այստեղ սկսվեց հայոցյանք և բղավոցները: Բանվորի շոսեր հագած Ավիսը խոսելիս, զաշնակները գոռում եյին «բանվորի հագուստով ինտիլիդենտ, դավաճան»:

Այստեղ վոչինչ չպատահեց: Քաղաքի աշխատավորության հետ անցանք քաղաքային այդին և այդտեղի հրապարակում միաբնագը շարունակվեց: Դաշնակներն իրենց հույսը կորցնելով, արագությամբ պահակային վաշտը կանգնեցրին Սևերսկի զորանոցները տանող խըճուղու վրա: Յերբ յերթն անցնում եր նրանց մոտով, զինվորները մոտեցան, բարձրաձայն հայտարարեցին, վոր իրենք դիրքերից վոչ մի գնդակ չեն արձակի մեզ վրա, և վոր այժմ նրանք համոզվել են,

վոր դուրս գալով մեր դեմ, նրանք դրանով իրենց դեմ են դուրս գալիս:

Նրանք պահանջեցին, վոր մենք անցնենք Սևերսկի զորանոց-ները.—մենք այդպես ել արինք: Ճանապարհին հանդիպեցինք զիրքիր բռնած մի վաշտ զինվորների, փորոնց հրամայված եր մեզ թույլ չտալ զորանոցները կրակելու փոխարեն նրանք սկսեցին մեզ ուղեցիլ և լսեցնել մեր տանակատարությունը բղավոցներով խսնդարողներին: Բոլոր զինվորներն իրենց սպաների և գեներալ Խաչատուրովի հետ, շարժվեցին զորանոցների առաջ: Գեն. Խաչատուրովի անվերջ խնդրում եռ մեղ՝ քաղաքացիներին չխառնել զինվորների հետ, և ցանկություն հայտնեց մեզ մոտ պահանձներ դնել վորպեսզի միամինդը կազմակերպված ընթանա.—բայց ընդհակառակը դաւրս յեկավ. զինվորները և բանվորները խառնվեցին իրար և նույն իսկ սկսեցին համբուրվեց փորպես մի ընտանիքի անդամներ: Խոկույն մեաբնողը բացվեց, փորտեղ ճառով հանդես յեկան ընկ. Ավիսը, Մուսայելյանը, Գոլունցը, և ուրիշները: Դաշնակների կողմից փորձեց խոսել «բանվոր» Սերգոն, բայց նրան մի բովե անդամ չվիճակվեց մնալ տրիբունայի վրա. բանվորները և զինվորները նրան իսկույն ցած քաշեցին և ընկզմեցին ջրով լի տակառի մեջ: Նորից բարձրացավ ընկ. Մուսայելյանը և սկսեց հանգստացնել փոթորկված բանվորական և զինվորական մասսաներին: Նրան սկսեցին ձեռքերի վրա ճոճել, և հենց այստեղ զինվորները յերդվեցին, վոր այսորվանից նրանք իրենց հայտարարում են կարմիր բանակայիններ և պիտի լսեն միայն կարմիր կոմիսարներին:

Միտինգից հետո մենք կազմակերպված կերպով շարժվեցինք դեպի քաղաք: Ալեքսանդրյան փողոցի անկյունում նորից յեղավ միտինգ, —վորտեղ բանվորները պահանջեցին ազատել բոլոր բանտարկվածներին: Դաշնակները պրովակացիոն նպատակով կրակեցին: Յերեկոյան ժ. 6-ին միտինգը փակվեց:

Մայիսի 2-ին յերկաթուղայինների ակումբում դաշնակներն ընդհանուր ժողով հրավիրեցին: Այդ ժողովին գնացինք և մենք: Ժողովի վերջում Ավիսը և Մուսայելյանը ձայն խնդրեցին, բայց նրանք մերժեցին: Մուսայելյանը գոռալով պոկեց իր ուսադիրները, շղալրտեց նրանց նվեր և դուրս յեկավ, Ավիսը նույնպես հեռացավ: Յես հանդես յեկա խոսելու դաշնակները հանեցին մառլեցները, ըստ յերեսույթին մտադիր եյին նրանցով գործել, բայց փորովիհետև մեր շուրջը վաղորոք պատրաստ կանգնած եյին զրահապատից մի խումբ զինվորներ, ուստի մեզ հաջողվեց այդ ժողովից կենդանի դուրս գալ:

Կայարանն արդեն մերն եր, բայց քաղաքում դեռ դաշնակցա-

կան իշխանություն եր Աղեքպոլի կոմիտեն նամակներ ուղարկեց Յեղան, Թիֆլիս, և Խորհրդային Ազգբեջան «Ստեղծված պրությունը քննելու, ասկասամբության խնդիրը փորոշելու և դիրքեկտիվներ տալու համար»։ Յերեանից յեկան Արմենիամի ներկայացուցիչները՝ ընկ. Մելքոնյանը և Գրաստաման Տ. Արմենյանը Աղեքպոլի կոմիտեյի և ակախիվի նիստում ընտրվեց Բազմահեղափոխական կոմիտե։

Դեռ այդ ընտրություններից առաջ, քաղաքից նեստում եյին Ամերկամի ներկայացուցիչները, փորոնք կարգադրել եյին Բաթումի իրենց ներկայացուցիչներին, փորոշեղի դադարեցնեն Հայաստանին հաց ուղարկելու։ Կոմիտեն փորոշեց նրանց արգելել գուրու գնայ, բայց նրանք խոստացան և խոստումնաղիր ավեցին, վոր բոլոր այն մթերքները, փորոնք ճանապարհված են Հայաստանի համար, ոնարդել տեղ կհաննեն, անկախ յերկրի իրավակարգից։ Դեռ սկսած մայիսի մեկից յուրաքանչյուր ժամ ամբողջ շարաններով զինվորներ եյին դայխու մեզ մոտ՝ նոր դիրքեկտիվներին նրանք պահանջում եյին մեզնից—իշխանությունը գրավել, առաջարկում եյին իրենց ամբողջ ուժերը արամազդի ավանդութիւնը դաշնակների գեն պայքարելու համար, փորոնք խոսում են ժողովրդի անունից, բայց մինչույն ժամանակ հանդիսանում են արտաստիմանյան կազմակազմ հլու սպասավորները։

Այս բոլորը միասին Բազմակումին ստիպում եր պատրաստություններ ահանել իշխանությունը գրավելու համար, քանի վորութիւն յելք ել չեր մնացել։

Մայիսի յերկուամից հետո դաշնակցականներն սկսեցին կատարելապես թալանել թե ամերիկացիների և թե պետական պահեստները, փորակեսղի իշխանությունը գրավելուց հետո, մենք կը իտկաւական գրության մեջ ընկնենք։

Մայիսի 7-ին դաշնակները բժիշկի Բաղդասարյանի գլխավորությամբ հավաքել եյին (վոմանք դեռ սպասակ գողնոցները կապած)։ Խանութպաններին և յեկել կայարանի դիմացի, այսպիս կոչված «գեղերագիւղի» բազարը, փորի դիմաց կանգնած եր զրահազնացքը։ Այդ ժամանակ զրահապատին մոռեցան յերկաթդի բանվորները և սկսեցին յերգել եւզափոխական յերգեր, իսկ դաշնակները դուքսն շնորհի հետ մյուս կողմից յերգում եյին ումեր հայրենիք։ Բժ. Բաղդասարյանն իրենց միտինգը հայտարարեց բացված, բայց բանվորները մոռեցան և բունցքամբու սկսվեց։ Միայն դրանից հետո, խանութպանները ցըմկեցին, Յերեկոյան զրահապատից և Աևելսկի զարանոցներից մերոնք հրթիռներ եյին բաց թողնում։ Յերը դաշ-

նաևիներն իրենց բոլոր հույսերը կորցրել եյին, բանակցությունների համար մինչև անգամ յեղիսկոպոսին եյին ուղարկում:

Ռ.Հ.Կ. կողմից մայիսի 10-ին Աղեքպոլում և ամբողջ Հայաստանում հայտարարվեց խորհրդային իշխանություն: Պետք ե հիշատակել այն մեծ վոգեռությունը, վորով զինվորները դիմավորում եյին խորհրդային իշխանությանը:

Մայիսի 10-12-ին Յերևանից առաջանում եյին խմբապետական զորամասեր, վորոնց գետմ ուղարկվեց զրահազնացքի մի պլատֆորման, վորը կուպով դաշնակներին քշել եր յերկաթգծի սահմաններից: Նույն որը Յերևանի կողմերում գտնվող «Ազատամարտ» զրահազնացքից և հրետանի գնդից յերկու պատզամավորներ յեկան, վորոնք «Ազատամարտը» զրավելու և հրետանի գնդում ապստամբության հող պատրաստելու համար համապատասխան ցուցմունքներ ստանալով, վերադարձան:

Աղեքպոլից քիչ հեռու, Արփաչայի մոտ, ձերբակալվեցին յերկու փոքրիկ խմբեր իրենց խմբապետներով: Մինչև այդ, ձերբակալված եյին միլիցապետ Պահլավունին և ուրիշները, սական բոլորին, առանց մեր գիտության, ազատել եր Մելքոնյանը: Մայիսի 11-ին Կարսում և Սարիղամիջում, մերոնք գրավել եյին իշխանությունը:

Մայիսի 13-ին յերեկոյան ժամը 6-ին կուսակցական կոմիտեյի նիստում դրված եր Ռազմահղափոխական կոմիտեյի կողմից իշխանությունն առանց կովի հանձնելու խնդիրը: Լսելով այդ մասին, յես սկսեցի հավատացնել, վոր նման խնդիր Ռ. Հ. Կոմիտեյում չի դրվել վոր Ռ. Հ. Կ. բոլոր անդամների և ակտիվի մեջ այն հատակա համոզմունքն ու վճիռը կա, վոր պետք ե կովել մինչև վերջ: Բայց յերեկոյան ժամը 10-ին բացվեց Ռ. Հ. Կ. նիստը, վորտեղ նույնպես դրված եր այդ նույն խնդիրը: Յերկար վիճաբանությունից և մտքերի փոխանակությունից հետո, վորը տեսեց մինչև գիշերվա ժամը մեկը, կոփվը շարունակելու հարցը դրվեց քվեարկության:—3 հոգի քվեարկեցին կոփվը շարունակելուն կողմ, յերեքը՝ հանձնվելու, վորպեսզի արյուն չթափվի, իսկ մեկը՝ Մուսայելյանը ձեռնպահ մնաց:

Նիստը վերջանալուց հետո, մենք ցրվեցինք, ով վորտեղ ցանկացավ:

Մոտավորապես գիշերվա ժամը 3-ին յես և Մուսայելյանը գնացինք զրահապատի պլատֆորման, վորպեսզի գնանք Որթաքիլիսակիսակայարանը, բայց զինվորները հրաժարվեցին, հայտարարելով, վոր իրենք կովում են, իսկ մենք մտադրվել ենք հանձվել և այլն: Յես պահանջեցի մի շոգեշարժ, վորով յերեք հոգի պիտի գնայինք, բայց այդ ժամանակ քարտեղը ձեռքին հայտնվեց կապիտան Մա-

միկոնյանը և ցանկություն հայտնեց մեզ հետ գնալ—յես հրաժարվեցի գնալ, վորովիետեա չեյի վստահում նրան:

Մուսայելյանը նրա և միքանի զինվորների հետ շոգեշարժով ուղևորվեց դեպի Որթաքիլիսա, վորովից վորովի պետք և անցնելին դեպի Ախալքալաք: Ճանապարհին նրանց ձերակալել ելին:

Ա. Գոգունց.

ՄԱՅԻՍՅԱՆ ԵՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՔՊՈԼՈՒՄ

(Հիւղուրյուններ)

Աղեքաղովի մեր կուսակցության վորոնաշարը կազմում եր, իհարկե, յերկաթուղին, վորն առաջնակարգ դեր եր խաղում ապստամբության ընթացքում: Առանձնապես ուժեղանում ե կուսակցական աշխատանքը յերկաթուղում մարտ-ապրիլ ամիսներին. որինակ՝ ապրիլ ամսում մենք միայն դեպոյում ունեյինք չորս կուսակցական քիջ, մոտ 100 անդամով: Աշխուժանում ե մանավանդ պրոֆեսսիոնալ աշխատանքը՝ հատկապես յերկաթուղային համագումարի շնորհիվ: Մարտի 25-ից մինչև ապրիլի 15-ը Աղեքաղովում տեղի յեռնենում համահայատանյան յերկաթուղային համագումարը, վորոտեղ բոլցեկիները, չնայած վոր ունեյին ընդամենը 16 պատգամավոր—51-ից, այնուամենայնիվ խոշոր աշխատանք ելին տանում, դարձնելով համագումարը հեղափոխական ազիտացիայի մի նոր տրիբունա: Համագումարը վերջնականապես դիմագուրք արեց դաշնակցականներին յերկաթուղային բանվորության առաջ և մասնավորապես այն շերտերի առաջ, վորոնք դեռ մինչև համագումարը շարունակում ելին դուրս մնալ կոմմունիստական ազգեցությունից (գծի և յերթևեկության սպասավորությունների բանվորները):

Դաշնակցական միության կենտրոնական կոմիտեն, վորն ընտրվեց յերկաթուղային համագումարում, բացարձակալապես մի ֆաշիստական որդան եր: Բավկական ե ասել, վոր նրա մեջ մտնում ելին յերկու մասուցերիստներ, մի մոնարխիստ և մի լրտես: Մեր պատգամավորները, վորոնք դեմոնստրատիվ կերպով դրւրս ելին յեկել համագումարի վերջին նիստից, ձեռնարկեցին կազմակերպելու յերկաթուղային նոր, կարմիր միություն, հենվելով դեպոյի, շոգեշարժային բրիգադների և կապի հեղափոխական սեկցիաների վրա:

Ապրիլի 30-ի գիշերը հավաքվել ելինք Աղեքաղովի կոմիտեյի անձեզալ պունկտերից մեկում, դեպոյի բանվոր՝ Խվան Հայրապետյանի տանը և ծրագրում ելինք հետևյալ որվա տոնակատարման կարգը:

Շատերը վախենում եյին, վոր դաշնակցական տերրորի հետևանքով մեղ չի հաջողվի խոշոր քանակությամբ բանվորներ համախմբել մեր շուրջը: Վոմանք ասում եյին, վոր մենք նույնիսկ 100-ից ավելի շենք կարողանա յերկաթուղագծում մեր հետեւից տանել: Ամենալավատեսները կանգ եյին առնում 500 թվի վրա: Այնուամենայնիվ, վո-

ԱՆՔՊՈԼԻ ԸՆԴՀԱՏԿԵՍ ԿՈՄԻՏԵՅԻ ԿԸՀՄԻՑ



Վ. Գրիգորյան
(Մանացած)



Թաղեվոս Մանդայան



Յեղոր Սելիյան
(Գնդականաբազան)



Գ. Հանեսողյան



Բ. Ղարիբջանյան
(Գնդականաբազան)



Ս. Խանսյան

ըոշվեց անպայման առանձին յերթ կազմակերպել, նպատակ ունենալով, չափել ու պարզել մեր ուժերը: Քանի վոր դաշնակցականներն իրենց յերթը կազմակերպելու յեյին Բեհրության (այժմ № 16) փողոցով, մենք վորոշեցինք մեր յերթն անջատել և տանել դեպի քաղաք՝ Պուշկինյան փողոցով (այժմ № 20):

Առավոտյան կայարանից դաշնակցականներն ուղում եյին տանել յերթը դեպի Բեհրության փողոցը, սակայն մեծամասնությունը, դեպոյի գլխավորությամբ դարձավ Պուշկինյանը, և դաշնակցականների յերթը խանդարվեց: Յերկաթուղու ամենահետամմաց՝

գծի սպասավորության բանվորները, վորոնք կրում եյին դաշնակցական զբոշակները, վերցրին այն զբոշակները և յեկան մեղ հետագծի վարպետներից վորոնք ցանկացան խլել բանվորների ձեռքից զբոշակները: Սակայն փոքրիկ ընդհարումից հետո, բանվորները հաղթեցին: Այսպիսով, դաշնակցականների յերթը քայլայվեց, և նրանց զեկավարները զիմիկոր ընկան մեր յերթի հետեւ՝ մատով գեներալներ առանց զորքի:

Մի փոքր հետո, յերկաթուզու յերթին, միացան նաև քաղաքի ցուցարարները, և ընդհանուր յերթը շարժվեց գեպի նախկին առևտրական զպրոցը, վորտեղ սկսվեց մեծ միախնդի Յերեացին նոր լոգուզներ «Բագուն ընկափ, հերթը Յերեանինն ե», «Կեցցե Խորհրդադային Հայաստանը», «Կորչի խմբապետական կառավարությունը»: Դաշնակցականները փորձում եյին խանդարել միտինդը զանազան պրովինցիաներ ասրածելով խորհրդային Ազրբեջանի մասին, բայց ապարդյուն: Առևտրական զպրոցի մոտից ցուցարարները քաշվեցին դեպի Մելքերսկի զորանոցները: Զնայած զիմվորական հրամանատարության ձեռք առած միջոցներին, զինվորներին չհաջողվեց հեռու պահել ցուցյից: Զորանոցի մոտ բացվեց միախնդի վորտեղ հանդես յեկան մի շաբթ զինվորներ և զրահագնացքի պետ կապիտան Մուսայ հելյանը, վորն առաջին անգամն եր հրապարակորեն հանդես դայիս իբրև բոլշևիկ:

Ցույցը շարժվեց գեպի քաղաք: Զինվորները, վորոնցից շատերին փակել եյին զորանոցում, թռչելով պատուհաններից, կոտրելով դաները, գուրս եյին զալիս և միանում ցուցարարներին, չնայած սպանների հայհոյանքներին ու ծեծին: Մեր հաղթությունը կատարյալ եր: Հեղափոխական տրամադրությունը բռնկել եր քաղաքը: Ցերե ցույցի վերջում, յերեկոյան, կոմմունիստական կուսակցության ներկայացուցիչներն արդեն խոսում եյին դալիք ապստամբության մասին, դաշնակցական կառավարության դեմ, նրանց ապստամբական կոչերն ընդունվում եյին անվերջ ուռաներով և կեցցեներով, զինվորական ու բանվորական մասսաների կողմից:

Մայիսի 2-ից արդեն մեր զրահապատ գնացքը՝ «Վարդան դարավար», դարձավ կատարյալ ուխտատեղի: Խումբ-խումբ և ամբողջ զորամասերով զորքերը դալիս եյին կայարան, ներկայանում կապիտան Մուսայելյանին և հայոնում, վոր իբրենք հեղափոխության կողմն են: Բնորոշ ե, վոր ոֆիցերությունը, վոր սկզբում թշնամական դիրք եր բռնել մեր նկատմամբ, հետզհետե, մի որվա ընթացքում, սկսեց անցնել գեպի մեր կողմը: «Մենք կընանք ձեղ հետ միայն թե բանակը չքայլայվի», այդ եր նրանց առաջադրած հիմնական ֆորմուլան:

Վոչ մի կուսակցական մարմին դեռ չեր վորոշել հեղաշրջում կատարել, սակայն այդ հեղաշրջումն արդեն տարերայնորեն կատարվում եր: Դաշնակցականները խուսափում եյին նույնիսկ մոտենաւու կայարանին, բայց հարկավոր եր ձեւակերպել զործը, մշակել մանրամասնությունները և վերցնել կուսակցության ձեռքը ապրատամբությունը և նրա ռազմական ղեկավարությունը: Արմենկոմը, վորին Ալեքպոլի կոմիտեն զիմել եր, խնդրելով սանկցիա տալու ապստամբությանը, գանդաղում եր պատասխանելուց, չեր վստահում յեղած ուժերի վրա և կարծես դեռևս վորոշ հյուսեր եր տածում խաղաղ յերի նկատմամբ: Այդ անորոշ գրությունը տեսեց մինչև մայսի 5-ը: Մայիսի 5-ին Յերևանից յեկան Հայաստանի կոմիտեյի յերկու ներկայացուցիչները, Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, Արտաշես Մելքոնյանը: Նույն որը յերեկոյան, ժամը 5-ին հրավիրվեց մի խորհրդակցություն, Արմենկոմի, Ալեքպոլի կոմիտեյի և գավառից յեկած ընկերների մասնակցությամբ: Խորհրդակցությանը մասնակցում եյին 13 հոգի, այն եւ Ավիսը, Մուսայելյանը, Դրաստամատը, Մելքոնյանը, Գոգունցը, Մանդալյանը, Սաշա Գրիգորյանը, Կոստյա Այվազյանը՝ Դիլիջանից, Ագոնկը՝ Սարիղամիշից, Դուկաս Դուկասյանը՝ կարսից, Նահապետ Կուրզինյանը՝ Քաֆթալույի շրջանից՝ կարծեմ, Աշոտ Տեր-Սահակյանը և Ռուբեկյանը: Խորհրդակցությունը տեղի յեր ունենում գրահապատում: Արմենկոմի ներկայացուցիչը ղեկուցեց Յերևանի գրության և մայիսի 1-ի տոնակատարության մասին: Ամբողջ Հայաստանում մայիսի 1-ը տոնվել եր մեր գրոշակի տակ ապստամբության խնդիրը սուր կերպով գրված եր վողջ յերկում, սակայն Հայաստանի կոմիտեն նախքան տարերային շարժման գրլուխ անցնելն անհրաժեշտ եր համարել կապվել Թիֆլիսի հետ: Հայկազ Կոստյանյանն ուղարկվել եր Թիֆլիս՝ ապստամբության սանկցիա ստանալու համար:

Մաքերի փոխանակությունը տեսց մինչև ուշ գիշեր: Ներկա յեղողները գտնում եյին, վոր հեղաշրջումն անխուսափելի յե, չոգտվել ստեղծված դրությունից՝ նշանակում եր քայլայել և վոչնչացնել կուսակցական կազմակերպությունը: Ապստամբության ռազմական նախագիծը, վորը բոլորի կողմից հավանություն գտավ՝ հետեյան եր՝ Զազախից մեր ընկերները կապվում են Աղստաֆայում կանգնած Կարմիր բանակի զորամասերի հետ, սկսում շարժումը և տեղեկացնում են մեզ, վորից անմիջապես հետո ապստամբությունը են Ալեքպոլը, Կարսը և Սարիղամիշը: Զարաքիլիսան միանում ե Դիլիջանին և այսպիսով Հայաստանի հյուսիս-արևելքն ամբողջովին բռնկվում ե, և ապա մեր զորամասերը շարժվում են Յերևանի վրա,

Ալեքսոլից և Դիլիջանից միաժամանակ, և ստիպում գաշնակցական-ներին՝ կամ նահանջել, կամ կորիվ ընդունել Յերևանում ապստամբություն չեր սպասվում:

Նիստը վերջանում ե զիշերվա ժամը 2-ին: Միաձայն վորոշվում է ապստամբություն բարձրացնել: Հետեւյալ որն ստեղծվեց Հայաստանի Ռազմա-հեղափոխական կոմիտեն, վորի մեջ մտան Ալիսը, Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, Արտաշես Մելքոնյանը, Մուսայելյանը, զինվոր Գետրոս Գևարոսյանը, յերեք բանվորներ յերկաթուղագծից՝ Դոդունցը, Ռուբեկյանը և Գեղորգ Սարգսյանը և Աղեքպոլի կողմից՝ Աղոս Տեր-Մահակյանը: Մուսայելյանը նշանակվեց Հայաստանի կարմիր բանակի հրամանատար:

Մինչեռ հեղափոխական կոմիտեն առանց շտապելու պատրաստվում եր ապստամբությանը, գդգոհությունը բանվորական ու զինվորական շրջաններում ավելի ու ավելի յեր աճում. պահանջում ենին ավելի վճռական քայլեր, պահանջում եյն անմիջապես ապրատամբել և դիմել զինվորական գործողությունների Բանվորների մարտական որգանները, կարմիր արհեստակցական միությունները, մայիսի 7-ին կայացնում են Ալեքսոլի յերկաթուղային հանգույցի կոնֆերենցիան, վորն անցնում ե ամբողջովին մեր լոգունդի տակ, և վորը պետք ե տեղափորեր նոր ստեղծվող Կարմիր պլոտմիությունը: Բայց նա հնարավորություն չունեցավ անցնելու առողյակացմակերպչական խնդիրներին, քանի վոր հեղաշրջում եր կատարվում և նա ստիպված եր դուրս գալու փողոց:

Ապստամբությունն արգեն փաստորեն սկսված եր: Դիտեր այդ Յերևանը, բայց կառավարությունը դեռ ուզում եր ժամանակ շահել ու վերաբասավորել իրեն ուժերը: Զբահապատի մի մասը, վորը գտնվում եր Ղամարլվում, Մուսայելյանի ողնական Գասպար Յեղանդուլյանի ղեկավարության տակ, այդ որը գաղտնի կերպով շարժվել եր և յեկել եր Ալեքսոլ՝ հակառակ զինվորական մինհստրի կարգադրության: Դաշնակցական մինհստրը ուղիղ հեռագրագծով պահանջում եր Մուսայելյանից զրահաղնացքը բերել Յերևան: Սակայն կապիտանը պատասխանել եր նրան: «Կոմ, յերբ անհրաժեշտ կդանեմ»:

Կապիտան Մուսայելյանն անպայման շարժման առաջնակարգ գեմքերից մեկն եր: Զինվորական և հեղափոխական լինելով հանգերձ, կապիտանը շատ մեղմ և ոռմանտերիկ ընավորություն ուներ: Նա հույս ուներ և ջանքեր եր գործ եր դնում, վորպեսզի հեղաշրջումը անարյուն անցնի: Նա անկեղծորեն հավատում եր, վոր դաշնակցական կառավարությունն Ալեքսոլի ապստամբությունից հետո

մեղա կդա, և ինքնակամ կհանձնի իշխանությունը. Փոխանակ մարտական կազմակերպչական գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու, զինվորների իրավունքները լայնացնելու, բանվորներին և զինվորներին ավելի սերտ կապելու իրար հետ, անձնվեր սպաներից կարմիր սպայակույտ ստեղծելու՝ կալիտանն ամբողջ տաս որ շարունակ հավաքում եր իր կուպեյում սպաներին և քարոզներ եր կարդում՝ նրանց հեղափոխական վողի ներարկելու համար, չիշում եմ մի յերկար նամակ, վոր նա ամբողջ որը գրում եր, նամակն ուղղված եր Յերևան—գեներալ Հախվերդյանին, և նպատակ ուներ գրավել գեներալին հեղափոխության կողմը, թեև Հախվերդյանը բանակի անմիջական ղեկավարությունից հեռու յեր կանգնած և նրա դիրքը հեղափոխության համար առանձին նշանակություն չուներ:

Մայիսի 9-ին վորոշված եր, վերջապես, ապատամբվել հետեւյալ որը: Փոխանակ գիշերով ճակատը գրավելու, փոստն ու նեռագրատունն իր ձեռքը վերցնելու և նույն գիշերը Դարաքիլիսայի ճանապարհը մաքրելու, ամբողջ որը մենք պաշարում ենք բոլոր զինված ուժերով քաղաքը, ուր մնացել եյին միմիայն միքանի տասնյակ մասուցերիսաներ, վորոնք արդեն վաղուց թագնվել եյին: Մայիսի 10-ին, առավոտյան, լուսաբացին հեծելազորը Սեվերսկի զորանոցներից շարժվեց դեպի Կազաչի պոստը և այնտեղ տեղափորվեց: Արտիկերիան նույնպես գիրք եր բռնել քաղաքից բարձրացող բարձունքներում, և կազմ—պատրաստ սպասում եր հրահանգի: Քաղաքը շրջապատված եր կարմիր զորամասերով:

Ռազմինեղկոմը բանակցություններ եր վարում դաշնակցականների հետ: Վերջիններս անձնատուր լինելու համար մի շարք պայմաններ եյին դնում, աշխատելով ձգձգել գործը՝ թագատյան տեղ գտնելու և առհասարակ ժամանակ շահելու համար: Պատասխանը նրանք պետք ե ժամը 12-ին տային, բայց չտվին: ապա նորից պատասխանի ժամկետ տրվեց մինչև ժամը 4-ը, վորից հետո պետք ե սկսվեր հրացանաձգություն:

Զինվորների տրամադրությունը բարձր եր. նրանք պատրաստ եյին կովելու: Սպաներն ամեն կերպ աշխատում եյին ապացուցել իրենց անձնվերությունը, սակայն մեծամասնությանն այդ չեր հաջողվում: Արդեն սպայության վորոշ շրջաններում փսփսում եյին զինվորական դիկտատուրայի մասին: Հրամանատարական կազմը առում եր դաշնակցական խմբապետներին, բայց քանի վոր նա ընդհանուր շփման վոչ մի կետ չուներ կոմմունիստական շարժման հետ, նա յերազում եր՝ ոգտվելով այդ շարժումից, հետագայում հարվածել բոլցիկիներին և սահմանել Հայաստանում զինվորական դիկ-

տատուրաս Սխալված չենք լինի, յեթե ասենք, վոր սպաների մեծամասնությունը, կոիվ սկսվելու դեպքում, կաշխատեր չքանալ, Դժբախտաբար բանվորներից համարյա վոչ վոք չեր կցված զինվորական մասերին, յեթե չհաշվինք մեկ-յերկու ընկերոջ, վորոնք ամրացված եյին առանձին գնդերին:

Ժամի 4-ին լուր ստացվեց, վոր քաղաքն անձնատուր և լինում:

Հեծելազորի մի մասը մտավ քաղաք, մյուսը մնաց կազաչի պոստում: Փողոցները լի եյին ամբոխով: Վոչ մի վողջույն: Առետրական թաղերը փակված եյին: Կրպակների մոտ ամուր կանդնած եյին տերերը և լուռ ու կասկածում դիտում հեծելազորի արշավը: Յերեկոյան տեղեկություններ ստացվեցին կարսից և Սարիգամիից, վոր իշխանությունը գրավված և և «կատարյալ հանգըտություն և տիրում»: Թվում եր, վոր հաղթությունը կատարյալ և: Մի հատ զինվոր չեր մնացել դաշնակցականների արամաղրության տակ: Խերերը լուրջ հակառակորդ չեյին կարող համարվել:

Հետեյալ որը, մայիսի 21-ին, խորհրդային իշխանության հիմքերն եյին հաստատվում Ալեքպոյում: Խորհրդային հիմնարկների թիվը շատ սահմանափակ եր: Ճիշտն ասած՝ բափս բուն իմաստով խորհրդային չեր կարելի համարել նրանց, վորովհետեւ մենք վերցրել եյինք դաշնակցական ապահարատն իր ամբողջությամբ, շատ թեթև փոփոխության յենթարկելով միայն: Պարզ եր, վոր հետագայում պետական վարչական ապահարատը պետք և փոխվեր: Բայց առայժմ սահմանափակ եյինք բավարարվել յեղածով: «Նախկին մարդիկ» ցուցադրում եյին հպատակություն, բայց սարուտաժն արդեն սկսվել եր:

Յեթե մի կողմ թողնենք դավառային և քաղաքային միլիլցիան, մեր հիմնարկները սահմանափակվում եյին հետեյալով—դավառային կոմիսարիատ (*Սաշա Դրիգորյան*), վորտեղ կենտրոնացած եր գտառի վողջ վարչական գործը, արտակարգ հանձնաժողով, պարենափորման խորհուրդ և ագիտացիոն բյուրո: Բոլոր դաշնակցական դավառական մասշտարի պաշտոնյամները կանչվել եյին Ալեքպոյ: Դրանցից մի քանիները մկրտվեցին խորհրդային պաշտոնյա, մյուսները հեռացվել եյին: Սակայն աշխատանքն ավելի հեռու չդնաց, վրա հասավ նահանջը: Արտակարգ հանձնաժողովը վոչ մի գործնական քայլ անդամ չարեց, նա մինչև վերջն ել կազմակերպչականորեն չձեռախորվեց, թեպետ վորոշ շտատ արդեն հավաքել եր: Պարենափորման խորհուրդն ընդհանրապես չկարողացավ իր աշխատանքները ծավաել: Ազիտացիոն բյուրոն, վորը մի յուրահատուկ որդան եր, ուղարկում եր գալառ ագիտատորներ: Այդ աշխատանքը նա հաջողությամբ կատարում եր: Մեր ագիտատորները շրջում եյին դավառ-

ները և անցնում նույնիսկ թուրքական շրջանները (Աղբարա), վորտեղ թուրքական գյուղացիությունը խանդավառությամբ ընդունել եր հեղաշրջման լուրը և խոստանում եր ամեն տեսակի աջակցություն ցույց տալ, հակառակ տեղական բեկերի ու աղալարների սպառնալիքներին:

Բայցի վերոհիշյալին, յերկաթուղում ես կային ուրույն կազմակերպություններ, վորոնք ստվեղծվել եյին շարժման ընթացքում. բանվորական գվարդիա, վորի մեջ եյին մտել բազմաթիվ անկուսակցականներ և ամբողջ դեպոն: Գվարդիան հսկում եր կարգապահությանը: Գվարդիան եր, վոր կարեոր մոմենտին պետք եր ներշնչեր բանակին հեղափոխական վողի:

Ստեղծված եր յերկաթուղային վարչական խորհուրդ, վորն ուներ դիկտատորական իրավունքներ:

Մագմհեղկոմը շարունակում եր մնալ զրահագնացքում. այդ հանդամանքն ազգում եր վորոշ չափով տրամադրությունների վրա: Հեղկոմի անդամներն ապստամբության ամբողջ ընթացքում միայն մի անդամ յեկան քաղաք և կես ժամից վերադարձան: Զրահապատում եր գտնվում նաև շտաբը, վորի պետն եր հայտնի գնդապետ Դորգանյանը (գնդակահարվեց Արտակարդ հանձնաժողովի կողմից, իրքի հականեղափոխական, 1921 թ. փետրվարի 1-ին). Նա կազ ուներ գաշնակցականների հետ, բայց մեզնեց շատերն այդ ժամանակ չեյին գուշակում այդ:

Զի կարելի ասեմ վոր դաշնակցականները հանդիսաւ եյին այդ յերեք որվա ընթացքում, մինչև ամսի 13-ր Հենց առաջին որերում Ավելքանդրովսկի ու Պուշկինյան փողոցների անկյունում փակցվում ե մի հայտարարություն, վորով դաշնակցական կոմիտեն տերը սպառնալիքի տակ, արգելում եր կուսակցության անդամներին և առհասարակ քաղաքացիներին աշխատել խորհրդային հիմնարկներում:

Հետեյալ քայլը յեղավ գեներալ Խաչատրյանի սպանությունը: Բեկրության փողոցով կառքով անցնելիս, զեներալը հարձակման յենթարկվեց և մի գնդակով վիրավորվեց թերից: Կարմաղ եր արդյոք նման վերքը մահացու լինել իսկ նա մեռավ յերկորդ ուր. զրա մասին գուցե կարելի լինել հարցնել բերդի դաշնակցական բժիշկներից: Գեներալ Խաչատրյանը մեկն եր այն սպաներից, վոր սկզբնական շրջանում խոչոր ատանանումներ ունենալով, հետագայում անցել եր ծառայելու Կարմիր բանակին: Դաշնակցությունն Ալեքսովում ուներ միքանի զինված մասուղերիստական խմբեր, վորոնք իրենց ներկայացուցիչ Սմբատի բերանով համոզում եյին

ռազմինեղկոմին, վոր իրենք իրը թե չեղոք կմնան և «հայի արյուն չեն թափի»:

Յերկաթուղու վրա դրությունը սկսում եր բարդանալ Խմբապետ Յեղիշե Պահապունին և հայանի գաշնակցական որեր-կոնդուկտոր Համբոն, իրենց խմբով, քանդել եյին Զաջուրի առննելը, այնպես, վոր գրահապատը զրկվեց Ղարաքիլիսայի զիծն անցնելու հնարավորությունից, Մյուս կողմից, Յերեանից արգեն սկսվել եյին շարժվել գաշնակցական զորամասերը Սեպուհի գլխավորությամբ: Չորս որվա ընթացքում միայն կարողացան նրանք մոտենալ Ալեքպովին: Բանակը լրած եր, նա չեր ուզում կավել բոլշևիկների դեմ, և զինվորները փախչում եյին ճանապարհից: «Խմբերի աղերքը» ըստիպված եյին լինում հավաքել նրանց, ուժով յետ բերել:


Դիլիջանից ու Ղարաքիլիսայից տեղեկություններ չկային ու չկային Կարսից անմիտիթար լուրեր եյին գալիս. ապստամբությունը վիճել եր, բանակը բաժանվել եր յերկու մասի: Մի խոսքով գրությունը վատ եր, պահանջում եյին զրահազնացք ուզարեկել բայց հեղիսմը աստանվում եր, և մինչեւ վերջը Կարսին ոգնություն չըտվեց.

Սարիղամիշում համեմատարար լավ եյին պայմանները. այնտեղ հեղաշրջումը կատարվել եր և չորրորդ գունդն անցել եր կոմմունիստների կողմը, բայց կապը Սարիղամիշի և Ալեքպովի միջն բացակայում եր, ի գետ, պետք ենկատել, վոր միայն Սարիղամիշում ռեպրեսիվ միջոցներ եյին ձեռք առնվել գաշնակցականների նկատմամբ. յեղել եյին բանտարկություններ, գնդականարվել եր մեկը. Այլ եր Ալեքպուրում. բացի այն, վոր գաշնակցականներից շատերն ազատ զրունում եյին, նրանք գալիս եյին նույնիսկ զրահազնացք, զրուցում և գնում: Բանվորները կատարում եյին ձերբակալություններ, բայց հեղիսմն անմիջապես ազատում եր: Ահա բոլշևիկների այս «գաղանությունները» հիմք ծառայեցին Սեպուհին և գաշնակցական կառավարստյանը միքանի որից Հայաստանը բանվորների ու կոմմունիստների արյունով ներկելու համար:

Ծագհեղկոմը տարածամ քաղաքականություն եր վարում: Նրա անվճականությունը, նրա հորդորանքները՝ չբանտարկել գաշնականներին, ռազմական գործողություններից խուսափելը մեծ գժգոնություն եր առաջացնում, թե կուսակցական կազմակերպության, թե մանափանդ, յերկաթուղայինների շրջանում, թե Ալեքպովի կոմիտեյում: Այդ գժգոնությունն արտահայտություն գտավ ամսի 13-ի յերեկոյան հավաքված խորհրդակցության ժամանակ:

Այդ որը յերեկոյան ինձ կանչեց Մաշա Գրիգորյանը տպարա-

նից, վորտեղ սկսվել եր շարվել «Կոմմունիստ» թերթի առաջին համարը (այդ թերթն այդպես ել չտպվեց. ուզգմնեղկոմը բաց թողեց միայն մի գեղարացիա, վորի տեքստը, դժբախտաբար կորել ե): Սաշա Գրիգորյանը հայտնեց, վոր կայարանից շտապ կանչում են Գնացինք կայարան. հավաքվել եր Ալեքպոլի կոմիտեն, քաղաքում և յերկաթուղում աշխատող բոլոր պատասխանառու ընկերների հետ. Տրամադրությունը բարձր եր: Վոչ մի կասկած չկար, վոր մեկ կամ յերկու որից հետո պետք եր կռվել և հաղթել: Հավաքվեցինք մի վագոնում. հեղիսմից կար Ավիսը և Գոգունցը. ընդամենը ներկա եյին 26 հոգի, և ընկերներից մեկը, յեթե չեմ սիալվում Սեվոյանն հանաքով ասեց—«26 կոմիսարներն են հավաքվելու: Կարող ել նա գուշակեց, թե վորախոի դառն ճշտություն պետք ե դառնալին հետևյալ որը նրա խոսքերը»:



Լենինականի բնդիատակյա կոմմունիստների տունը

Խնդիրն այս եր. խմբապետ Սմբատը յեկել եր և ասում եր, վոր Սեպուհն ուզում և տեսակցել ապստամբության դեկավարների հետ և անարյուն կերպով վերջացնել կոնֆլիկտը: Նա հանձն եր առնում համոզելու Սեպուհին և բերելու նրան զրահապատ՝ բանակցելու համար: Դա մի շատ պրիմիտիվ խորամանկություն եր, բայց ուզգմնեղկոմի անդամներից վոմանք, կարծես սկսել եյին տատանվել և հրավիրել ընկերներին խորհրդակցելու, թե արդյոք զիջում անել և հեշտ կերպով լուծել խնդիրը, թե կափչել ընդունել:

Այստեղ յերևան յեկավ կուսակցության ներսում վաղուց գոյություն ունեցող յերկու հոսաքները. մի քանիսը անսպասելի կեր-

պով հայանեցին, վոր իրենք չեմ են յեղել ապստամբությանը, համարել են այն վազաժամ և այժմ ել պնդում են, վոր իշխանությունը հանձնվի գաշնակցականներին, կային և այնպիսիները, վորոնք ավելի հեռու յերին գնում՝ պահանջելով կուալիցիոն կառավարություն ստեղծել գաշնակցականների հետ, վորոշ քաղաքական զիջումներ անելով: Ուրիշներն առաջարկում եյին կուալիցիայի մանել մենշեիկների և ես-երների հետ, կարծելով, վոր այդպիսով հարավոր կլինի վախեցնել Դաշնակցությանը: Մյուս կողմից Անքառովի կոմիտեյի մի շարք ներկայացուցիչները և յերկաթուղարձի աշխատողներս, մերկացնելով այդ ընկերների յելույթների մենշեիկական եյությունը, պնդում եյինք և պահանջում վճռական քայլի դիմել: Հեղկոմը պետք է թողներ իր տարտամությունը և լուսագեմին հարձակվեր գաշնակցական բանակի վրա: Կտովիտույանաներն ուժեղ փոքրամասնություն եյին կաղմում, բայց անցավ մեր բանաձեր: Հանգստանալով, վոր խնդիրն այդպիսի լուծում սուցավ, մենք ցրվեցինք: յես մտա զրահապատի կուպեներից մեկը և պասկեցի, մի յերկու ժամ քննելու մտադրությամբ: Հանկարծ մեկը զարթեցնում եւ բարձրացնում եմ զուլս, բաց անում աչքերո՛ Մուսայիլյանը գունատ ու ցրված: Ինչ վոր բան եւ առում, չեմ լուսմ, նորից քնում եմ: Կարսղ եյի արդյոք մըտածել, վոր վերջին անգամն եյի տեսնում նրան: Նորից մեկն արթնացնում ե, Սաշա Դրիֆորյանն եր. հեղկոմը չկա, — հայանում ենա: Դուրս ենք վագում վագոնից: գուրսը հավաքվել եւ բանվորական գվարդիան: պարզգում ե, վոր հեղկոմը, առանց հաշվի առնելու խորհրդակցության վորոշումները, վիրոշել ե նահանջեր: Բանվորները վրդովմունքից լալիս եյին բաժանվելով միմյանցից և ցրվելով: Մտանք շտաբի վագոնը: սեղանին քարտեզի առաջ անխոռով նստած եր գնդապետ Դորդանյանը, և մտածմունքի մեջ ընկած, շվարած ու ցրված, մի անկյունում ընկած եր Ավիսը Յես սկսեցի հարց ու փորձ անել: Նա ձեռքը թափահարեց՝ «Հիմա մենք չենք կարող սառնասիրտ կերպով դատել թե ինչ կատարվեց, յերկու տարուց հետո միայն»...:

Դուրս յեկանք: պետք եր գնայ: նահանջի փոխարեն ստացվել եր փախուստ:

Մեզ միանում են Դբաստամատը, Մելքոնյանը, Մեհրաբյանը, Նիկալայ Ղուկասյանը և մի յերկու ուրիշները: Դիմյանը քաղաք և մի խուլ ու մութ փողոցում բաժանվեցինք ու գնացինք, վոմանք՝ դեպի բանատ ու աքոր, վոմանք՝ դեպի թագուստ ու ստորյերկրյագրը, վոմանք՝ դեպի մահ ու գնդակահարություն:

ԿԱՐՍ

20 ԹՎԱԿԱՆ ՄԵԾԻՍՅԵՆ ՈՐԵՐԸ ԿԱՐՍՈՒՄ

Մարտ ամսվա սկիզբն եր, վոր Արմենկոմը կարս գործուղղեց Ղուկաս Ղուկասյանին Այն ժամանակ մեզ մոտ կար մի քանի կազմակերպված բջիջ—յերկաթ գծում, գարաժում, զինվորական մասում ու մեկն ել քաղաքում աշխատող զանազան հիմնարկների կոմմունիսամներից:

Դեկտեմբեր ամսում բջիջների ներկայացուցչական ժողովում մենք ընտրել եյինք 5 հոգուց բաղկացած կոմիտե: Գաղտնի կոմիտեյի շնորհ գանգում եր կայարանի մոտ: Հետազայում Ղուկասը հաճախ այնտեղ եր գիշերում, մշտական բնակարան չունենալու պատճառով:

Կոմիտեյի նիստում առաջին անգամ Ղուկասի մասնակցությամբ (Վասիլ Աղայանի բնակարանում) քննության առնվեց «մեր աշխատանքները զինվորական մասերի մեջ և տաքտիկան հետազայում» խնդիրը: Այդ նիստում, բացի կոմիտեյի անդամներից՝ ներկա եյին նաև ընկ. ընկ. Միտյա Մելիքյանը (զինվորական մասից), և Աղոլը (Անդրանիկի ճուղուրյանը՝ Սարիղամիշի կազմակերպութունից): Այդ նիստի վորոշումները խոշոր բեկում առաջցցրին մեր աշխատանքների մեջ:

Մեր աշխատանքների համար բարենպաստ հող կար զինվորական մասում: Դաշնակցական զորքը կազմալուծվում եր, որսարի քայլայվում: Դասալքությունը մեծ չափերի յեր հասեր: Զինվորական մասերը հոգնած ազգամիջյան կոխվերից ուղում եյին տուն վերադառնալ:

Տնտեսական սուր ճգնաժամ եր. «ամերիկյան սպիտակ հացը ու քաղցր կաթը» շատ թանկ եր նստում աշխատավորության վրա: Որ չեր լինում, վոր այդ առթիվ զանազան եկացեաներ տեղի չունենային: Հիշում եմ քաղցածների բունտը, վորը տարերային կերպով կազմակերպել եյին կանայք ու յերեխաները քաղաքային ինքնավարության շնորհի առաջ. և այդ առթիվ քաղաքազիսի ոգնականին կիսաշունչ դրությամբ հազիվ փախցրին ամբոխի ձեռքից: Բայց և այնպես մենք այդ բոլոր բարենպաստ պայմանները չեյինք ոգտագործում: Մեր աշխատանքների ուշագրության կենտրոնն եր կազմում քաղաքի յերկաթ—գծի, գարաժի մի յերկու ձեռնարկության

բանվորությունն ու զինվորական մասերը։ Պետք ե խոստովանել, վոր Կարսի շրջանի գյուղացիության մեջ անհրաժեշտ աշխատանք չեր տարիում։ Այդ հանգամանքը շատ լավ կերպով կարողացավ ողտագործել մեր հակառակորդը ու զանազան պրովակացիաների միջոցով մեր գեմ հանեց գյուղացիության վորոշ մասը, զիստավորապես տաճկահայ գաղթականությունը։

Մայիսի մեկի ցույցը խոշոր քայլ եր գեղի առաջ՝ մեր ուժերի մորթիլիցացիայի տեսակետից, վորը ազգակ հանդիսացավ մայիսի 11-ի ավտոմբությանը։

Ենու մայիսի մեկի ապատամբության նախորյակին, ձափ եներները, վորոնք հատ ու կենա գոյություն ունեյին կարսում, մեզ առաջարկեցին միասին գուրս գալ մայիսի մեկին։ Այդ որերին Դուկասը մեկնել եր Յերևան։ Եսերների այդ առաջարկը խոշոր վիճարանություն առաջացրեց մեր կազմակերպության ներառում։ զրամասին կենտրոնից դիրեկտիվ չունեյինք։ Առաջարկը ընդունվեց, սակայն ցույցն անցավ մեր կազմակերպության ղեկավարութամբ։

Դաշնակցականներն զգում եյին մոմենտի լրջությունն ու աշխատում եյին մեղ խանգարել։ Նրանք մտադիր եյին մայիսի մեկին ակումբ բաց անել «բանվորական ակումբ» անվան տակ։ Մենք վորոշեցինք ինչ գնով ել վոր լինի, գրավել այդ շենքն ու ակումբն ոգտագործել դաշնակցության գեմ։ Մի քանի ընկերներիս հանձնարարված եր լողունգներ պատրաստել և գեռ լույսը շրացված, զրավել այդ շենքը։ Յափրակովի բնակարանում ամբողջ գիշեր լողունգներ պատրաստելուց հետո՝ լուսարացին գնացինք, շենքը դրոշակներով ու լողունգներով զարդարելու։ Ակումբը գտնվում եր քաղաքի լորիսմելիքյան մեծ հրապարակում։ զրանով ազդանշան տվինք աշխատավոր մասսաներին, այնտեղ հավաքվելու։ Ինքնարերաբար դալիս եյին նաև զինվորական մասերն ու հավաքվում հրապարակում։ Մեր տրամադրության տակն եյին նաև ապրանքատար ավտոները։ Գարաժում մենք ունեյինք ուժեղ բջիջ, վորի ակտիվ անդամներիցն եր շոփեր կեռն Հովհաննիսյանը, վորին դաշնակցական արտակարդ դատարանը վորոշեց 10 տարվա բանտարկության։ հետագայում նըրան գնդակահարեցին Յերևանի բանտում։ Մեր ցույցին միացավ նույնպես քաղաքի աշակերտությունը։ Որվա լողունգներն եյին «Կորչի Դաշնակցական կառավարությունը», «Կեցցե Խորհրդային Հայաստանը», Կեցցե Խորհրդային Ռուսաստանը», «Կորչեն ազգամիջյան կոիմերը», «Կեցցե ազգային համերաշխությունը», և այլն։

Յերթը հրապարակից շարժվեց գեղի կայարանը, ճանապարհին միանալով կայարանի բանվորությանը։

Բարձր եր մասսաների տրամադրությունը, ելեկտրականացած: Մեծ խանդավառությամբ եյին լսում Աղքարեջանի խորհրդայնացման մասին: Յերբ հոետորներն ամբիոն եյին բարձրանում, ցուցարարները պահանջում եյին իմանալ խոսողի քաղաքական գեմքը: Յեթե խոսողը կոմմունիստ եր, ապա բուռն վոգեվորությամբ ծափահարում եյին նրան, իսկ յեթե անկուսակցականի անվան տակ փորձում եր խոսել դաշնակցականը՝ նրան շվացնելով հեռացնում եյին ամբիոնից:

ԿԱՐՍԻ ԹՀԿ-Ի ԿԸՀՄՒՅՑ



Վ. Շելիկով



Գ. Պետրոսյան
Տարեկան, (Սպանված)



Վ. Ասատրյան

Մեր ընկերներից մեկը յեր խոսում եր խորհրդային Ռուսաստանի մասին—ծպտյալ դաշնակցականներից մեկը տեղից գուաց—«ազգի դավաճան»:—Նրա այդ բացականչությունը մեծ հուղում առաջացրեց մասսաների մեջ, վորոնք պատրաստ եյին խանդարողին տեղըն ու տեղ ինքնազատի տալ:

Մեր կազմակերպությունը նպատակ չուներ այդ որը զինված ապստամբություն կատարելու ու ավելորդ եկացեաների տեղիք չեր ուղղում տալ: Սակայն գեպքերն ավելի քան արագ եյին զարգանում: մասսաները դուրս եյին գալիս խաղաղ ցույցի սահմաններից: Եյականն այն եր, վոր այդ որը միայն ձևականորեն եր քաղաքը դաշնակցության ձեռքին գտնվում:

Դաշնակցական ջոջերը որվա ցույցից ահաբեկված՝ թագնվել եյին: Բարձրացող հեղափոխական ալիքների մեջ դաշնակցությունը տեսնում և զգում եր իր կործանումը, և եր վերջին ջղաձղությունների մեջ զանազան պրավակացիաներ եր տարածում մեր հասցեյին, անվաննելով խոռվարաններ, հայ ազգի դավաճաններ, կաշառված տաճկական վոսկիներով:

Միտինզից հետո դաշնակցականները դուրս գալով իրենց թագստատեղիներից՝ սկսեցին գործադրել իրենց վարչական ու մասուղերիստական ուժը, բայլ առ քայլ հետևելով մեզ:

Արմենկոմի կողմից կոնկրետ դիրքակարգման բացակայության պատճառով, մեր կազմակերպությունն ստիպված յեղավ սպասել... և միայն Ալեքպովի հրահանդույ զինված յելույթ կազմակերպվեց մայսի 11-ին:

Մայիսի 6-ին, թե 7-ին, լավ չեմ հիշում, Դուկասի վերադառնալուց հետո, գումարիվում ե կոմիտեյի նիստը ակադիվի մասնակցությամբ. ընդունեցինք ապստամբության անցնելու վրաշումը:

Մայիսի 8-ին կազմակերպվեց Ռազմիկեղկոմ հետեւյալ կազմով. նախագահ՝ Դուկաս Դուկայան, Վուամ Ղազանջյան, Արշակ Թոփմասյան, Միտեա Մելիքյան, (կարմիր գորամասերի հրամանատար) Բայթունիւ Յեղ վորոշվեց Ալեքպովի ազգանշանից հետո զբավել իշխանությունը Այսպիսով փաստորեն մեր կազմակերպությունը շարժվում ու գործում եր Ալեքպովի կոմիտեյի և վոչ թե Արմենկոմի հրահանգներով: Պետք ե ասել, վոր մեր կապն Ալեքպովի ու Սարիղամիշի հետ ուժեղ եր: Դեռ հունվարից մեր ընկերներից Վուամ Ղազանջյանին գործուզել ելինք Ալեքպովի հետ կապ հաստատելու, մի ընկերոջ ել Յերեվան՝ Արմենկոմի հետ կապվելու: Քնի. Բայրութոցյանին (այժմ Տրոցկիստ ե) ուղարկել ելինք Մարիզամիշի կազմակերպությունն ուժեղացնելու:

Մայիսի 9-ին Ալեքպովից մեզ հայտնում են, վոր զբանապատր գալուն պես, անմիջապես գրավել իշխանությունն, առանց ձերբակալությունների: Ռազմիկեղկոմի առաջին նիստին այս հարցի առթիվ առաջ ե գալիս տարածայնություն. ընկերների մի մասն առաջարկում ե վերցնել իշխանությունը ձերբակալելով դաշնակցականներին: Ալեքպովի առաջարկը՝ սպասել զբանապատին ու ձերբակալություններ չկատարելը առաջ ե բերում տարտամ դրույթուն: Ռազմիկեղկոմը անհրաժեշտ վճռականություն չի հայտնաբերում և դարձյալ վորոշում ե սպասել Այդպիսով մեր դանդաղկոտությունը հնարավորություն ե տալիս մեր հակառակորդին իր ուժերը համախմբել: Մայիսի 10-ին նորից Ալեքպովից հայտնում են, վոր զբանապատը չի գալու, անմիջապես վերցրեք իշխանությունը: Մայիսի 10-ին լույս 11-ին կարսը հայտարարվում ե խորհրդային: Իրար հետեւյ ապստամբում են զինվորական մասերն ու մեզ միանում (կարծեմ բացի պահակային բատալիոնից):

Մեզ հաջողվում ե նրանցից խել 4 գնդացիր, սակայն չենք կարողանում ամբողջ բատալիոնը զինաթափել:

Իշխանությունը գրավելով, մենք անմիջապես չենք կազմալուծում մեր հակառակորդի ուժը: Տեղական իշխանության ներկայացուցիչներն, քաղաքագլուխ նորհատյանին, միիցյապես Քյույա-

նին ու շտաբս-կապիտան Զիլինդարյանին ձերբակալում ենք հետեւյալ որը. նահանգապետ Կարգանովին տեղից չենք շարժում, իսկ գեներալ Փիրումովն առերես յենթարկվում ե Ռազմինեղկոմին. Սակայն յերբ Ալեքսովը լսում է ձերբակալումների մասին, Մուսայելյանի կողմից կարուկ առաջարկվում ե ազատել դաշնակցական բանտարկւաներին ու ձերբակալություններ չկատարել:

Մի քանի ժամից հետո դաշնակցականներն ազատվում են: Հակառակորդը մեր սխալն ոգտագործելով, անմիջապես անցնում է կազմակերպչական աշխատանքների, մանավանդ, վոր մի շարք հիմնարկներ մենք գեռ չեյինք գրավել. — հատկապես քաղաքի ակումբներում դաշնակցականները հակարոշելիքան ազիտացիա յեն մղում և միեվնոյն ժամանակ կազմակերպում կարսում կուտակված դաղթականական մասսան: Մայիսի 11-ին ցերեկվա ժամը 2-ին դաշնակցականները՝ մավզերիստ Մացակի գլխավորությամբ հարձակվում են Ռազմինեղկոմի և շտաբի վրա, սակայն չեն կարողանում զինաթափել:

Դուկասը, վոչ միայն իրեն չի կորցնում, այլ զգալով այն ճակատագրական սխալը, վոր արել եր Ռազմինեղկոմը՝ դաշնակցականներին ազատ արձակելով, վճռում ե ուղղելու իրեն հատուկ հեղափոխական տեմպերամենտով նա նետվում ե առաջ ու հեղափոխական զինվորների հետ միասին հետ մղում դաշնակցական վոհմակը ու պաշտպանում Ռազմինեղկոմը՝ Մինչեռ յեղան ընկերներ, վորոնք խուճապի յենթարկվելով, փախան:

Երջանի մոլական ու թուրք զյուղերն ապստամբության լուրն առնելով, անմիջապես ուղարկում են իրենց ներկայացուցիչները, խնդրելու Ռազմինեղկոմին, վոր իրենց զենք տան՝ դաշնակցականներից պաշտպանվելու համար: Նույն առաջարկն անում ե նաև Կարսի ուսւական ազգային խորհուրդը: Ռազմինեղկոմը այդ առաջարկը կարուկ կերպով մերժում ե:

Մեր կազմակերպության աշխատանքների թուլությունն ու անվճռականությունը, մյուս կողմից պարենի սուր պակասը, այդ որեւին, Ռազմինեղկոմին դրել եյին ծանր կացության մեջ, այնպես վոր այլևս անհնար ե լինում մնալ քաղաքում: Ռազմինեղկոմը վճռական հարձակման փոխարեն, մտածում ե ինքնապաշտպանության մասին. և մայիսի 12-ի գիշերը բարձրանում ե բերդը, կտրվելով վոչ միայն քաղաքից, այլ նաև Ալեքսովը ու Մարիղամիշից, վորը և վորոշում ե ապստամբության բաղդը:

Դաշնակցականներն անմիջապես գրավում են կայարանը: Ռազմինեղկոմը ամբողջովին ողակված եր թշնամիներով: Ռազմինեղկոմը հա-

վատարիմ մնացած զինվորներով հետ և նահանջում միանալու Ավեք-պոլի ապստամբներին, չիմանալով թե ինչ և կատարվում այնտեղ:

Նահանջի ժամանակ մեր ընկերներն յերեք տեղ կռվի յեն բռնվում դաշնակցականների հետ: Մեկը Մացրա գյուղի մոտ մի դաշնակցական խմբի հետ, տերաերի զեկավարությամբ Յերկրորդը՝ Բաքրազիքրար կայարանի մոտ, իսկ յերրորդը Արգինայի ջրաղացի մոտ՝ մասուղերիստ Մացակի խմբի հետ, վորտեղ մերոնցից զոհվում են 11 հոգի: որանց թվումն եր նաև Դուկաս Դուկասյանը, Պետյա Ցափրակովը և ուրիշները. 10 հոգի գերի յեն ընկնում, իսկ մնացածները կարողանում են փախչել:

Ապստամբության ճնշումից հետո դաշնակցությունն սկըսում ե «յերկիրը խաղաղացնող» քաղաքականությունը—ներքին խոռվարաններից: Մեր կազմակերպությունը քայքայման և յենթարկում: Բոլորս բանտարկվում ենք. հալածվում են նաև այն ընտանիքները, վորոնց կոմմոնիստ զավակները փախել եյին Կարսից: Բայցուրդցյանը կարողացել եր փախչել Սարիղամիշից, սակայն դաշնակցականները նրա պառակ մորը բռնում են, վզից մի մեծ քար կապում ու յերկար ծեծից հետո, խեղզամահ անելով, գցում գետը:

Արտակարգ դատարանը շատ կոմմոնիստների գնդակահարում է, դատավարությունը ձեական բնույթ եր կրում ու տեղում ե կես ժամ դրվակ և ամենազաժան միջոցների յեր դիմում բանտարկված կոմմոնիստների բերանից վուել խոսք կորպելու. բայց քանի վոր նրան այդ չեր հաջողվում, ապա սկսում եյին ծեծել ու ամեն կերպ տանջել:

Մեզ յերեքիս՝ Մաշա Լալայանին, ինձ ու Աւոն Հովհաննիսյանին դատեցին միասին, գործողությունը տեղից մոտ մի ժամ: Նախնական դատավճիռը, վոր ընթերցվեց—վճռել եր յերեքիս ել գնդակահարել, բայց այդ վճիռը փոխում են ու վորոշում ինձ յենթարկել և տարվա տարժանակիր աշխատանքի, Աւոնին՝ 10 տարի, (վորին հետազայում գնդակահարում են Յերեվանի բանտում), իսկ Մաշա Լալայանը յենթարկվում ե ցմահ կալանքի:

Անուշ Փորսուղյան.

ՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐՄԻ ԵՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ոգոսառություն 10, 1924 թ.

Ցերեան

Մայիսի մեկը մի սպառնալի ազդանշան հանդիսացավ Հայաստանում հասունացող գեղքերի համար: Մեր կարսի նկուղային կաղմակերպությունը շահագրգուված լինելով Մայիսի 1-ի տոնները հաջող անցկացնելու մեջ, ամենաբարձր յեռանդ ցուցադրեց այդ գործում: Արդյունքները սպասածից դուրս յելան. ամբողջ աշխատավոր մասսաները, և կայագորի զինվորները, գրեթե առանց բացառության, մեր հետեւից եյին դալիս, հաջողությունը հսկայական եր, մեր կազմակերպած միտինգը մեծ հաջողությամբ անցավ: Դաշնակների կողմից մեր միտինգները խանգարելու բոլոր փորձերը հաջողություն չունեցան. միքանի մեր գեմ դուրս դալու փորձ անող դաշնակները սուլոցի յենթարկվեցին, մասսայի կողմից: Նույն որը քաղաքի մյուս մասերում դաշնակների կազմակերպած միտինգները հաջողություն չեն ունեցել: Դաշնակները կանգնելով իրենց մահացու վտանգի, բայլշկիզմի գեմ հանդիման, առաջին պահուն իսպառ կորցրել եյին գլուխները և հետեւյալ որը միայն ձեռնարկեցին միքանի ընկերների ձերբակալման: Բայլշկիզմների գեմ կովելու համար նշանակված եր ներակա կորդանովը, և նույն նապատակով մի շարք արտակարգ միջոցներ եյին ձեռնարկել. ամենուրեք գործում եյին դաշնակ լրտեսները, մեր ընկերների հետեւից սկսվեց ուժեղացած հեաախուզություն:

Կուսակցության կենտրոնական կոմիտեյի կողմից—ուղարկված եյին ընկ. Կուկաս Ղուկասյանը և ապա հրահանգներով յեկավ Ալեքսանդր Նազարյանը: Յես առաջին անգամ առիթ ունեցա հանդիպելու Ղուկաս Ղուկասյանին մեր կազմակերպության նախավերջին ժողովում, ուր յես մեծ դժվարությամբ անցա: Ընկ. Ղուկաս Ղուկասյանը, վոր մի յերիտասարդ աշխատող եր, մեծ տպավորություն թողեց ինձ վրա: Նրա կրակոտ ճառը վոր լի յեր յերիտասարդական թափ ու հրով, նրա հաստատ անհողողող, հավատը գեպի մեր գործի հաղթանակը, ատելությունը գեպի իր դասակարգային թըշնամիները, և ինչ ել լինի մինչև վերջը կովելու հաստատ վճռականությունը, մեր ներկա յեղող ընկերների հիացմունքն եր առաջնում, նպաստելով հեղափոխական վոգու և տրամադրության բարձրացման: Այդ նիստում ընդունվեցին մի շարք լուրջ վորոշումներ ապստամբության տեխնիկայի վերաբերյալ: Հետեւյալ նիստերին (մինչ

ապստամբությունը) յես չկարողացա լինել: Մեր բոլոր ընկերները նիստ-աի ժամանակ շրջապատվել եյին մառազերիստներով, բայց չնորհիվ պարետային վաշտից շուտափույթ հասած դինված ընկերների, հա-ջողվեց ցրել մառազերիստներին և այսպիսով ազատել ընկերներին: Նախընթաց որը յես տեղեկացել եյի պատրաստվող ապստամբու-թյան մասին և սպասում եյի ընդհանուր ազգանշանին:

Մայիսի 9-ին, վաղ առավոտյան ապստամբությունն սկսվեց:

Ամբողները մեկը մյուսի հետեւից սկսեցին ապստամբվել. սկզբում ապստամբվեց Բուչկեն Փորտը, այնուհետեւ «Լորիս Մելիկովը» Ալեք-սանդը II Փորտը, «Շատիլով» և «Ֆադդեև»: Սպաները հազվա-գույտ բացառությամբ պասսիվ եյին և չեյին դիմադրում: 5-րդ գումարը գնալիս մեղ հանդիպեց գնդի հրամանատար գնդապետ Շահ-գուբաղովը, վորը հայտարարեց, թե իրեն արգեն հայտնի յե կար-սում կատարված հեղաշրջումը և վոր ինքն իր բոլոր սպաների հետ միասին քննելով այդ հարցը, վորոշել ե ճանաչել Խորհրդային իշ-խանությունը և հպատակվել Կարսի Կայազորի Ռազմահեղափոխա-կան Կոմիտացին: Մեր գալուստն իմանալով, զինվորները խումբ-խումբ մոտենում եյին մեզ, մեր ընկերները մի շարք ճառերով բա-ցարում եյին զինվորներին հեղաշրջման իմաստը և այնուհետև գումարը կատարյալ կարգով անցավ հանդիսավոր մարշով: 5-րդ գնդի վիճակի մասին միամտվերով, մենք գնդացիրներսավ զինված բեռնա-կրի վրա անցանք քաղաք գեպի գարաժը, վորտեղ մեղ սպասելու յեյին, մեր քաղաքացիական ընկերները այն ե՝ Արշակ Թոմասյանը, Սաշա Նազարյանը, Ղուկաս Ղուկասյան, Ղաղանջյան, Լալայան, Կրեստովսկի, Ցավրակով, Փորտույյան ու ուրիշները: Գարաժին հաս-նելով, մեղ շրջապատեց մի ահազին ամբոխ դաշտացած մառ-զերիստների, վորոնց մեջ հատկապես աչքի յեր ընկնում Կարսի մեջ նշանավոր մառազերիստ Մացակը և ապա տաճկական ծառայության պորուչիկ Յենոքյանը: Շնորհիվ մի բուռն անվեհեր և անձնվեր ըն-կերների ձեռք առած արագ ու վճռողական միջոցների, հաջողվեց ցրել մառազերիստներին: Գարաժում հավաքվելով, մենք պարզեցինք վոր բերդում գտնվող միքանի մասեր չեն ցանկացել հարել ապս-տամբված հեղափոխական մասերին, այն ե՝ բերդի ամբողջ ստորին մասը իր Փորտերով: Հենց սկզբից և յեթ դրությունն աննպաստ եր և կոիվ անհավասար, սակայն չնայած դրան, մեզ հաջողվեց գրավել կայարանը, հեռագրատունը, փոստը ու այլ հիմնարկությունները: Ցանկալի չհամարելով կարվել մասսաներից, վորոշված եր հեղումը տեղափորել քաղաքում: Գարաժում հեղկոմին հատկացրված վայրը շատ անպետք եր ըստ ամենայնի, բայց մենք հնարավորություն

Հունեցանք ավելի լավ շենք վերցնել: Հեղկոմը մեծ մասամբ պահպանվում եր մեղ մինչև վերջը անձինք մնացած և հավատարիմ պահեսային վաշը, վորի ոգնությամբ մեղ հաջողվեց Կարսի պահակային բատալիոնից հետ խլել 4 կանոնավոր գնդացիրներ. բայց դժբաղդաբար մեղ չհաջողվեց զինաթափել ամբողջ բատալիոնը: Ալեքսանդրից Հայաստանի բոլոր զինված կարմիր ապստամբյալ մասերի հրամանատար Մուսայիշյանը հաղորդեց Ալեք-պոլում տեղի ունեցած անարյուն հեղափոխության մասին. բոլոր մասերն իրենց սպաների գլխավորությամբ անցել եյին կարմիրների կողմը: Ընկ. Մուսայիշյանը մեղ առաջարկեց Ալեքպոլի որինակին հետեւլով ձեռնպահ մնալ անիմաստ արյունահեղությունից և ձերբակալություններից, խորհուրդ տալով համաձայնության գալ գեներալ Փիրուալի, Հօվիտիշյանի և գեներալ նահանգապետ Կարգանովի նես: Իր հրամաններն իկատար չածելու համար ընկ. Մուսայիշյանը սպառնում եր մեղ—տրիբունալի դատին հանձնել: Այսուհետեւ նա խոստացավ միքանի ժամկից իր զրահապատով ժամանել Կարս:

Ազգաբնակությունն իսկույն իմացավ, վոր մեր գլխավոր հրամանատար Մուսայիշյանը, պատրաստվում եր ժամանել: Մենք բոլորս անհամբերությամբ սպասում եյինք զրահապատի գալուն, բայց վորչափ մենք զարմացանք յերբ հայտնի յեղավ, վոր Ալեքպոլում գործերը գնացել են դեպի վատը և վոչ մի խոսք չի կարող լինել զրահապատի գալու մասին:

Սարիդամիշից ոգնություն եյին խնդրում, հաղորդելով մեղ մատզերիսաների հետ յեղած ընդհարման մասին, վորի ժամանակ սպանվել եր նշանավոր մառկերիստ Խանգոն. ժամանակն անցնում եր, հականեղափոխական ուժերն աճում եյին ու կազմակերպվում, գյուղերում բայլշեմիկների դեմ սւժեղացած հարձակումներ եր լինում: Կարսի ազդաբնակչությունը զանազան պրովակացիաների ազդեցության տակ ինչպես որինակ, թե հեղկոմը կաշառված է տաճիկներից, Աղբաբայի թուրքերից, մալականներից և այլն, հետզհետեւ անջատվում եր մեղանից:

Կազմալուծումը տեղի յե ունենում նաև մեր մասերում, նրանց վրա չեյին կարող ազդել նաև ընկ. Ղուկասյանի և մյուս ընկերների կրակոտ ճառերը և չեյին կարող վերականգնել դրությունը:

Մեր անել դրությունը հաշվի առնելով գեներալ Փիրումովը և նրա մյուս համախոնների շայկան, վոր առաջ սպասողական դիրք եյին բռնել, հարություն առան, սկսեցին մեր դեմ ակտիվ գործել կազմակերպում եյին սպաներին: Հեղկոմը գտավ, վոր ուժերի նման փոխհարաբերությամբ մենք այլևս չեյինք կարող պահել մեր ձեռ-

քում քաղաքը, կայարանը, փոստհեռագրատունը և այլ հիմնարկները, և ռազմական տեսակետից ավելի քան անգրագիտություն կլիներ այդ պայմաններում մեզ համար նման աննպաստ դասավորությամբ դաշնակների հետ կույի բռնվել: Այլևս անկարելի յեր մեալ քաղաքի մեջ, այսպես նրանք մեզ կրոնեյին, հողոտեյին: Վորոշված եր հեղկումը փոխազդել Ալեքսանդը II ամրությունը, այստեղ ել ամրացնել մեր ուժերը:

Այդ բանն արվեց ապստամբության յերրորդ որը. հետեւյալ որն ամրությունից դիտելիս, մենք քաղաքում ինչ վոր կենդանություն նկատեցինք: Քաղաքի կողմը հետախուզության ուղարկված յիրկու զինված բեռնակիրները զինաթափ արվեցին և զրավեցին դաշնակներից: Այս յերևույթը տեսնելով, յես հրամայեցի ամրությունից կրակ բանալ քաղաքի կողմը, վորի հետեւանքով հաջողվեց հետ վերցնել մեքենաներից մեկը: Մեր ամրության մեջ յեղած հրեանիների զինամթերքի պակասությունն ստիպեց ինձ մարդ ուղարկել «Շատիլով» Փորտը, վորպեսզի այսաեղից մեր կողմը փոխազդեն գոնե մի վաշտ յերեք գույմանոց մղիչ թնդանոթերով, սակայն իմ ուղարկած մարդիկ վերադարձան դատարկ, հայտարարելով, վոր «Շատիլովցիք դավաճանել են և անցել են դաշնակների կողմը»: Այդ վիճակում այլևս չեր կարելի հապաղել: «Շատիլովի» ամրությունը ունենալով ամենալավ մարտկոցային զինափորումը և տեղեկազրությունը իր և մարտկոցների 16 թնդանոթ ներառյալ, նաև ժամ 6 վյումանոցները խաչաձեռող կրակով կարող եր մեր ամրությունը վոչնչացնել և ջնջել միքանի րոպեյի մեջ: Ստեղծված դրությունից դուրս գալու մի յելք եր միայն մնացել—անցնել «Բուշկիե» Փորտը կից Փորտերով՝ այս և Բարոն-Ռոպալ «Մուխա» և Լուփու—Մելիքով: «Բուշկիե» ամրությունը կարող եր միմիայն մքել «Շատիլովի» դեմ: Հեղկումը փոխազդվեց Բուշկիե ամրությունը: Ֆորտից մենք թնդանոթածգությունով հարվածում եյինք քաղաքը, կայարանը և այերողբումը վերջում (ըստ մեր տեղեկությունների թուչքի համար և մեր դիրքերի վրա ոռոմբեր ձգելու սավանակներ եյին պատրաստում): Դաշնակներն աստիճանաբար շրջապատում եյին մեզ սակայն չեյին համարձակվում մեզ վրա. գրոհ տալ, քանի վոր դաշտատ դժվար եր և հակայական զոհերի պատճառ կլիներ: Ամրության մեջ առանց մթերքի ու ջրի մեալով, ամեն կողմից մեր թնամիներով շրջապատված լինելով, մենք պարզ բան ե, վոր այս դրությամբ յերկար մեալ չեյինք կարող: Վորքան վոր հնարավոր եր դիմանում եյինք, մինչեւ վերջին ճիզը: Դիշերները մենք լուսատու հուավառությամբ, անընդհատ լուսավորում եյինք շրջապատը, յեր-

Կյուղ կրելով գրոհից Գիշերվա ժամ 2-ին հավաքվեցինք մի խումբ այս ընկերներից, վորոնք ցանկանում եյին դաշնակների ողակից անցնել և գնալ Ալեքպով, Տասներորդ հոդի-զինվելով, բավական հեշտ կերպով հաջողվեց ավելի թույլ վայրերով խփելով դաշնակների պահակային պատճենները. դուրս թռչել Զախմախ, մայականների գյուղի միջով գեպի Մազրայի կողմը: Մազրայի քահանան, վորին դաշնակներն իմաց եյին տվել մեր փախուստի մասին. իր շուրջը հավաքելով մասուցերիստներին և այլ նման սրիկաններին, բռնեց կամուրջը և դրանով մեր ճանապարհը կտրեց: Տեղի ունեցավ կոփիվ, վորի հետևանքով մենք ջարդեցինք քահանային իր բանդայով, գրավելով ահազին թվով գենքեր և յերեք ձի: Հապաղել չեր կարելի, պետք եր գնալ առաջ: Մազրայից մինչև Ալեքպով լեռնային ճանապարհը, գրան ավելացրած և Կարուսմ անցկացրած վեց անքուն գիշերները մեղ բոլորովին ուժասպառ եյին արել, բայց մեր վողին ամուր եր, մենք տողորված եյինք մի ցանկությամբ, ինչ գնով ել վոր լինի համանել մեր ընկերներին: Ճանապարհին մենք միքանի անգամ առիթ ունեցանք զենքով ուղի բանալ: Վերջապես հասանք Արգինե գյուղը՝ Ալեքպովից 18 վերստի վրա. բնակիչներից տեղեկանալով վոր մենք արդեն գտնվում ենք խորհրդային իշխանության ազգեցության շրջանում և խորհրդային հողամասերում, մյուս կողմից ինկատի ունենալով, մենք հոգնածությունը և այլ հանգամանքներ, մենք վորոշեցինք այդ գյուղում ջաղացի մոտ հանգստանալ, մեր պահակների պահապանության տակ: Բայց մեր հանգստանալուց հազիվ մի ժամ չանցած միքանի բեռնակիրներ մասուցերիստներով, 70 հոգուց վոչ պակաս թվով, գլխավորությամբ Մացակի, Զելիմ-Խանի և Մուրադ-Խանի, գալով խճուղիով և անցնելով Արփաչայի կամուրջը կանգ առան, իջան և սկսեցին առաջանալ մեղ վրա, կատաղի հրացանային և գնդացիրային կրակ բանալով:

Մենք նույնպես պատասխանեցինք, պահելով կամուրջը մեր անմիջական կրակի տակ, նրանք միքանի անհաջող փորձ արին կամուրջն անցնելու. ամեն անգամ մեր խփած մասուցերիստները ջուրն եյին ընկնում, այստեղ ել վիրափորկեց մեր գնդակով՝ յերկու վոտքից նաև ինքը նշանավոր Մացակը: Մեր ուժերը թուլանում եյին. փամփուշտներն սպառվում, ընկ. Ղուկաս Ղուկասյանը մահացու վերք ստացավ, փոխազրկեց ջրաղացը, վորտեղ հետո խփեց դաշնակների կողմից: Մինչ այս, մինչ այն մասուցերիստների մի խումբ մյուս կամուրջով մեր հետեւ անցավ, նպատակ ունենալով մեղ շրջապա-

տելու ծայրերից ու գյուղերից հավաքվում եյին զինված զաղթակաները, մառազերիստներին ոգնություն համար ալուս Յես 5 ընկերների հրամայեցի գերիշխող բարձունքը զբավել և մեզ հրաձգությամբ ոգնել, հնարավորություն տալով մասցյալ ընկերներին նահանջել տեղից Սկավեց գիրքից զիրք վազելու Այդ պերեբեժկաների ժամանակ յես վիրավորվեցի ձափ ձեռքիցս, սակայն արյունահոս շարունակում եյի, կրակելով նահանջելու Այդ մոմենտին զաշնակները վրձռական արշավանք կատարեցին, գրավեցին կամուրջը Մեր այն հերոս ընկերները, վորոնց չհաջողվեց նահանջելու առյուծների պես եյին կռվում շեշտակի գնտականարելով մառազերիստներին և ձեռքի ուսմբներ արձակելով, և քաջերի մահով ընկան զահիճների ձեռքից Սպանվեցին՝ Դուկաս Դուկասյանը, Սուրեն Ծառուկյանը, Ցավրակով, ընկ. Կրեստովսկին ընկ. Ռնիկ, ընկ. Ռնաննես, յերկու շոփֆերներ և այլք, վորոնց տնուն ազգանունը չեմ հիշում: Մենք վողջ մասցածներս, անցանք լողալով Արփաչայ, ոգտվելով զիշերային մթությունից, այս այն կողմը ցրվեցինք: Յես վիրավոր ձեռքով, ընկ. Նազարյանի հետ միասին վաչ մի կոպեկ փող չունենալով, սոված, խոսով կերակրվելով, մի շարք գեղերումներից, տանջանքից ու չարչարանքներից հետո անցանք Ալեքպոյով Ախալքալակ, Բակուրյանի, Բորժոմ և Թիֆլիս:

Կարսի կայազորի բոլոր ապստամբված կարմիր դորամասերի հրամանատար:

Մ Ե Լ Ի Կ Ո Վ

1920 թ. Մայիսին

ՍԱՐԻԴԱՄԻԾ

ՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԵՐԻԴԱՄԻԾ

Խոսելով Սարիդամիշիք գաղանի կազմակերպության մասին, չի կարելի չը խոսել այն ժամանակ Սարիդամիշում կանգնած Հայաստանի ամենահեղափոխական գնդի՝ 4-րդ գնդի մասին։ 20 թ. կարծեմ փետրվարին եր, գնդից մեզ մոտ յեկավ Լևոն Քոչարյանը և հայտնեց, վոր գնդում կան հեղափոխական ընկերներ, պետք ե կապվել նրանց հետ և միասին աշխատել. կարճ ժամանակում գնդից ծանոթացանք ընկ. Կարո Գարագաշի հետ, վորի միջոցով և զեկավարությամբ գընդում ևս կազմակերպեցինք բջիջներ։ Ամբողջ բանվորությունը և 4-րդ դունողը, բացառությամբ մեկ-յերկու վաշտի, մարտ ամսից հետո ամբողջովին կանգնած եյին մեր կազմակերպության թիկունքում։

1920 թ. ապրիլին յես գնացի Ալեքպոլ և զեկուցեցի կոմիտեյի անդամներին մեր դրության մասին։ Կոմիտեն Սարիդամիշ ուղարկեց պրոֆեսալիոնալ կուսակցական ընկ Ադոկին (Անդրանիկ Շուլզուրյան—գնդականարվեց)։ Ընկեր Ադոկը մեր կազմակերպության վորդին դարձավ։ Չնայած թոքախառվ ծանր հիվանդ եր, բայց կարճ ժամանակում անցավ կազմակերպության գլուխ և վոտքի կանգնեցրեց։

Զորքի և բանվորության կապը ամրացավ. բջիջները շատացան։ Կարագաշից և Քոչարյանից բայցի, գնդից մեզ հետ ակտիվ աշխատում եյին Արքիար, Սա. Խուդապարյան, Ս. Խուբալյան, իսկ սպաներից ամենաակտիվ կերպով մասնակցում եյին ընկ. ընկ. Լիպարիտ Միշյան, Լևոն Նալբանդյան, Ա. Հակոբյան և մայիս մեկից հետո Զմշկյան։ Վերջինիս դաշնակները ոգոստոսին գնդականարեցին Ցերեանի բանդում, իսկ Լ. Միշյանը և Լ. Նալբանդյանը հետագայում կարմիր հերոսներ եյին, և զոհվեցին փետրվարյան ավանդուրայի ժամանակ։ 20 թ. սկզբներին Միշյանը և Նալբանդյանը ձախ եսեր եյին, բայց եսերություն չեյին անում և ամբողջովին նվիրված աշխատում եյին մեզ հետ։ Ընկ. Ա. Շուլզուրյանի հրավիրած առաջի ժողովում նշանակվեցին բջիջի զեկավարներ։ Մենք ունեյինք հինգ բջիջ, Յ բանվորական, յերկուաը զինվորական։ Զինվորների հետ ժողովներին մասնակցում եր գնդի գրագիր Պարոնիկյանը, վորը և ըստ տեղեկությունների մեր գաղտնի ժողովների մասին հայտնել եր իշխանությանը։ Պարզ իմանալով, վոր բանվորներին պաշտպանում են զինվորները, իշխանությունը վորոշել եր նախ

գնդի կազմակերպությունը քայլայել Ապրիլի 16-ին դաշնակները բանտարկեցին Կարագաշին, և Քոչարյանին և Արփիարին։ Կոմիտեն իմաց տվեց գնդի ընկերներին և և Մխչյանի և և Նալբանդյանի ղեկավարությամբ, հետեւալ որը ապրիլի 17-ին 4-րդ գունդը շրջապատեց Սարիղամիշի կայարանը, իմաց տվին Ղարազուրդան հետախուզական կամանդին, վորը նույնպես յեկավ և միջազգակետից պահանջնեցին արձակել ընկերներին։ Միջիցիապետը տեղյակ չինելով, դիմեց գնդապետ Միրիմանովին և Վերջինս խոստացավ արձակել բանտարկյալներին յեթե զինվորները ցրվեն Բայց կոմիտեն վորոշել եր, վոր զորքը չպիտի հեռանա, մինչեւ վոր բանտարկված ընկերներին նրանց ներկայությամբ չարձակեն։ Այդպես ել յեղագ։

Ապրիլի 22-ին Սարիղամիշ յեկավ գեներալ Ռսիալովը՝ քննելու վերսիցալ դեպքը, 23-ին բանտարկության վորոշած զինվորներին առանձնացրին մի վագոնում, իսկ զորքին խալաստոյ փամփուշտներով հանեցին մոտիկ անտառը զինավարժության, վորպեսզի կարողանան բանտարկյալներին դադանի հեռացնել քաղաքից։ Մենք հետեւում եյինք Ռսիալովի արարքներին. կայարանում պատահեց բանտարկվածներին վիճարող զինվոր Քեշլշքենդցի Սեթո Մուրազյանը, վորի միջոցով շտապ իմաց տվի և. Մխչյանին, թե ինչ և կատարվում կայարանում։ Անմիջապես յերկու զնդացիքային կամանդներ մոտեցան կայարանից վերսա ու կես հետու մի փոքր բլուրի վրա դիրք բռնեցին և սկսեցին կրակել զնացքի վրա։ Ընկերներին անմիջապես ազատեցին. զինվորները վերադարձան ուռաներով։ Գեներալ Ռսիալովը հենց ասածին կայարանից վերադարձավ Սարիղամիշ, վախենալով, վոր գնդի մեջ կարող եր թյուրիմացություն պատահենլ Բայց յերկաթուղու կողեկտիվը և գնդի ընկեցները պահանջեցին անմիջապես հեռանալու Յերկու ժամեմբ հետո գեներալը վերադարձավ հենց եր բերած պարավողով։ Նույն որը յերեկոյան բանվորների և զինվորների ընդհանուր ժողովում, շնորհավորելով մեր տարած հաղթանակը, յերդվեցինք միացյալ ուժերով, թե թեկի թված պաշտպանել մեր այս հաղթանակը, կովերով մինչեւ վերջը։ Մոտենում ել մայիսը։ Պատրաստվեցինք տոնելու մայիսի 1-ը։ Կարմիր կտորը քաղաքում չկար, դիմեցինք բժիշկ Լիզա Կարողյանին, նաև հիվանդանոցում յեղած կարմիր կտորներից տրամադրեց մեզ։— Լողունգները գրեցինք անտառում։ Ապրիլի 30-ին կողեկտիվի միացած ժողովում վորոշվեց տոնակատարության վայրը և ընկերների անելիքները։ Մի սաստավ ուղարկեցինք, վորպեսզի Կարազուրդանից սկսած, բանվորներին և զինվորներին բերի Սարիղամիշ, մեզ հետ մասնակցելու տոնին։ Մայիսի մեկին Ղարաբարդան ուղարկված զնացքը վերա-

դարձավ առավոտյան ժամը 6-ին, բերելով իր հետ մի քանի հարյուր զինվորներ և բանվորներ։ Նրանք յեկան զուռնայով և գրոշակ-ներով. մենք զիմավորեցինք և միասին անցանք 4-րդ գունդ։ Ճանապարհին մոտեցավ պարլամենտի անդամ Նիկոլայ Ողարաշյանը, մի քանի դաշնակների հետ և խնդրեց, վոր ճառերին սուր կերպարանք չտանք։

ՍԵՐԻԱ. ԸՄԴԱՀ ՓՀԿ-Ի ԿԱԶՄԻՑ



Կարագած Կարո
(Մահացած)



Մայշան Լիպարիս
(Սպանված)



Առաքելյան Ալեքսանդր

Կարագած Կարո և մյուս զինվորական ընկերները հայտնեցին, վոր զինվորներից վտանգավոր տեղերում պահակներ և դրված։ Միտին-զը բացվեց. առաջին խոսքը տրվեց մասուզերիստ Խնուռացի Ավրոյին. նա իր ճառի մեջ ասաց, վոր «ակետք չե հեղափոխություն, մեր հայրենիքը շրջապատպած ե թշնամիներով և մեր մայր Հայաստանը ձեռքից կփառ»։ Այդ խոսքերից հետո, մասսան թույլ չտվեց շարունակելու. նրանից հետո խոսեց մի ոռւս ուսանող, և մի շարք ընկերներ. դաշնակների կողմից բարձրացավ պարլամենտի անդամ Նիկոլայ Ողարաշյանը, վորը խոսեց մեծ և ահեղ Հայաստան ստեղծելու մասին, և հորդորում եր, վոր պետք ե որինակ վերցնել մեր նախնիքներից, վորոնք զոհվել եյին ազգի փրկության և կրոնի համար։ Նրանից հետո խոսեցի յես՝ բացատրելով մայիսի 1-ի նշանակությունը, մատնանշելով դաշնակների արարքները, զինվորների և բանվորների վրա զործադրած հետապնդումներն ու ճնշումները, վորոնք կատարվում են հենց Սարիդամիշում։ Դուքս յեկավ պալկովսիկ Պապոնցը, և ասաց, վոր այստեղ ձեզ համար ամբիոն չե, խնդրեմ ձեր ճառի տոնը փոխեք։ Դրությունը լրացացավ, և մենք միտինգը փոխադրեցինք կայարան։ Կայարանում խոսեցին ընկ. Անդրանիկ Ճուղուրյանը, վորը բացատրեց մայիսի մեկի նշանակությունը բանվորների, զինվորների, զյուղացիների և

բոլոր աղքերի աշխատավորության սերտ դաշինքի մասին։ Դուքս յեկալ ընկ. Կարո Կարագաշը և իր վողջույնի մեջ հայտնեց, վոր Սարիղամիշ ևն յեկել մի խումբ մասուղերիստներ, Միխո, Շարո, Արո, Արջ Պետրոս և ուրիշները, վորոնք իրենց խմբերով սպանում են կրտորել բոլշևիկներին։ Խոսեցին զինվորներ և հայտարարեցին, վոր յեթե մի դեպք պատահի, 4-րդ գունդը պատրաստ և հատուցում տալ այդ բոլորին։ Զինվորությունը պահանջեց, վոր այդ խմբապետները իրենց խմբերով հեռանան, հակառակ դեպքում դորքն ինքը կկատարի այդ Միահնագի վերջում քաղաքից յեկալ աշակերտությունն իրենց ավագ ուսուցիչ Վ. Տ. Գրիգորյանի հետ կարմիր դրոշակներով, կեցցե բանվորությունը և այն լողունգներով։

Պրօֆմիության դաշնակներից կազմված վարչությունը ևս վորոշել եր տոնել բայց նրանց հետեւց բանվորություն չփնաց այլ միայն մեկուսացած նայում եյն միտինգին։

Այդ որվանից այլևս բանվորները և զինվորները չեյին յենթարկում իշանությանը, համբերության բաժակը լցվել եր։ Մենք արագությամբ սկսեցինք պատրաստվել։ Մավզերիստները ևս անցել եյին աշխատանքի։ Յերկու-յերեք որից հետո լսեցինք, վոր խմբապետները և մյուս պաշտոնյա գաշնակները անտառում գաղտնի ժողով են գումարել և փորձում են քաղաքում միտինգ անել, վորպեսզի գան և մեզ սամասուդ անեն։ Շտապ նիստ հրավիրեցինք, ակտիվ ընկերների պահպանությունը հանձնեցինք ընկ. Լ. Միջյանին, վորը գնդի զինվորներով գրավեց քաղաքի գլխավոր կետերը։ Կոմիտեյի կողմից գրավոր ուղարկմատումներկայացրինք, գնդապետ Միրիմանովին—գաղարեցնել հալածանքները և հեռացնել խմբապետներին։ Խմբապետները փախան և թագնվեցին։ Դաշնակներն սկսեցին զանգան պրովակացիստներ տարածել մեր հասցեյին, վոր իրը Սարիղամիշը կոմունիստները Ղարազուրդանի ճակատի զորքը հետ են բերել և սահմանը թողել թշնամու առաջ բաց։ գրությունը լուրջ եր։ Ընկ. Ադոկի հետ 6-ին ուղեկորվեցինք Ալեքպոյ՝ զեկուցելու և կոմիտեյից հրահանգներ ստանալու։ Ադոկի հիվանդությունը խանդարում եր, նա մնաց Կարսում, յես գրավոր զիմումով գնացի Ալեքպոյ։ Մեր այդ գրավոր զեկուցումը Ավիսը ընկ. Պետյա Կուզնեցովի միջոցով ուղարկեց Արմենկոմին։ Այդ որը Մուսայելյանի զրահազնացքում կոմիտեյի նիստ եր, վորտեղ ներկա եյին ընկ. Ավիս, Մուսայելյան, Դաստամատ Տ. Միմոնյան, բժ. Մելքոնյան և այլ ընկերներ։ Յես զեկուցում տվի, վորտեղ յես նկարագրելով դրությունը և մեր 4-րդ գնդի պատրաստ լինելը, առաջարկեցի թույլ

տան Սարիղամիշից սկսել ապստամբությունը։ Այդ մասին արտահայտվեցին և ինձ առաջարկեցին վերադառնալ Սարիղամիշ, պատրաստվել և սպասել Ռազմիկղումի հեռազրին։ Շատապ վերադարձաւ Նիստ հրավիրեցինք և ընտրեցինք Ռազմիկղումի հեռազրին—ընկ. Ազուլի նախագահությամբ, անդամներ Մխչյան, Ասաքելյան, Կոխմալագին, Կարագաշ։ Մխչյանը նշանակվեց կարմիր բանակի հրամանատար, Կարագաշը նրա ոգնական, Կոխմալայիցինը քարտուղար և գծի կոմիսար։ Ընտրվեցին ակտիվ ընկերներից կոմիսարներ։ Սամվել Վականյանը բանտից ազատվեց յեկավ—նրան ընտրեցինք հաղորդակցության կոմիսար, Բ. Աքելին արտակարդ կոմիսարի նախագահ, Պ. Մատիշկան քարշի, Լ. Յերզինկյանը պարենավորման։ մյուս ակտիվ ընկերները ևս նշանակվեցին այս կամ այն զործերի ղեկավար։ Որինակ, Վ. Բայրուրդցյանը, Լ. Նալբանդյանը, Հակոբյանը, Վ. Տեր-Գրիգորյանը, Խուզաբարյանը, Ս. Ասիրյանը, Արփիարը, Զմշկյանը և այլն։

Մայիսի 8-ին հեռազրի ստացանք, վոր պատրաստվել և սպասել բրոնեիկի գալուն։

Մայիսի 10-ին ժամը 5-ին հեռազրի ստացանք Ալեքպոլից—ապստամբվել։ Ստորագրել եր Հայաստանի Կարմիր բանակի հրամանատար Մուսայելյանը։ Գիշերը պաշարեցինք քաղաքային վարչության շենքը, վորտեղ ուղարկեցինք քջիջի անդամ զինվոր Սեղբակին, վոր կոմիտեյի անունից առաջարկի դաշնակներին անձնատուր մինեն։ Մավզերիսատ Ղարիբը խփեց և սպասեց Սեղբակին։ Սկսվեց հրացանաձգությունը, մեր զինվորներին հրամայվեց գնդացիրային կրակ բաց անել շենքի վրա, վորի ժամանակ սպանվեց, մավզերիսատների ղեկավար խմբապետ Միխոն։ Նրանք անձնատուր յեղան և ըստըին բանտարկեցինք։ Նույն որը յես և Կարագաշը գնացինք Ալեքպով՝ ղեկուցելու բանտարկյաների վերաբերյալ։ Չորքը պահանջում եր բանտարկվածներին գնդակահարել։ Մեզ ասացին, վոր բանտարկվածներից վոչ վորքի չխփել մինչև Ռ. Հ. Կարգադրությունը։ Այդտեղ հայտնեցին վոր Սեպուհը Սարդարաբատի ուղղությամբ դալիս և Ալեքպովի վրա։ Մարդատար գնացքով վերադարձանք Սարիղամիշ։ Յերեկոյան Կարսի կայարանում ապստամբված ընկերները խուզարկում եյին գնացքը, վոր դաշնակները չանցնեն։ Կարսում հանդիպեցինք ընկ. Ղ. Ղուկասյանին, վորն ասաց. դրությունը՝ շատ լուրջ ե, մավզերիսատները զլուխ են բարձրացնում, պետք ե ուժեր ուղարկեք։ Սարիղամիշում վորոշեցինք շտապ պատրաստել մի զրահապատ գնացք և Կարսին ոգնության համար։ Մի գիշերվա մեջ կոխմալայգինի ղեկավարությամբ և վագնից պատրաստեցինք բրոնեիկի, 2-ը բաց, իսկ յերկուսը փակ, պատերի շուրջը դարսելով ավազով լցըած

տուպրակները: Բոլոր վագոններում տեղափոթեցինք գնդացիրներ: Զրահագնացքի պետ նշանակվեց Կարազաշը և ճանապրի ընկափ: Դաշնակները հեռազրաթելիրը կտրել եյին: Մեր զրահապատը վերադարձավ և հայտնեց, վոր դաշնակները, 12-ին ուղարկված գնացքը Կարսում կանգնեցրել են և չեն թողել գնա Ալեքսոլ: Գիծը անապահով եր: Մի քանի անգամ մեր գնացքը փորձեց անցնել, բայց Բեղլի-Ախմետ կայարանից չկարողացավ անցնել: Մենք կարվեցինք դրսի աշխարհից: Պարենի խիստ պակաս եյինք զգում:

Մենք ներսից վասնդ չունեյինք, բոլոր ակտիվ դաշնակներին և հակասակորդ զինվորականներին բանտարկել եյինք, իսկ մի քանիսը փախել, թագնվել եյին: Իսկ թե ինչ եր կատարվում դուրսը, չգիտեյինք:

Լուր եր տարածվել, վոր Կարսն ու Ալեքսոլը հաղթվել են: Միայն 16-ին Միջյանը հայտնեց, վոր Կարսից գեն. Փիրումովից Միրմանովի հասցեյով հեռագիր և ստացվոլ այն մասին, վորտեղ հայտնում ե, վոր Սեպուհը մեծ ուժով գալիս և Սարիղամիշ:

Քաղաքում վտանգավոր շարժում սկսվեց. հայտնեցին վոր Ղազար աղի տան շուրջը մավզերիստներ են շարժվում, այդտեղ մեր կոմիտեն եր: Այդտեղից տեղափոխվեցինք կայարան: Մայիսի 16-ի յերեկոյան նիստում վորոշվեց հացի պաշար պատրաստել վորպեսզի Սեպուհին դիմադրենք. դեմ առարկեց պարեն. կոմիսար լ. Յերզին-կյանը, նրան զինաթափ արինք, հանձնեցինք Միջյանին: Այդ ժամանակ վորոշ զինվորների կողմից սկսվեց թալաններ (Ամերկոմի պահուստներ): Կոմիտեն միտինգ հրավիրեց և կարգը վերականգնեց:

Սեպուհին դիմադրելու մեր վորոշմանը չեղոք մնաց մեզ հետ յեղած սպայությունը: Յերկու զնդացիրային կոմիսարները վնասականապես խոսի սվեցին սիրենեվ վերջը դիմադրել յեվ հավատարին զինվորների յեվ բանվորների հետ դիրք բռնեցինք: Բրոնկիկը պատրաստ կանգնած եր կայարանում: Քաղաքացիները զդալով դրության լրջությունը, պատգամավորություն ուղարկեցին, վորպեսզի կոփվ չսկսենք: Ամսի 18-ին 17-ի ուղարկած մեր պատգամավորները վերադարձան (Կուխմալագին, Արփիար, Լեն Նալբանդյան և փոխ գնդապետ Պապոնցը) հայտնեցին Կարսի և Ալեքսոլի անկման մասին:


Նախքան այդ, մեր շարքերում լքում եր սկսել. դեռ 17-ի առավույան մեզ թողեցին և Տաճկաստանի սահմանը անցան Վ. Տ. Գրիգորյանը, Վ. Բայրուրդցյանը և Աքել Բարիսը: Լ. Քոչարյանը գեռ մայիսի 1-ից առաջ գնաց Լենինական: Կոմիտեն իր վերջին խորհրդակցությանը վորոշեց անձնատուր լինել: Յեկավ զնդապետ

Միրիմանովը: Մեր հավատարիմ զինվորները կտրուկ հարց դրին գնդաղեաի առաջ, վոր վոչ մի ընկերոջ չփասեն: Նա յերդվեց: Ա. Հ. Կ. խնդրեց հավատարիմ զինվորներին և բանվորներին հեռանան—ցրվեն:

Մեզ մավզերիստները շրջապատեցին և ձերբակալեցին: Վոչ մի կոստություն չեղավ, վորովհետև դեռ վախենում եյին: Պրոֆմիության դաշնակցական վարչության աջակցությամբ հաջորդ որը բանտարկվեցին բազմաթիվ ակտիվ բանվորները: Մայիսի 19-ին բանվորությունից և բանակից ձերբակալված եյինք 50—60 հոգի:

Ամսի 21-ին յեկավ Սեպուհը և բոլորիս տեղափոխեց Կարս: Միշյանին, Նալբանդյանին, Հակոբյանին և Զմշկյանին տարան Յերևան, ուազմաղաշտային դատարանով դատելու: Այդ գիշեր Կարսի կայարանից բանտերը տեղափոխելիս, Կարսի շրջանից մոտ 15 այլ ընկերների հետ առանց դատի գնդակահարել եյին ընկ. Ադոկին, Կոխմալագինին, Սամվել Վոսկանյանին և Պյոտր Մատիչկային: Մի քանիշորից հետո բանտարկված միլիցիոներ չոփուու Վաղարշակը պատմեց, վոր, և ընկերներին գնդակահարել, ցցել են Կարսի լիճը: Վորի ցամաքելուց հետո միայն դիմում ծածկել են: Պատմում եյին, վոր մոտ 30 դիմում 2 ֆուրդունով, լճից տեղափոխել եյին: Կարսում գործում եր ն. Աղբալյանի նախագահությամբ ժողովրդական տրիբունալ, վորին փոխարինեց Յերևանից յեկած արտակարգ դատարանը: Մրանց յեկած որը վորոշել եյին 2 հուգու Կարսից և յերկուսը Մարիդամիշից գնդակահարել: Կարսից դատեցին Գարեգին Տ. Գրիգորյանին և Վասիլ Ռապիոնովին և նույն գիշերը գնդակահարեցին: Կանչեցին ինձ և Կ. Կարագաշին: Քննության ժամանակ դատարանին հանձնվեց մի դադանի ծրար. մեզ տեղափոխեցին բանտ: Լսեցինք, վոր Խ. Իշխանության նոտայի շնորհիվ դադարեցնում են գնդակահարությունները: Բանտային դրությունը ծանը եր: Մեզ հավաքել եյին մի կամերա, վորտեղ տիֆով ծանը հիվանդ եյին յերկու ընկերներ: 15 հոգի վարակվեցինք տիֆով, այդտեղ մեռավ մեր ընկեր Մարիբեկ Զալյանը: Բանտում յերկու անդամ հայտարարեցինք հացադուլ: մեր ընկերներից շատերը մնացին բանտերում մինչև Հայաստանի խորհրդայնացումը:

Ա. Առաքելյան



ԸՆԴՀԱՏՎԿՑՅԱ ԱՃԽԱՏՈՂ ԿԻՆ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԽՄԲԱՆԿԱՐ



Անդրեասյան Ս. օհուեն



Գևոնտյան Ա. օհուե



Միսիքարյան Վ. երգինեն



Բուրդումյան Աղավնի
(Սպաբառակեց)



Զոլախյան Արփիկ



Բաղիկյան Ա.
(Սպաբառակեց)



Քիմիկյան Հոհիսիկ

ՆՈՐ-ԲԱՑԱԶԵՏ

ՄԱՅԻՍԵԸՆ ԵՊՍՏԵՄԲՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ-ԲԱՑԱԶԵՏՈՒՄ

1918 թ. վերջերից դաշնակները, նկատելով վոր Նոր Բայազետի գափառում բայլեիկների գործնելությունը լայն ծավալ ե ընդունում և աշխատավոր զյուղացիությունը համախմբվում ե բայլշեիկյան կազմակերպության շուրջը, վախենալով լուրջ հետեամբ քներից, պահանջ են դնում աքսորել Նոր-Բայազետի սահմաններից կուտ. կազմակերպության ղեկավար ընկ. Հովհաննես Սարուխանյանին։ Այդ վորոշումն իրագործվում է, յերբ արդեն մեր ընկերները կոմ. կուսակցության անունից բացարձակ կերպով ժողովերը ու նիստերում դուրս ելին գալիս և մերկացնում դաշնակներին։ Նրանց ուշագրությունից չեր վրիպում և այն, վոր հետզինետեմեր կապն ուժեղանում եր Արմօնկոմի հետ և վերջինից անլեգալ պրականություն, թռուցիկներ և թերթեր ելինք ստանում։ Գրականությունը տարածելու համար գեռ 20 թ. ապրիլ ամսի վերջին Նոր-Բայազետում դաշնակները ձերբակալում են մի շարք ընկերների, վորոնցից Հովհաննես Դամարյանին և Պապիկ Մկրտչյանին աքսորում են Դիլիջանի գավառ, իսկ Հովհաննես Սարուխանյանին բանտարկում։ Միքանի որից հետո ստորագրություններ վերցնելով, կալանքից ազատում են ընկ. Սարուխանյանին, և աքսորում Յեղան։

Մայիսի սկզբներին Արմենկոմը վորոշում ընդունելով զինված ապստամբության, ընկ. Սարուխանյանին համապատասխան թիւ եկտիվներով մայսի 8 ին գործուղում ե Նոր-Բայազետ։ Շանապարհին ընկ. Սարուխանյանը թելենովկա և Որդակլու զյուղերի սիջե հանդիպում ե Նոր-Բայազետի գավ. կոմիսար Մովսիսյանին, վոր ն առաջարկում ե ընկ. Հովհաննեսին անմիջապես վերադառնալ թերեան։ Բացասական պատասխան ստանալով նա փորձում ե համոզել, ասելով վոր Նոր-Բայազետում նրան շմահ ե սպասվում։ բայց և այնպես ընկ. Հովհաննեսը հրաժարվում ե յենթարկվել կոմիսարին և սկսում ե շարունակել ճանապարհը, վորը սակայն արգելում ե Մովսիսյանը և կարգադրում ե վերադառնալ թելենովկա ու սպասել գավառից կարգադրության։ Շտապ մեկնելով թելենովկա, հետեւ բնովանդակությամբ մի հեռագիր ե ուղարկում, շաբանլուի, շատապ, Դեներալ Միլիկովին. Արդակլուի և Յելենովկայի միջև հանդիպեցի

Հովհաննես Սարուխանյանին, վորը վերադառնում եր Նոր-Բալաղետ, վորքան համոզեցի չգնալ, նա ինձ չլսեց խնդրում եմ անել կարդադրություն գավ. կոմիսար Մովսիսյան»:

Սիլիկովն այդ հեռագրին իսկուժն պատասխանում ե, վոր թույլ արքի Սարուխանյանին անարդել անցնելու Նոր-Բալաղետ, և մնել ուրիշ հեռագիր ել ուղարկում ե Սարուխանյանին հետեւալ բովանդակությամբ «Նոր-Բալաղետ Սարուխանյանին, ինդրում եմ գալ Ղարանլուխ անձամբ խոսելու», Այդ հեռագիրն ստանալուց մեկ որ անց, մայիսի 10-ին յերեկոյան ընկ. Հովհաննեսը գալիս ե Մարտունի, ուր առաջին հերթին տեսնվում ե ընկ. Սուրեն Մակարյանի և ինձ հետ, ու մի ժամ խորհրդակցելուց հետո վորոշվում ե կազմակերպել զինված ապստամբություն և Սիլիկովի առաջարկություններին ընդունած չգնալ. Այդ խորհրդակցությունից հետո ընկ. Հովհաննեսը գնում ե Սիլիկովի մոտ. վերջինս այդ ժամանակ բնակվում եր իմ բնակարանին կից փոստ-հեռագրատան սենյակներից մեկում. Հարկ յեղած դեպքում մեր բնակարանների միացնող փակ դրան հետեւից պարզ կերպով լսվում ելին հարեւան սենյակի խոսակցությունը. այն որն ել, յերբ Հովհաննեսն անցավ Սիլիկովի մոտ, յես ել մտա իմ սենյակը, գորպեսզի հարկ յեղած դեպքում ոզնություն ցույց տայի Սարուխանյանին: Սիլիկովն իր մոտ մի ժամվա խոսակցության ընթացքում աշխատում եր համոզել ընկ. Սարուխանյանին հրաժարվել կուսակցական աշխատանքներից, խոսանալով տալ նոան լավ պաշտոն, չաղ աշխատավարձ և թույլ տալ մշտապես ապրել Նոր-Բալաղետի գավառում: Իսյց ընկ. Հովհաննեսը կտրականապես հրաժարվեց և հայտնեց, վոր կոմմունիստական կուսակցության անդամները սովոր չեն վոչ անաշխատ յեկամուտով ապրելուն և վոչ ել մեր թշնամիների թելադրանքը կատարելու՝ չաղ վարձատրության համար: Դրանով վերջանում ե բանակցությունները և Սարուխանյանը հեռանում ե գեներալի սենյակից: Քիչ հետո Սիլիկովը հրավիրում ե խորհրդակցություն մասնակցությամբ գլուղի խմբապետների ու բարձր աստիճանավոր ոֆիցերների, վորոնք յերկար ու բարակ խոսելով «Հայրենիքի վատ դրության մասին», վորոշում են խիստ հսկողություն ունենալ ընկ. Հովհաննեսի վրա մինչև դաշնակցական Հալաստանում վերջ կտրվել խառնաշխոթ զրությանը և ապստամբություններին: Այդ լսելուց հետո կրկին անգամ տեսնում եմ Սարուխանյանին և նրան ծանոթացնում զրության հետ: Նույն յերեկոյան ապստամբություն կազմակերպելու առթիվ կատարվում ե աշխատանքի բաժանումը վորում յես և Սուրենը միքանի զինվորականների հետ ստա-

Նալով համապատասխան ցուցմունքներ անցնում ենք աշխատանքի և յերեք գիշեր անընդհատ մտնելով գլուղացիների ողաները, վորտեղ հրավիրում ելինք և զինվորներին, նախապատրաստական աշ-

ՆՈՐ-ԲԱՑԱՋԵՏԻ ՌԱԴԻ ՅԵՎ. ՍՈՎԴԻԵՊԻ ԿԱԶՄԸ



Բատիկյան Բատիկ
(Քնդակահարված)



Սարգսյան Հովկ.
(Քնդակահարված)



Մակարյան Սուրեն
(Սպանված)



Սիրունյան Վահոն



Պետրոսյան Միհրան



Խանփերյան Լավր



Լազարյան Արամ

Հաստանքներ ենք տանում: Մեր աշխատանքի արդյունքն այն ելի-նում, վոր Մարտունում գտնվող զինվորները չեն յենթարկվում իրենց

հրամանատարներին, պողկում են իրենց ուսազիքները, գլխարկի նշանները և գենքերը պատրաստ սպասում են Ռազմա-հեղափոքական կոմիտեի հրամանին. Բայց ապստամբությունն կատարելը մեկ յերկու օրով հետաձգվում ե շնորհիվ նրան, վոր Մալիսի 11-ին Բառարգեչարից հեռագրով մեզ հայտնում են, վոր այստեղ դժուված վիճակները վրոշ անտեսական պահանջներից դրդված չեն յենթարկվել խմբագետ համազասպի կարգադրություններին և չեն ցանկացել գնալ Ղարաբաղ Աղջամիջան կոիմերին մասնակցելու. Այն հանգամանքը, վոր նրանից առաջ Ղարաբաղ ուղարկված դորամասերը պարտություն են կրել, և վոր Դաշնակցական կառավարությունը նրանց համարյա թե սոված ե պահում և ամեն որ այս ու այն կողմը քշում, վերջապես միքանի վաշտ ապստամբվում են և շարժվում գեղի նոր-Բայջազեսի կողմը: Բասարգեչարում փոքր քանակությամբ զինվորներ հավատարիմ մնալով Համազասպին, չենք ցանկացել միանալ տուն վերադարձող զինվորներին: Այդ տեղեկությունն ստանալուն պես, այդ շարժումը կանոնավորելու և Մարտունում գտնված ընկերների հետ միացնելով, նրանց ևս ոգտագործելու համար իսկունք Բասարգեչար և ուղարկվում Սուրեն Մակարյանը, վորը Գյողակիբուլաղ զյուլում հանդիպելով զինվորներին նըրանց համոզում ե մեզ հետ միանալու համար և համապատասխան հրահանգներ տալով, վերագանցում և Մարտունի: Մալիսի 13-ին առավոտյան Աղջալազարու զյուղի ներքեխ կողմում յերեսում են Բասարգեչարից լեկած զինվորները, վորոնք աեղավորվելով քուրքի վրասպասում են մեր կարգադրություններին: Այդ զինվորներին դաշնակները Մարտունուց նկատելով ոֆիցերներից մեկին պատղամավոր են ուղարկում նրանց մոտ, վորոնք կառավարության անունից խոստանում են ներում շնորհել նրանց, վորոնք կվերադառնան Բասարգեչար, կշարունակեն մնալ բանակում և լսել հրամանատարներին. իսկ հակառուկ դեպքում բոլորը կգնդակահարվեն: Մականց ասածները մնում են ողի մեջ և պատգամավորությունը դատարկ ձեռքով վերադառնում և Մարտունի և փորձեր անում այդտեղի զինվորներից մի մասին դուրս բերել Ավդալաղալու գտնվող զինվորների դեմ, բայց այս նրանց չի հաջողվում և նրանք ոլուխները կորցրած ընկնում են այսու այն կողմը, դրությունից դուրս գալու համար միջոցներ փնտրում: Վերջապես դաշնակներն ստիպված են լինում դուրս բերել իրենց կազմակերպության անդս մներին ու խմբագետներին, վորոնք վախենալով վորեն ուազմական դորձողություններ սկսելուց սկսում են մեզ հետևել: Տեսնելով, վոր Ավդալաղալ հասած զինվորները չեն գալիս և սպասում են մեր աղդա-

նշանին, մենք առայժմ, մեզ չմատնելու համար, ստիպված ենք լինում խնդրել խմբապետ Մխիթարին ու յերկու ուրիշ դաշնակների, վոր մեզ հետ միասին գան Ավղալաղալու դրությունը պարզելու համար: Նրանք համաձայնվում են և ինձ, Սուրենն Մակարյանի և Հակոբ Խաչատրյանի հետ գնում ենք Ավղալաղալու և մի կողմից այդ դաշնակներին տեղի կոմիսարի հետ խոսակցությամբ զբաղեցնելով, յերկուս մտնում ենք զինվորների մեջ, մեր անելիքների մասին ցուցմունքներ տալուց հետո, զինվորների հետ միասին շարժվում ենք Մարտունի և տեղափորվում դպրոցի բակում: Մեզ մոտ են զալիս Մարտունիի շրջանի զինվորական հրամանատար Կաֆյելը, մոտ 25 ովից երեսերի ու խմբապետներին հետ, և սկսում են համոզել հայտնելով, վոր գաշնակցական Ճռովից ծով Հայաստանը ծանր դրության մեջ և գտնվում, վոր իրենց հանրապետությունը շրջապատված ե 4 կողմից թշնամիներով, վրանց գլխավորը հանդիսաբում են աաճիկները, վորոնք դաշինք կնքած բարյշերիների հետ կամենում են խորտակել անկախ Հայաստանը ու յերկրագնդի վրալից վերացնել «Հայ ազգաբնակչությունը»: Սակայն զինվորները շվշվոցներով և աղմկելով խանդարում են նրանց ճառը: Կաֆյեն ստիպված հարց և տալիս: — Ի՞նչ ե ձեր պահանջը, ընտրեք մեկ պատգամավոր մեզ հետ բանակցելու, բայց զինվորները պատգամավոր չեն ընտրում և բացականշում են միաձայն և մենք ուղղում ենք «կրամնի վլաստ»: այդ միջոցին զինվորների միջից դուրս ե գալիս մեկը ու կախ ընկնում կաֆյեկի ուսագիրներից, վոր պոկի: Կաֆյեը վախենալով շինելը հանում ե ու դցում գետին, այդ յերկութը ովից երես հայտնի է: Կամ այս առաջնակից կրակում ե ոդի մեջ: անմիջապես զինվորները ևս կրակում են և փախցնում ովից երեսին:

Տեսնելով, վոր գեներալ Միլիկովը անհետացել ե, մենք հետապնդում ենք նրան ու գտնում փոստ հեռագրատանը, հեռախոսի փողը ձեռքին հայտնում ե Նոր-Բալագետի գաշնակցականներին, վոր Մարտունում ապստամբություն ե: Այդ բողեցին վրա յենք հասնում հեռախոսի փողը խոլում, ապտակում և զինաթափելուց հետո կալանավորում: Դրանից հետո ընկ. Հովհաննեսը հրավիրում է խորհրդակցություն: Այստեղ ընտրվում ե Ռազմ: Հեղ. Կոմիտե հետեւյալ կազմով՝ նախագահ Հովհաննես Սարուխանյան, անդամներ Սուրեն Մակարյան, Միհրան Պետրոսյան, քարտուղար Լեռն Ներսելյան, Հակոբ Խաչատրյան, Զովուշեցի Բեղլար Ավեսիսյան, Մարգիս Բոստանչյան: Ընտրությունից հետո կատարվում ե նազմ: Հեղ. Կոմիտեի անդամների միջև աշխատանքի բաժանում: Հեռա-

խոսակրով հայտնում ենք Նոր-Բայազետի կոմմունիստներին Մարտունում կատարված ապստամբության մասին և խնդրում ենք ուղարկել համապատասխան ընկերներ, մեզ ոժանդակելու համար. սակայն այդ նրանց չի հաջողվում և ժայիսի 14-ին դաշնակցականների կողմից կալանավորում են Սևանի կղզին աքսորվում Հայկ Զարդարյանը, Սուրեն Միքայելյանը, Գետիկ Պետրոսյանը, Մարտիքե Դուքարյանը, Սերգո Բոշնալյանը, Գերասիմ Թելլումյանը, Արշավիր Ղարագույանը և ուրիշները, թվով 13 հոգի: Այդ բանն իմանալով Ռազմ: Հեղ. Կոմիտեն հրավիրում ե նիստ հետեւալ որակարգով.

1. Խազմական գործողությունների ծավալման և

2. Ֆինանսներ ու պարենավորում ձեռք բերելու մասին:

Այդ հարցերը իրենց դրական լուծումն ստանալուց հետո ընտրվում ե գինվորական գյուղացիական խորհուրդ հետեւալ կազմով, Աղիբեդ Նալբանդյան, Սրապ Վարդանյան, Լավր Խանֆերյան, Արմենակ Լազարյան, և շրջկոմիսար Վանո Միրունյան: Համաձայն այդ որվա վորոշումների, խուզարկություն ենք կատարում մի շարք կուլակների և խմբապետների տներում, վորոնցից հայտնաբերվում ե մեծ քանակությամբ խացցրած կաթ, սպիտակ ալյուր, սապոն, շաքարավագ և այլ մթերքներ, վորը հանձնվում ե պահեստին, զինվորներին բավարարելու համար: Մայիսի 15-ին ցերեկվա ժամը 3-ին 6 վաշտ զինվորներ Խազմա-հեղափոխական կոմիտեյի միքանի անդամների ղեկավարությամբ ու Մարտուխանյանի գլխավորությունը Մարտուխանուց գուրս գալով շարժվում են գեալի Նոր-Բայազետ: Ն. Աղիյամանում աշխատավոր գյուղացիությունը մեզ դիմավորում ե աղ ու հացով, գուռնալով, կարմիր դրոշակներով: Այստեղ ընկեր Հովհաննեսը կազմակերպում ե միտինդ և բացատրում ե խորհրդային իշխանության անելիքների մասին, վորից հետո անցնում ենք Գյոլ գյուղը: Այստեղ նույնպես մեզ մեծ խանդավառությամբ են դիմավորում: Այդ որը ցերեկոյան մեզ մոտ են գալիս Ղարանլուղի ուսուցիչներ Փառնակ Միքաելյան և Հայկ Շուշարյանը, վորոնք ստանալով ընկեր Հովհաննեսից համապատասխան ցուցումներ գյուղացիներին զինելու և գուրս բերելու մասին, վերադառնում են Զորաց գյուղ և հաջորդ որը առավոտան իրենց հետ բերում մոտ 30 զինված գյուղացիներ: Սրանց միացնելով մեր զորքին, շարժվում ենք առաջ: Ճանապարհին միտինդներ ենք կազմակերպում ճանապարհի վրա ընկած Յեղանոս, Քյուղաջղ գյուղերում: Գիշերը շարժվելով, առավոտան համար ենք Մարտիսան գյուղը, ուր մեղ դիմավորում ե վոգենրված աշխատավորության մեծ բազմություն:

Դեռ նախքան Մարտիսան մտնելը, մենք Բայազետում մնացած

ընկերներից ստացել ենք մի նամակ, վորով հայտնում են թե դաշնակները վորոշել են Ն.-Բայազետում ուժեղ դիմադրություն ցուց տալ—ուստի ընկ. Հովհաննեսի կարգադրությամբ յես և Սուրենը գնում ենք Բայազետ.

Դուլալի գյուղում պատահում ենք դաշնակների զինվորներին, իմանում ենք նրանց զորքի դասավորումը, և նրանցքի տակ զուղ համայշի ժողով ենք հրավիրում և գյուղ հեղկոմ ընտրում։ Տեղեկանալով դաշնակների զինվորական ուժի և նրա ռազմական դասավորման հետ, վերադառնում ենք Սարուխան գյուղը, և յերկու կողմից սկսում առաջարկացում։ Ապստամբների մի մասը շարժվում ե Դուլալի գյուղի ուղղությամբ, իսկ մի մասը Փաշաքանդի վրայով մոտենում ե Նոր-Բայազետին։ Քաղաքի մոտ դաշնակներն սկսում են իրենց զինվորներից մեզ վրա կրակ բաց անել սակայն մոտ 2 3 ժամ դիմադրություն ցուց տալուց հետո—յերբ Բայազետում թանգնված կոմմաւնիստները ընկ. Հովհաննես Պետրոսյանի դեկափարությամբ խփում են դաշնակների թիկունքից, նրանք պանիկայի ինքնթարկվելով փախուստի ին դիմում։ Մենք ցերեկվա ժամի 5-ին մտանք քաղաք, Ակսում ենք հիմնարկությունները զբավել և մեր ընկերներին նշանակել աշխատանքների զեկավարման համար։ Առաջին հերթին գրավեցինք փոստ-հեռագրատունը, վորի վարիչ նշանակվեց ընկ. Հովհաննես Սինանյանը։ Այդ գիշերը խուզարկում ենք վորոշ հիմնարկություններ և դաշնակ դեկավարների տները։

Հաջորդ որը, մայիսի 18-ին վորոշում ենք առաջանալ Յելենովկայի ուղղությամբ։ Այդ նպատակի համար յես, Սուրենը, Հովհաննես Յեղանյանը և միլիցոների հետ գնում ենք ռազմակա և Հաջիմուխան գյուղում հանդիպում գեներալ Խանկալամյանի դեկափարությամբ յեկած զորքին։ Վերադառնում ենք Նոր-Բայազետ ու մեր զորքը դուրս բերում քաղաքից և տեղափորում Սալանոց և Բուղազյանի կոչվող վայրերում։

Այդ գիշեր տեղեկացանք, վոր դաշնակական ոֆիցեր Հալկ Գրիգորյանը, վորն իր կեղծավոր լեզվով կարողացել եր ապստամբների վստահությունը շահել և ապստամբ զորքի հրամանատար նշանակվել, դավաճանելով մեզ, կալանքից աղատել ե գեներալ Սիլիկովին և շտաբի ոֆիցերներին ու գիշերով անցել Հաջիմուխան գյուղը միացել դաշնակականներին։

Առավոտյան, դեռ լուսը չօացված, անցնում ենք փրոնտ ու շարժվելով դեպի Հաջիմուխան գյուղը, հանդիպում ենք դաշնակների զորքին։ Այդ յումենտին մեր 18 ձիավոր միլիցոներներից բաղկացած ռազմական նոր-Բայազետում մեր դեմ։ Աջ թեկի մեր զորախուժը ընկնելով թնդանոթի կրակի տակ, նահանջում ե, իսկ ձախ թեր, վորին զեկավարում եր Սուրենը, առաջ ե խաղում, բայց 3-4 ժամ կովից հետո, տեսնելով, վոր մենք յերեք կողմից շրջապատված ենք, Սուրենը կարգադրում

և նահանջել գեղի սարի կողմը։ Դաշնակները զբավում են քաղաքը և սկսում իրենց հաստի բարբարություններ։ կալանավորում են բոլոր նրանց, ովքեր ակախի մասնակցել ենին ապստամբությանը, լցնում են բանաը, ազատում քրեական հանցագործներին։

Դաշնակները յերբ մանում են քաղաք, Հովհաննես Սարուխանյանը և Հովհաննես Պետրոյանը ձիերը նստած մտադրություն են ունենում անցնել մեզ մոտ, բայց այդ նրանց չի հաջողվում և նրանք անցնում են Փաշարիանդ զյուղը, ուր Հովհաննես Սարուխանյանը թագնվում ե մի զյուղացու տան։ Դաշնակցական Ավետի ս Մելքոնյանն իմանալով, հալունում ե ուր վոր հարկն ե և ընկ. Հովհաննես Սարուխանյանին խմբապետ Ազիզը թագնված տեղից ծեծելով դուրս ե բերում, քցում ե 2 ձիավոր միլիոնների մեջտեղը, վորոնք նրա մազերից քաշքանով, տանում են նոր Բալագետ։ Ծեծի հետեանքով կոտրվում ե ընկ. Հովհաննեսի թեր և վոտը. զբանով շրավականանալով, սրիկանները նրան քաշքանով միլիոնների փողոցներով թուք ու մուր տալով, թե «տեսէք հայ ազգի զավաճանին»։ Այդ վարձունքից աշխատավոր մասսան ավելի յեզ զզիւմ զաշնակ գաղաներից, վորոնք միանույն ժամանակ իրենց աչքով տեսնում ենին, թե ինչպես միքանի զինվորների, վորոնք հրաժարվել ենին գնալ կարմիրների գեմ, կախեցին բուրվաքի մեջ լեղած վայտերից և խփեցին։

Այդ սոոկալի անարգանքներից հետո ընկ. Հովհաննեսին տեղափոխում են բանա. 3-4 որից հետո նա համարվա անզգա ընկնում ե գաղանների հարգածներից։ Մառ զերիստները դուրս են բերում քաղաքից և ճանապարհն սպանում ընկ. Հովհաննեսին, մեկ ուրիշ ընկերոջ հետ։ Դաշնակների այդ բարբարոսություններից մի լերկու ամսից հետո չկերպ ձեռք առնված միջոցներով ընկ. Հարությունին և մյուս ընկերներին հաջողվում ե նորից կողակերպե և համախմբել թջինները, վորոնք սկսում են գաղանի աշխատել մինչև Հայաստանի խորհրդայնացումը։

Մայիսան ապստամբության ժամանակ և հետագալում գնդականարվեցին և խփվեցին հետեւալ ընկերները՝

1. Հովհաննես Սարուխանյան
2. Բատիկ Բատիկյան
3. Բեզլաը Ավետիսյան
4. Գրիգոր Դադիկյան (Նորադուզի)
5. Կապիտան Պետրով
6. Արագ Վարդանյան
7. Աղիքել Նալբանդյան
8. Մուրեն Մակարյան (իետրվարյան ավանտյուրայի ժաման.)
9. Հակոբ խաչատրյան
10. Ղուրդան Հովեյան (Ն. Ալուշալեցի, զինվոր) և այլն:

ՄԱՅԻՍՅԱՆ ԵՎԱՀԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ-ՌԱՅԵԶԵՏՈՒՄ

Մայիսյան տանը մեր կազմակերպության կողմից Նոր-Բայակետում անցավ բավականին անշուք, փրովիետն ավելի ակտիվ ընկերները բացակայում եյին քաղաքից:

Դեռ մայիսյան ապստամբությունը չբռնկված, դաշնակցական արտակարգ կամբարները, ռատական դիկտատորներն ու քաղաքի վարչապետներն սկսեցին բայցեղեկ ընկերներին մեկ-մեկ հեռացնել գավառից: Բայց մասցած ընկերները չհուսահատվեցին դեկավար ընկերների աջարյակելուց ու ավելի համառ շարունակեցին իրենց ընդհատակյա աշխատանքները: Նոր-Բայազետի ընկերները հեղափոխականի ընազդով, ավելի ուժեղացրին աշխատանքը բանակում և զյուղական բջիջներում: կազմակերպությունն որբստորե աճում և ուժեղանում եր, և նրա հեղինակությունն ավելի յեր մեծանում մասսաների մեջ:

Նոր-Բայազետի գաշնակներն ել եյին ուժեղացնում իրենց «աշխատանքները» թալանի և բանությունների բնազավառում: թալանում եյին նաև հայկական գյուղերը, վերցնելով նրա հացը, խոտը, կոշիկը, մինչև անդամ կանանց ներքին հագուստը: 1918 թ. մինչև 20 թ. մայիսը դաշնակները Նոր-Բայազետի գավառում միքանի տամնյակ գյուղեր ավերեցին: վերցրած ավարը յուրացնում եյին խմբապետները, ոփեցերները, բարձր հրամկազմի անդամները, բաժին հանելով քաղաքի կուլակ-վաշխառուների տիկիններին և դաշնակ: կոմիտեյի անդամներին:

Զինվորների համբերության բաժակը լցվեց, յերբ նրանց հրաման արվեց առաջ շարժվել գետի Խորհրդային Ազգբանականի սահմանները: որերով պարեն չստացող, սոված զինվորությունը չկարողացավ այլևս տանել վայրագ խմբապետների և գեներալների բանությունները: ապստամբության դրոշ բարձրացրեց և Բասրպեչարից շարժվեց գետի Ղարանլուղ՝ իր պահանջները ներկայացնելու շտաբի պետ՝ գեներալ Սիլիկովին:

Ապստամբ զինվորները գեռ Ն. Ղարանլուղ շնասած՝ ընկեր Սարուխանյանը մայիսի 12-ին համառ և Ն. Ղարանլուղ այդտեղ աշխատող մեր միքանի ընկերների ողնությամբ հավաքում և ապստամբ զինվորներին, խրախուսում նրանց և մայիսի 13-ին բանտարկելով Սիլիկովին, շարժվում ե գետի Նոր-Բայազետ՝ իշխանությունը դրավելու համար:

Բնորոշ ե, վոր յերբ գեներալ Սիլիկովը հարց է տալիս ապստամբներին, թե ի՞նչ պահանջներ ունեն, ապստամբ զինվորները

բացատրելով իրենց զրության և գաշնակ մառվերիստների խայտառակ վարմունքի մասին, պատասխանում են—«Վլաստ կուզենք»:

Գաշնակցականներն իմանալով, վոր ընկ. Սարուխանյանն ապատամբ զինվորների զլուխն անցած շարժվում ե դեպի Նոր-Բայազետ, մայիսի 13-ի գիշերը նրա դեմ ուղարկեցին քաղաքում յեղած մոտ 50 հոգի միլիցիոներներին, վորոնք ճանապարհին իմանալով, վոր Սարուխանյանը գալիս ե մեծ ուժով՝ վախեցել ելին և ճանապարհոց հետ յեկել:

Մայիսի 14-ին Յերևանից Նոր-Բայազետ յեկան գաշնակցական արտակարգ հանձնաժողովի կոմիսարներ Գառնիկ Շահինյանը և Գառնիկ Քալաշյանը Սրանք իմանալով ապստամբության մասին, սկսեցին բանտարկել քաղաքում մնացած աչքի ընկնող ընկերներին:

- | | |
|--------------------|----------------------|
| 1. Ա. Բոշնալյան | 8. Գ. Հովակիմյան |
| 2. Ա. Ղարագյուղյան | 9. Ա. Տեր-Միքայելյան |
| 3. Մ. Դուրգարյան | 10. Մ. Մխիկյան |
| 4. Ն. Բոխյան | 11. Գ. Թեղումյան |
| 5. Զ. Զարգարյան | 12. Խ. Ավետիսյան |
| 6. Վ. Դովլաթյան | 13. Ա. Փոստոյան*) |
| 7. Հայկազ Բատիկյան | 14. Հ. Դիլոյան*) |

Նույն որը բանտարկված ընկերներին վոտքով քշեցին Սևան, վորոտեղ արդեն Յերևանից բերել ելին 14 ուրիշ ընկերների Յերևանի կազմակերպությունից:

Մայիսի 13-ին Ն. Ղարանլուզից գուրս գալով, ընկ. Սարուխանյանը ճանապարհին զյուղերից նորից զինվորներ ե հավաքում և նրա զինվորների թիվը համում ե մոտ 700 հոգու—ճանապարհին կառավարությունից անբավական զանազան պաշտոնյաներ, ուսուցիչներ, միլիցիոներներ և այլն։ Մայիսի 16-ին ապստամբ զինվորներն առանց գիմարդության զրավում են Նոր-Բայազետ քաղաքը։

Հ. Սարուխանյանը քաղաք մտնելով, վերցնում ե հիմնարկությունները, հայտարարում ե իշխանությունը խորհրդային և պատրաստվում ե առաջ շարժվել, հույս ունենալով, վոր Դիլիջանում նույնպես ապստամբած կլինեն և իշխանությունը խորհրդային հայտարարած։

Ցեթե, իրոք, Դիլիջանն ել ժամանակին ապստամբված լիներ և իշխանությունը զրաված, և յեթե այս յերկու զավառները միանալին և Յեղենովլիան պահելին իրենց ձեռքում, մյուս կողմից ել յեթե կապ պահպանելին Աղբքեջանի հետ, ամենայն հավանականությամբ,

*) Այս վերջին տերկուսը գաշնակցական լրտեսներ են յեղել։

յեթե չհաջողվեր ամբողջ Հայաստանը խորհրդայնացնել, այդ յերկու գավառը կմնային խորհրդային: Բայց մինչև վոր ընկ. Սարուխանյանը կպատրաստվեր առաջ շարժվելու՝ թալանի սովորած զինվորները քաղաք մտնելիս յերբ ուղում են թալանով զբաղվել ընկեր Սարուխանյանն արգելում են նրանց թալանել. այդ զինվորները տեսնելով, վոր իրենց թույլ չեն ապիս թալանել, թողնում են ու հետ զնում: Քաղաք մտնելու հետեւյալ որն այդ զորքի մեծ մասը հետ է զնում, և ընկ. Սարուխանյանը մնում ե 200—250 զինվորով:

Դաշնակցական կառավարությունը յերբ իմանում ե, վոր մեծամասնականները զբաղվել են Նոր-Բայազետը, Յերևանից մոտ 1000 հոգի, թնդանոթներով ու զնդացիրներով, գեներալ Խանկալամովի զեկավարությամբ զորք և խմբեր ե ուղարկում Սարուխանյանի ղեմ կավելու և ապստամբությունը ճնշելու:

Իմանալով դաշնակցականների գալու մասին, Սարուխանյանը դուրս ե գալիս նրանց զիմավորելու, Յերկու հակառակ բանակներ պատահում են քաղաքից 6 վերստ հեռու Յելենովկայի ճանապարհի վրա: Ընկ. Սարուխանյանը ռազմագետ զեկավարներ չունենալով և ինքն ել ռազմագետ չլինելով, իր զորքի զեկավարությունը հանձնում ե յերկու սպաների, վորոնք դիտավորյալ կերպով եյին միացել ապստամբներին և վորոնց դավաճանության պատճառով մերսնք պարտվում են. զինվորների մեծ մասը փախչում ե, իսկ Սարուխանյանն այնտեղից անցնում ե հարևան Փաշաքյանդ գյուղը և այնտեղ թագնվում: Դավաճան սպաները Յեխշատովը և Սրոն եյին:

Սեանում յեղած մեր պահակ զինվորներից մեկը, վոր յեղելեր այդ կավում դաշնակցականների բանակում մեզ պատմեց հետեւյալը: Յերևանից դուրս գալիս, Թանաքեռում այդ զինվորները խորհրդակցություն են ունենում, վորտեղ վորոշում են, վոր յեթե Սարուխանյանի բանակը մեծ և ուժեղ լինի, իրանք ել կմիանան ապստամբներին և կկուլեն դաշնակցականների դեմ, իսկ յեթե այդ ապստամբների բանակը փոքր լինի և թույլ այդ դեպքում նրանք չեն միանալու, այլ այնպես պետք ե անեն, վոր ապստամբները զոհեր չտան, այսինքն՝ պետք ե ոդի մեջ կրակեն:

Խսկապես յերկու ժամ կովելուց հետո, համարյա վոչ վոք չեր վսասվել, յեթե չհաշվենք յերկու վիրավոր զինվորների:

Այդ կոփիր տեղի ունեցավ Սեանա լի ափին անցնող ճանապարհի վրա:

Մենք Սեանում սարի գլխին նստած դիտում եյինք հեռադիտակով, և ամեն անդամ թնդանոթի ձայնը լսելիս սրտատրով նայում եյինք և տեսնում, վոր քանի զնում թնդանոթի ձայնը մեզանից հեռանում ե ու մոտենում նոր-Բայազետին: Վերջապես թնդա-

Նորմների ձայնը կարգեց. յերկշւ ավտոմոբիլ արագընթաց գնում էին գեղի նոր-Բայտղեաւ Այսակեղից մենք իմացանք, վոր մերոնք հաղթվել են, ու սկսեցինք զանազան յենթագրություններ անել դաշնակցականների վայրադությունների մասին:

Դաշնակցական կատաղի խմբագիւները, գիմնադիայի աշակերտները և գողթական թալանչիները քաղաք մանելուն ունեն գես ու գմն են ընկնում, մանում են ընկ. Սարուխանյանի տաւար, թալանում են ենչ վոր կարողանում են, պատում են բարձական մեծ թվով մարքսիստական զրականությունը, ապա այսակեղից անցնում են կուսակցական ընկերների աները, թալանում:

Քաղաքում կարգը «վերահստատելուց» հետո; սկսում են փրնուաել ընկեր Սարուխանյանին և մյուս կոմմունիստներին: Ընկեր Սարուխանյանի հետքը դանելով՝ նրանք գնում են Փաշարյանդ դյուզը և բանում նրան մի դրսդացու տան թագնված:

Մարդկային լեզուն անկարող և նկարագրել թե ինչ տանջանքներով ու չարչարանքներով ընկեր Սարուխանյանին քաղաք եյին բերել: Պատմում են, վոր վախմիսար Ազիզը և միլիցիալետ Հովհաննես Առաքելյանը բռնել եյին ընկ. Սարուխանյանի ձեռքից, իրենք ձիերը քշում եյին և ստիպում նրան, վոր նա ձիերի հետ վաղի, և նա, յերկու ձիերի մեջ ընկած, արագ վաղսղ ձիերի հետեկց քարշ եր գալիս. կամ նրա մազերից բռնած, ձիու վրա նստած, արագ վաղեցնում եյին ձիերը և նա գարճյալ քարշ եր գալիս հետեներից: Նրան անքան են ծեծում ու տանջում, վոր նա անզգա ընկնում և և այդ գրությամբ նրան բերում են բանտ դցում: Ցերկուորից հետո «խայտառակության» որ են սարգում, ընկեր Սարությանին նստեցնում են ֆուրդոնի վրա, շրջապատում են նրան, ծեծելով, հայույելով, յերեսին թքելով ման են ածում քաղաքում, ցույց են տալիս բոլորին և գարճյալ անդրա բերում են զցում բանտ:

Վերջապես մայիսի 18-ի գիշերը նրան քաղաքից դուրս են տանում և 7 վերստ հեռավորության վրա զնդակահարում ու թաղում:

Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո բանտից և աքտորից աղատաված բոլոր ընկերները նոր-Բայազետի կազմակերպությունն իր լավագույն ընկերներից կորցրեց չորսին:

1920 թ. մայիսի ապստամբությունից մինչև Հայաստանի խորհրդայինին իշխանություն հաստատվելը նոր-Բայազետի կազմակերպությունն իր լավագույն ընկերներից կորցրեց չորսին:

1. Հովհաննես Սարուխանյան—զնդակահարված
2. Բատիկ Բատիկյան — »
3. Հովհաննես Պետրոսյան — թոքախտից մեռավ
4. Բատիկյան Հայկաղ — »

Բացի սըանցցից, զնդակահարված են յեղել և ուրիշ անկուսակցական յերեք ընկերներ, վարոնք ապստամբությանը ջերմ մասնակցություն են ցույց տվել.

1. Ամիսիսյան Բալաբեկ
2. Դատիկյան Գրիգոր և մի ոռու ոպա,—
3. Պետրով:

Ս. Բունադրյան

29 թ. Նոյեմբեր 5

Յերվան.

1920 թ. ՄԱՅԻՍԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՒՆԻ ՆԱՐ-ԲԱՑԱՀԵՏԻ ԳԵՎԱՌՈՒԹՅՈՒՆ

(Հիշողություններ)

Դաշնակցական անփառունակ իշխանության ժամանակ գալվաճան անընդհատ տեղի ունեցող թալանների ու ազգամիջյան կորիգների հետևանքով հյուծվել եր տնտեսագետ։ Հկար անդորր կյանք աշխատավոր դյուղացիության համար։ Զօրամասերը և յերիտասարդությունը մերկ ու սոված պատերազմի թատերաբեմ քշելը, թողնելով ընտանիքի անդամներին սովի ճիքաններում զայլարվելիս, առաջացրել եյին դյուղացիության և զինվորության մեջ անբավականություն և լուրջ դժբոհություններ հանգեց աիրող իրավակարգի։ Դրան ավելացնելով նաև այն, վոր ձմրան գմնդակ պայմաններում դինամիկ վիճակում դաշտում եյին Սելիմի և Զողի լեռնանցքներում, վորի մաստանելի դրությունը հաճախ ստիպում եր նրանց բռնել գասալքության ճանապարհը, վորի պատճառով նրանց դյուղում գտնված ընտանիքի անդամների վրա դործադրում եյին ամենավայրէ և զաղըելի տանջալի միջոցներ, պատրվակ բռնելով նրանց գավակների դասալքությունը։ Այդ ժամանակ վախուսակ յեր մատնված Բասարգեչարի գավառամասի 20 դյուղերի աղդաբնակչությունը, վորոնց մի մասը, զինավորապետ կանայք և յերիսաները, սրտաճաք եյին յեղել Դաշնակցության վայրագություններից։

1920 թ. սկզբներին այդ դժբոհությունները համառմ են իրենց գագաթնակետին, յեթե դրա վրա ավելացնենք նաև խորհրդացին իշխանության Ռուսաստանում տարած փայլումն հաղթանակները և Աղըրեջանի խորհրդայնացման լուրը, վորը աշխատավոր դյուղացիության, մանսավանդ զինվորության մեջ առաջացրել եյին խոր-

հրդային որիենտացիա և մեծ ձգտում գեղի մեր յերկրի խորհրդայնացումը՝ այդպիսով պատկերը պարզ կլինի:

1920 թ. մայիսի սկզբներին Խմբապետ Համազասպը, Բասարյան գեչարում կազմակերպված պարականական գումարտակի զինվորների միջոցով ցանկանում եւ լեռներով ռազմանյութ փոխազդել Ղարաբաղ, բայց անվախ զինվորները հրաժարվում են նրա կարգադրությունները կատարելուց. նա սպառնում է ասելով, թե «Ձեզ տանելու յեմ այնտեղ, Ղարաբաղ, վորպես բեռնակիր, իսկ այնտեղ ինձ սպառնում են իմ արծիվները». այդ արտահայտությունն ավելի յեւ գրգռում զինվորներին, վորոնք ապստամբվելով, ուղերձվում են դեպի Մարտունի (Ն. Ղարանլուխ), վորտեղ կանգնած եր խորհրդային որիենտացիա ունեցող շ-րդ հետեակ գումարտակը, վորը վերակազմված եր 3-րդ ռազմա-միլիցիոներական գնդից:

Այդ որերը գեներալ Սիլիկովը (վորը գտնվում եր Մարտունի զյուլում), Բասարգեչարի անմեղ թյուրք ազգարնակչությանը սրախովիս անող և հոչակ հանող «հերոսն» իր մոտ եւ կանչում նորբայազետի կոմմոնիստական կուսակցության զեկավար ընկեր Հովհաննես Մարտունյանին՝ նրան բանտարկելու և սպառնացող մոտարուտ ապստամբությունը կանխելու նպատակով: Ընկերները մտահոգված են ընկեր Մարտունյանին բանտարկությունից զերծ պահելու խնդրով, վորը և հաջողվում եւ Լսելով Բասարգեչարի պարտիզանական գումարտակի ապստամբության լուրը, խորհրդակցում և վորոշում ենք ուղարկել Սուլբեն Մակարյանին՝ բացատրելու ապրատամբությունը շարունակելու անհրաժեշտության ու մեր պաշտպանության մասին: Նա գնում է մինչև Գյողակբուլադ ու վերադառնում, բերելով միանգամայն նպաստավոր տեղեկություններ զորքի բարձր տրամադրությունների մասին: Մայիսի 12-ին ազըստամբ զորքը հանում է Ալիդրեխ գյուղը (Մարտունուց 5 վերստ հեռավորության վրա):

Այդ որը Մարտունում գտնված բոլոր զինվորները, շնորհիվ մեր տարած հաջող ազիտացիոն աշխատանքների, պոկում են ուսպահիները—ահ ու զարդանդ առաջացնելով սպաների մեջ:

Համազելու համար այդ զյուղն են գնում մի շարք սպաներ, վորին հականարդված տալու համար ուղարկում ենք ընկ. ընկ, Սուլբեն Մակարյանին, Հակոբ Խաչատրյանին և Միհրան Պետրոսյանին: Սպաները վերադառնում են ձեռնունայն ու հուսահատ, իսկ մեր ընկերները, ընդհակառակը, բարձր տրամադրություններով:

Մայիսի 12-ին յերեկոյան, ապստամբ զորքը հաղթական քայլերով մտնում է Մարտունի, վորոնց կանգնեցնելով զյուղի դպրոցի:

մոռ, գնդապետ Կաֆիկը, Թարալազյաղից յեկած գնդապետ Ստեփանյանը սկսում են համոզեցուցիչ խոսքեր ասել նրանց—վերադառնալ ծառայության վայրը և շարունակել պաշտպանել հայրենիքը ովոխերիմ թշնամիներից»:

Այդ ժամանակ զեներալ Սիլիկովը Մելիք-Շահումյանների ուան մոռ, փորտեղ տեղի գումարտակի շտաբն եր, համոզում եր տեղական գինվորներին՝ չմիանալ ապստամբներին:

Գնդապետ Կաֆիկը վերջացնելով ճառը, դիմում ե ապստամբներին ու հարցնում, թե ի՞նչ ե ձեր պահանջը. բոլորը միաձայն բղավում են «Կрасная власть» ենք ուզում,—վորը շշմեցուցիչ տպավորություն ե թողնում սպայակույտի վրա:

Կաֆիկը իբրև թե չհասկանալով առաջարկում ե, վոր ապօստամբներից մեկը դա իր մոտ և բացատրի պահանջի եյությունը, քանի վոր այդ բղավոցներից վոչինչ չի հասկացվում, և նա մասնացուց ե անում ընկեր Բեգլար Մինասյանին (Զոլախաչեցի): Այդ միջոցին զինվորական Գրիգոր Ավետիսյանը (Զորագյուղացի) բարձրանում ե գնդապետի կանգնած պարոպի վրա, կախ ընկնելով նրա վերաբերյալ ուսադիրներից, պահանջում ե ուսադիրները պոկել. գնդապետը վախից հանելով վերաբերուն, շղթառում ապօստամբներին. այդ ժամանակ պարուչիկ Հայկ Հայրիկյանը այդ քայլը համարելով անպատվարեր՝ պատյանից հանելով ատրճանակը, արձակում ե գնդակ, վորը պատճառ ե դառնում հրացանաձգության և իրարանցման:

Հրացանաձգությունը դադարելուց հետո, զինվորներին հավաքում ենք ընկ. Սերյոժա Գրիգորյանի բնակարանը և ընտրում ուազմահեղափոխական կոմիտե հետեւյալ ընկերներից բաղկացած—Հովհաննես Սարուխանյան—նախագահ, անդամներ՝ Սուրեն Մակարյան, Հակոբ Խաչատրյան, Բեգլար Մինասյան, Միհրան Պետրոսյան, Սերյոժա Բոստանճյան (զինվորական, վորտեղացի լինելը հայտնի չե) և Լեոն Ներսիսյան:

Ուզմահեղափոխական կոմիտեն նշանակում հեղափոխական ապստամբ զորքի հրամանատար պարուչիկ Հայկ Գրիգորեկին (հականհեղափոխական):

Այդ գիշեր իր բնակարանում ձերբակալում ենք զեներալ Սիլիկովին, իսկ գնդապետ Կաֆիկը միքանի սպաների հետ փախչում և Բասարգեչար: Սիլիկովի դռանը պահակ ենք կանգնեցնում յերեք ամենավստահելի զինվորների, վորոնց մեջ եր նաև Ցերվանդ Ալոյանը (Ն. Ալուչալեցի), մյուսների անունները չեմ հիշում:

Մնացած ցածր աստիճան ունեցող սպաներին թողնում ենք աղաս, փորսնք աեսնելով մեր թույլ քաղաքականությունը հանդեպ իրենց, գուրս յեկան թագուարաններից ու սկսեցին պրովակացինն լուրեր աարածել փորը ճակատազրական դեր խաղաց ապատամբության աապալման գործում և մեր զորքի քայլայման խնդիրներում:

Հաջորդ որբ ընարում ենք նաև սովետ, փորի նախադահ ընտրվում ե ընկ. Աղիբեկ Նալբանդյանը (Ն. Դարանլուղի), իսկ անդամներ, յեթե հիշողությունս ինձ չի գտաճանում, ընտրվեցին ընկ. ընկ. Արմենակ Լազարյան, Լազար Խանմֆերյան, Արակ Վարդանյան և ուրիշները, փորոնց անունները չեմ հիշում:

Երջանի կոմիսար նշանակեցինք ընկ. Վահան Սիրունյանին, միաժամանակ կազմակերպեցինք ուղարկեցինք դյուզերը՝ դիմավորությամբ Սարիբեկ Բուզումյանի և Խաչատրյանի:

Մեծ խանդապառությամբ կազմակերպեցինք միահինգ ու շրջագյելով գլուղի փողոցները ուրախություն պատճառեցինք ազգանակության:

Կատարեցինք խուզարկություն, խմբապետներ Արտաշես Մուրադյանի և Միհրանի բնակարաններում, փորտեղից դուրս բերեցինք մեծ քանակությամբ թագցրած, յուրացրած ապրանքներ, փորոնց հայտնաբերումը ավելի ևս խորացրեց ազգաբնակչության զգանքը հանդեպ այդ լիտերների:

Ցերբորդ որը ռազմահեղափոխական կոմիտեյի ընդլայնած նիստում ընկեր Միհրան Պետրոսյանն առաջարկեց արշավել նոր-Բայազետի վրա, փորի գրավումից հետո, Դիլիջանի վրայով միանալ կենինականի ապատամբներին, փորպիսի առաջարկն ընդունվեց միաձայն: Այդ նիստում հրամանատար Գրիգորես պահանջ զրեց հրամանատարությունը գեներալ Սիլիկովին հանձնելու մասին: Այդ պահանջը տեղնուտեղը ջախջախվեց, վորպես հականեղափոխական ըընույթ կրող պահանջ:

Վերոհիշյալ վորոշումը իրագործելու համար, վերցնելով գեներալ Սիլիկովին, ապատամբ զորքը շարժվում ե գեղի նոր-Բայազետ, զորքի մի մասը թողնելով Մարտունիում: Կոմիտեյի վորոշմամբ Մարտունիում թողնվում են Վահան Սիրունյանը, Աղիբեկ Նալբանդյանը և Ակոն Ներսիսյանը: զորքը ճանապարհեցինք մինչև Ն. Աղիաման և ապա վերադարձանք: Գյուղացիությունը ճանապարհին ապատամբներին դիմավորում եր աղ ու հացով, վորպես ապատարների:

Նոր-Բայազետ քաղաքի ապստամբությունը կանխելու նպատակով մեր ընկերներին աքսորում են Սևանա կղզին Թեթև դիմակրությունից հետո ընկնում ենաև Նոր-Բայազետը: Բասարգեչարում զտնված զորքը դանվում եր քաղցած գրության մեջ, վորովիետե նրանք կենսամթերք ստանում եյին Մարտունի գյուղով անցնող ճանապարհով, վորն ապստամբության հետեանքով փակվել եր նրանց համար. բացի զրանից, Մարտունիի պահեատներում կային բավականաշախ ալյուր և այլ կենսամթերքներ:

Գալիս ենրանց պատգամավորությունը գլխավորությամբ Բախչի Իշխանյանի (վորոնց հետ եր նաև ընկ. Հայկ Մհերյանը) մեզնից ալյուր խնդրելու: Սակայն մենք կտրականապես մերժում ենք հականեղափակական բանակին կենսամթերք հատկացնել, վորի հիման վրա պատգամավորությունը ձեռնունայն վերադառնում եւ Նույնը տեղի յե ունենում Դարալազյազից ժամանած պատգամավորության հետ Կոփմերի ընթացքում, գիշերը հրամանատար Գրիգորիկը ծրպույտ կերպով գեներալ Սիլիկովին փախցնում եւ անցկացնում թշրինամու բանակը: Ապստամբությունը ճնշվում եւ մայիսի 19-ին, գեներալ Խանկալամովի հրոսակախմբերի կողմից, շնորհիվ ապստամբ զորքի մեջ գտնված սպաների դավաճանության: Ճնշումից հետո սկսվում են անլուր հալածանքներ ու սպանություններ: Ձերբակալվում են իրեն կոմմունիստ կասկածի տակ յեղողները: Ապստամբության ղեկավարները փախչում են լեռներն ու ապաստան գրտնում քարանձավներում:

Դաշնակցության լկտի քաղաքականությունն իր դաժանություններով համնում ե գագաթնակետին: Գյուղացիությունը հյուծվում ե այդ զզվելի լծի տակ, սպասելով սրտատրովի իր ազատարար Կարմիր բանակին: Մայիսյան ապստամբությունը նախերդանք հանդիսացավ նոյեմբերյան հաջող հեղաշրջման ու դաշնակցության անփառունակ իշխանության տապալման ու անվերադարձ կործանման:

Բազվից նոր գալուս պատճառով, կազմակերպության կոմիտեյի ամբողջ կազմին չեյի ճանաչում, միայն գիտեյի ընկ. ընկ. Հովհաննես Սարուխանյանին, Բատիկ Բատիկյանին և Սերգ Բոշնաղյանին: Մասնավորապես Մարտունու գավառամասում աշխատողներից զիտեյի Միհրան Պետրոսյանին (փոստի վարիչ), Սուլբեն Մակարյանին (միլիցիայի վախմիստր), Սենյոժա Գրիգորյանին (գնդի տընտեսական մասի գործակար), Հակոբ Խաչատրյանին (գնդի ֆելդֆերել), Գեորգի Փերգուլյանին (գնդի պարուչիկ) և Վահան Սիրունյանին (Ալիդրխեցի):

Մայիսյան ապրանքության ժամանակ և հետադայում զոհված ընկերները.—

1. Հովհաննես Սարուխանյան (գնդակահարված մայիսին)
2. Բատիկ Բատիկյան »
3. Գրիգոր Դադիկյան » (Նորագուցի)
4. Կապիտան Պետրով »
5. Սրատ Վարդանյան » (Ն. Աղիամանցի)
6. Բեգլար Մինասյան » (Զոլախաչեցի)
7. Աղիբեդ Նալբանդյան »
8. Հակոբ Խաչատրյան » (1921 թ. ավանդուրայի ժամանակ ըռպանված).
9. Սուրեն Մակարյան »
10. Զինվորներից մայիսին սպանվեց Ղուրղան Հովեյան (Ն. Ալուչալեցի):

Լ. Ներսիսյան

ԴԻԼԻԶԱՆ-ՂԱԶԱԽ

ՀԱՅՈՂ. ՈՒԹ. ՑՈՒՆՆԵՐ ԴԻԼԻԶԱՆ-ՂԱԶԱԽ
ԸՊՍՏԸՄԲՈՒԹ. ՑՈՒՆԻՑ

1920 թվի մարտ ամսին ՌԿԿ կովկասյան բյուրոն ինձ՝ իրքե կուսակցական պլոֆեսսիոնալ ուղարկեց ՌԿԿ Հայաստանի կոմիտեյի տրամադրության տակ, Հայաստանում ընեհատակյա աշխատանք տանելու համար: Յերեանից ինձ ուղարկեցին Դիլիջանի գավառը ողնելու ընկ Ամիրիսանյանին, վորն այդ գավառում աշխատում եր իրքե պատասխանառու ղեկավար: Այս գավառում աշխատանքն սկսվել ե պաշտոնավես 1920 թվի հունվար ամսից, յերբ այստեղ ե յեկել ընկ. Ամիրիսանյանը: Նրանից առաջ այստեղ աշխատում եյին ընկ. Յաղուբյանը և Շեմախյանը, վորոնք, սակայն, ձերքակալվելուց և բանտից արձակվելուց հետո, դաշնակցական վոստիկանության հսկողության տակ գտնվելու պատճառով՝ վերջին շրջանում ակտիվ աշխատանք կատարելու հնարավորությունից զրկված եյին:

Իմ գնալուց հետո գավառում կուսակցական պլոֆեսսիոնալների թիվը հասավ 3-ի, վորոնք բացառապես կուսակցական աշխատանք եյին կատարում տեղական ընկերների հետ, վորոնք ուսուցիչներ եյին և նույնպես կուսակցական աշխատանք եյին տանում: Դրանք եյին ընկ. Յենոք Մկրտումյանը, վորին հետագայում դաշնակցականները գնդակահարեցին, ընկ. Բերբերյանը և ընկեր Վաղինակը (Լևոն), նույնպես գնդակահարված:

Աշխատանքը բջիջային սիստեմով եր տարկում: Գավառի գրեթե բոլոր գյուղերում յերեք և ավելի անդամից բաղկացած բջիջներ կային, ուր կազմակերպչական և ագիտացիոն աշխատանք եր տարկում: Իմ գալուց հետո գավառը յերկու ռայոնի բաժանեցինք— Դիլիջանի ռայոն և Քարվանսարայի ռայոն: Առաջին ռայոնում աշխատանքը հանձնարարվեց ինձ և ընկեր Վաղինակին, իսկ յերկրորդ ռայոնում ընկ. ընկ. Ամիրիսանյանին, Բերբերյանին և Յենոքին: Դիլիջանում զետեղված եր 6-րդ հրաձգային գունդը և մարտկոցը: Մեր ամենազիստավոր ուշադրությունը դրավում եյին զորամասերը, վորտեղ մինչև 15 հոգուց բաղկացած բջիջ ունեյինք, վորոնց մեջ աշխատանք եր տարկում 6-րդ գնդի 2-րդ ջոկատի ավագ յենթասպա ընկ. Հակոբջանյանի միջոցով (այս ընկերոջը հետագայում դաշ-

նակցականները գնդակահարեցին): Դա մեր հիմնական բջիջն եր և ազիտացիոն աշխատանք եր վարում զինվորության մեջ: Մյուս գունդը գոնվում եր Քարվանսարայում և Սեքարում: այստեղ ևս 30 հոգուց բաղկացած բջիջ գոյություն ուներ, վորը նույնապիս աշխատանք եր կատարում ընկ. ընկ. Ամիրխանյանի, Բերբերյանի և Յնոքի գեկավարությամբ:

Կուսակցության Հայաստանի կոմիտեյի առաջադրությունը հետեւյան եր—վարել ազիտացիոն կազմակերպչական աշխատանք, հիմք ընդունելով բջիջային սփստեմը, և ջանալ յուրաքանչյուր դյուդում ստեղծել զիտակից գյուղացիներից և 1918 թվից հետո Բաղդից գաղթած բանվորներից բաղկացած բջիջներ. ամենամեծ ուշադրություն դարձնել հասկապես զորամասերի վրա: Համաձայն այս առաջադրության, ամբողջ գավառը մեր բջիջների ցանցով պատեցինք: Բջիջներ ունեյինք նաև դաշնակցական հիմնարկներում և փոստնեսազրատանը: Աշխատանքը հաջող եր դնում, բայց խիստ գործյա միջոցների եյինք գիմում, վորովինեան դաշնակցականները լուրջ ուշադրություն եյին դարձնում Դիլիջանի գավառի վրա, նկատի ունենալով այն հանգամանքը, վոր Դիլիջանը սահմանամերձ գավառ եր և այնտեղից հեշտ եր կապ հաստատել Աերբեջանի հետ: Շուտով Հայաստանի և Ազրբեջանի միջն ծագած կովի հետեւանդուպ Ղաղախի սահմանագլուխը փակվեց, իսկ այդ գավառի հետ Դիլիջանի գավառը սերտ տնտեսական կապերով եր կապված, քանի վոր ամբողջ Դիլիջանը Ղաղախի, այդ հարուստ ույսինի հացով եր կերակրվում: Յերբ սահմանները փակվեցին, Դիլիջանում հայն որըստորեւ մկնեց թանկանալ սուր դժոխություններ առաջացնելով բնակչության մեջ և մեր աշխատանքն ավելի ևս պարարտ հող եր դտնում:

Այսպիսի դրության մեջ եր գոնվում ահա մեր գավառը, յերբ 1920 թ. ապրիլի 25-ին հրավիրվեց Դիլիջանի ընդհատակյա կոմունիստների առաջնին կոնֆերանսը: Կոնֆերանսի վայրն եր Քըղեւվան գյուղը, ուր հավաքվեցին մեր կուսակցության 300 կազմակերպված անդամների և թեկնածուների ներկայացուցիչ մոտ 20-30 պատգամավորները: Որակարգում դրված եյին հետեւյալ հարցերը.

1. Կազմակերպչական հարց, 2. հետագա աշխատանքների մեթոդները, 3. կուսակցական պրոֆեսիոնալների թվի ավելացումը,
4. կոմիտեյի ընտրությունը, 5. ընթացիկ հարցեր և այն: Կոնֆերանսը միաձայն հաստատեց, վոր աշխատանքը մինչև այդ տարված ե յեղել ճիշտ և լավ, վոր հետագայում անհրաժեշտ և ավելացնել կուսակցական պրոֆեսիոնալների թիվը, աշխատանքը խորացնել աղիտացիան ուժեղացնել, կենտրոնից նոր աշխատողներ և ավելի

շատ միջոցներ խնդրել, սեպհական լողունզներով մասնակցել մայիս-մեկյան տօնակատարությանը և խնդրել Հայաստանի կոմիտեյից, վոր թույլ տա սկսել մարտական-կազմակերպչական աշխատանք: Ըստարկեց կոմիտե, ուր մատան ընկ. ընկ. Ամիրխանյանը, Յենոքը Մկրտումյանը, Բերբերյանը, Գալուստ Հարությունյանը և յես Ինձ ընտրեցին կոնֆերանսի կողմից գնալ Հայաստանի կոմիտե, զեկու-

Պ. Ա. Զ. Ա. Ֆ. Ի. Ի. Զ. Ա. Ն. Ի. Ո. Հ. Կ. Ի. Կ. Ա. Զ. Մ. Բ.



Մկրտումյան Յենու
(վաղականարդած)



Ամիրխանյան Շ.



Այվազյան Կ.



Յաղություն Հայկ



Հարաւրյունյան Գ.



Տերեբյան Սեմանիա

ցում տալ կոնֆերանսի մասին, ստանալ անհրաժեշտ հրահանզներ ու միջոցներ և կոմիտեյի սանկցիան կոնֆերանսի վորոշումների նկատմամբ: Ապրիլի 26-ին կոնֆերանսը ցրվեց: Դաշնակցականները կոնֆերանսի հոտն առել եյին, բայց ուշ, բոլոր պատգամավորները հեռացել եյին:

Ապրիլի 29-ին յես ընկ. Ամիրխանյանի հետ Դիլիջան գնացի և պատրաստվում եյի մեկնել Յերևան: Այստեղ մեր հեռադրիչ ընկերներից մեկը հաղորդեց, վոր Յերևանից գաղտնի հեռազիր և ստացված—Կարմիր բանակի Բաղու մտնելու և խորհրդային իշխա-

Նությունը հայտարարելու մասին։ Այդ իմանալով, մեզ համար այլշիս հասկանալի դարձավ, վոր սուսական զորամասերի մերձեցումը խլբառումներ կառաջացնի Հայաստանի ազգարնակության, դաշնակ ցականների քաղաքականությունից դժոն խավերի մեջ։ Կոնֆերանսը ցրված եր արգեն և նորից գումարելու վոչ մի հնարավորություն չկար, իսկ որակարգում իշխանության գրավման հարցն եր դրված։

Ընկեր Ամիրիսանյանի հետ խորհրդակցելուց հետո յես ուղևորվեցի գեպի Յերևան, վորպեսզի ապաստամբություն կազմակերպելու և իշխանությունը զրավելու մասին սանկցիա ստանում։ Ապաստամբության հարցը մի անգամից մեր առջևն եր կանգնում, վորովհետեւ մեզ ծանոթ եր սահմանների փակման առթիվ դժոնած մասսաների արամագրությունը։ Իսկ սահմանները կարող եյին բացվել այն ժամանակ միայն, յերբ մենք իշխանությունը կզրավեյինք։ Ընդհանրապես բոլոր ակտիվ ընկերներն այն կարծիքին եյին, վոր յեթե Հայաստանի կոմիտեյի առաջ դրված ե իշխանության գրավման հարցը, ապա Ազգբանականի խորհրդայնացումից հետո, դա պետք ե սկսել Դիլիջանի գավառից, քանի վոր նա սահմաններին մոտիկ և Կարմիր բանակն ավելի շուտ կարող ե ոգնության հասնել։ Այդ վորոշումով ել յես դուրս յեկա և մայիսի 1-ի առավոտյան արդեն Ալեքպոլումն եյի։ Այստեղ հանդիպեցի ընկեր Ավիսին։ Փոխադարձարար իրար տեղեկություններ տվինք։ Յես նրան հայտնեցի Դիլիջանի կազմակերպության վորոշումը, իսկ նա ինձ հաղորդեց, վոր այստեղ, Ալեքպոլում ևս մասսանները մեր կողմն են, և նույն որվատոնակատարությունը վերջնականապես այդ հարցը կվճռի։ Նույն որն առավոտյան ժամը 8-ին յես շարունակեցի իմ ճանապարհը զեպի Յերևան, վորտեղ հասա յերեկոյան ժամը 6-ին։ Փողոցներում բոլորը խոսում եյին մայիս-մեկյան տոնի և բոլշեկիների հաջողության մասին։

Հենց նույն որը յերեկոյան յես տեսակցություն ունեցա Հայաստանի կոմիտեյի անգամներ ընկ. ընկ. Ստյուա Ալլահվերդյանի, Դանուշ Շահվենոյանի, Սերգո Մարտիկյանի, Դրաստամատի և Հայկաղ Կոստանյանի, հետո կոմիտեյի նիստում, լսելով իմ զեկուցումը և իրազեկ գառնալով Դիլիջանի կոնֆերանսի վորոշումներին, ոնկե Հայաստանի կոմիտեն տվեց իր համաձայնությունը ուղարկան—նախապատրաստական աշխատանքներ սկսելու մասին։ Նույն նիստում վորոշվեց նաև ընկեր Հայկազ Կոստանյանին ուղարկել Թիֆլիս՝ Կովկասյան Բյուրոյից սանեցիա ստանալու համար։

Հաջորդ որն Ալեքպոլից հեռագիր ստացվեց այստեղ տիրող

հուզութեալից դրության մասին Խնդրում եյին նույնպես իշխանությունը գրավելու սանկցիա տալ:

Ալեքսոլում հետեւալ դրությունն եր տիրում: Մայիսի 1-ից հետո քաղաքում փաստորեն յերկիշխանություն եր: Մայիսի 1-ի հաջողությունը շահմեցրել եր դաշնակցականներին, վորոնք վոչ մի միջոցի չեյին ձեռնարկում, այլ միայն սպասողական դիրք եյին բռնել: Ալեքսոլ դալով գտա մերոնց բոլորին զրահապատում: Կայարանը փաստորեն մերոնց ձեռքումն եր գտնվում, իսկ քաղաքը նրանց ձեռքին: Զինվորները և բանվորներն ամբողջ որերով խռնվում եյին զրահապատի շուրջը և պահանջում իշխանությունը գրավել: Մեր ընկերները չգիտեյին ինչ անել, քանի վոր կենտրոնից սանկցիա չունեյին: Դաշնակցական կառավարությունը մայիսի 4-ին Յերևանից գնդապետ Շահմազյանին պատգամավոր ուղարկեց Մուսայելյանի մոտ՝ հանձնվելու առաջարկությամբ: Ըսկեր Մուսայելյանը կտրականապես մերժեց դաշնակցական կառավարության այս առաջարկը և իր հերթին իշխանությունից հրաժարվելու առաջարկ ներկայացրեց: Յերկու կողմերն ել կազմ պատրաստ եյին և յուրաքանչյուր կողմ իր կենտրոնի սանկցիային եր սպասում՝ հարձակման անցնելու համար:

Ահա այսպիսի դրության մեջ եր գտնվում Ալեքսոլը: Թիֆլիսից վոչ մի տեղեկություն չկար, վորովհետեւ ընկեր Հայկազ կոստանյանին սահմանագլխի վրա ձերբակալել եյին: Յեվ ահա 5-ի յերեկոյան Յերևանից ամենալայն լիազորություններով գալիս են Հաստանի կոմիտեյի ներկայացուցիչներ ընկ: ընկ. Մելքոնյանը և Դրաստմատ Տեր-Սիմոնյանը: Յերեկոյան փակ նիստ ե գումարվում, մասնակցությամբ Ալեքսոլի կոմիտեյի և ույոնների ներկայացուցիչների: Այսաեղ եյին ընկ. ընկ. Ավիսը, Դրաստմատ Տեր-Սիմոնյանը, Մելքոնյանը, Մուսայելյանը, Սաշա Գրիգորյանը, Գոգունցը Կարսից ընկ. Դուկաս Դուկասյանը, Դիլիջանից՝ յես և այլ ընկերներ Բոլոր ույոնների գեկուցումները լսելուց հետո, հարցը դրվեց սկզբունքորեն—սկսել ապստամբությունը, թե վոչ: Միաձայն ընդունվեց—սկսել: Յերկու կարծիք ստեղծվեց այն հարցի շուրջը, թե վնրտեղից սկսել—Դիլիջանից, թե՝ Ալեքսոլից: Միաձայն վորոշվեց սկսել Ալեքսոլից, բայց ույոնների ներկայացուցիչներն իսկույն պետք ե գնային իրենց ույոնները և այստեղից կապվեյին Ալեքսոլի հետ: Նույն այս ժողովում կազմակերպվեցին Հայաստանի Ռազմա-Հեղափոխական կոմիտե և դավառային ռազմա-հեղափոխական կոմիտեներ: Կենտրոնական ռազմա-հեղափոխական կոմիտեյի կազմում մտնում եյին ընկ. ընկ. Դրաստմատը,

Մուսայելյանը, Մելքոնյանը և ուրիշներ, Կարսի կոմիտեյում՝ Դուկասյանը, Դիլիջանի ընկ. Ամիրխանյանը և յես, տեղերում ընկերներին կոստացիոն կարգով սպառպործելու իրավունքով թանի վորմեր գավառը գտնվում եր արդեն խորհրդայնացած Աղբքեջանի տահմանի վրա, ուստի ինձ առաջարկեցին խկույն անցնել Աղբքեջան՝ ողնական ույժ ստանալու համար, վորի համար ավին նետելալ մանդատը.

«Տրփում ե սույն մանդատը Դիլիջանի սազմա-հեղափոխական կոմիտեյի անդամ ընկ. Կ. Այվազյանին առ այն, վոր նա Հայաստանի սազմա-հեղափոխական կոմիտեյի կողմէց ուղարկվում է խորհրդային Աղբքեջան, ինֆորմացիա տալու Հայաստանի դրության մասին և կենդանի ողնություն ստանալու համար։ Ըսկեր Այվազյանին առաջարկվում ե անհապաղ մեկնել։ ստորագրել ենին Ավիսը Գնունին (Դ. Տեր-Միմոնյանը) և Ա. Մելքոնյանը։

Ինձ առաջարկվեց նույնպես ճանապարհոց խկույն յեկենթ կապ հաստատել Հարաքիլիսայի կազմակերպության հետ, ուր գտնվում եր այդ ժամանակ ընկ. Խանոյանը։ Ամսի 7-ին այս հրահանդսերով ճանապարհ յեւս գետի Հարաքիլիսա։ Յերեկոյան այստեղ Հարաքիլիսայի ակտիվի ժողով գումարվեց, ուր բոլորը միաձայն վորոշեցին, վոր կազմակերպությունը պատրաստ ե և մասսանները մեզ հետ են։ Ընկեր Խանոյանն առարկեց ուղարկում հեղափոխական կոմիտեյի վորոշման գեմ, բայց կուսակցական գիտցիպինայի գծով յենթարկվեց կենտրոնի վորոշմանը։ Այդ որը Թիֆլիսից յեկալ կովկասյան Բյուրոյի սուրհանդակ ընկ. Բալյանը, Դիլիջանի կազմակերպությանը հասցեազգված նամակով, վորով ընկ. Համբո Նազարեթյանը մեղանից պահանջում եր իսկույն մարդ ուղակել Աղբքեջան և հաղորդել, թե վորտեղ ե գտնվում խորհրդային գորքը, Կարմիր բանակը, վորովնեաւ Թիֆլիսում դրությունը կրիտիքական ե, բանվորական մասսանները հուզված են, խակ կովկասյան Բյուրոն պաշտոնական տեղեկություններ չունի, թե վերտեղ են գտնվում ուղական զորամասերը։

Հաջորդ որը, մայիսի 8-ին ընկ. Մատթեոս Գրիգորյանը, վոր Հարաքիլիսայի կազմակերպությունից եր վերցրած կապ պահպանելու համար, և կոմիտասյան Բյուրոյի սուրհանդակ ընկ Յաշա Բալյանը ապրանքատար ավտոմոբիլով ուղևորվեցինք զետի Դիլիջան։ Ինձ մոտ բազմաթիվ փաստաթղթեր կային և նախապատրաստական աշխատանքի համար սահմանված գումարը Բողեքենդ գյուղում մեր ակտումորիլ կանգնեցրին և գաշնակցական վոստիկանները մեզ ձերբակալված հայտարարեցին։ Յես ժամանակին կարողացա պայտասա-

կըս տալ շոփֆեր Գևորգ Դանիելյանին և խնդրեցի, վոր հանձնէ Դիլիջան ընկ. Հայկ Յաղուբյանին և հայտնի, վոր յես ձերբակալված եմ: Յերբ ավատմորիլը շարժվեց, կաշառք տալով հաջողեցի ապատվել: Ինձ այդպես խորհուրդ տվին մյուս ձերբակալված ընկերները, վորովհետև լուրջ հանձնարարություններ ունեյի Հայաստանի հեղափոխական կոմիտեյից: Ազատվելուց հետո, յերեկոյան հասա Դիլիջան, տեսնվեցի ընկ. Յաղուբյանի հետ, վերցրի նրանից դրամն ու պայուսակը և մեկնեցի Քարվանսարա (Իջևան) վորտեղ գտնվում եր ընկ. Ամիրխանյանը: Յերեկոյան հասա այնտեղ: Ընկ. ընկ. Յենոքի և Բերբերյանի մասնակցությամբ մի նիստ ունեցանք, վորտեղ յես հաղորդեցի ուղղմահեղափոխական կոմիտեյի վորոշումը՝ նախապատրաստական աշխատանքի անցնելու և Ալեքպոլի ու Յերեվանի հետ հեռագրական կատ սպահութելու մասին: Յերեանի և Ալեքպոլի հետ կապվել մենք չկավորացանք, և յես մայիսի 12-ին, համաձայն հեղափոխական կոմիտեյի վորոշման և մանդատին, պետք է սահմանն անցնեյի:

Դիլիջանում ապստամբություն բարձրացնելու որը նշանակված եր մայիսի 18-ի գիշերը: Ալեքպոլից վոչ մի տեղեկություն չկար, մենք ել չեցինք կարողացել կապվել: Դաշնակցականների հետապնդումներն ուժեղացել եյին: Ճերբակալել եյին մի քանի ընկերների: Ընկեր Ամիրխանյանն անտառ քաշվեց: Դրությունն անորոշ եր:

Մայիսի 13-ին վերջապես ինձ հաջողվեց սահմանն անցնել և 14-ին լինել Ազատագիա, ուր կանգնած եր 11-րդ բանակի 32-րդ դիվիզիան: Մանոթանալով դիվիզիայի զինկոմ ընկ. Մամսոնովի հետ հայտնեցի իմ դալու նպատակը և կամեցա իսկույն բագու զնալ: Իմ դալու մասին ընկ. Մամսոնովը հաղորդեց 11-րդ բանակի հրամանատար ընկ. Լևանդովսկուն, վորից հետո հեռագրով հարցապնդեցին ինձ Հայաստանի դրության մասին լրիվ և մանրամասն ինֆորմացիա տալու համար: 15-ի յերեկոյան, գեռես ճանապարհին, ընկեր Ամիրխանյանի միջոցով լուր եր ստացվել վոր Ալեքպոլում ապստամբությունը դաժան կերպով ճնշված ե և ընկերների վիճակի մասին վոչինչ հայտնի չե: Յես մանրամասն ինֆորմացիա կազմեցի Հայաստանի մեր աշխատանքի, մայիսի 1-ի տոնակատարության, մեր հաջողությունների ու արամազրությունների և Ալեքպոլի անկման մասին և հայտնեցի, վոր Դիլիջանի գավառը հեղափոխական կաթսայի պես յեռ ե գալիս և անկարելի յե այլևս մասսաններին զսպել, վորովհետև ուռասկան կարմիր բանակի մոտեցումը Դիլիջանի սահմաններին, հուզում ե ամբողջ ազգաբնակությանը, և ապստամբությունն անխուսափելի յե:

Մայիսի 19-ի յերեկոյան ժամը 8-ին հատուկ զորաբաժնի յերեկու ձիւմով գնդերով մենք արգեն Սախիկալումն եյլնք, Հայաստանի սահմանի վրա Գիշերը ժամը 12-ին Հայաստանից ավտոմորիլով յիկան ընկ. Ամիրխանյանը և մի քանի ուրիշ ընկերներ, Ըսկեր Ամիրխանյանը հայաբարեց, վոր իշխանությունն արդեն զրավված և և ձերբակարված են դաշնակցական զիսափոները—Մանասյանը, Զաղեթյանը, Սարասիկյանը և բոլշևիկների գեմ պայքարելու համար նշանակված արտակարգ կոմիսար Տեր-Ղուկասյանը, և բազմաթիվ այլ դաշնակցականներ ու սպաներ Իշխանության զրավման գործին մասնակցել են Սկաբում գետեղված 6-րդ գնդի 2-րդ վաշտի զինվորները, մարտկոցի մի մասը և միլիոնի գունդը: Մայիսի 20-ին ոռուսական զորամասերը Քարվանսարա մտան: Այդ նույն օրը կայացավ նեղկոմի նիստ, մասնակցությամբ ոռուսական զորամասերի ներկայացուցիչների: Վորոշվեց, վոր հայկական զորամասերը հարձակում սկսեն Դիլիջանի ուղղությամբ, իսկ ոռուսական զորամասերը դնան նրանց յետից: Վորոշվեց նաև, վոր յես Բագու գնամ, պարեն ստանալու և նոր աշխատավորներ բերելու համար:

Մայիսի 21-ին, հեղկոմի հանձնարությամբ յես բանակցություններ սկսեցի մեղ մոտ ձերբակալված ներքին գործոց մինիստրի ողնական, դաշնակցական Մանասյանի հետ: Վերջինս ինձ հաղորդեց, վոր իրենք վոչինչ գեմ չունեն բալեկիկներին, վոր կենտրոնական կառավարությունն ինքը կիրաժարվի իշխանությունից, յեթե իմանա, վոր, իրոք, Կարմիր զորամասերը Հայաստան են մտել վոր իրենք արյունահեղ կոփ չեն ցանկանում, քանի վոր միենույն ե, հայերը ոռուսական Կարմիր զորամասերի գեմ չեն գնա: Յես այդ մասին հաղորդեցի հեղկոմին, և թույլատրվեց, վոր Մանասյանն ել հաղորդի Տերեւան: Մանասյանն անձամբ հաղորդեց ընկեր Ամիրխանյանի ներկայությամբ, բայց վոչ մի պատասխան չստացվեց:

Մայիսի 21-ին գրավվեց Դիլիջանը և մեր զորամասերը քաղաք մտան: 6-րդ գունդը մեր կողմն անցավ: Քանի վոր մեր ընկերներից վոչ մի լուր չկար, ուստի հեղկոմը վորոշեց ձերբակալված դաշնակցականներ Մանասյանին, Զաղեթյանին, Խորայել բեկին, գեներալ Բաղդասարյանին և Տեր-Ղուկասյանին Բագու ուղարկել՝ իբրև պատանդ մեր ընկերների փոխարեն:

Մայիսի 22-ին արդեն Բագու եյի, վորտեղ Բեկ Կովկասյան Բյուրոյին գեկուցում տվի Դիլիջանի դավառի գրության մասին: Մայիսի 23-ին ստացվեց ընկեր Ամիրխանյանի հեռագիրը, վորով հաղորդում եր, վոր ապստամբությունը լիկվիդացիայի յե յենթարկված, իսկ ինքը 120 մարդու հետ նահանջել ե Ղաղախ: Կովկասյան

Բյուրոն նիստ ունեցավ, վորտեղ վորոշվեց լիկվիդացիայի յենթարկել ապստամբությունը Ղաղախում և առաջարկել վոր ուսղմահեղափոխական կոմիտեն արձակվի, ապա Ղաղախում բյուրո կազմակերպել և Ղաղախի վրայով ընկերներ ուղարկել Հայաստան՝ ընդհատակյա աշխատանքի համար։ 24-ին նոր հեռագիր ստացվեց Ամիրխանյանից, վորով հայտնում եր, վոր գրությունը լավանում ե և իրենց հետ նահանջել են մոտ 1500 հոգի զինված գյուղացիներ։ Կովկասյան Բյուրոն ինձ առաջարկեց խկույն դուրս գալ և հրամանատարական կազմ ուղարկեց դաշնակցականների դեմ մղելիք կռվի կազմակերպման համար։

Հունիսի 2-ին, Ղաղախ հասանք։ Սկսվեց զորամասերի կազմակերպման և նոր հարձակման նախապատրաստական աշխատանքը Քաղվից մոտ 400 հոգի հայ Կարմիր բանակայիններ մեզ ողնության յեկան։ Մի նոր հարձակում սկսվեց Քարվանսարայի վրա, վորը, յեթե չեմ սխալվում, հունիսի 15-ին դարձյալ գրավվեց։ Բայց մենք չկարողացանք դիմանալ և ելի նահանջեցինք դեպի Ղաղախ։

Այս ապստամբության ժամանակ մենք կորցրինք մեր ամենալավ ընկերներին—Հակոբջանյանին, Յենոքին, Վաղինակին և ուրիշներին։ Հուլիսի 10-ին, Ղաղախի ճակատը լիկվիդացիայի յենթարկվեց, իսկ ապստամբները դեպի Բագու նահանջեցին։ Այստեղ, Բաղդում կազմակերպվեց Կարմիր բանակի Հայաստանի առաջին կորիզը։

Կ. Այվազյան

1922 թ. 18 հոկտ.

ՄԱՅԻՍԻ ԵՊԱՏԵՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԴԻԼԻԶԾՆՈՒՄ

Մայիսիան ապստամբությունների շրջանը Հայաստանում սկսվել ե ապրիլ ամսի վերջերից։ Կարմիր բանակի մոտեցումն Անդրկովկասին, Աղբբեջանի խորհրդայնացումը, այս վերջինիս մոտիկ հարեւիանությունն ու սահմանակցությունը մի շարք հեղափոխական բռնկումներ առաջացրին Հայաստանում։

Հայաստանի աշխատավորական և կիսապրոլետարական մասսաների կողմից դաշնակցականների դեմ սկսվող այս կռակի դրվագներից մեկն ել Դիլիջանի գավառում բռնկված ապստամբությունն եր։

Հայաստանում ընդհանուր դրությունն աննախանձելի յեր խիստ դժգոհ և վատ ապահովված բանակը սեկ կողմից, իրենց ուղիղ նպատակին չծառայող և դաշնակցական ծառայողների միջոցով

անխղճորնն թալանի յենթարկվող ամերիկական վողորմություն-ները, ինչպես նաև այս կամ այն հարեանի հետ անդամական ընդհարում ունենալու մշտական հնարավորությունը լերկորդ կողմից, առեղծում ելին այն որյեկտիվ իրազրությունը, վորում մենք ըստափած ելինը աշխատել:

Մեր պրոպագանդի ազդեցության յենթարկվելու տեսակետից Դիլիջանում ամենից ավելի նպաստավոր տարբերն ելին հանդիսանում երդ զնդի զինվորները և շրջանի յերիտասարդությունն ուժառալողները, Գյուղացիական միջավայրը մենք թափանցել չելինք կարող:

Դեռևս հունվար-փետրվար ամիսներին, իերբ, չորհիվ կարմիր բանակի առաջխաղացման, մենք ավելի քան ակտիվացել ելինք, դաշնակցական կառավարությունը, թե Յերևանում և թե մեղ մոտ՝ Դիլիջանում, սկսեց կոմմունիստներին ձեր բակալելու և աքսորելու քաղաքականությունը: Այս ուղղեսափաների միջոցով դաշնակցականները ցանկանում ելին անվասա դարձնել այն բոլոր տարրերին, վորոնք նպաստում ելին նրանց քայլամանը: Նրանց տեսակետով դա ճիշտ եր, բայց չեր կարող կասեցնել մեր ընդհատակյա կազմակերպության անխուսափելի աճումը, այն կազմակերպության, վորն արդեն պատառել եր անլեգալության ձևերը և հեղափոխական շարժման ակտիվ գործոնն եր դառել:


Մեր կազմակերպությունն այդ ժամանակ խիստ աճեց: Հենց միայն Դիլիջանում մոտ 80 մարդ ունելինք, իսկ ինչըան գնում եր գեղի Նողախ, Աղբբեջանի սահմանները, մեր քջիջներն այնքան ավելի ուժեղանում ելին. գրեթե ասբողջ գլուղական չքավորությունը կողմակերպված եր մեր շարքերում: Աղդպիսի ուժգին հեղափոխականացնող գործոն եր ահա կարմիր բանակի մոտիկությունը:

Մայիսի եկամ ցուցերի ժամանակ դաշնակցականները գործոն մասնակցություն հայտարերեցին. նրանք գուրս յեկավ վերահաս կո ֆլուստի և մոտիկ ընդհարման շարժառիթների սքողման լոգունդներով Նրանցից վոմանք հայտար բում ելին, վոր յեռագույն զրոշակի կողքին պետք ե ծածանվի նաև կարմիր դրոշակը*), մյուս-ները վողջանում ելին ուստական դեմոկրատիան, շատերը «ձախ» յերանգով ելին շպարգում:

Ալեք Կոլի և Հայաստանի մյուս քաղաքների ցուցերն ու խոռվությունները դաշնակցականներին հարկադրեցին դիմադրության

*). Խատիսյանի մայիսի 1-ին Յերևանում արտասահմած ճառը, անսահմած թերթի 1920 թ. մայիսի 4—7 համարներից մեկում:


պատրաստվելու Առաջին պահերի շվամբությունն ու կհատությունը
հարկավոր եր հաղթահարելու Խատիսովի կարինետից հետո կազմվեց
Ռիանջանյանի կտորավարությունը, վորի առաջին գործը հեղափո-
խական տարրերի գեմ պալքարելու համար արտակարգ դատարան-
ԴԱԶԱՆ-ԴԻԼԻԶԱՆ ԴԱՎԱՅՈՒՄ ՍՊԱՏԵՄՐԱՋԻԹՔՅԱՆ ԱԿՏԻՎ-
ՄԸՆՄԵԿԻՑ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԽՄԲԱԿԱԿԱՐ



Հովհաննես Վ.
(Զինվորական գնդական*)



Շամախյան Յեղիչեն
(Սպանված)




Հակոբջանյան
(Զինվորական գնդական*)



Էջիսովիան Ժորժիկ
(Մահացած)



Ալեքսեյի Վաս.
(Զինվորական գնդական.)



Ապոստոլով
(Զինվորական սպանված*)

Ներ կազմակերպելու մասին որենք հրատարակելու լիդավ։ Քանի
վոր Դիլիջանը խորհրդակին Ազրբեջանին սահմանակից եր, այդ պատ-
ճառով ել ամենից ավելի վտանգավոր ռայոնն եր, ուստի անձամբ
այստեղ յեկավ ներքին գործոց մինիստրի ռդնական Մանասյանը։

Մայիսի 12 ին լուր ստացվեց Ալեքսովի ապստամբության մա-
սին։ Մեր զինվորական ընկերները դրդում եիին դուրս գալ, իսկ
մենք կենտրոնից ստույգ հրահանգների ելինք սպասում։

Այդ որերին դաշնակցականների անվճռականությունն առավել
քան ցայտուն կերպով դրսենորվեց. նրանք ել չեյին հավատում,
վոր դեպքերն իրենց համար նպաստավոր լելք կունենան։

*) Այս ընկերների նկարները չկարողացանք գտնել.

Մալիսի 12—13-ին գումարած բազմամարդ ժողովում, նրանք կեղծ խաղաղասիրական լողունդներ են բաց թողնում—«Անք մի բարի հաւ յենք», «Արիք արյուն չթափէնք» և այլն։ Մանասյանի առաջարկությամբ, կարծեմ, ընդունված բանաձեռում, վորը հեռագրով կառավարությանն ուղարկվեց, ցանկություն եր հայտնվում ընդհարութերից խուսափելու համար կոնֆիդենտը լիկվիդացիայի լենթարկել բանակցությունների միջոցով։

Մալիսի 15-ին հեռագրով իմացանք, վոր Ալեքպոլում շարժումը ճնշված եւ Այս ժամանակ խաղաղասիրական տոնը փոխարինվեց ավելի խիստ մի տոնով, Նույն Մանասյանի միջոցով գումարված մի առ միախնդում, ապստամբների գեմ անխնա պարքար մըղելու ժամին բանաձեւ ընդունվեց։ Հենց նույն օրն ել սկսեցին ձերբակալությունները։ Ձերբակալվեցին մոտ 20 մարդ և ուղարկվեցին Ալեքսանդրապոլի բանտը։ Երդ գնդի ամենահեղափոխական վաշտը, վորի հրամանատարն եր Հակոբջանլանը, փոխադրեցին իշխան, կարծելով, վոր զբանով կտրում են Դիլիջանի հեղափոխական գլուխութ։ Բայց նրանք սխալվեցին։ Ամենահեղափոխական զորամասը սահմանագլխին մոտեցնելով՝ նրանք բաց արին ճանապարհը ոռուսական Կարմիր բանակի առաջխաղացման համար։ Յեկա մեր գլխավոր զենքը դարձավ։

Շամշադինում ապստամբություն սկսվեց։ Մանասյանն անձամբ այստեղ գնաց ճնշելու Դիլիջանում թողնելով Սահակ Մարտիրոսյանին, վորը, ըստ լուրերի, տեղական նախկին ժանդարմաններից ելեղել։ 17-ին ինձ ճերբակալվեցին։ 18 ին Մանասյանն իջևանից հաղորդեց, վոր Շամշադինի ապստամբությունը ճնշված եւ 19 ին նրան ճերբակալեց իջևան մտած կարմիր բանակալին մի ջոկատ և մի խումբ պատանդների հետ Բագու ուղարկվեց։ Դիլիջանում դաշնակցականների շփոթությունն ուժեղացավ։ Սպասում եւ, ին Սեպուհի շոկատին։ 21-ի առավոտյան ամբողջ վարչական կազմը ճանապարհ ընկավ դեպի Յերեան, բայց ժամը 10-ի մոտերը Մեսրոպի խումբն հետն առած, յետ վերադարձավ։ Մինչ արդ, մերոնք հասան Զարխեչ (Դիլիջանից 11 վերստ հեռավորության վրա), և ցերեկվա ժամը 5-ին մեր հետախուզը քաղաք մտավ։ Դաշնակցականները փախան։ Ալդ բոպեյից քաղաքը մեր ձեռքն անցով։ Յեկավ Յենոք Մկրտումյանը։ Անմիջապէս լուր ստոցվեց, վոր կարմիր բանակալինների զորամասերը գլխավոր բանակից կտրվում են (Գանձակում սկսած խոռոչությունների հետևանքով)։ Հենց նույն օրը լերեկուան Յաղուրյանը մեկնեց դեպի Քարվանսարա-Ղազախ՝ դրությունը պարզելու համար։

Աղպարատ կազմակերպելու հնարավորություն չունելինք. մարդիկ չկային. վոչ վոքի վրա հենվել չելինք կարող. առանց ոռուսական կարծիք բանակի մասում ելինք ողում կախված։ Մեզնից մեկն առաջարկեց վերցնել մեր ակտիվ կողմանակից վաշտը և նահանջել. Մեծամասնությունը չհամաձայնեց. Մինչ այդ, Սեպուհի զորքը մոտենում եր:

Յերեկոյան ժամը 5-ի մոտերը մթնոլորտը բավականաչափ թանձրացած եր. ողում զգացվում եր անխօսավելի աղետը։ Մենք այս դադարեցինք վորե և արտաքին ողնության վրա հույս դնել։ Ամեն կողմից կտրված եյինք. հեռագիրը չեր աշխատում, քաղաքում պատերազմական դրություն եր հայտարարված, մասնակի զինաթափումներ եյին կատարվել. Ժամի 8-ին, ստացվեց գեներալ Խանկամալովի վերջնագիրը, վորով պահանջվում եր մինչև գիշերվա ժամը 12-ը բաղարը հանձնել։

Մեր խորհրդակցությանն լնկերների կարծիքները բաժանվեցին. վոմանք առաջարկում ելին հեռանալ, մյուսները՝ մեր կողմանից վաշտի միջոցով դիմադրություն ցուց տալ. Վերջինիս վրա պնդում ելին զինվորականները — Հակոբջանյանը, Արեգսենեվը, Ապոստոլովը (լերեքն ել սպանված են): Վճռեցինք դիմադրել. Ժամը 11-ին լուր ստացանք, վոր նահանջի ճանապարհը կտրված և հակառակորդը բաղարից մեկ ժամվա հեռավորության վրա լեզուվում։ Այժմ արդեն հարկավոր եր փախչել. Խմբերի բաժանվեցինք. Առավոտյան դեմ միքանիսին սպանեցին և գրեթե բոլորին ձերբակալեցին։ Գիշերվա ժամը 12-ին հեղկոմի շենքը հականեղափոխականներով լեցվեց. Ժամը 2—3-ին քաղաք սկսեցին մտնել Սեպուհի զորամասերը. Ապստամբությունը ճնշված եր.

Մինչև մայիսի վերջերը Սեպուհին հաջողվեց ամբողջ գագառը մաքրել։ Հայաստանում ցրիվ լեկած մեր կազմակերպությունը յերբեմն անջատ-անջատ լեռություներ եր ունենում։ Դաշնակցականները միևնույն պատժիչ զորամասով հաջողեցին խեղդել հեղափոխական բոլոր բոնկութերը։ Իշխանությունը գրավելու վորոշակի նպատակ առաջարած, ունակ և կազմակերպված ղեկավարության բացակայությունը, այսպիսով, վաղորոք ամբողջ շարժումը դատապարտեց մի շարք անջատ լեռություների վերածվելու, վորոնց վիճակված եր անսմիտ պարտությամբ վերջանալ։

Գ. Խչխանյան (Ժորժիկ)

1929 թ.

ՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ Կ. ԴԵՌԻՎ. ՃՐՁԱՆԻՑ

1920 թ. փետրվար ամսից Կարմիր գյուղում հիմնվել եր գտղտնի բջիջ, վորի մեջ մտնում ելին նաև մոտակա ներքին ծամբարակի ընկերներից: Վերջիններս ակտիվ աշխատանք ելին տանում և ներքին ձամբարակ և թրու զուր գյուղերում:

Բջիջը յերեք ամսվա ընթացքում ուժեղացրեց իր աշխատանքները, աճեց նրա քանակը և ուժեղացավ կազմակերպչորեն, դրուղացիության հասակրանքը դեպի բայլշեիկներն եր:

Կուսակցության բջիջի մեջ մտնում ելին նաև շրջանի պետական հիմնարկություններից ակտիվ ընկերներ, ինչպիսիք ելին՝ միլիցիայի շարքերից և գպրոցի ուսուցիչները, շրջանի փոստ հեռազրատան աշխատակիցները:

Շրջանի աշխարհազրական դիրքը այնպես եր, վոր տեղիս կազմակերպությունը հասրավորություն չուներ կազ հաստատելու մատիկ կենտրոնի հետ, ինչպիսին եր Դիլջանը:

Կազ եր հաստատվել Շամշադինի շրջանի կազմակերպության հետ, վորտեղից հասրավոր եր և կազ պահպանել Ղազախի ու Թավուզի ապստամբ ազգաբնակության հետ. բացի այդ մենք կազ ունեյինք նաև Շամքորի և Գեղարեկի շրջանի հետ, վորտեղ կանգնած ելին ռուսական կարմիր զորամասերը:


Մեր կազմակերպությունը այդ յերեք ամսվա ընթացքում արգեն հասունացել եր. նա ուներ իր մշակված ծրագիրը, կազմակերպված աշխատանք եր տանում: Պայմաններն այն աստիճան հասունացել ելին, վոր թելազրում ելին մեզ վերցնել տեղական իշխանությունը, և հաստատել խորհրդային իշխանություն:

Բայց և այնպես, ինչպես մի շրջան, վոր բաղկացած եր մալական, թուրք և հայ, ազգաբնակություններից, տեղական կոմկազմակերպությունը դժվարանում եր առաջի հերթին առանց դրսի ոգնության իշխանությունը վերցնել իր ձեռքը և այդ դրսի ոգնությունը պիտի լիներ ոուս կարմիր զորքերի կողմից, վորոնք խոսք ելին տալիս մեզ Գեղարեկից տալ ոժանդակ զորամաս:

Վորպես Հայաստանի ծալրամասերից մեկը, դաշնակցությունն այլտեղ ուներ իր կանոնավոր զորքերը, թնդանոթ և հեծելազոր: Տեղական կազմակերպությունն ստիպված յեղավ Գեղարեկի 11 ըդ բանակի զորամասից խողբել ազիտատորներ: Այդ հաջողվեց: Ագիտատորները ներկայանալով շրջանն յերկու ընկերներով: ը կ ընկ Ծիխալլու և Գովրիլինն իրենց յերեք որվա տարած տղիտացիոն

աշխատանքից հետո, դաշնակցության գորքերը արտամադրվեցին դեպի կոմմունիստները և խոստացան աջակցելու 1920 թ. մայիսի կեսերին կազմակերպությունն իր միջից ընտրեց ռայոնական հեղափոխական կոմիտե։ Իր ակտիվ ուժերը բաժանեց գյուղերի վրա՝ կազմակերպչական աշխատանք տանելու համար։ Մինչույն ժամանակ կազմակերպեց զինված ուժ։ Մի քանի որ հետո հեղկոմը ձերբակալեց դաշնակցության սպաներին և պաշտոնյաներին, և հայտարարեց Խորհրդային Խշանություն։

Մինչև այդ մեկ չարաթե եր, ինչ վոր շրջանի հաղորդակցությունը կտրված եր կենտրոնի հետ, ինչպիսին եր Դիլիջանը և Իջևանը։ այդ կենտրոնների դաշնակցության ուշադրությունն ուղղված եր Շամշադինի ապստամբ գյուղացիության դեմ, վորտեղ զեկավարում եր ընկեր Բերբերյանը։



Ռեվոլուի կամուրջը

Բաշքենդ և Վերին Շամբարակ գյուղի կուլակներն իրենց մեջ մնացած դաշնակցական պրիստավերի ու խմբավետների հետ հակախորհրդային աշխատանք երին տանում, և դիմադրում—խանգարում ռայոնական հեղկոմին։ Նրանք յերկու սուրհանդակ ելին ուղարկել Դիլիջան՝ խմբավետ Սեպուհից զորք ու ոգնություն ստանալու համար։

Այդ բանը չհաջողվեց. սուրհանդակները գնդակահարվեցին Ղարաղոլվի ապստամբ թյուրքերի ձեռքով, վորոնք կռվում ելին դաշնակցության խմբերի դեմ։ Շրջնեղկոմը կազմակերպության ակտիվ ընկերներից և հեղափոխական զորքերից ուղարկել եր Ղարաղոլվի ձորի թրուրք ազգաբնակչությանն ոգնելու։ Զորս որից հետո դաշ-

հակցությանը հաջողվեց Դարադորվի ձորով բաց անել ճանապարհ գեպի մեր շրջանը, թյուրք գրողացիո թյունը մատնվեց գաղթականությունը, միանալով Գողջայի թուրք ազգը ակտության հետ, գաղթելով գեպի Խորհրդավին Ազրի եջան, Նրանց կարողությունը մասնվից թալանի: Զորից թուրքերին ոգնության ուղարկված մեր ուժերը վերադան Կարմիր գյուղ, վորպեսզի զիմադրեն դաշնակցության նոր ավանտյուրաբին, Դաշնակցության սառւղերինական գորքերը միանալով Բաշքինդ գյուղի ու վերին Ճամբարակի տեղական ուժերի հետ, հեղկոմից պահանջում ելին Ճամբարակած դաշնակցության ըստաներին: Վարին Ճամբարութից Թնդանոթները ուղղել ելին դեպի Կարմիր գյուղը, վորոնց միջի տարածությունը 1 վերսաչկար, Կարմիր գյուղից Վերին Ճամբարակ չեր կարելի գնար, յերկու կողմից պահանջներ ելին Կանգնած, միայն հեռախոսի միջոցով կապ ունելին: Զորրորդ որը շրջանի կազմակերպությունը ստիպված յեղավ պատերազմել, բայց նրա ուժը չնչին եր, մալական գլուղացիությունը գաղթում եր Խորհրդավին Ազրերջան, սպառվում եր մեր կազմակերպության ուղաժական միջոցները: Թնդանոթները բացվում ելին Կարմիր գյուղի վրա, հրդեհվում եր տները, սպանվածներ, վիրավորներ Կայյն, վորոշվեց յետ քաշվել գեպի Խորհրդավին Ազրերջան, նկատի ունենալով: Վոր մեր փոքրաքանակ ուժը կարող չենաղթություն տանել: այլ կարող եր մեծ վասներ հասցնել ապրաւամբ գյուղացիությանը: Ալղպես ել արգեց:

Շրջանի ակտիվ Ընկերներից իննը ընկեր Ն Ճամբարակից և Թթու Զրից անցան Շամշադինի շրջանը և միացան ապստամբ զորքերի հետ: Այդ Ընկերներն ելին Ցեղոր Հարությունյանը, Իվան Հակոբյանը, Իվան Պողոսյանը, Ավագ Ստեֆանյանը, Ստեփան Բորյանը, Կոստի Շախնազարյանը, Իվան Տեր Մարտիրոսյանը, Սողոմոն Մարիբեկյանը և Սարո Մարիբեկյանը: Ընկերների մեծամասնությունը յերկար տարիներ լինելով Բագվա բանվորական շրջաններում և բանակում, գաստիարակվել ելին հեղափոխական գողով: Շամշադինի շրջանի ապստամբությունը ևս պարտվեց: Այս Ընկերների մի մասը հետ քաշվեցին Խորհրդավին Ազրերջան, իսկ մի քանիսը յետ դարձան շրջան գաղտնի աշխատանք տալ ելու, բայց քիչ հետո դաշնակցության հառուկ լիսազորների ձեռքով ձերքեակալվեցին, հանձվեցին արտակարդ դատարանին և ուղարկվեցին բանտ: Մալիս ամսից հետո, մինչև բոլշևիկների գալը, տեսեց մոտ վեց ամիս, այդ ժամանակաշրջանում վերոհիշյալ հեղափոխական դրույրը չափից գուրս տուժվեցին, ամեն տեսակի բռնություններ ելին կատարվում դաշնակցության կողմից հանդեպ այդ հեղափոխական մասսան: Քայլքալվեցին տնտեսապես, նամանավանդ ակտիվ Ընկերների անտեսությունը: Հիշալ իննը ըն կերների ընտանիքները ուղարկվում ելին աքսոր կենտրոնական գավառները:

1920 թ. նոյեմբերի 29-ին Կարմիր գյուղի շրջանը Խորհրդավին հայտարարվեց:

1925 թ. գետր.

Ն. Ճամբարակ

Ավագ Ստեփանյան

ՂԱՐԱՔԻԼԻՍԱ

ՀԱՅՈՂԱԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐԵՔԻԼԻՍԱՑԻՑ

Բոլշևիկյան առաջին բջիջը Ղարաքլիսայում կազմակերպվել է 1917 թ. հուլիսին, բաղկացած 7 հոգուց. Անուշավան Վարդանյան, Վաղինակ Մոավյան, Վերգուշ Մխիթարյան, Սուրեն Ազատյան, Սերյոժա Բաշևինյան, Արտավագդդ Հախումյան, Արամայիս Աղասյան (մեկ բանվոր, յերկու ծառայող, յերկու ուսանող և յերկու զինվոր): Կային և մի քանի համակրող ընկերներ:

Դեռ 16 թվականից Հայկ Ազատյանի նախաձեռնությամբ Ղարաքլիսայում մի խումբ յերիտասարդներ համախմբվում են «Պայքար» թերթի շուրջը: Ահա այդ յերիտասարդությունից եր, վոր վետրվարյան հեղափոխությունից հետո կամաց-կամաց ինքնազիտակցության գալով, հետեւելով որպա քաղաքական կուսակցությունների կյանքին, ընկեր Անուշավան Վարդանյանի նախաձեռնությամբ և զեկավարությամբ անջատվեցին Ռ. Ս. Դ. Բ կ-ից և կազմեցին առաջին բոլշևիկյան բջիջը: Այս գործում խոշոր դեր ե կատարել և տեղում կանգնած ոռւսական գնդի զինվորական բոլշևիկյան կազմակերպությունը: Բջիջը չափազանց ակտիվ մասնակցություն ե ունեցել Ղարաքլիսայի զինվորների և բանվորների քաղաքական մտքի կազմակերպման գործում: Բջիջը սերտ կապ ուներ գորամասերի հետ և իր աշխատանքների ընթացքում մերկացնում եր գաշնակցության հականեղափոխական գեմքը և ժողովներում և ցույցերում:

Սահմանադիր ժողովի ընտրություններին ակտիվ մասնակցություն ենք ցույց տվել «համար 5» բոլշևիկիների ցուցակի մասնայիկանացման գործում. այս աշխատանքները զեկավարելու համար Յերկրային կոմիտեյից մեզ մոտ եր յեկել ընկ. Ալիխանյանը: Ընտրություններին թեավետ գաշնակցականներից քիչ ձայն ստացանք, սակայն համեմատած մյուս քաղաքական կուսակցություններին (եսերների, մենշևիկիների) մեր ստացած ձայնները գերակշռում եյին: Զորամասերի գգալի տոկոսը ձայն տվին բոլշևիկներին:

Մեր բջիջի աշխատանքները կանոնավոր շարունակվում եր մինչև այն ժամանակ, յերբ հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով ոռւսական զորամասերը վերջնականապես քաշվեցին Կովկասից: Դրանից հետո մեր աշխատանքները փոքր ինչ կանգ առան:

1918թ. Անդրկովկասյան հանրապետությունների կազմվելուց հետո, դաշնակցությունը սկսում է յերկրի ներսում ազգային տերքաբարյալ «բյուրեղացումը» ինչպես այդ ասում ելին իրենք: Դաշնակցականները ծրագրել ելին մեր շրջանից վաչնչացնել թուրքական գյուղեր՝ Վարդանու, Սարալ, Ղուրասլու և այլն: Այդ շրջանում եր, վոր մենք կապ հաստատեցնենք Աղեքպոլի կոմ: կազմակերպության հետ Վարդանու գյուղի կոտրածի ժամանակ 18 թ. մարտ ամսին ցույց կազմակերպեցինք վաշնակների բարբարոսության դեմ: Մեր գեմոնստրացիան հասարակական ժողովում մնաց անհետեանք: դաշնակները շարունակում ելին ավերել թուրքական գյուղերը: Նրանց գործունեության դեմ արտահայտվողները յենթարկվում ելին հալածանքի: Մենք այնքան թույլ ելինք, վոր նույնիսկ թուրք յերեխաներին ու կանանց չկարողացանք մեր ուղած ողնությունը ցույց տալ վորովհետև դաշնակցությունն արգելեց այդ: Նման պայմաններում մեր կազմակերպությունը հնարավորություն չունեցավ ծափակելու իր աշխատանքները:

Քաղաքում 19 թ. հատ ու կենա բնակչությամբ երբեմն հավաքվում և գրականությամբ ելինք զբաղվում, մինչև վոր նույն թվի հուլիսին ընկ. Խանոյանի միջոցով վերստին կազմակերպում ենք նոր բջիջ, վորը մի քանի ամսից հետո աճում եւ Արմենկոմի և Յերկրային կոմիտեյի հետ կապը պահպանվում եր Ս. Մարտիրոյանի ու Խանոյանի միջոցով: Պետք է ասել, վոր մենք Յերկրային կոմիտեյից դրականություն և գիրեկտիվներ ավելի շատ ելինք ստանում, քան Արմենկոմից:

Քաղաքի կազմակերպչական բյուրոյին հաջողվում և շրջակա գյուղերում ևս ծավալել աշխատանքը: Հաջիղարա գյուղում՝ Մ. Գեղվորդյանի, Ժ. Արեցյանի և ուրիշների ղեկավարությամբ կազմակերպվում են բջիջներ. նրանք աշխատանք ելին տանում և հարեան գյուղերում: 20 թ. հունվարից մեր կազմակերպությունը սկսում է ավելի աճել և խորացնել աշխատանքները: Մ. Գրիգորյանի, Վաղ. Մոավյանի և Վ. Վարդանյանի ջանքերով կանոնավոր աշխատանքներ ենք տանում նաև Ամերկոմի բանվորների և ծառայողների շրջանում:

Յերկաթ գծի բջիջի և այնտեղ աշխատող Ռուբեն Վոսկանյանի շնորհիվ, մեր կապն ավելի ուժեղ և սիստեմատիկ եր Աղեքպոլի կազմակերպության հետ, քան Յերեվանի:

Բագվի խորհրդայնացումից հետո վորոշեցինք մի ընկերոջ ուղարկել Յերեվան, մի ուրիշին ել Աղեքպոլ՝ իմանալու մեր մոտ ապագայի գործողությունների մասին: Այդ յերկու ընկերների ստա-

ցած պատասխանը հետեւայն եր, այն և Արմենկոմի ասել ե — «հայսնեցեք, վոր ամեն կարգադրություն կլինի մեզանից». Ալեքպոլը թե «սիզնալ կտանք, նետելիք մեզ»: Այդ մերկու կտրծիքների մեջ մենք պետք եւ վճռելինք մեր գործունեությունը, յերբ մայիսի 1-ից անմիջապես հետո Դարաքլիսա յեկավ ընկ. Խանուանը:

Մենք ընկեր Խանոյանին տեղավորեցինք կայարանին մոտիկ մի ընկերոջ տան այն մաքով, վոր մոտիկ լինի կայարանի քջիջից Ալեքպոլի ասլստամբության մասին հեռախոսով մենք անմիջապես իմացանք, հավաքվեցինք Խանոյանի մոտ. բոլորս վոգեկորված եյինք. առաջարկում եյինք անմիջապես նույն գիշերը զինաթափ անելը դաշնակցականներին, ձերբակալել տեղի իշխանության պետերին և ուղարկել Ալեքպոլ: Հիշում եմ, թե ինչպես ընկեր Խանոյանը մեր վոգեկորությունը զապեց: Մենք պնդում եյինք, թե վաղվան զցելը գործը կուշացնի, իսկ ընկ. Խանոյանը ինչպես Արմենկոմի ներկայացուցիչ, առաջարկեց թողնել մինչև վաղը, վորպեսզի խոսի Արմենկոմի հետ: Մինչեւ հիմա ել ինձ հայտնի չե, թե խոսեց Խանոյանը Յերեվանի հետ և կամ ինչպես եր խոսելու, քանի վոր նա թագնված եր: Առավոտյան դարձյալ հավաքվեցինք ընկ. Խանոյանի մոտ: Ալեքպոլը հեռագրով պնդում եր, վոր անհրաժեշտ երենց անմիջապես հետեւել և հրահանգներն ու առաջարկները կատարել: Ընկ. Խանոյանը կասկածում եր, վոր Ալեքպոլը հաջողություն կունենա: Վորոշվեց այդ որը տեղերում ունենալ ժողովներ, կապվել զյուղերի հետ, սպասել լուսի ուղարկած ընկերոջ վերադարձին, պատրաստել միլիցիային և զինվորներին, վորոնք պետք եւ գործելին հեղափոխական կոմիտեյի հետ և գիշերն անցնել զործնական քայլերի: Կազմեցինք գործողության ծրագիր և ձերբակալության յենթակա դաշնակների ցուցակը, բայց ցերեկվա ժամը 2-ից դաշնակները մեզ սկսեցին ձերբակալել: Վորովհետեւ ընկերներից մի քանիսը թագնված եյին, մի քանիսը գնացել եյին գյուղեր, այդ առաջին ձերբակալությանը յենթարկվեցինք յես, Վ. Մուավյանը, Յե. Հայրապետյանը և Մ. Գրիգորյանը:

Մեզ ձերեւակալելուց մի յերկու ժամից հետո մեզ մոտ ե գալիս գավառապետ Պարույր Ղարիբյանը. ընկերներն ոգտվելով նրա քաղաքավարի վերաբերմունքից, ինդրում են ինձ ազատել, ուղարկել տուն պատճառաբանելով, վոր տեղներս անհարմար ե: Ղարիբյանը զիջում ե և յերեկոյան ինձ թողնում են տուն՝ հանձնարարելով մի զինվորի հսկել: Յերեկոյան ժամը տասին յես գաղտնի ճանապարհով, ոգտվելով անձրևային գիշերից գնում եմ Խանոյանի մոտ մեր անելիքների մասին իմանալու: Ընկ. Խանոյանը վոչ մի

տեղեկություն չուներ Արմենկամբց: Ալեքսոլիք հեռախոսազրերը ընկ. Խանոյանին ըստ յերկուցիթին չեյին հաղորդել վոր անհրաժեշտ և անմիջապես հետեւ ապստամբությանը: Դրությունը բավական լուրջ եր, դյուղերն ուղարկած ընկերներից տեղեկություն չկար. ապասողական գրության մեջ եյինք. մինչդեռ իմ հավաքած տեղեկությունները ցույց եին ապլիս, վոր գաշնակցությունը պատրաստվում և հարձակում գործել մեր գետ: Յեթե մենք ուղենայինք այդ գիշերն և յեթ, կարող եյինք մեր ուժերով ձերբակալել գալաքառապետին և մի քանի այլ պաշտոնական անձանց, և յեթե մինչև առավոտ հայտնեյինք Ալեքսոլիք հեղիոմին, վոր ապստամբվել ենք, նրանք կարող եյին մեզ ոպնության գալ. իսկ մյուս կողմից լավ կլիներ Ալեքսոլիք ապստամբության հաջողության համար: Մենք նորից մնացինք անվճռողական: Ընկերներից մի քանիսն արդեն բանտումն եյին, մի քանիսը դյուղերում: Այդպիսով փաստորեն մենք այդ գիշեր ևս փոչինչ չարցցինք: Ըսկ. Խանոյանը ինձ պատվիրեց, վոր ինչ կերպ ուղում և լինի, տեսնվեմ քաղաքի բոլոր ընկերների հետ և լուսառացին լուր տամ Հաջի Ղարայի ընկերներին, վոր անպատճառ մյուս գիշերը գան Ղարաքիսա՝ իշխանությունը գրավելու: Այդ գիշերն իմացա, վոր Վարդանյանը, Զ. Աշրաֆյանը և Կոտիկը կազմակերպել ու պատրաստել են զինվորներին, միլիցիային իրանք գնացել են անտառ, վոր առավոտը գաղ կազմեն Հաջի-Ղարա դյուզի հետ: Թորոսյանը կոռուց գեռ չեր վերադարձել:

Այդ յերեկո յերկու միլիցիներներ, մեր տանն ինձ ձերբակալեցին, դուրսը նրանց միացան յերկու մասուցերիստներ: Բանտի ճանապարհին նրանցից իմացա, վոր ինձ հասցեազրած մի գաղտնի նամակ են բռնել: Հարցաքննելիս յես կատեղորիկ կերպով հրաժարվեցի պատօսխանելուց և ինդլեցի առավոտյան հարցաքննել: Նըրանք համաձայնվեցին և կրկին ապրան ացյալ որվա ձերբակալված ընկերների մոտ: Սպասում եյինք, վոր գուցե գիշերն ընկերներին մի բան հաջողվի անել: Սպասողական զրությունն անտանելի դարձավ, որվա հոգնածությունից քննեցի սեղանի վրա: Գիշերն ընկերների ձայնից զարթնեցի և չզարմացա, վոր բոլոր ընկերները բըռնվել են: Պատմեցին, վոր Հաջիղարայի ընկերները մի խումբ դյուզացիների հետ զինված յեկել և քաղաքի ծայրամասից փորձել են գնալ միլիցիալի զորանոցը, չհասած բռնվել են: Գյուղի ընկերների մեծ մասին հաջողվել ե փախչել բռնվել են Մ. Գեղորգյանը, Ժ. Արեշլանը, Վ. Վարդանյանը Զ. Աշրաֆյանը, Լեռնը, Լոռի գնացած ընկեր Թորոսյանը և ուրիշները: Առավոտյան բանտ բերեցին Ալեքսոլ գնացող յերկու ընկերների և—Խ. Հովսեփյան և Ն. Զա-

վարյան, ապա բռնվել եք Դիլիջանից մեզ մոտ յեկող Յերկը բային կոմիտեյից ուղարկված մեկ ուրիշ ընկեր Յվայդ անունով։ Յերկու որում Կարաբիլիսայի շրջանից, Ալլահվերդուց, Դիլիջանից ձերքակալեցին մոտ 50 հոգու և բոլորին աեղափոխեցին Ալեքսովու Խանութին, Վոսկանյանին և մի քանի ուրիշ ընկերների հաջողվեց փախչել Յերկաթգծի բջիջից բռնված եյին Հայրապետյանը, Զօրանյանը, Ա. Այվազյանը, Յուղբաշյանը, ընդամենը 7 հոգի։ Թևացածների ազգանունները չեմ հիշում։ Ալլահվերդուց Եեստակով, Շուտով և ուրիշ:

Ալեքպոլի ապստամբությանը ճիշտ ժամանակին հետևելով, ինձ
թվում ե, զոր Հայաստանի մայիսյան ապստամբության գործին
շատ ոգնած կլինելինք: Մեր թուլությունը պետք ե բացատրել
մեր անփորձությամբ—անվճռականությամբ ընդհանրապես և Ալեք-
պոլի կազմակերպության անփությամբ, զոր նրանք Յ—Գ ժամվա-
հեռավորության վրա, նախքան ապստամբությունը մեզ հետ չկապ-
վեցին, մարդ չուղարկեցին: Պետք ե այդ կապը այնպես լիներ, վոր-
պեսզի մենք և Ալեքպոլը միաժամանակ սկսելինք. Ալեքպոլի ընկեր-
ները միանգամայն մոռացել եյին, զոր Հարաբլիսան գաշնակցության
կազմակերպության ուժեղ գավառներից մեկն եր:

Վերզուց Մխիթարյան

ՍՈՒՐՄԱԼՈՒ

ՀԵՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՒՐՄԱԼՈՎ ԴԱՎԱՐԻՑ

Սուրմալիի գավառը դաշնակցական կառավարության ամենատուժեղ հենարաններիցն եր. այդտեղ կենարոնացած եյին դաշնակ մավզերիստ տերրորիստաները: Գավառի աշխատավորությունը չտեսնված ծանր որեր եր ապրում: Չտեսնված սով եր... Դյուզերի մեջ, կամ ճանապարհներին սովից այլանդակված դիակներ, կամ ուռած աչքերով մարդկային ստվերների կպատահայիք ամեն քայլափոխում: Յեթե դրան ավելացնենք գյուղական կուլակների չտեսնված սպեկուլացիան, պատկերը լրիվ կլինի: Մի բաժակ թանով կանացի վոսկյա զարդարանք գնելը, կամ մի փութ ցորենով մի այդի գնելը սովորական յերևույթ եր: Այզպիսով բոլոր գյուղերում հողերը, այզիները և այլ հարստությունները մի քանի ճարպիկ կուլակների ձեռքն եր հավաքվում, վորոնց և փաստորեն պատկանում եր գյուղի իշխանությունը: Ահա տնտեսական ու քաղաքական այս պայմաններում պիտի աշխատեր մեր կազմակերպությունը, վորն աշխատանքն սկսելիս այդտեղ ուներ միայն մի քանի անհատ կուսակցականներ, յերեքը Յերևանի սպարտակ կազմակերպությունից (Հ. Հարաթյան, Խ. Նազարյան և Ա. Մուրադյան), վորոնց հետ միացավ Լեռն Ղազարյանը:

Յեթե չեմ սիալվում 1919 թվի դեկտեմբերին եր, վոր մեզ կուսակցական անհատ ընկերների՝ Ալլահվերդյանի, Ավիսի կողմից հրահանգվեց աշխատելու նաև զորքի մեջ: Այդ շրջանից ըսկած մեր աշխատանքն ավելի լուրջ բնույթ ընդունեց: Հաճախ լինում եյինք գյուղերում ու տանում մեր գաղտնի կուսակցական աշխատանքը: Հավաքում եյինք գյուղացիներին մի տաք անկյուն (գոմի ողա) և սկսում մեր ազիտացիան, հարց ու փորձը, և այդպիսով աստիճանաբար մեր շուրջը համախմբում գյուղի չքավորությանը: Ամեն մի գյուղում զգուշաբար դուրս եյինք քաշում ակտիվ տարրերին (պատերազմական գերիներ, գործազուրկ բանվորներ և այլն), և նրանցից կազմակերպում մեր կոմբինատուրա:

Ամբողջ շրջանում ունեյինք 17 բջիջ, վորից 14-ը զորամասերում, որինակ՝ 8-րդ գնդի 3-4 վաշտում, պարետային վաշտում, հեծյալ հետախուզական գնդում և այլն: Դյուղական յերկուսն եյին—Ալիդամար 1—2 հոդի, Ալիթլու—3 հոդի:

Մի բջիջ ևս ունեյինք Իդղիրում. դա փոստ-հեռագրական ծառայողների բջիջն եր, բաղկացած 6—7 հողուց:

Միայն զիշերներն եյինք լինում կենտրոնում, իսկ այդ ժամանակն ել անց եյինք կացնում զորքի մեջ, վաշտերում, արտիլերիայում:

Ապրիլի կեսերին մենք արդեն պատկառելի ուժ եյինք. զորքը փաստորեն մեր ձեռքին եր, վորովհետև յուրաքանչյուր վաշտում ունեյինք մեր կոմբջիջները կամ համակրողները: Դյուդի չքավորության համակրանքն ել մեր կողմն եր: Դեռ չեմ խոսում այն զյուղացիների մասին, վորոնք հետագայում մեծ դեր խաղացին փետրվարյան որերին (Այլի-Ղամար, Ալեալու և Թեջրլու զյուղերում): Փոստհեռագրատունն ել նույնակես մեր կոմբջիջն եր զեկավարում,

ՍՈՒՐՄԱԼՈՒ ԹՀԿ-Ի ԿԱԶՄԸ



Խլոյան Մարկոս



Մուրադյան Արամի



Վարդանյան Հրաչյա

վորոնց միջոցով ստանում եյինք բոլոր գաղտնիքները: Ապրիլի վերջերին եր, յերբ շոփերների միջոցով ստացանք մեծ քանակությամբ բրոցուրներ ու թոռոցիկներ՝ մայիսի մեկի ցույց կազմակերպելու համար: Բայց մենք վորոշեցինք բացարձակ դեմոնստրացիայի դուրս չգալ, վորագեսզի ցուցադրեյինք մեր ուժը, վորովհետև մեր կազմակերպությունը գլխավորապես զորքի մեջն եր և մենք տրամադիր եյինք մայիսի մեկին ապատամբվեր:

Կառավարության ներկայացուցիչները մայիսի մեկին մեզ մայովկայի եյին կանչում. զյուղամեծ եյին հավաքել բոլոր խանութպաններին, իսկ գավառապետն ել մեզ առաջարկում եր նրանց առաջ ճառ արտասանել:

Իհարկե, մենք հրաժարվեցինք այդ ձեռի մայովկայից: Այդ զիշեր մենք բոլոր կազմամանները և մեր բջիջները վորողեցինք թոռոցիկներով ու բոլշևիկյան բրոցուրներով:

Չնայած դրան, մենք հիմնական խնդիրը համարում եյինք ա-

պատամբության պատրաստվելը, վորի համար տենդային աշխատանք էլինք տանում: Մեր գաղանիքը չիմանալու համար նույնիսկ բոլոր կոմոնինիստ զինվորներին կարգադրված եր յենթարկվել զինվորական բոլոր ցերեամնիաններին—նույնիսկ պատվինշան տալ. ի հարկեայդ բոլորը մեր հետապա հաջողությունների համար:

Ապօտամբության որերը շատ չուշացան: Ազրբեջանի սովետի դացիայի յենթարկվելու ու մայիսի մեկն առաջին հարվածն իջեցրին դաշնակցության կառավարության զիմին և նա սկզբում իրան կորցրեց... Մասսան խանդավառությամբ եր լուսմ ու առաջում կարմիր բանակի հաջողությունների մասին և մայիսի մեկից սկսած բոլոր գավառներում աստիճանաբար այդ խանդավառությունը փոխվեց խուլ գժգոհության—ապա ապատամբության: Նույնը յեղավառի մեզ մոտ: Դժգոհության կաթան յեւսում եր: Մեզ համար ել լուրջ գրություն եր ստեղծվել մասսան ապատամբության եր կանչում և պահանջում եր այդ ապատամբությունը ղեկավարել:

Խմբապետներն ու մավզերիսանները Սեպուհի զիխավորությամբ, մեր գավառից հեռանում են գետի Ալեքպով այստեղի ապատամբությունը խեղտելու, իսկ կենտրոնից մեզ ապատամբության հրահանգ չկա: կարծես մենք սկսում ենք մասսայի պոչից գնալ: Անմիջապես մի քանի ընկերներով խորհրդակցում ենք, վորոշում ընկեր Հասրաթյանին կենտրոն ուղարկել շուտափույթ կերպով ծանոթանալու իրերի գրության հետ և ծանոթացնել կենտրոնին մեր գրության հետ: Միաժամանակ շտամպ ապատամբության հրագանգ բերելու:

Յես մնում եմ աշխատանքը շարունակելու Այդ որը և յեթ մի քանի զինվորական ընկերների հետ մենք ցուցակագրում ենք բոլոր զինվորական և մթերքային պահեստները: Գյուղական կոմբինատներին հրահանգվում ե յերեք հոգուց հեղկոմներ ընտրել և հետադա հրահանգն ուսանալիս, վերցնել իշխանությունը: Քաղաքի կոմբինատներին (գլխավորապես զինվորական) հրահանգվում և այդ գիշերը մերուցից պահակներ նշանակել և ժամի 8-ին մեկական ներկայացուցիչ ուղարկել ժողովատեղին:

Ամսի 7-ի գիշերն եր: Հավաքվել ելին բոլոր բջիջներից 17 հոգի (հեռու ընկած մի այգում, Ամասիայի սենյակում): Բոլորը վըճռականապես ապատամբություն ելին պահանջում: Մտքերի փոխանկությունից հետո վորոշվում ե ընտրել Սուրմալվի գավառի զինվորահեղափոխական կոմիտե—5 հոգուց, յերկու թեկնածու:

Կոմիտեն վորոշում և ապատամբվել կոմիտեյի կազմի մեջ ելին Ա. Մուրադյան, Մարկոս Ցելոյան, Ալեքսանդր՝ արտիլերիայից, Հրա-

չյա Վարդանյան՝ հեծյալ գնդից, Կորյուն Աբովյան՝ Տ-րդ գնդի շտարից. թեկնածուները՝ Անտոնյան Հակոբ և Սմբատ:

Այդ կոմիտեն ընդամենը մի նիստ ունեցավ, վորտեղ քննվեցին ապստամբության հետ կապված մի շարք խնդիրներ և ֆունկցիաների բաշխման հարցը:

Ապա նրա կարգադրությամբ, մի քանի անգամ իզդիրից Յերե-
պան ուղարկվող ձերակալված ըմբոստ զինվորականներ, ազա-
մեցին:

ԿԵՆՏՐՈՆԻ ՀՐԱՀԱՆգ ՀՄԱՊՄԵց:

Ամսի 10—11-ի գիշերը մեզ բոլորիս բանտարկեցին ու տարան Յերևանի բանտը, վորտեղ մի քանի ամսից հետո տեղի ունեցավ մասսաւահան ուստ—ունիտակ:

Մեր ընկերներից Ապաջյան Կորյունը մեռավ Յերևանի բանտում, իսկ Անտանյան Հակոբին փետրվարյան ավանդույթային 63-ին հետ ուժեցն Զանգեզու պահանջու ոնուախճառելին:

卷之三

WABANAKIE

Analysis of business organization

Digitized by srujanika@gmail.com

ԶԱՆԳԵԶՈՒՐ

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Մի կողմից գավառի անտեսական անտանելի վատթարացումը, մյուս կողմից բջիջային աշխատանքների կենդանացումը և Աղքաբեցանի խորհրդայնացման լուրերի տարածումը, իսկ մյուս կողմից կարմիր բանակի մուտքը Դարարաղ, միանգամայն փոխել եյին Զանգեզուրի քաղաքական կյանքը։ Շուշվա ազգային կռիվներից և կոտորածներից աղատվելով—գավառ եր յեկել Շուշվա կազմակերպության և Դարարաղի կոմիտեյի անդամ ընկ. Բեջանյանը (Հակոբ Կամարի)։

Ընկ. Բեջանյանը գավառի կենտրոնում ապրում եր գաղտնի, վորը և կարճ ժամանակվա ընթացքում ծանոթանալով կազմակերպության ընդհանուր աշխատանքների հետ, ընտրվում ե գաղտնի կոմիտեյի նախագահ (5 մայիսի 20 թ.). այդ իսկ ժամանակվանից Զանգեզուրում բջիջներն սկսում են աշխատել մեկ կենտրոնի ղեկավարությամբ, վորպիսի աշխատանքների համար նոր կոմիտեն իր առաջին կոչն եր ուղղել գավառի բոլոր գյուղական կազմակերպություններին հետեւյալ բովանդակությամբ։

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Ռուս. կոմ. կուսակց.
Զանգեզուրի կենտրո-
նական կոմիտե

ՇԱՆՈՒՑՈՒՄ

Արանով Ռուս. կոմ. կուսակց. Զանգեզուրի
№ 1 կենտ. կոմիտեն հայտնում ե Ռ. Կ. Կ. բոլոր գյու-
6 մայիսի 1920 թ. ղական կազմակերպություններին և ընկերներին.
Ք. Գորիս 1. Վոր ամսիս 5-ին ժամանակակիցորապես վեր-
ընտրվել և փոխվել է վերոնիշվալ կոմիտեի կազմն,
առանց գավառական ներկայացուցիչների, վորոնցից նա սպասում ե ժամա-
նակավոր լիազորություն մինչև կոմիտեյի մոտակա կանոնավոր ընտրու-
թյունը։

2. Վոր կենտ. կոմ. միանգամ վերջ տալով կազմակերպությունների
բուլլ և անդիսցիպլին գործունեյությանը, գնում ե կազմակերպչական գործը
կումմունիստական անշեղ հիմունքներով և ընդառաջ գնալով մոմենտի պահանջին, նա կոչ ե անում բոլոր ընկերներին սթափվել և յելնել կուսակցա-
կան ամինահամառ աշխատանքի։

ԿՈՄԻՏԵՑԻ ՆԱԽԱԴԱՀ Հ. Կամարի
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Մաշուրյան

Քաղաքական դրությունը միանգամայն փոխված եր. Ղարաբաղի խորհրդայնացման հետևանքով դաշնակցական խմբապետների ծրագրները (Ղարաբաղի հայաստանացումը) արդեն իսկ ջուրն ընկենալով, վերջիններս կիսազինաթափ կերպով յետ ելին նահանջում Ղարաբաղից կարմիր բանակի ճնշման տակ ։ Փակառի տեղական աշխատավոր յերիտասարդությունը գասալքված կերպով փախչում ելին գյուղերը, մասսայական դժգոհություններն ավելի ելին ուժեղագույն ազգային պատճեն են ։

ԱՅՆԴԵԶՈՒՐԻ ՍԻՄԸՆ-ԽՆՉՈՐԵՍԿ ՃՐՁԱՆԻ ՌԱԴԱՆԻ ՌԱԴԱՆԻ ԿԵԶՄԸ




Թարարյան Հ.



Կամար Հ.




Աղոնց Թուման



Մկրտչյան Խրիստափոր
(Քննականարված*)



Տանիք Հակոբ



Երդուբարյան Խսկանդար
(Քննականարված*)

Պացել գեղի դաշնակցության բռնի դիկտատուրան, մանավանդ, յերբ այդ որերին Զանգեզուրի սահմանում կանգնել եր արդեն ոռուսական կարմիր բանակը, վորին վաղուց սպասում եր գավառի աշխատավորությունը։ Գյուղերում այլևս տեղ չելին տալիս դաշնակցական խմբերին և հրաժարվում ելին նրանց վորևել պարենային ողնությունն հասցնելուց։ Ահա այսպիսի պայմաններում դաշնակցությունը միայն մի հիմնական անելիք ուներ—դա Սիսիանից Քեշիշյանի գծի ապահովումն եր (փախչելու համար), վորպիսի նպատակներն իրագործելու տեսակետից կատաղի հալածանքներ ու

*) Այս ընկերների նկարները չկարողացանք գտնել:

բանտարկություններ ելին կազմակերպվել Սիսիանի գյուղը ջիջների գեմ:

Վորքան հալածանք, այնքան և ուժեղանում եր կոմմունիստական շարժումները գավառում. Սիսիանի այդ ճշշումների արդյունքը յեղավախ, վոր մայիս ամսի 15-20-ը 2րջանի մի շարք գյուղերում տեղի ունեցավ մասսայական ապստամբություն՝ շրջանի կոմ. կազմակերպության ղեկավարությամբ (ապստամբվել ելին Շաղաթ, Բոնակոթ, Ղարաբիլսա, Ալիաթիան, Աղբյանդ և Բալակ գյուղերը) կազմակերպված եր հեղափոխական կոմիտե—հետեւյալ ընկերներից՝ Աղոնց, Տանին, Ղաղարյան Պատվական և թեկնածու Մ. Գրիգորյան (տես. Հեղկամի արձանագրություն): Բանտարկված ելին շրջանում յեղած դաշնակցական իշխանության ներկայացուցիչները՝ Շրջանային կոմմունիստական կազմակերպության ղեկավարությամբ ապստամբությունը Սիսիանում տեղի մինչև մայիսի վերջը:

Ստեղծված դաշնակցական սեակցիայի հետեանքով Գալառական կոմիտեյի գործունեյությունը այդ որերին, ամեն անընդունակ բնույթ եր ստացել. մայիս ամսի առաջին որերին, յերբ գեռ բացի Սիսիանի շրջանից մյուս շրջանները բացարձակ շարժումներ չելին սկսված, դավառական կոմիտեն Սիսիանի ապստամբությունը դեկավարելու համար գործի չեր անցել: Մեր աշխատանքներն այդ որերին մյուս շրջաններում կայանում եր նրանում, վոր կազմակերպում ելինք բողոքի ցույցեր՝ Սիսիանի շրջանում տեղի ունեցող հալածանքների առթիվ, վորպիսի բողոքի ժողովներից մեկը տեղի ունեցավ Խնձորեսկ գյուղում 20 մայիսի 1920 թ. վորտեղ և ընդունվեց հետեւյալ բանաձեռը.

«Մենք Խնձորեսկի զինվորներս և գյուղացիներս լսելով մի շարք հալածանքների մասին, վորոնք տեղի յեն ունենում Սիսիանում հեղափոխականների գեմ այս ներկա քաղաքական պայմաններում— հայտնում ենք մեր բողոքն այդ առթիվ և խնդրում ենք դադարեցնել Զանգեզուրի աշխատավոր գյուղացիության պաշտպանողների հալածանքը, հակառակ պարագայում պատասխանատվությունը ընկենում և անմիջապես կառավարության վրա»:

(Սույն բանաձեռը փոստի միջոցով ուղարկված և Գորիսի գաշնական կառավարությանը 1920 թ. 21 մայիսի):

Խակականի հետ ճիշտ և ԹԱԹԱՐՅԱՆ

Մի կողմից այն, վոր Կարմիր բանակը Շուշին գրավելով մոտենում եր Զանգեզուրին, իսկ մյուս կողմից Սիսիանի շարժումները և բողոքի ցույցերը՝ դաշնակցական խմբապետների համար խու-

ճապային գրությունն եր ստեղծել: Ամենուրեք ուժեղացված եյին հսկողությունը մեր աշխատանքների վրա, վորի հետևանքով մայիս ամսի 22-ին գեներալ Մելիք-Յուզյանին հաջողվեց բանտարկել գավառային կոմիտեյի նախագահ ընկ. Բեջանյանին, վորին և իսկույն ուժեղ պահակների հսկողությամբ ճանապարհեցին դեպի Ղարաբաղի սահմանը—Դոսի և Նժենի տրամադրության տակ: Այդ բանտարկման լուրը Խնձորեսկու կազմակերպությանը համարով, նույն յերեկոյան 22-ին մայիսի, կազմակերպության ընդհանուր ժողովը (ժողովին ներկա յեր գավառական կոմիտեյի անդամ ընկեր Սիլանյան և շրջանային կոմիտեյի նախագահ Թաթարյանը). ժողովը վորոշեց զինված ուժի միջոցով բանտարկյալին յետ վերցնել: Կազմակերպելով 10 հոգուց բաղկացած մի խմբակ, գլխավորությամբ կոմիտեյի անդամ ընկ. Ղավայանի: Նույնանման աշխատանքներ կազմակերպելու համար հատուկ սուրհանդակներ եր ուղարկվել շրջակա զյուղերը (Տեղ, Կորինձոր) և այդպիսով մայիսի 23-ին Ղարաբաղի սահմանին չհասած բանտարկյալը խլվեց վուտիկանության ձեռքից անհայտացվեց Խնձորեսկ զյուղում:

Դեպքի լուրը գավառի գեներալ կոմիսարին հասնելուց—կազմակերպված եր ամենախիստ խուզարկություններ բանտարկյալին գտնելու համար, սակայն այդ բոլորն իզուր անցավ. Խնձորեսկի բջիջը ընկ. Բեջանյանին պահելով—մայիսի 24-ին զյուղից տեղափոխեց մոտիկ անտառները:

Խնձորեսկ գյուղի բջիջն իր գործնական աշխատանքներն այդ որերին այնքան եր ուժեղացրել, վոր արդեն իսկ հայտնի յեր դաշնական իշխանությանը: Զինվորական շտաբը, վոր ապրում եր Խնձորեսկում—տեղյալ լինելով բջիջի այդ որերում ունեցած ժողովներին ու վորոշումներին, այնուամենայնիվ չեր համարձակվում վորեւել վճռական քայլ անելու:

Խորհրդային պրոպագանդան տարածված լինելով գավառում, այլև գաշնակցությանը հնարավորություն չպետք ե լիներ Զանգեզուրը իր հենարանը գարձնելու, քանի վոր մասսայական շարժումները խփում եյին նրա թիկունքից: Կարմիր բանակի առաջխաղացումից հետ նահանջող Դրոյի ու Նժենի բանակները Զանգեզուրում մնալ չպիտի կարողանային—և նրանք նահանջման ուղին բըռնելով պատրաստվել եյին թալանի մասնելու Զանգեզուրի աշխատավորության ունեցվածքը. վորպիսի գրությունից գավառը փրկելու, նահանջող թշնամուն թիկունքից հարվածելու և Կարմիր բանակի մուտքն արագացնելու համար, գավառական կոմիտեն (վորը ապրում եր անտառներում) իր № 17 շրջաբերականում (26-ին մայիսի

1920 թ.) հրահանդել եր Խոճորեսկու կազմակերպությանը՝ պատրասվել զինված ուժի միջոցով կանչելու այդ բաղանքը յեվ բույլ չտալ, վոր թէնամին իրագործի իր նպատակը – Զանգեզուրի նկամամբ (առև հրահանդն ուղղված Խոճորեսկու կազմակերպությանը):

Խոճորեսկ գյուղի կազմակերպությունը, վորն այդ որերին ուներ 70-80 անդամ և համակրող և միաժամանակ կազմակերպչորեն զեկավարում եր նաև շրջանի միշտք գյուղեր (Տեղ, Գոռինձոր, Գյուրու, Ալիբուղի, Քարաշեն) մայիսի 26-ի յերեկոյան ստանալով գավկոմի այդ հրահանդը, պատրաստվել եր զինված ապստամբության զինքի տակ եյին կանչված գյուղի համակրող յերիտասարդները 100-150 հոգի. ապստամբական այդ ժողովը այնքան եր բազմարդ, վոր սկսվելով յերեկոյան ժամը 10-ից առեց մինչև առավոտյան լուսաբացը: Այդ նույն գիշերվա մեջ տպագրվեց ապստամբական դրոշակը, վորի վրա դրված եր «Կեցցե Խորհրդային Եւխանությունը Զանգեզուրում, Կեցցե Կարմիր Խնձորեսկիը»: Հատուկ հրահանդներ եր ուղարկված շրջակա գյուղերին՝ պատրաստվելու զինված ապստամբության համար: Կտրված եյին շրջանից գավառ տանող հեռագրաթելերը և գլխավոր ճանապարհները:

Լույս 27-ի առավոտյան, լուսաբացին Խոճորեսկ գյուղում, (վորը այդ ժամանակ համարվում եր 2-րդ շրջանի կենտրոնը), հայտարարված եր Խոճորդային Խշանություն, բանտարկված եյին դաշնակցության շրջանային թե զինվորական և թե վարչական բոլոր պաշտոնյաները (կապիտան Ամիրխանով, Կապանով, Դիլավյան և այլն): Գրավված եյին ամբող ուազմամթերքների պահստաները, կազմակերպված եր կոմիսարիատ, վորը զբավել եր գըլխավոր ճանապարհները ընդգեմ Դրոյի ու Նժդեհի բանակների:

Ապստամբությունն ընդհանուր դարձնելու համար այս անգամ արգեն գավառային կոմիտեն գործի անցնելով—հատուկ ձեռագիր կոչեր եր բաց թողել և ուղարկել թե Սիսիանի աշխատավորությանը և թե գավառի մյուս մի շարք գյուղքիջներին. հատուկ նամակ եր ուղղված Ղարաբաղի կազմակերպությանը:

Ապստամբությունը ղեկավարելու համար կազմված եր հեղափոխական կոմիտե, վորի կազմի մեջ եյին մտնում Խոճորեսկու կազմակերպության անդամներ ընկ. ընկ. Հայկ Սիլանյանը, Հ. Թաթարյանը, Գ. Սայիլյանը, Ա. Ղավալյանը, Ա. Մայսուրյանը, Եքուբարյանը (ձախ եսեր) և Բագրատ Ղարաբյողյանը, իսկ թեկնածուներ—Ղ. Ցուղբաշյան, Մակար Աղբարյան և Ա. Զանոնց:

Ապստամբության լուրը Ղարաբաղից նահանջող Դրոյին և Նըժդեհին հասնելով—նրանք ավելի եյին արագացրել իրենց նահանջը.

և այսպիսով մայիսի 28-ին թշնամու կողմից գրավելով Տեղ և կոռնիձոր զյուղերը, այլևս հնարավորություն չեղավ շրջանի մի շարք գյուղերում ևս ապստամբություն կազմակերպելու. գրավված գյուղերից գոմանք փախել եյին և միացել ապստամբության հետ, իսկ վոմանք ծածկվել եյին զյուղերում:

Բացի Խնձորեսկից Խորհրդային իշխանություն եր հայտարարվել նաև Ալիզուլի գյուղում:

Չնայած այս բոլորին, յերբ մայիսյան հեղափոխական շարժումները Զանգեզուրում արդեն մասսայական բնույթ եր ստացել, ինչպես Սիսիանում նույնպես ել Խնձորեսկու շրջանում, սակայն Կարմիր բանակի առաջ խաղացումը այդ որերին կանգ առնելով Ղաղաքացում (հավանական ե Գանձակի շարժումների հետևանքով) այդ ապստամբությունները Զանգեզուրում յերկար դիմադրել անկարող յեղան: Կարմիր բանակի Ղարաբաղից առաջ շշարժվելը հնարավորություն տվեց դաշնակցական խմբավեաններին իրենց գործը տեսնելու և ճնշելու տեղի ապստամբությունը. և այսպիսով մայիսի 29 և 30-ին մի շարք կոփմխերից հետո վերջնականապես զենքի ուժով ճնշվեց թե Սիսիանի և թե Խնձորեսկու այդ մասսայական ապստամբությունները, վորոնք կազմակերպված դեկավարում եյին տեղի կոմունիստական կազմակերպությունները:

Մայիսյան այդ յերկու մասսայական հեղափոխական շարժումները ճնշվելուց հետո, ինչպես Սիսիանից, նույնպես և Զանգեզուրից մի քանի տասնյակ կոմմունիստներ թափառական եյին դարձել Խնձորեսկու շրջանի և Սիսիանի միքանի շարք գյուղերում մոտ մեկ ամիս հայտարարված եր զինվորական դրություն, շրջապատված եյին ապստամբված գյուղերը. միայն Խնձորեսկից բանտարկված եյին մոտ 40 գյուղացիներ, գլխավորապես կոմմունիստների ծնողները և պահանջ եր դրված բանտարկելու ապստամբությունը դեկավարող կոմմունիստներին, սակայն Զանգեզուրի աշխատավորությունն այդ որերին պատրաստ եր կը ելու բոլոր տեսակի տանջանքներ, միայն թե դաշնակցության ձեռքը չմատներ վորեե կոմմունիստի, վորի հետևանքն այն եր, վոր փախած կոմմունիստները մոտ ամիս ու կես սարերում ապրելով, դաշնակցությունը չկարողացավ նրանցից վորեե մեկին բանտարկել:

Դաշնակցական հերոսները վրիժառու լինելու համար և իրենց քաջություններին հատուկ—Խնձորեսկու ապստամբությունը ճնշելուց յերկրորդ որը բանտարկելով հեղկոմի անդամ բնկ. Խսկենոյե Ելիսլարացյանին և կոմմունիստի հայր Մ. Ղարազյովյանին. մայիսի 30-ին 1920 թ. զենքի ուժով հավաքելով Խնձորեսկի գյուղացինե-

բին, նրանց ներկայությամբ գնդակահարեցին այդ յերկու ընկերներին։ Այդ որը Խնձորեսկու աշխատավոր զյուղացիությունը, վորենք ցույց կազմակերպելու հնարավորություն չունեցավ, քանի վոր զյուղը շրջապատված եր մոտ 1000 զինվորներով։

Սկզնական որերին փախած կոմմունիստների թիվը շատ մեծ եր. փախել ելին նաև բոլոր համակրող և զինված ուժերը, սակայն չանցած 15-20 որ, այդ յերիտասարդների զզալի մասը վերադարձան զյուղ, վորոնք զեկավարություն ստանալով փախած ակտիվից, շարունակում ելին բջիջային աշխատանքները տեղերում։


Թարարյան Հարուրյուն

ԲԱՆՏ—ԱՔՍՈՐ

ԱԼԱՎԵՐԴԻՑԵՆ, ՄՈՒՍԱՅԵԼՅԵՆ, ՂԱՐԻԲՁԵՆՑԵՆ

Այսորվա պես հիշում եմ բայլշկիների ողոստոս 13-ի ապրուտամբությունը Յերևանի գաշնակցական բանտում:

Մեր բանտարկյալ ընկերները սեղմել եյին իրենց շարքերը ընկ. ընկ. Ալլահվերդյանի, Մուսայելյանի և Ղարիբջանյանի շուրջը Դաշնակցական կառավարությունը վորոշել եր վրեժինդիր լինել



Ա Տ Ե Շ Ո Պ Ա Յ Ի Կ Ա Մ Ե Ր Ա Ն

Դահան Խորենու և Շիրինյանի (պարլամենտի անդամեր) մահվան համար, վորոնց սպանել եյին գաղափած գյուղացիները Զանգեզուրում 1920 թ. ողոստոս ամսին, և հանձին տիրացու հոր—Ավետիքի—արժանավոր վորդի, տիրանոչակ դատախազ Վարդգես Ահարոնյանը, ձեռք եր զարկել իլատար ածել իր այս խայտառակ վորոշումը: Դահիճներն արյուն եյին պահանջում, այդ սպանության համար անմեղ կոմմունիստների, գաշնակցական կեղեցման տակ ճընշված հայ աշխատավորության այդ ճշմարիտ պաշտպանների արյունը:

Բանառում մենք միտինք կազմակերպեցինք և վորոշեցինք մելու ընկերներին բաց չթողնելու

Թախտելից հանած տախտակներով բանափի դռների յետեից բարդիկադներ կառուցեցինք, կապի համար հարեան կորպուսում ադդամնը շան ավող պահակներ գրինք և սկսեցինք սպասել ամբողջ ցերեկը և ամբողջ դիշերը: Այդ ամբողջ ժամանակամիջնացում վոչ վոք համարձակվեց մոռենալ բանափին: մեր հարձակումից վախենում եյին: Մենք մննդադուլ հայտարարեցինք: Հետեալ որը, դաշնակցականների Արևելյան Բյուրոյի նախագահության անդամներ Ահանջանյանի, Պատպայան Խոսրովի և Վրացյանի կարգադրությամբ, բանտը շղթայեցին պահնորդական գումարտակի և խմբապետ Սեպուհի գորամասերով: Դրին նաև գնդացիրներ:

Ինչպես յերեսում եր, վորոշել եյին մեզ կուլով վերցներ, Բայց նախապես բանակցություններ սկսեցին մեր կողմից ընտրված ներկայացուցիչների՝ Միջյան Լիպարիսի, Վաղարշակ Խանդամիրյանի և Լևոն Նալբանդյանի հետ, վորոնք հերոսաբար, տոկունությամբ ու խիզախորեն պաշտպանում եյին մեր ընկերներին, միաժամանակ նախազգուշացնելով բանափի դռների մոտ յեկած լիազոր Ղասարյանին (վորն այժմ կենդանի յե) և բանտապետ Ղուշչյանին:

Հինգ ըռպեյի ընթացքում հանձնվելու վերջնագիր ներկայացվեց մեզ: Մեր ընկերներն անխախտ մնացին: Յերբ մեզ առաջարկված պայմանաժամը լրացավ, հրամանը վորոտաց:


— Զարդել դռները!

Սկսվեց մուճի ու կացնի յեռանդագին մի տարափի: Յեվ այն ժամանակ տեղի ունեցավ մի անմոռաց դեպք, վոր յերբեք չի ջնջվի ապստամբությանը մասնակցողների և բանտը շրջապատող զինվորների հիշողությունից:

Այն սենյակից, ուր հավաքվել եյինք մենք, բանտարկյաներս, փակել դռները և բանալին պահել, — բարձրացան «Մարսելյողի» և «Խնաերնացիոնալի» առնական հնչյուններ: Տեսարանը վեհ եր ու սարսուզդեցիկ... Մեկ կողմից խիզախ և բարձրականչ յերգն եր հնչում, մյուս կողմից՝ դահիճների կացինների անվճռական, խուլ հարվածները:

Վերջապես դռները շառաչյունով տապալվեցին և խմբապետներն ու գաշնակցական միլիցիոներները բանտի վերին հարկի միջնցքը խուժեցին, ուր կրմմունխսաները, կամերայում փակված, հանգիստ սպասում եյին, մինչև վերջին մարդը մեռնելու և մեր փառապանծ ընկերներին բաց չթողնելու հաստատ վորոշմամբ:


ՄԱՍԻՆԵՐՆ ԵՊԱՏԵՄԲՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻՑ



Մատիկան
(Մարիզամիշի Ռէկ-ի ան-
դամ՝ գնդակահարված*)




Դալսյան Արմենակ
(Դամարյուից—գնդակա-
հարված)



Հուղուրյան Անդրանիկ
Ալբոկ
(Մարիզամիշի Ռէկ-ի ան-
դամ՝ գնդակահարված*)




Տ.-Միքայելյան Փառնակ
(Տ.-Բայազետից—սպանված)



Վասկանյան Սամվել
(Մարիզամիշի Ռէկ-ի ան-
դամ՝ գնդակահարված*)




Խսկանդարյան Յեղիա
(Զանգեզուրից—գնդակա-
հարված)



Նալբանդյան Լ.
(Մարիզամիշի ակորդից*)



Անտոնյան Հ.
Սուրմալուից—գնդակա-
հարված)



Կուխմաղայիկին
(Մարիզամիշի Ռէկ-ի ան-
դամ՝ գնդակահարված*)

* Այս ընկերների նկարները չկարողացանք դանել:

Ցեվ ահա վրա յե հասնում վճռական պահը ի՞չ անել Դահիձ
Դասաբյանը և Դուշյանը նորից վերջնազիր են ներկայացնում—
հինգ բոպեյի ընթացքում բաց անել դռները և հանձնել գնդակա-
հարության դատապարտված ընկերներին (Նրանք, ինարկե, մեղ այդ
չասացին, այլ հայտնեցին, վոր իբր թե նրանց, ըստ հրամանի,
նոր-Բայազետ են փոխազբելու):

✓ Տեսնելով վոչ վորի չհանձնելու և մինչև վերջին մարդը մեռ-
նելու մեր վճռականնությունը և լավ հասկանալով, վոր այդ բոպե-
յին դաշնակցականներն ու մառլերի համար վոչնչի առաջ կանգ
չեն առնելու, ընկեր Ալլահվերդյանը, այս բյուրեղացած ազնվու-
թյան մարմացումն ու կախարդիչ հոգու տեր կոմմունարը, այս
հրաշալի հոետորը հանդես յեկավ և այս խոսքերն ասաց մեղ.

✓ — Ընկերներ, յես խսկապես համոզվեցի, վոր դուք, իբրոք, վո-
րոշել եք մեռնել մեղ համար: Հենց միայն արդքանն ել ինձ բավա-
կան եւ Այժմ յես հանգիստ սրտով կարող եմ մեռնելու գնալ, հա-
մոզված լինելով, վոր հեղափոխության գործը կապրի: Նա անձնը-
վեր կոմմունիստ ընկերների հուսալի ձեռքերումն է գտնվում: Այդ
դիտակցությունն ահա ավյուն ե ներշնչում ինձ ու թեվեր տալիս:

Ապա դեպի դահիճները դառնալով

✓ — Լավ հիշեցեք, հեղափոխության գործը չի մեռնի: Հայաս-
տանի բանվորներն ու գյուղացիները տեր կղառնան իշխանությա-
նը իսկ դուք, իմացած յեղեք, վոր իմ թափվելիք արյան լուրա-
քանչյուր կաթիլի համար դուք կղատասխանեք ձեր հարյուրավոր
համախոների կյանքերով: Մի կարծեք, վոր ձեր չարագործությունը
թագուն կմնա: Ինձ ճանաչում ե Մուկվան, ինձ ճանաչում ե Բա-
գուն, և այն ընկերները, վորոնց հետ աշխատել եմ, վրեժինդիր
կլինեն իմ մահվան համար: Կեցցե՛ Հայաստանի կոմմունիստական
կուսակցությունը Մնաք բարով, ընկերներ:

Նրանից հետո դուքս յեկավ ընկեր Մուսայելյանը, վոր յերկու
ձեռներով բաց արավ իր կուրծքը, դեմ արավ և ասաց—«Ես մա-
հից վախեցող չեմ, սպանեցեք ինձ հենց այստեղ, բայց դուք չեք
կարող խափանել անխուսափելին, այն, վոր Հայաստանն ազատ կլի-
նի և մեր դործը չի մեռնի»:


Հսկեր Հարիբջանյանը դուքս յեկավ և ասաց.—

— Հայաստանի հողը մեր արյունով կներկվի և կդառնա կար-
միր: Մի մոռանաք իմ խոսքերը - Հայաստանը խորհրդալին կդառ-
նա: Կեցցե՛ խորհրդալին Հայաստանը:

✓ Այսուհետև ընկեր Ալլահվերդյանը մեզնից պահանջեց բանալին,

զուռով դուրս կորզեց մի ընկերոջ մոտից ու սեպհական ձեռքով անձամբ հանձնեց դահիճներին:

Նրանց վերցրին, և մյուս որն առավոտյան կանուխ դուրս տարան բանտից: Նրանք գնում և «Խնտերնացիոնալ» եյին յերգում:



Ալլանվերդյանի, Մուսայելյանի յել Դարիքանյանի գնդակահաւման տեղը
(Քանաքեռի տակ)

Քանաքեռի ճանապարհին նրանց տանջանքի յենթարկելով սպանեցին և դիակները փորձեցին այրել: Բայց անձրեն ու ձյունը հանդցրին լափող անդութ կրակը և պահպանեցին թանկագին դիակները, փորոնք հետո հանդիսավորապես հողին հանձնվեցին խորհրդային Հայաստանի կառավարության կողմից:

Մ. Աղայան

ՍԵՎԸՆԸ ԱՔՍՈՐԾԿՅՆՆԵՐԸ

Չսայած լրանում ե 9 տարին այն որից, յերբ մի խումբ կոմմունիստներ և դաշնակցական կառավարությունից դժգոհ տարրեր թվով 27 հոգի, վորոնցից 14-ը Յերևանից և 13-ը Նոր-Բայազեալից, դաշնակցական կառավարության կողմից աքսորվեցին Սևանա կղզին, բայց մինչև որս ել հիշյալ աքսորականների մասին մեր պարբերականներում վոչ մի հիշատակություն չի յեղել:

Հիշյալ ընկերների ձերքակարվելը և Սևանա կղզին աքսորվելը, վոր կապված և այն ժամանակվա գաղնակցական հայտառանում տեղի ունեցող խոշորագույն անցքերի հետ. սրանով կաշխատեմ համաստ կերպով ուրվագծել տեղի ունեցող քաղաքական անցքերը նորբայագետում և աքսորականների կյանքը կղզում:


Կոմմունիստական կուսակցությունը նոր-Բայազետում յիղել և 1918 թ. սկզբներից: Կուսակցությունն անկազմակերպ դրության մեջ եր, և կենդանություն ավեց չոփ. Սարուխանւանը, վորը նորբայագետ յեկագ 19 թ. հոկտեմբերին:

Սոսկալի դրություն եր ապրում այն որերին նոր-Բայազետը Յեղ այն ժամանակ, յերբ Նախիջևանի գաղթականությունը մեկ դպրոցական շենքում անխնամ կիտված իրար զիլսի տասնյակներով մեռնում եյին, յերբ փողացներում թափառող զորքերի անլուկի վողբից զիշերները քնել չեր լինում, յերբ կառավարության ջանքերով բացված վորբանոցում յերեխաններն այն աստիճանի անխնամ դրության մեջ եյին, վոր վորբուկների բերանները վորդնոտվել եյին, այդ ժամանակ, թշվառության կողքին, նրա աչքերի առաջ տեղի եյին ունենում խմբապետ Համազասպի, նրա հավատարիմ մառզերիստ ոֆիցերների, քաղաքագլխի, վաճառականների և նման տարրերի որնիբուն քեֆերն ու խրախճանքները, և այն ժամանակ, յերբ մարդիկ մի կտոր գարի հացի համար պատրաստ եյին իրար հոշոտել, նրանց աչքի առաջ ամերիկական սպիտակ ալլուրից քաղցր-խմորեղեններ եյին թխվում արտօնյալ դասի համար. Այն որերին, յերբ չքավոր գյուղացիությունն իր յեղունքներով հողն եր չանկոռում միշյերկու հատիկ ցանելու համար, շրջանի բոլոր լավագույն հողերը գտնվում եյին պարլամենտի անդամների, քաղաքագլխի, ոֆիցերների, հոգեսրականների և նման ելեմենտների ձեռքին. իսկ կային այնպիսիները, վորոնք թյուրքական լքյալ գյուղերում արդեն հիմք եյին դրել կալվածային տնտեսության. Մասսայի դժգոհությունները հետզհետեւ ծավալվում եյին, մինոլորտն ելեկարականանում եր, հարկավոր եր մի շարժառիթ—պայշելու:

Մայիսյան ապստամբություններն արձագանք գտան նաև նոր-Բայազետում, վորի փառավոր ապացույցը կարող և հանդիսանալ Ղարանլուզի զորամասի ապստամբությունը, վորը տեղի ունեցավ մայիսի 13-ին: Ապստամբությունից մի յերկու որ առաջ Ղարանլուզ և մեկնում Սարուխանյանը, վորն անցնելով ապստամբ զորքի գլուխը, ձերբակալել և աալիս գեներալ Սիլիկովին, կազմակերպում և ռազահեղափոխական կոմիտե և բայլշեկիյան կարմիր դրոշի տակ շարժվում գեղի նոր-Բայազետ:

Ապստամբության լուրը հազիվ եր հասել մեր ականջին, յերբ տեղական իշխանությունն անակնկալ ձերբակալեց կոմկուսակցության անդամների մեծագույն տոկոսը, թվով 16 հոգու³⁾: Զերբակալվածներիս արամադրությունը լավ եր, ասում, խոսում, ծիծառում եյինք, կատակներ անում պահակ միլիցիոներների հետ:

Բայլշեիկյան գաղափարների համար հալածանքների, զրկանքների յենթարկվելը համարվում եր պատիվ, պարծանք: Որինակ՝ Դա-



ՍԵՎ ԱՆԱԿԱՂՋԻՆ

բանլուղի դեպքերից միքանի որ առաջ ձերբակալել եյին Պապիկ Մկրտչյանին և Հով. Ղամարյանին, զորքի մեջ թռուցիկներ տարածելու պատճառով: Խմբապետ Համազասպն անձամբ ծեծել եր յերկուսին ել ու հրամայել աքսորել Ուզունթալա: Յերբ Պապիկին ու Ղամարյանին տանում եյին, նրանք քայլում եյին հպարտ, գլուխները բարձր պահած: Անցնելով իմ մոտից, Պապիկը ժպտագեմ նայեց ինձ ու ասաց—«Չեմ կարծում կյանքիս մեջ լինի ավելի քան յերջանիկ մի դրություն...»: Վոգեորությունն անասելի յեր նամանավանդ պատանեկության մեջ: Այն ժամանակ Բայազետում գոյցություն ուներ Սպարտակի կազմակերպություն և բոլորն ել առ-

³⁾ Հետաքրքրական ե այն, վոր 16 ձերբակալվածների թվում Խաչոտուր Ավոյանին ձերբակալել ելին թյուրիմացարար, մեկ ուրիշ կոմմունիստ Խաչատուր Ավոյանի տեղ, սակայն վերջում, նա իրոք, անցավ մեր շարքերը և մինչև որս ել համարվում ե կուսանդամ:

գործած եյին սոցիալիստական հեղափոխության հաղթանակով։ Այս փողերությունն ակամա հաշվի յեր առնում կառավարությունը, սրբնեղելով միենույն ժամանակ, յերբ տեսնում եր մասսայի բացարձակ համակրությունը գեղի մի փոքրաթիվ խումբ բայց կիկները։ Որինակ՝ յերբ մեզ տանում եյին աքարուավայր, մասսայի կողմից լսվում եյին գեղի մեզ համակրական բացականչյուններ – «Տեղբար գնում են գալու համար» և այլն։ Իսկ Սպարտակ կազմակերպությունը փողոցում փոքրիկ ցույց կազմակերպեց և պահանջում եր իշխանությունից, վոր իրենց ել մեզ հետ տանեն։

Զերբակարվածներիս պահեցին 3—4 ժամ, վորից հետո կարգադրվեց մեզ տանել Յելենովկա։ Մեզ տարան շատավ, այն ել վոտքով և թույլ չափին տանից շոր կամ այլ անհրաժեշտ իրեր վերցնելու։

Մայիսի 15-ի յերեկոյան մենք ուղերձվեցինք։ Յեվ չնայած պահակներին խստիվ կարգադրված եր առանց գաղար տալու մեզ Յելենովկա հասցնել, բայց և այսպես մենք կարողացանք համոզել պահակներին և զիշերեցինք դաշնակցական կառավարության ձեռքով ավերված թյուրքական Աղբիրիր զյուղում։

Առավոտյան, յերբ մենք հստանք Զեյնալ գյուղը, մալականները մեզ պատմեցին, վոր Նոր-Բայազետի կառավարության անդամները զիշերով կորիգութափ փախան։ Այս լուրն այն ասափճան վողերըց մեզ բոլորիս, վոր, ինչպես ասում են, ուրախությունից քիչ եր մնում խելքներս թացնեյինք։ Մենք անմիջապես անցանք խորհրդակցության, թե ի՞նչ անել, վերադառնալ Նոր-Բայազետ։ Թե՞ մեկնել Յելենովկա։ Վերադառնալուն ամեն կերպ հակառակ եր պահակապետը։ Ասենք, մենք արդեն նրա ուխին քիչ եյինք մտել տալիս, նամանավանդ վոր մնացած պահակների բացարձակ համակրանքը մեր կողման եր։ Բայց գլխավորը, վոր մենք ստույգ տեղեկություն չունեյինք Նոր-Բայազետի դրության մասին, թե զրավկա՞ծ և Սարուխանյանի կողմից, թե վոչ Բացի այդ, մալականները ստույգ չեյին կարողանում ասել, թե քաղաքի պաշտպանության ուժը նմանապես հեռացե՞լ ե թե վոչ Իվերջո վորոշեցինք մեկ ընկերոջ ուղարկել Յելենովկա, վորը Յելենովկայի փոստհեռադրատանն ուներ մոտ ընկեր, վորից կարող եր իմանալ Բայազետի գրության մասին։ Հիշյալ ընկերը հետ վերադառնավ և հայտնեց մեզ, վոր դեռ դրությունը Բայազետում չի փոխվել։

Յելենովկայում մենք արդեն առիթ եյինք ունեցել իմանալու, վոր կրտսեմ կան Յերեանից բերված մի շարք ընկերներ։ Յերբ նավակը մոտեցավ կղզուն, այստեղ դանավող ընկերները և մենք, նախքան իրար բարեկը, ծանոթանալը, յերգեցինք «Խոտերնացինալը»։

Վարդապետներն ապուշ կտրած դիտում եյին մեղ, և մի գուցե մտածում, թե ինչպես կարող են ձերբակալված, անազատ մարզիկ այդ աստիճանի իրենց ուրախ զգար, Կղղում զանվոր ընկերները մեզ հյուրասիրեցին վայրի բաղի ձվերով, վոր ճարել եյին կղղում։ Անսանի վոգելությամբ ասում, պատմում եյինք տեղի ունեցող անցքերի մասին։ Ուշ զիշեր եր, մենք քնեցինք խուցերի չոր և կեղաստ հատակին և այդպես ել մեր զիշերելու պայմանները շարունակվեցին մինչև կղղուց դուրս գալու։

Առաջայան մենք ընդհանուր ժողով գումարեցինք, ընտրեցինք մեզ զեկավար որդան, վորի մեջ մտան Մարտին Սահակյան, Մարտիք Դուրգարյան, Արտյոմ Զուրաբով, Ռնիկ Դուրգերյան, Պանֆիլով. ապա պարենավորման լիազոր՝ Պ. Ստամբոլյան, ողնական Հ. Զարգարյան. վորոշվեց հրապարակ բերել մեր գրամական և յութական միջոցները և ապրել կոմմունալ կյանքով։

Ժողովում մեզ զբաղեցնող ամենահրատապ խնդիրը հանդիսանում եր այն, թե մենք ի՞նչ վերաբերմունք ենք ցույց ալլու նոր Բայազետում տեղի ունեցող անցքերին։ Այս ինդրում Անտոն Առաջանը և միքանի ուրիշ ընկերներ, այն ե, Ղորխմազյան, Հ. Զարգարյան, Աշլեն Անդրեասյան, Պ. Ստամբոլյան, Գետիկ Գետրոսյան առաջարկում եյին կազմակերպել փախուստ և շուտափույթ ու նույթյան համել Հ. Սարուխանյանին։ Փախուստի ծրագիրը նախատեսված եր հետեւյալ կերպ։ Գիշերով զինաթափ անել յերկու պահակներին, կապկապել պահակներին, վարդապետներին, վերցնել պահակների մոտից նավակի պարագաները, ղեկը, թիերը և դիմել փախուստի նորագուղի ուղղությամբ։ Այս ծրագրին կտրականապես հակառակ եր ղեկավար որդանը և առհասարակ մեծամասնությունը։ Նրանք գտնում ելին, վոր այդ անիրականացնելի յե, քանի վոր նախ մեզանում չկան ծովային գործերից քիչ թե շատ հասկացող, փորձած մարդիկ, յերկրորդ՝ նավակի տարողությունը փոքր և 27-իւ համար, փարոսից կարող են մեզ նկատել, և վոր ամենազլիսավորն ե, Սարուխանյանի հաջողությունների, նոր Բայազետի դրավման մասին ստույգ տեղեկություններ չկային։ Նեկավար որդանի տրամադրությունն այն եր, վոր հարկավոր և սպասել. յեթե Սարուխանյանը հաջողություններ կւնենա, ուրեմն կդա և կաղատե մեզ, իսկ յեթե դաշնակցական բանդաներին կհաջողվի ճնշել ապստամբությունը, խոհեմությունը պահանջում ե հանդիսատ մնալ։

Այս ինդրի առթիվ ժողովներն անցնում եյին շատ աղմկալից. Առաջարյանը համառ կերպով պնդում եր իր առաջարկը Բանը հասավ այնտեղ, վոր Առաջարյանն առաջարկություն մտցրեց անկախ

մասցածների ցանկությունից, իրականացնել փախուստը: Այս առաջարկությունը նմանապես հանգիպեց զեկավար որդանի համառ ընդդիմագրության և նույնիսկ բացարձակ արգելման: Յեզ մինչ Առողջարյանը կաշխատեր իրականացնել փախուստի ծրագիրը, թերթում կարգացնք Հով. Սարուխանյանի գնդակահարման մասին: Այդ որը մենք ունեցանք սպո յերեկո: Սարուխանյանին մոտ ճանաչողները պատմեցին նրա անձնավորության մասին, յերգեցինք «Դու զո՞ գնացիր» և շատ ախուր ու ընկճված տրամադրության տակ ցրվեցինք: Հով. Սարուխանյանի ապստամբական քայլն այն ժամանակ զեկավար որդանի կողմից համարվեց ավանայուրա: Նրանք գանում եյին, վոր յեթե Սարուխանյանը չպատապարտվեր դաշնակների կողմից և կենդանի մնար, կդատապարտվեր կուսակցության կողմից, ինչպես ինքնազլուխ քայլ անող: Միինույն ժամանակ զամանակ զամապարտվում եր կենտրոնական որդանը, նրա թուլությունը, վոր չի կարողացել հարկավոր զեկավությունը ցույց տալ դափառներին: Յեզ այն ժամանակ, ինչպես Սարուխանյանի ապստամբության քայլը, այնպես ել Առողջարյանի փախուստի ծրագիրը Սևանա մեր զեկավար, կամ ճիշտն ե ասել, մեր ավագ, փորձառու ընկերների կողմից դատապարտվում եր, վոչ այնքան իրենց կողմից խելամիտ հեղափոխական տակտիկայի խնդիր կար, ինչպես այն ժամանակ նրանք ցանկանում եյին այդ կերպ գունավորել, այլ ոիսկի, վճռողականության, վոր ինչպես բայլշերի հեղափոխականների, բացակայում եր նրանց մեջ:

Սարուխանյանն անարգելք գրավում ե Նոր-Բայազետը: Գյուղերից անցնելիս հաղարավոր դյուղացիների բացարձակ համակրանքը լինում ե ապստամբության կողմը, բայց վողջ կազմակերպությունը ձերբակալված լինելու պատճառով Սարուխանյանը մնում ե մենակ, առանց վստահելի ողնական ուժերի: Ստիպված ե լինում դաշնակցական բանակի ոֆիցերներին և առհասարակ վոչ վստահելի մարդկանց հանձնել պատասխանատու պոստերը: Թիչ թե շատ վստահելի ուժերն ել լինում են ջահել, անփորձ մարդիկ: Գեներալ Սիլիկովին, վորը ձերբակալված ե լինում, հսկող պահակներն իր ոֆիցերներն են լինում: Գեներալն իրեն այնքան լավ ե զգում, վոր կալանքի տեղից կարողանում ե նամակ ուղարկել Յերևան—Եշևանությանը և բանակցել նրանց հետ: Միքանի ոֆիցերներ առերես համակրություն են ցույց տալիս տեղի ունեցող հեղ. շարժումներին, և Սարուխանյանն ակամա նրանց հանձնում ե զանազան պոստեր. իսկ այդ մոմենտին վորպիսի դրական կշռ կարող եր ունենալ 27-ի փախուստը:

Նոր-Բայազետի ապստամբությունը ճնշելու դրկած զինվորներից մեկը, վոր յեկել եր Սևան մեղ տեսության, պատմում եր հետեւյալը—«Զորքի մեծագույն տոկոսի համակրանքը բայլշելիկների կողմի եր. մենք խոսում եյինք անցնել ձեր կողմը, յեթե մի փոքր դիմադրություն լիներ. Սակայն ապստամբ բանակի ոՓիցերները լավ գավաճանական դեր կաաարեցին. նրանք ուժերը կենարոնացրել եյին այն տեղերում, ուր հարկ չկար. Մենք ոգում մեկ համազարկ տվինք և իսկույն սպիտակ դրոշակ պարզեցին»:



Սեվանի կղզին ախոռված կոմունիստների խմբանկուր

Հետաղայում, ինչպես պարզվեց, ոՓիցերները փոխանակ դորքին ղեկավարելու, հուսալքում են, վոր ննարավոր չե կովել պետք ե անձնատուր լինել. Սպանվում են միայն յերկու հոգի թրշնամու բանակից:

Դաշնակցական բանդաները հազիվ եյին ժամանակ ունեցել ճնշելու Բայազետի ապստամբությունը, յերբ այդ որերին բռնկվել եր ապստամբությունը Դիլիջանում. և մենք կղզուց պարզ տեսնում եյինք, ինչպես զորքը հապճեպ, ապրանքատար ավտոմոբիլներով տեղափոխում եյին Դիլիջան: Այդ, բավական եր, վոր Սարուխանյանը կարողանար գոնե մեկ շաբաթ դիմանալ, վոր Դիլիջանի

կարմիր շարժումը կարող եր ձեռք տալ Բայազետին և այս կերպ կապահովվեր վողջ հյուսիսային ֆրոնտը, վորի թիկունքում դարձվում եր կարմիր Ադրբեջանը:

ՄԵՐ ԿՅԱՆՔԸ ԿՊՀՈՒՄ

Ինչպես վերեսում հիշեցի, մենք ժողովում վորոշում ունեցանք ապրել կոմմունալ կյանքավ, վանականների նկատմամբ լինել շատ կորրեկտ և թույլ չտալ նրանցից վորեե բան խնդրելու Բայց կոմմունան յերկար չտեսեց, առաջ յեկավ շերտավորում. միքանի ընկերներ, այն ե՛ Ո. Դուրզարյան, Հատիկ Ազիզյան ցույց տվին շատ տղեղ վարքագիծ, հարց զրին առանձնանալ, և այսպես ինքնարերար կազմվեց միքանի խմբակներ, վորոնք ապրում եյին միմյանցից կիսանջատ պայմաններում:

Շատ վատ եյին մեծամասնության մննդի պայմանները. տանից վոչինչ չեյինք ստանում գուցե և նրա համար, վոր նրանք ել իրենց հերթին վոչինչ չունեյին մեղ ուղարկելու Բայազետի ընկերներից միքանիսի աները թալանի եյին յենթարկված դաշնակցական բանդանների կողմից: Տեղական իշխանությունն ուղարկում եր մեղ շնչին մեկ փունտ հաց, բայց մինչև տեղ հասնելը կեսը չեր մնում: Մեծամասնությամբ մնվում եյինք խոտարույսերով, իսկ միքանիսը ման աչքերի առաջ մազլցում եյին կղզու ժայռերի վրա՝ բաղի ձկեր գողանում կամ դեռ ազգամազով ծածկված թռչունի ձագեր վորոսում, ուտում: Իսկ Ո. Դուրզարյանին կարելի յեր տեսնել վանքի խոհանոցի շուրջը թափառելիս, վորի համար հանաքով ընկերները նրա անունը զրել եյինք վանքի կատու:

«Սուրբ» հայրերը մեղ չնայած ավագակների տեղ եյին զրել, բայց իրականում իսկական ավագակները նրանք հանդիսացան: Այդուրերին դաշնակցական բանդաններն ավերել եյին մեկ թյուրքական դյուդ. վանականներն այս լուրն իմանալուն պես անմիջապես վանքապատկան նավակն ուղարկեցին թալանից իրենց բաժինը ստանալու: Ցերկորդ որը նավակը մոտեցավ կղզուն. իմեծ հաճույքս «սուրբ» հայրերի, բերել եյին յերկու հատ կոտրտված տակառներ, մի խնդիր, մեկ հատ եշի փալան և մի գամփո շուն:

Վանահայրն եր վոմն Արքստակես վարդապետ, վորին Բենիկ վարդապետն իր «Թալանի վանք» դրքում անվանում ե «Ճարպիկ զող»:

Վանականները շատ դժգոհ եյին մեր ներկայությունից, քանի վոր նախ սրբապղծվում եր սուրբ վայրը և վոր զԱխավորն եր նրանք ակտում զրկվում եյին ուխտավորների այցից և նրանց կո-

դոպտելու բավականությունից: Ուստի միքանի անգամ դիմեցին իշխանության, վոր մեզ մեկ ուրիշ տեղ փոխադրեն, բայց, ըստ յերևույթին, նրանց խնդիրը չեր հարգվել:

Արտաքին աշխարհի հետ մենք կազ եյինք պահպանում դարաժիշտի շոփերների՝ Շչեղրինի, Մեխակ Բալագյոզյանի միջոցով, վորոնք նաև մեզ յերբեմն ոգնում եյին պարենով:

Հունիսի յերկրորդ կիսին ռեակցիան սկսվեց ուժեղանալ. դաշնակցական կառավարությունը կարողացել եր ամենուրենք ճնշել ապստամբությունը. Անհաջող եր վերջացել նաև Դիլիջանի ապստամբությունը, վորից նմանապես մենք շատ սպասելիքներ ունեյինք: Դաշնակցական բանդաների հանդինությունն այնտեղ եր հասել, վոր գալիս, կանգնում եյին կղզու դիմաց, զենքերը ճոճում մեզ վրա:

Հունիսի 11-ին կղզուց տարան առաջին հերթին Յերևանից բերածներին, իսկ մի յերկու որից հետո, 13-ին, Բայազետից բերածներին: Մեզ տարան նոր-Բայազետի կոմենդատուրան և մի յերկու շարաթից հետո ուղարկեցին բանա:

Ստորև տալիս եմ Անանում յեղած կոմմունիստների ցուցակը.

ՅԵՐԵՎԱՆԻՑ

- | | | |
|---|------------|-------------------|
| 1. Մարտին Մահակյան | — | կոմմունիստ |
| 2. Անտոն Առւշտրյան | — | » |
| 3. Արտյոմ Զոհրաբյան | — | » |
| 4. Սաթո Չոլախյան | — | » |
| 5. Աշխեն Անդրեասյան | — | » |
| 6. Հրիկ Աղիզյան | — | » |
| 7. Մամիկոն Ղորխմազյան | — | » |
| 8. Թումանյան | — | » |
| 9. Պանֆիլով | — | » |
| 10. Ռայկակիյ | — | » |
| 11. Սայգանով | — | » |
| 12. Գարեգին Հարությունյան | | » |
| 13. Ռնիկ Դուրգաբյան — մեշնիկի ինտերնացիոնալիստ | | |
| 14. Պ. Ստամբուլյան | — ձախ եսեր | |

ՆՈՐ-ԲԱՑԱՀԵՏԻՑ

- | | | |
|-------------------------|---|-------------------|
| 1. Հայկ Զարգարյան | — | կոմմունիստ |
| 2. Մերգո Բոշնաղյան | — | » |
| 4. Արշավիր Դարագյուլյան | — | » |
| 4. Պետիկ Պետրոսյան | — | » |
| 5. Սուրեն Միքայելյան | — | » |
| 6. Վաղինակ Դոլվաթյան | — | » |
| 7. Խաչատուր Ավոյան | — | դժգոհ տարր |
| 8. Միշա Միթլյան | — | կոմմունիստ |
| 9. Հ. Բոխյան | — | դժգոհ տարր |
| 10. Մարտիք Դուրգարյան | — | նախկին կոմմունիստ |
| 11. Հայկազ Բատիկլյան | — | կոմմունիստ |
| 12. Գերասիմ Թելումյան | — | » |
| 13. Գարսեան Հովակիմյան | — | » |

Արշավիր Դարագյուլյան

1929 թ. մայիսի 10

Յերևան.

ԴՈԿՈՒՄԵՆՏՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵՆՅԵ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ Թ. Կ. Կ.
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՅԻՆ*)

Բնկերներ, Արմենկոմը Հայաստանի գեղքերի մասին կամենում
եր Դորայի միջոցով ուղարկել գրավոր զեկուցում, բայց վորովհե-
տե բոլոր մեկնադիրին հետևում ելին, այդ պատճառով այն ժամա-
նակ չհաջողվեց այդ անել: Ուղարկում եմ հիմա:

Աղբրեջանի գեղքերից, այլ և Հյուսիսային կովկասում մե-
րոնց տարած հաղթանակներից հետո, այստեղ տրամադրությունը
խիստ փոխվել ե մեր ողախն:

Հաշվի առնելով այդ ամենը և նկատի ունենալով Հայաստանի
կազմակերպությունների կոնֆերանսի վորոշումը, Հայաստանում,
Խորհրդային զորքերը մտնելիս այլ և այլ հարևան հանրապետու-
թյուններում հեղաշրջումներ լինելուց հետո, իշխանությունը գրա-
վելու նպատակով յելույթ ունենալու մասին, Արմենկոմը սկսեց
այդ ուղղությամբ աշխատանք կատարել:

Շարժման սկզբի համար իրեն բազա նշանակված եր Ղազախը
և զրա հետ միաժամանակ յելույթներ պետք ե սկսելին ամենուրեք:
Արմենկոմը կանգնեց հենց այդ տեսակետի վրա, վորովիետե նախ
Ղազախը կպած եր Խորհրդային Աղբրեջանին, իսկ մյուս կողմից
նկատի ունենալով զազախեցիների հեղափոխականությունն ու տո-
կունությունը: Այդ նպատակով համապատասխան հրահանգներ ու-
ղարկվեցին այստեղ: Առաջարկված եր այնտեղից յեկած ընկերոջը
կազմել Ռազմ-հեղկոմ, մորիլիզացիայի յենթարկել բոլոր ուժերը և
պատրաստվել յելույթի, կապվելով միաժամանակ Աղբրեջանի ըն-
կերների և Աղբրեջանի միջոցով այն կողմի հետ: Նույնը կատար-
ված եր և Ղարաբաղի վերաբերմամբ (մոտավորապես ապրիլի վեր-
ջին), բայց ընկերների ուղարկելու գործը ձգձգվեց:

Մայիսի մեջի յելույթի համար մենք պատրաստվում ելինք ա-
մենուրեք, մեզ համար այդ որը խաղաղ ցույցի միջոցով մեր ուժե-
րի զորատեսի որ պետք ե հանդիսանաբ:

Մայիսի ցույցերի հաջողությունն ամենուրեք ակնհայ-

*) Զեկուցումը գրված ե ընկ. Ալավերդյանի ձեռքով, վորն այս շրջա-
նում Հայաստանի կոմիտեի (Արմենկոմի) գրեթե միակ աշխատող անդամն
եր Յերևանում:

տորեն ցույց տվեց, թե վորակիսի խոր արմատներ ե ձգել կուսակցությունը լայն մասսաների, այդ թվում նաև զինվորական մասսաների մեջ: Յեղել եյին աեղեր, վորոնեղ ապղաբնակչությունը և զորքը բացառապես մեր զրոշակի տակ եյին հավաքվել (Ղարաբիլիսա, Սարիղամիշ):

Այդ որը (մայիսի մեկին) իշխանությունը զբավելու խնդիրը չեր զբած մեր առաջ, սակայն այդ որվանից արդեն պարզ եր, վոր այդ հարցը ամենամոտ ապղաբայի հարցն ե հանդիսանում: Այդ ուղղությամբ տենդային աշխատանք սկսվեց, և այդ խոկ նպատակով կազմակերպությունները ռազմական դրության մեջ եյին զրված:

Մայիսի յերկուսին մենք Թիֆլիս ուղարկեցինք ընկ. Հայկազին, վորպեսզի արտակառդ կերպով այստեղ ուղարկեն Ս. Կ(ասյան)ին և Ա(սքանազ)ին, արդեն պատրաստվելով հաստատել Հայաստանում Խորհրդային իշխանություն, վորովհեակ կրկնում ենք, հավատացած եյինք, վոր դա ամենամոտ ապղաբայի խնդիր եւ:

Մայիսի յերկուսին մենք տեղեկություն ենք ստանում Ալեքսովում կատարված մայիսմեկյան տոնի մասին, այլև ընկ. Ավիսի լրիվ անունով ստորագրած վողջույնի մի ընդարձակ հեռազիր՝ Բագու ընկ. Նարիմանովի անունով: Բանի վոր մեկ կողմից ինքն Արմենիկոմը վողջույնի հեռազիր եր ուղարկել Խորհրդային Ազգբեջանին դեռ ևս մայիսի մեկին և մյուս կողմից նկատի ունենալով Ավիսի հեռազիր յուրահատուկ տոնը, վոր անընդունելի յեր տակտիկական տեսակետից, Արմենիկոմը վորոշեց այդպիսին չուղարկել և ամեն կողմից ստացված տեղեկությունների հիման վրա կազմել արդեն ընդհանուր բնույթ կրող մի վողջույն:

Այդ արված եր:

Մայիսի Յ-ին մենք ընդարձակ զեկուցում ստացանք Ալեքսանդրովովի գեպքերի մասին:

Ալեքսանդրովովի բոլոր փաստաթղթերի պատճենները սրա հետո ուղարկում ենք: Զեկուցման մեջ մանրամասնորեն հազորդվում եր այնտեղ, Ալեքսանդրովովում տիրող դրության, զրահագնացքի մասին և այլն: Այդ զեկուցումն ինչպես ինքներդ կտեսնեք, լի յե հակասություններով և բավական տարորինակ տպավորություն ե թողնում:

Յեղույթի տարբերայնությունն ու անկազմակերպությունն արդեն յերեսում են հենց այն բանից, վոր նրանք իրենք են զրում, թե ռառավոտյան այսպիսի հաջողություն չեյինք սպասումք: Պարզ ե, վոր յեթե նրանք հույս չեյին ունեցել մայիսմեկյան ցույցի հաջողության վրա, ապա ևս առավել խոսք անդամ չեր կարող լիներ

արդեն իշխանությունը գրավելու նպատակով հաջող և կազմակերպված յելույթ ունենալու մասին:

Այստեղ ամբողջ բանակն ու ազգաբնակչությունը մեկ անգամից անցան նրանց կողմը և վոր դաշնակների մոտ 200 մարդ կար, իսկ նրանց կողմում՝ 5000. Յեթե նույնիսկ «Իշխանությունը չեր գրավված, ապա վոչ այն պատճառով. վոր մենք անզոր եյինք, այլ զինվորական մասսաների անկազմակերպության պատճառով և թալաններից յերկուուղ կրելուց»։ Հանկարծ միանգամից ամբողջ «զորքն ու զրահապատը մեր տրամադրության տակ են անցնում և այդ պատճառով այստեղ իշխանությունը գրավելու հարցը մեր ցանկության խնդիրն եւ և վոչ թե որվա, այլ բոսեյի հարցը: Խսկույն և յեթ մի որվա ընթացքում կազմակերպված զինվորներն արդեն «յերդվեցին մինչև վերջին մարդը մեռնել բայց անձնատուր չինել»։ Այնուհետեւ, Ալեքպոլում նրանք իշխանությունը ձեռք ձգելու խնդիրը կապում եյին ձերբակալությունների, անկյունից կատարվող տերրորների հետ: Միաժամանակ հաղորդում են, թե պարենը շատ քիչ ե, իշխանությունը գրավելու դեպքում մինչև Ռուսաստանից ստանալը չի բավականացնի և այն:

Առաջինը, ուշադրության առնելով նրանց այսորինակ հաղորդագրությունները, ընկ. Ավիսի մշտական հափշտակվելը, վոր մինչև արկածախնդրության եր համառում (մենք նկատի ունենք հինգ ամիս որանից առաջ Բագվում յեղած նրա յելույթը, վորով նա հանուր աշխարհին ազդարարում եր կոմմունիզմի լիակատար հաղթանակը Հայաստանում և դաշնակների սնանկության մասին) և վոր այդ բոլոր նրանք կատարում եյին զրահապատի մեջ նստած, այսինքն լարված, ներվային դրության մեջ, մենք հավատացած եյինք, վոր այդ բոլորը չափազանցված ե:

Դեռ ամելին. մենք հավատացած եյինք, վոր նրանց հաջողությունը չի կարող կայուն լինել, վոր անհրաժեշտ ե ամենուրեք համաձայնեցնել մեր գործողությունները, քանի վոր անջատ յելույթները փոշիացման և պարտության կիացնեն, վոր անհրաժեշտ ե բոլոր շրջանների հետ կապ ունենալ և այն և այն:

Ազգանշան տվողը Ղազախը պետք ե լիներ—ահա Արմենիկոմի նախագիծը. Այդ վորոշումն եւ տեղեկացված եր Ալեքսանդրովուցիներին և առաջարկված եր նրանց սկսած գործը անհիվանդագին կերպով կատարել, բայց կարելույն, կամ գոնե ձգձգել:

Ալեքսանդրովովի բոլշևիկները չցանկացան հաշվի առնել այդ. «Խնչու Ղազախը և վոչ թե Ալեքպոլը», ահա նրանց պատախանը—«մենք նույնիսկ հակառակ ենք սկզբից կապ հաստատելուն»:

Նրանք առաջնության մասին եյին դրել խնդիրը, մոռենալով այն հարցին ըստ յերկույթին սպորտիվ տեսակետից:

Նրանք սկսում են սմբակոծել մեզ իրենց պահանջներով, յելույթին սանկցիա տալու մասին, մինչդեռ բանից դուքս յեկավ, վորագիտ բանը նրանք արդեն արել են և այժմ այլևս վոչ մի կասկած չկա, վոր այդ հաղորդագրությունները նրանք մեզ ուղարկելիս են յեղել հենց այնպես:

Ցեզ այսպես ահա Խորհրդային իշխանություն, թեպետ և բավականի յուրահատուկ (ապատամբության պարագլուխները 12 որ նստած են զրահապատի մեջ և համառորեն չեն իշխում այնտեղից): Պարզ ե, վոր յեթե նրանք լուրջ մտադրություններ ունենային, ապա դեպքերի բնական ընթացքով նրանք պետք ե իրենց հաջողությունը զարգացնելին և ծավալելին մոտակա շրջանների վրա, կապվելին մյուս շրջանների հետ և նույնիսկ առաջխաղացման գիմեյին Յերևանի ուղղությամբ:

Ամսի 5-ին գալիս ե այնտեղից նրանց կողմից ուղարկված մի ընկեր—յերկաթուղային մի բանվոր, վորը յուր բանափոր զեկուցման մեջ արդեն ինֆորմացիա յե տալիս իրերի գրության մասին, վորը հիմնովին հակասում ե ընկ. Ավելի հաղորդագրություններին: Այդ բանի վրա ուշադրություն զարձրեց ամբողջ Արմենկոմը: Իդեալ նա ասաց. վոր «այնտեղ ընկերները չափազանց վոգեռված են» և այլն: Հենց նա յել բերել եր Ալեքսանդրովուցիների նամակը:

Հենց նույն գիշերը այսինքն մայիսի 5-ին, մենք Ա.-ի և Մ.-ի ստորագրությամբ կրկին մի հեռագիր ենք ստանում դարձյալ Բագու ուղարկելու համար, վորը մենք պետք ե ուղիոյով հաղորդելինք. նարիմանովի:

Նման բովանդակությամբ մի հեռագիր մենք այն պահին իսպառ անընդունելի համարեցինք. մի հեռագիր, վոր այն ժամանակ ստեղծված պայմաններում անպայման պրովակացիոն դեր եր խաղալու: Դա վերջնականապես պիտի խորտակեր մեր կազմակերպությունները: Մի մոռանաք ընկերներ, վոր մեզ հաղթեցին նրանով, վոր անտանելի ծանր մթնոլորտ ստեղծեցին Ալբրեժանի շուրջը, ազգայնական թշնամանք առաջ բերին և Հայաստանի սահմաններում ամենուրեք հակամուսուլմանական իելույթներ եյին նախապատրաստում (դրա մասին տես ստորև): Այդ որերին գրության տերերն եյին հանդիսանում սասունցի, զեյթունցի, վանեցի մառչերիսաներ, գլխավորապես տաճկահայերը—այժմյա հայտնի դիկտատոր Ռուբեն փաշալի գլխավորությամբ: Հարց ե առաջանում, ինչու յեր հարկավոր Ալեքսանդրովուցիներին այս ամենը: Հեռագիրը

վորոշ անսակի ռեկամային բնույթ եր կրում, իսկ գործին խոշոր միաս եր հասցնում, քանի փոք առանց այն ել մեր թշնամիները խոսում եյին «Զանդիբասար-Բեյութի վեղան—բոլշևիկական յելույթների» մասին:

Հենց այդ միջոցն ել Ա.-ից հրաման ստացվեց իր սպնականի անունով Դամարլիկում կանգնած զրահապատի մասի հետ միասին շարժվել գեղի Ալկիսանը պրոպոլի: Պարզ ե, վոր մենք գործ ունեյինք արդեն կատարված փաստի հետ և վորոշեցինք գործին միջամտել, նրան կազմակերպված բնույթ տալ և դիմանալ մինչև այլ վայրերում գործողություններ սկսվելը, նույնիսկ Յերևանում:

Ուրիշ յելք այլև մենք չունեյինք: Այդ նպատակով մյուս որը, այսինքն մայիսի 6-ին ուղարկեցինք այնտեղ ընկերներ Դրաստամատին և Արտաշեսին լայն լիազորություններ տալով նրանց և պարտավորեցնելով, վոր յեթե չի կարելի կասեցնել ապստամբությունը, վոր անհրաժեշտորեն պետք եր անել, ապա միաժամանակ կազմվել Ղարաբիլսայի շրջանների, չեղոք գոտու և հարակից շրջանների հետ:

Այստեղ զինվորական մասերում տենդային աշխատանք եր կատարվում: Ըսկերներից մեկի, Արմենկոմի անդամի միջոցով այն զինվորականների հետ, վորոնք այդ ժամանակում կազմակերպված եյին, շարունակաբար խորհրդակցություններ եյին կազմակերպվում,

Կապ և հաստատված Քանաքեռում կանգնած զորամասի հետ, և յերբ վոր մայիսի 7-ին Դ.-ից և հանգուցյալ Ա.-ից մենք գրություն ստացանք, վոր նրանք կանգնած են կատարված փաստի առաջ և խնդրում ենք ազիտացիա մղել ուղարկվելիք զինվորական մասերում, այլ և թիկունք տալ իրենց, նոր-Բայազետի շրջանում Յելենովկայի ուղղությամբ յերկուստեղ համերաշխ գործողությունների համար, ապա մենք այդ ուղղությամբ ինչ վոր կարելի յեր, անում եյինք: Համապատասխան հրահանգով մենք նոր-Բայազետի շրջանն ուղարկեցինք այժմ հանգուցյալ ընկեր Սարուխանյանին (նամեկնեց 9-10-ին), վորն ի կատար ածեց Արմենկոմի առաջադրությունը և սկսեց գործողությունները:

Անհրաժեշտ են նշել, վոր նոր-Բայազետի շրջանի ուժեղ կազմակերպությունը, վորի մեջ մանում եյին նաև զինվորականները, ապրիլի կիսերին ջախջախված եր, և ընկերները ընկ. Սարուխանյանի գլխավորությամբ և մի սպայի հետ արտաքսվել եյին նոր-Բայազետի շրջանի սահմաններից: Ծ-ի գիշերը լույս 8-ին այստեղ սկսվեցին բռնություններ և չետեսնված հալածանքներ: Դա կապ ուներ Ալեքսադրոպոլի հետ: Մենք անցանք անլեզալ գրության, կազմակերպության հետ կապը չեր կտրվոծ:

Հետեւյալ որը մայիսի 8-ին այն զինվորականներին, վորոնց հետ կապ եյինք հաստատել, մեր կողմից շեշտակի հարց դրվեց, — կարելի՞ յեւ արդյոք այստեղ հենց հիմա յելույթ ունենալը Այդ հարցին նրանք պատասխանեցին, վոր այժմս այդ հարավորությունը չկա, վոր զորամասերում տառանումներ կա, վոր դեռ պետք եւ աշխատել, սակայն Ալեքսանդրոպոլիի ուղղությամբ առաջացող զինվորական մասերը խոստացան Ալեքսանդրոպոլիին մոտենալիս անցնել ապատամբների կողմբ:

Այսպիսի պատասխան ստացանք մենք գիշերվա ժամը մեկին. մթնոլորտը հետզինեակ խտանում եր, թերթում անհախընթաց ցուցադրանք սկսվեց, կազմակերպվեցին տրտակարգ գատարաններ, մահվան պատիժ սահմանվեց, պարլամենտն արգեն ցրված եր:

Իշխանությունն իրենց ձեռքին պահելու նպատակով, դաշնակեները պրովակացիայի յենթարկեցին թուրքերի շարժումը Զանգիւրասարի, Փարաքարի և այլ շրջաններում, կազմակերպվում եյին հարձակումներ, ջուր չեյին բաց թողնում, անասունները զրավում եյին և այնու թերթերում զրում եյին, թե այդ յելույթը բոլշևիկներն են կազմակերպելու. Մինչև տամանները զինեցին բոլորին, սպեկուլյաններից սկսած մինչև գիմնազիանները. Մեր դեմ պայքարը դաշնակցության կուսակցությունը վերցրել ե իր ձեռքը. Ձերբակալումների համար բացառապես մասուցերիստներին եյին ուղարկում. Մեզանից վոմանք փաստորեն որենքից դուրս եյին հայտարարված: Ձերբակալում եյին նույնիսկ նրանց, ովքեր հենց միայն հանդիպում եյին մեզ:

Այսպիսի պայմաններում աշխատանքն այնուամենայնիվ շարունակվում եր, և Արմենկոմը վոչ մի ըոպե կազմակերպությունների հետ կապը չկորցրեց. Պետք ե նկատել վոր սկզբի որերին ակտիվ ընկերներից քչերը ձերբակալվեցին այստեղ:

Այդպիսի մթնոլորտում ամսի 8-9ին Արմենկոմին հաջողվեց իր ստորագրել թյամբ բաց թողնել յերեք որ առաջ պատրաստած թերթիկը (մինչ այդ ժամանակ չհաջողվեց տպագրել). այդ թերթիկով մենք ցանկանում եյինք ցըել թունավորված այն մթնոլորտը, վորը ստեղծված եր Ազգբեջանի շուրջը: Տպարանը կնքվեց և մեզ չհաջողվեց թերթիկները բաց թողնել:

Մայիսի 12-ին թերթերից իմանում ենք, վոր Ալեքսանդրոպոլը բանակցություններ եւ վարում կառավարական ներկայացուցիչների հետ: Դաշնակները զրում եյին. «Ալեքսանդրոպոլի դավաճանները փրկություն են խնդրում»: Դա բոլորի վրա ճնշող տպավորություն թողեց: Մայիսի 13-ին Ալեքսանդրոպոլի ընկերներն առանց կույի

հանձնում են քաղաքը և այստեղ, իհարկե, ամեն ինչ վճռվում ե: Եթել այսպես, արագ կերպով զրավելով իշխանությունը, նրանք նույն-պիսի արագությամբ անձնատուր յեղան:

Ինչպես պարզվում ե, Ալեքսանդրոպոլյաներն ամբողջ ժամանակ թերթ չեն յեղել բաց թողած. յեթե նրանք մի յերեք որ ել դիմանային, բանն ուրիշ ընթացք կստանար, վորովինեաւ Ալեքսանդրոպովի ընկնելուց սկսեց ապստամբությունը Նոր-Բայազետի շրջանում, վորաեղ զեկա-վարում եր ամբողջ ժամանակ դիրքերում գտնվող ընկ. Սարուխանյանը: Այստեղ նրանք կարծում եյին, թե Ալեքսանդրոպոլը գեռ դիմանում ե և իրենք ել սկսում են առաջխաղացումը: Յեղավ մի մոմենտ, յերբ կառավարական զորքերը տատանվեցին և սկսեցին նահանջել սակայն վերջին-ներիս թվական գերակշռությունը (նրանց ոգնելու մեկնեցին Ալեքսանդրոպոլից արգեն վերադարձած մառզերիստները) և մի խմբի գավաճանությունն, ինչպես ասում են, հարցն այլ կերպ վճռեց և 4-5 որփա համառ դիմադրությունից հետո Նոր-Բայազետցիները կովով հանձնեցին քաղաքը: Այս ռոլոր գեպքերին ականատես յեղած ընկերն անձամբ այս ամենը գեկուցեց Արմենկոմին:

Ցեվ այսպես, համառ դիմադրությունից հետո Նոր-Բայազետը հանձնվեց: Ապստամբների մի մասը քաշվեց սարերը, մի մասը ձերքակալվեց և նրանցից մի քանիսը ընկ. Սարուխանյանի գիխավորությամբ գնդակահարպեցին: Սարասկելի կերպով վարվեցին ընկ. Սարուխանյանի հետ. ուղղակի ինկվիզիտորների նման: Այսպես որինակ. յերկու ձիավոր նրա յերկու ձեռքից բռնած և ձիերը քշելով քարց եյին տալիս նրան քաղաքի միջով: Մեր ընկերները տեսել են նրան ֆուրդոնի մեջ պառկած, ուշաթափ վիճակում: Ռազմա-դաշտային դատարանի վորոշմամբ նա գնդակահարվել ե:

Ղազախում յելույթն սկսվեց նույնպես Ալեքսանդրոպոլի և նույնիսկ Նոր-Բայազետի անկումից հետո: Մեր կողմից յերեք որ առաջ Դիլիջան եր ուղարկված մի ընկեր՝ ինֆորմացիայի համար: Դիտենք և ձեզ ել հայտնի յե, վոր այստեղ մտել են խորհրդային զորքերը և իրենց հետ տարել են գաշնակներին:

Կարսում և Սարիղամիշում նույնպես տեղի յեն ունեցել ասլրա-ամբական յելույթներ, սակայն այդպիսիներն այնտեղ ել են ճընշ-վել: Այստեղ, ընդհարման ժամանակ ընկավ ընկ. Ղուկասը (այսպես են մեզ հայտնում) 9-ը այլ ընկերների հետ (դեռևս ստուգված չե):

Արդեն հավանություն եյինք տվել Խոդիրի յելույթներին, վոր-տեղ այդ միջոցին շատ ուժեղ զինվորական կազմակերպություն կար և անձնվեր զորամաս:

Այժմ այնաեղի ամբողջ շտաբը (5 դինվորական և 5 քաղաքացիական) գտնվում են Յերևանի բանառում:

Ինչպես ինքներդ ել ամենում եք, հողը զրեթե ամենուրեք լըրջորեն պատրաստված եք, դա մի պատահական արմատագուրկ ապատամբություն չեք—ընալի յերբեք:

Յեթե այդ բոլորն անհաջող վերջացավ, դա միմիայն Ալեքսանդրապոլյաների վաղաժամ յելութիւն պատճառով եր:

Անհանար գինելով ամենուրեք արագորեն կազմակերպել գործողությունները և անջատ գործողություններին ձեւվորումն ատլը, այլ և չնորհիվ շրջանների միջն յերկաթուղային հաղորդակցության բացակայության, կանոնավոր ինֆորմացիան և գործողությունների հսկմածայնեցումը հնարավոր չեղավ:

Բնականաբար այդպես չեք լինի մի յերկու շաբաթ հետո:

Ըսկ Արտաշեսը ձերբակալվելուց հետո խիստ ծեծի յենթարկվեց. Յեկ յերբ նրան Եջմիածնի վրայով բերում եյին Յերևան, քաղաքից 5 վերստի վրա նա գնդակահարվեց. Այդ բանին սանկցիայեր տրված դաշնակների կուսակցության և կառավարության կողմից. Այսպես վարվեցին ահա, մեր ընկերների հետ մեր հակառակորդները, մինչդեռ այնտեղերում, վորտեղ իշխանությունը մերոնք եյին գրավել վոչ մի բռնություն չեք գործադրված մեր հակառակորդների վերաբերմամբ։ Այդ բանն իրենք ել չեն ժխտում։ Այսպես որինակ, նոր-Բայազետում գերի վերցրած գեներալ Միլիկովը հենց ինքը հաստատում ե այդ։

Ներկայումս ամբողջ քաղաքը (Յերևանը) զինվորական ճամբարի յե վերածված։ Աննկարագրելի բաներ են կատարվում. բռնում են փողոցում ում ասես. ինքը ներքին գործերի մինխստը, «ձախ» գաշնակցական Զամալյանը փողոցում ձերբակալում եր մեր ընկերներին. Կուսակցության ամեն մի անդամ ոգտվում ե ինչպես փողոցներում, այնպես ել աներում ձերբակալություններ կատարելու իրավունքից։

Կուսակցական աշխատանքն այստեղ չի ընդհատվել. ընկերներին ամեն որ հրահանգներ են տրվում, աամն որ առաջ հրավիրված եղ արտակարդ քաղաքային խորհուրդ, վորտեղ լսվեց Արմենկոմի զեկուցումը։ Հնարիվեց Քաղաքային Բյուրո, վորի վրա ժամանակավորապես դրված եր քաղաքային կոմիտեյի ֆունկցիաները. Գրեթե ամեն որ բյուրոն նիստեր ե ունենում. կազմակերպված ե, «Կարմիր խաչը», վորը կապված է կալանավորների հետ. Վերականգնվում են կապերը շրջանների հետ, տեղերում կազմակերպվությունները վերականգնելու նպատակով։ Ներկայումս Արմենկոմը բաղկացած ե

յերկուսից, Մենք մեր գիրքերումն ենք, բայց այս վիճակում Յերեւանում յերկար մնալու վոչ մի հնարակորություն չկա: Զերբարակալությունն այժմ անխուսափելի հատուցմամբ և սպառնում յուրաքանչյուրին, վորովինետև զաշնակների կուսակցությունն այդ վողով վորոշում և կայացրել:

Վրաստանում կուսակցության լեզավորացիայի հետևանքով անհրաժեշտ և այստեղից սրանց սղմել:

Ուղարկեցեք ընկերների: Յերեւանում ձերբակալված են 50 մարդ, վորոնցից 14-ը ուղարկված են Սևանի կղզին: Սարիղամիշլից բերված են 5 (զինվորական), իգդիրի 2րջանից 5 (զինվորական) և 4 մասյալներից: Աշտարակից՝ 3, և Ղամարլուից 4: Մի քանի ընկերներ թագնվել են: Հաղորդում են, վոր Ալեքսանդրովում նստած են 100-ից ավելի ընկերներ: Կարիքը մեծ եւ:

Կազմակերպությունը վերականգնելու նպատակով մենք ընկերներ ենք ուղարկել Դիլիջան: Ուղարկում ենք Ղարաքիլիսա: Շրջանների համար ազատ ընկերներ քիչ կան: Ահա ընդհանուր գծերով իրերի ներկա դրությունը, մեր վերաբերմունքը դեպքերին և նրանց գնահատումը: Մենք ամեն ժամանակ պատրաստ ենք բանավոր բացարձություններ ևս տալու, յեթե այդպիսին պահանջվի:

Այսոր տեղեկություն ստացանք, վոր մաուզերիստների խմբերը ուղարկված են և ուղարկվում են Ղարաբաղ: Շրջապատվում են նաև Զանգիբասարի 2րջանը:

Ի. Կ. Կ. Հայաստանի Կոմիտե (Արմենկոմ)

1920 Մայիսի 31 Յերեւան.

ՊՈԽՍԱՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԲՈՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ)

Պրոլետարիատ բոլոր յերկրների միացե՛ք

ԲԱՆՎՈՐՆԵՐ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ,

Միջազգային ավազակների, մարդկության խեղճ ու կրակ մասի քրտինքը բռնագրավողների, բոլոր յերկրների հարստանարկող բանվորության և գյուղացիության տառապանքի ու հեծեծանքի վրա սեփական բարորությունն ու իշխանությունը պահպանող և կառուցող դասակարգերի «գերազույն խորհուրդը» հայտարարել և իգիտություն ամբողջ աշխարհի, վոր Հայաստանն «անկախ» և այսուհետև իսկ քաղցած ու մերկ, տնանկ ու հիվանդ, բնաշնչման նախորյակն ապրող հայ թշվառ ժողովրդի պարզ ու թագուն թշնամիները հրճվանքով տոննում են այդ հայտարարության «մեծ տոնը» անվանելով այն «համաժողովրդական»:

Ի՞նչ ե պատահել:

Մի՞թե արյունատենչ ավազակները կշտացել են արյուն ծծելուց, վոր ձեռք են քաշում հայ ժողովրդից ևս: Մի՞թե հայ նենդամիաներն ու խարերաները բարվոքվել և ազնվացել են, վոր—Հայաստանի ժողովրդի անկախությամբ ուրախանում են և հրճվում:

Վո՞չ:

Ի՞նչ ե պատահել, վոր սովալլուկ ժողովրդի շինքին նստած գաշնակցական կառավարությունը, վորը յերկար ու ձիգ ամիսներ միջազգային դահլիճների շեմքերն եր ապարդյուն մաշում և աղերսում՝ հայ տիրապետող տարրերին իշխանություն շնորհել, այսոր ստանում և հանկարծ այդ շնորհը:

Պատահել ե այն, վորին աշխարհի տեր ու տնօրինները չեն սպասում:

Ամբողջ աշխարհի բանվորության և աղքատ զյուղացիության արյունը ծծող տղրուկներին, նրանց կյանքը սեփացնող զիշտիչներին վճռական կոփի ե հայտարարված: Կյանքի բարիքներից զըրկվածները, դաժան պայմանների ճիրաններում, վոտքի յեն կանոնել իրենց ստրկության շղթաները ջախջախել են ուզում: Այս ապրուտամբ ստրուկների առաջապահ զունդը՝ խորհրդային Խուսատանի սոցիալիստական կարմիր բանակը վոչ միայն չի պարտփում, այլ ընդհակառակը, հաղթություն հաղթության յետեկց տանելով, ազատազրում և մոտավոր ստրուկներին, վառում հեռավոր ստրուկների ազատության տեսչը: Ահա ինչ ե պատահել: Սոսկում ե տերերի աշխարհը, սոսկում ե շահագործողների վոհմակը և յելք վորոնում:

Կարմիր բանակի այդ հաղթական առաջխաղացության դեմ պատնեշ կառուցելու, դասակարգային ազատազրության զաղափարը կղզիացնելու համար ե ահա, ստրկատերերի գերազույն խորհուրդը հապճեպով «անկախություն» ե պարզել Աղրբեջանի, Վրաստանի և Հայաստանի մասը ստրկատերերին: «Ձեր ստրուկ բանվորների և զյուղացիության միահեծան տերը յեղեք, միայն թե պաշտպանեցեք մեզ և ձեզ, իյուսիսից տարածվող կարմիր վտանգից: Մեր ստրուկները խլաման մեջ են, իսկ ձեր ստրուկներին դուք կարող եք խարել. այդ նպատակի համար նրանց շահագործումը ազգային անկախությամբ քողարկելով». ահա «անկախության» հետ միասին տրված խիստ պատվերը:

Այս, սոսկում են ստրուկները, փրկության ելք են վնատրում: Կոփի որհասական ե, պաշտպանվել են ուզում: Իսկ դրա համար նրանք ձգանում են ողտագործել հետամնաց և անդիտակից ժողովուներին:

Զգույշ յեղեք հայ բանվորներ և գյուղացիներ, չխարվեք: Ինչպես միշտ, այսպես ել այսոր դուք չունեք անկախություն, չեք վայելում ազատություն: Ձեր թշնամիները, լինեն դրանք այլազդի կամ հայ, խարում են ձեզ, վորպեսզի մեռցնեն ձեր մեջ իսկական ազատության ձգտումը:

Զգույշ յեղեք, շահագործվող բանվորներ և տառապող գյուղացիներ: Ձեր կոր մեջքերի վրա նստած ձեր թշնամիները ձգտում են հեռու պահել ձեզ սոցիալական ազատագրությունից, ձգտում են մթագնել ձեր դասակարգային գիտակցությունը, վորպեսզի անվրդով վայելեն իրենց տիրապիտության պտուղները:

Զգույշ յեղեք, քաղցի ու ու մերկության մատնվածներ: ձեր տանջանքի ու թշվառության վրա իրենց յերջանկությունն ու լիությունը պահպանող թշնամիները պատրաստվում են ուղարկել ձեզ յեղբայրասպան պատերազմի դաշտը՝ ընդդեմ կեղեքվողներին ու տանջվողներին փրկություն ավետողների, ընդդեմ ստրկական լուծը ջախջախողների, վորպեսզի ձեր արյան գնով և վոսկորների վրա կանգուն պահվի հարուստների տիրապետությունը, վորպեսզի ձեր ձեռքով կոփիվի ժողովրդների ստրկության շղթաները, վորպեսզի դուք գառնաք տանջված մարդկության լավագույն զավակների գահիճները, վաստակեք ազատագրության կովի դահիճների անարգ անունը:

Բանվորներ և աղքատ գյուղացիներ, դուք չունեք անկախություն, չունեք ազատություն, չունեք սեփական Հայաստան: Դուք կունենաք անկախություն միայն այն ժամանակ, յերբ Հայաստանում կհաստատվի ձեր սեփական իշխանությունը, յերբ յերկրի տերը կդառնաք դուք՝ բանվորներդ և գյուղացիներդ, յերբ կունենաք սոցիալիստական հայրենիք: Խսկ դրանք կլինեն և պետք ե լինեն Հայ ճնշված և հարստահարված տարրերը գիտեն կովել գիտեն կուրծքը դեմ տալ: Դրացի ժողովրդների հետ միացած, նրանք վուրեն կկանգնեն իրենց միացած թշնամիների դեմ և գրկախառնվելով հերօսական հարմիք բանակի հետ, կտոնեն իրենց ազատաղբության և անկախության պանծալի տոնը, գոչելով.

Կեցցե՞ Կարմիր բանակը. Կեցցե՞ Խորեղային Ռուսատանը.

Կեցցե՞ Խորեղային Հայաստանը.

Մա՞ն ժողովրդի սցրուկներին ու թէնամիներին:

Կնցցե՞ սոցիալիզմը:

ԸԼԵՐ-ՊՈՒՅԻ ԿՈՄԻՏԵՅՑԻ ՄԱՅԻՍՄԵԿՑՈՆ ԿՈԶԸ

ՈՒԽԱՍԱՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԲՈՅԼՇԵՎԿԱՆԵՐԻ)

Պրոլետարիատի բոլոր յերկրների սիացե՛ք

ԲՆԿԵՐՆԵՐ

Այսոր մայիսի մեկին, աշխարհի բոլոր բանվորներն ու չքավոր գյուղացիները դուրս են գալիս փողոց—հակադրելու իրենց ուժն ու հեղափոխական կորովը հարուստ ու շահագործող դասակարգերին և նրանց կառավարություններին:

Մայիսի 1-ը միջազգային կոմմունիստական պրոլետարիատի տոնն է:

Մինչև Ռուսաստանի Հոկտեմբերյան (բայլշեիկական) հեղափոխությունը պրոլետարիատը մայիսի 1-ին առաջադրում եր այնպիսի պահանջներ, ինչպես որինակը, 8-ժամյա բանվորական որ, պետական ապահովագրություն և այլն:

Բնկերներ, այժմ յերբ Ռուսաստանի բանվորներն ու չքավոր գյուղացիներն առաջին անգամ պարզել են կոմմունիստական հեղափոխության դրոշակը, յերբ համաշխարհային խմբերի հիմքում ապատերազմը վերածվեց դասակարգային քաղաքացիական կռվի ընդդեմ «ազգային» ու միջազգային խմբերի լիզմի—հանուն աշխատավոր մարդկության ազատազրման շահագործող դասակարգերի ճիրաններից, Մայիսի 1-ը դառնում ե միայն յեվ սիմիայն միջազգային կոմմունիստական պրոլետարիատի ու նրա կուսակցության կռվի ու հաղթանակի որ:

Բնկերներ, Ռուսաստանի կոմմունիստական կուսակցությունը (բայլշեիկների) Հայաստանի բուրժուական պետության մեջ, վորտեղ աշխատավոր մասսաները տնկում են խմբապետական ահռելի սեժիսմի տակ, վորտեղ սպեկուլիացիան, կառավարությունը, աղքային անվերջ կոտորածներն ու ավերածումները վեր են ածված վորոշ սիստեմի, մայիսի մեկին առաջադրում ե այն լոգունդները, վորոնցով տողորված են Յ-ըդ Ինտերնացիոնալը, Խորհրդային Ռուսաստանը ու նրա հաղթական կարմիր բանակը:

Հայաստանի և Ալեքպովի աշխատավոր մասսաները այսոր համախմբված կոմմունիզմի դրոշակի տակ, տողորված նրա լոգունդներով, ցույց պիտի տան միջազգային գիշատիչ խմբերի լիզմի հայկական հատված, դաշնակցական կառավարությանը, վոր Հայաստանի սովալլուկ և իրավագուրկ մասսաները պատրաստ են իրենց

յեղբայրական ձեռքը մեկնել, դաշնակցական կառավարության գրլիսի վրայով, Բագվի դուները բազմող հաղթական կարմիր բանակին ու Բագվի պրոլետարիատին, վոր այսորվանից մեր կոփվը թուրք բանվորի ու գյուղացու դեմ չե, այլ դաշնակցական կառավարության, վոր մոտ և այդ կառավարության տաղալման որը, վոր և կլինի Հայաստանի բանվորների և գյուղացիների հաղթության որը:

Ըսկերներ, մայիսի 1-ին Անդրկովկասի հայ, թուրք և վրացի բանվորներն ու գյուղացիները համախմբված կոմմունիզմի դրոշակի տակ պիտի գոչեն:

Մենում և դաշնակցականների, մուսաֆաթիսանների և մենաշնկների իշխանությունը:

Կեցցե՛ Անդրկովկասի բանվորների և գյուղացիների իշխանությունը.

Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը.

Կեցցե՛ ազատարար կարմիր բանակը.

Կորչի իմպերիալիզմը.

Կորչին ազգային կոտորածներ սարքող Անդրկովկասի հականեղափոխական կառավարությունները.

Կեցցե՛ կոմմունիստական մայիսի մեկը.

Կեցցե՛ Ռուսաստանի կոմմունիստական կուսակցությունը:

Ռուս. Կոմ. Կուս. (բայլշկիների) Ալեք-Պոլի կոմիտե

ԱԼԵՔ-ՊՈԼԻ ՎՈԼԶՈՒՑՆԵ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵԶԱՆԻՆ

Առաջին հեռագիր

ԸՆԿԵՐ ՆԱՐԻՄԱՆՈՎԻՆ

Ալեքսանդրովի պրոլետարիատը և կարմիր զինվորները կոմմունիստական մայիսմելյան որը, շրջապատված միջազգային կոմմունիստական պրոլետարիատի կարմիր դրոշակներով, վողջունում են կարմիր Ազգրեջանի հերոս բանվորներին և զինվորներին, հեղափոխական դասակարգային ճակատում՝ նրանց տարած հաղթանակն ընդունեմ մուսաֆաթիսանների դագանանական կառավառության, համարելով իրենց սեփհական հաղթանակը: Ազգրեջանի պրոլետարիատի ամսամբության լուրը կայծակի արագությամբ տարածվեց հանուր հայ սլովետարական մասսաների մեջ, վորը հեծում և վոչ նվազ դավաճան հայ մուսաֆաթիսանների՝ դաշնակների կառավարության լծի տակ. յերկվորյակների, վորոնց գուրք Ազգրեջանի բանվորներդ, գյուղացիներդ ու զինվորներդ գուրս վրանդեցիք կարմիր

Բագլի և Աղբբեջանի սահմաններից: Այս հանդիսավոր որը մենք՝ Հայաստանի բանվորները, զյուղացիներն ու զինվորները հայ մուսափաթիստների հականեղափոխական դավաճավական կառավարության վրայով մեկնում ենք մեր յեղբայրական ձեսքը ձեզ՝ հեղափոխական բանվորներին, զյուղացիներին և ասկյարներն և հանդիսավոր խոստում ենք տալիս—մաքրել հաշիվները հարածանքի և բոնության կառավարության հետ, կառավարության, վոր թաթախված և Աղբբեջանի և Հայաստանի տասնյակ հազարավոր բանվոր և զյուղացի անմեղ զոհերի արյան մեջ, թափված Զանգեզուրում, Ղարաբաղում, Աղբարայում, Աղուլիսում. այնպիս վարվել, ինչպես դուք վարվեցիք թյուրք դաշնակ-մուսաֆաթիստների կառավարության հետ, վորպեսզի մեծ Խորհրդային Ռուսաստանի հետ միատեղ՝ միացած Արևելքի ճնշված ժողովուրդների հետ, տանենք նրանց միշազային իմպերիալիզմի գեմ: Կեցե Խորհրդային Աղբբեջանը, կեցե Բագլի հեղափոխական պրոլետարիատը, կեցե Խորհրդային Հայաստանը, կեցե կարմիր Աղբբեջանի և Հայաստանի բանվորների, զյուղացիների և զինվորների կոմմունիստական դաշնակցությունը:

Աղեքանդրոպոլի միտինզի նախագահություն
Գոգունց, Նուրիջանյան

1 մայիսի 1920 թ.

Յերկրորդ հեռագիր

ԸՆԿԵՐ ՆԱՐԻՄԱՆԱՊԻՆ

Ալեքսանդրովլի կարմիր պրոլետարիատը և կարմիր խորհրդային զրահազարատը, գլխավորությամբ Ռիկ Ալեքսանդրովլի կոմիտեյի, մայիսի 1-ից սկսած հայ դաշնակցական հականեղափոխական կառավարության հետ լարված պատերազմական զրության մեջ և գտնվում, սպասելով ամբողջ Հայաստանում ապատամբության կազմակերպմանը: Խատիսովի կառավարությունը նախազգալով իր մոտալուտ անկումը, վերջին ուժերը լարում և իշխանությունը պահելու համար, Հայաստանի և Աղբբեջանի աշխատավոր մասսաներին պատերազմի դրդելով:

Մեր ունեցած տեղեկություններով, Հազախում հայ դաշնակները մթագնելով դասակարգային ինքնազիտակցությունը, շրջապատել են կարմիր դրոշակներով իրենց մոտեցող Աղբբեջանի զյուղացիների խմբերը, զինաթափ անելով և կոսորելով նրանց Դամարլի շրջանում: Կառավարության ազդեկությունների համաձայն զինված ընդհարումներն սկսվել են արդեն: Ժորդանիայի կառավա-

բությունը դաշնակիների հետ դաշն եր կապում ընդգեմ Խորհրդային Աղքարեցանի: Խնդրում եմ հրատապ միջոցներ ձեռք առնել խորհրդային Խուսաստանի անունից Նախազգուշացնելով հայ և մուսուլման աշխատավոր մասսաների միջն ընդհարումները, թույլ չըտալու համար հակահեղափոխական կառավարության արյան մեջ խեղդելու բանվորա-գյուղացիական հեղափոխությունը:

Հայաստանում պարենավորման ճշնաժամբ՝ իշխանությունը ձեռք ձկելու գեպքում մեղ սարսափելի դրության մեջ և ձկում:

Թախանձագին խնդրում ենք անմիջապես ռազմիոյով հայտնել մեզ և հասրավորության ստեղծել շուտափույթ կերպով Ղազախով գոնս սկզբանական շրջանում մեզ անհշան պարենոգնություն հասցնելը Դրական պատասխան ստանալուց հետո, մենք անհապաղ դրավում ենք իշխանությունը և միասին ամրող Հայաստանի ապատամության կոչ կանենք և վերջ կդնենք ազգամիջան պատերազմին:

Նուրիջանյան, Մասյելյան

ԲԱԳՈՒ ԴԱԶՄԱՆԵՂԱՓԱԽԱԽԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀ ՆԱՐԴՄԱՆՈՎԻՆ

Միջազգային պրոլետարիատի տոնին՝ մայիսի մեկին Ռ. Կ. Կ.
(բայլշիկիների) Հայաստանի կոմիտեն, Հայաստանի բոլոր կենտ-
րոններից, չտեսնված գրանդիոզ միտինգների տեղեկություններ և
ստացել Հայաստանի պրոլետարիատը, զյուղացիությունը և զին-
վորները համախմբվելով Յերրորդ Կոմմունիստական ինտերնացիո-
նալի գրոշի տակ, վողջունում են Ազգբեջանի հերոսական պրոլե-
տարիատին, զյուղացիներին և կարմիր ասլյաքաներին, հեղափոխա-
կան դասակարգային ճակատում տարած նրանց հաղթանակով, տա-
պայելով մուսավաթական դավաճան կառավարությունը:

Հայստամինի պրոլետարիատը, դյուղացիությունը և հեղափոխական զինվորները, թեվավորված այդ հաղթանակով, իրենց ներքին, նույնպես դասակարգային ճակատում, հավատում են իրենց հաղթանակի մոտիկությանը, ընդգեմ իրենց մուսաֆատականների՝ դաշնակների դավաճան կառավարության:

Հավատում ենք, վոր մոտ և Վրաստանի հեղափոխական պրո-
լետարիատի և պյուղացիության հաղթանակի ժամը, ընդգեմ՝ իրենց
հարստանարող մենչեւիների:

Կեցցե՞ խորհրդային իշխանությունն ամբողջ Անդրկովկաստմ
Հայաստանի կռմիտելի կողմից, առաջին վողջույնի ռադիոն ուղարկ-
ված ե ձեզ գեռ մայիսի մեկին:

Ա. Ա. Ա. Հայաստանի կոմիտե

ԱԼԵՔՍԵՆԴՐՈՎԱԾԻ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԵՄԵԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻՆ:

Կ. կուսակցության Ալեքսանդրովովի կոմիտեն մայիսի 1-ից 10—12 որ առաջ, հետեապես Բաղուն գրավելուց առաջ ընդունեց մայիսին լոգունդները, այդ թվում ելին «Կեցյել Խորհրդային Հայաստանը», «Կորչի կոտորածներ սարքող կառավառությունը» և այլն: Հենվելով բանվորության մեծամասնության, մասնավանդ յերկաթուղու վրա, կոմիտեն վորոշեց տաննձին յերթով դուրս գալ՝ ուժերի հաշվեառման համար: Ազրբեջանում տեղի ունեցած հեղաշրջումը վաղորոք ապահովեց մեր հաջողությունը. չնայած ճնշումներին և զուսպ նախազգուշացումներին, տեսնային աշխատանքը կատարվում եր: Ազրիի 30-ին ձեռքակալեցին ընկերներից մելին, փորին մի քանի ժամից ազատ արձակեցին, նախազգուշացնելով «Կորչի դաշնակների կառավարությունը» և մյուս լոգունդների անթույլատրելիության մասին: Մյուսներին ձեռքակալելու փորձ ևս կատարվեց, սակայն նրանց չգտան: Մայիսի 1-ի յերթը մի գորատես եր Ալեքսանդրովովի պրոլետարիատի և դորքի համար, վոր գուրա յեկավ բայլշելիքան գրոշակի տակ և Հայաստանի պատմության մեջ չտեսնված լոգունդներով: Մեր գեմն ելին մի բուռը սպեկուլիանտներ դաշնակների գրոշակների տակ—200 մարդուց վոչ ավելի: Մեր մասսան 5000-ից ավելի յեր: Դաշնակների տապալումը կատարյալ եր: Ազրում ամեն ինչ ընթանում եր առանց միջադեպերի, սակայն Ալեքսանդրյան փողոցի անկյունում մասուղերիստ դաշնակցականներից մելի Խորհրդային Ազրբեջանի հասցեյին պրովակացիա արեց և դրանով վրդովեցրեց զինվորներին և բանվորներին: Դրա հետեանքն այն յեղափ, վոր հենց տեղն ու տեղը դաշնակների բյուրոյի մուտքի առաջ զինվորները ծեծեցին դաշնակ վարժապետ-սպեկուլիանտ Մացոյին: Դրան իրեկ պատասխան մառվերիստները յերկու դնդակ արձակեցին և թեթև վիրավորեցին հենց իրենց՝ դաշնակներից մելին:

Ծնորհիվ զինվորների և բանվորների գիտակից վերաբերմունքի, վորով նրանք յենթարկվում ելին բայլշելիքների կոմիտեյի պահանջներին, միջադեպը սպառվեց և մասուղերիստաների պրովակացիան չաշնողվեց: Զինվորների փորձը՝ զիմել գեպի բանտ, ձերբակալվածներին ազատելու համար, չիրագործվեց դարձյալ կուսակցության կոմիտեյի պահանջի հետևանքով, վոր խուսափում եր դաշնակների նոր պրովակացիայից: Ցույցը, Ամիսի և մյուսների ճառերից հետո, ժամը 4-ին կայարանի մոտ ցրվեց, մինչդեռ յերթն սկս-

զել եր առավոտյան ժամը 10-ին։ Անհրաժեշտ ե նկատել, վոր այդպիսի հաջողություն կուսակցությունը չեր սպասում նույնիսկ այդորն առավոտյան Ընդունված եր մեր առաջարկությունը—պահանջները՝ ձերքակալվածներին աղատ արձակելու, պատգամավորների խորհուրդ կազմակերպելու և Խորհրդային Ազգբեշանին վողջունելու մասին վողջունի հեռազդիրը կազմված ե կոմմունիստական և շատ սուր վողով, հիշատակելով հայ մուսաֆատիստների խմբապետական կառավարության դեմ միասնորեն կռվելու մասին, Խորհրդային Ազգբեշանի բանվորների, գյուղացիների և ասկյարների պատգամավորների խորհուրդը վողջունելու մասին և այլն։ Բանաձևն ընդունվում ե միջայն, բուռն և յերկարատե ծափահարություններով, «ուստի»-ի բացականչություններով։ Յեթե այդ որն իշխանությունը գրավված չեր, այդ վոչ թե այն պաճառով եր, վոր մենք անդոր եյինք, այլ միայն զինվորական մասսայի անբավարար կազմակերպված։ Մինելու և թալաններից յերկյուղ կրելու պատճառով։

Նույն գիշերը ձերքակալված ե ընկերներից մեկը. մյուսների մոտ ել են յեղել, բայց նրանց տներում չեն գտել։ Այժմ գրությունն այսպես ե։ Այդ որը բոլոր զինվորական մասերը կազմել են վնդի կոմիտեներ և ներկայացել ընկել։ Մուսայելյանի դրահապատ գնադքը բանակցությունների համար։ Հաստատված ե ամենասերտ կապվածող զորքը, Մուսայելյանի զրահպատի հետ մեր տրամադրության տակ ե։ Ավելին՝ քաղաքային յերկաթուղային մեծիցիայի մեծագույն մասն ևս մեր ձեռքին ե։ Զորքի մեջ կարգապահությունը պաշտպանվում ե հենց իրենց իսկ դեկավարների միջոցով, ընդ վորում ավելի լավ, քան մինչ այժմ։ Հնարավորություն չկա կանգ առնելու բոլոր այն մանրամասնությունների վրա, վորոնք բնորոշում են դաշնակների կուսակցության կատարյալ սնանկությունը և մեր կուսակցության հսկայական բարոյական ուժը և ֆիզիքական զորությունը։ Համենայն դեպս իշխանությունը գրավելու խնդիրը, դա մեր ցանկության հարցն ե և վոչ թե որվա, այլ բոլորի խնդիր ե։ Դաշնակների այն պրովակացիան, թե իբրև Խորհրդային Ազգբեշանի կողմից Հայաստանի գեմ պատերազմ ե սկսված, վոր իբր թե նպատակ ունի հայ բայլշերի կանունը հետ միացած, վոչնչացնելու բոլոր հայերին, վոչ մի հաջողություն չունեցավ և այժմ ել չունի։ Պրովակատորները քիչ եր մնում ծեծի յենթարկվեյին կանանց և զինվորների ձեռքով։ Այժմ դաշնակները մտածում են զինաթափ անել զրահպատը։ Վերջինս ուղամական զրության մեջ ե զանվում, ամբողջ որ ու գիշեր հերթապահություն կա։ Վորոշակի հայտնված ե՝ զրահապատը չենք

հանձնելու։ Զրահապատի զինվորները յերգվել են մինչև վերջին մարդը մեռնել, բայց անձնատուր շինել։

Զորքն ամեն բողեք կարելի եւ վոաքի կանգնեցնել մեկ մարդու նման։ Զրահապատի զինաթափման փորձը կլինի մի մարտակոչ, վորն և մենք ամեն բողեք պատրաստ ենք ընդունելու։ Հայաստանի կոմիտեյի փորոշումը—ոկուլ Ղազախի գավառից, իսկ Ալեքսանդրովովը դեռ սպասի, մեզ գնում եւ անել զրության մեջ։

Մենք ամեն ջանք գործ ենք զնում խուսափելու համար կոնֆլիկտից—ձերբակարտթյուններից, զրահապատը զինաթուի անելուց, աերորդներից և այլն։ Սակայն յեթե հակառակ սպասածին այդպիսիք տեղի ունենան, մարտակոչը պետք եւ ընդունիլի Այս և Ալեքսանդրովովի կոմիտեյի անշեղ փորոշումը։ մենք թույլ չենք տա զիստել այն մասսան, վորի ուժի և կարողության վրա հենվում ենք հենց ինքներս։

Մենք խնդրել ենք տալ մեզ հրահանգներ—բնչութեավես վարվենք Հայաստանի կոմիտեյի ամեն մի փորոշում մենք պատրաստ ենք կատարելու, սակայն նախազգուշացնում ենք Հայաստանի կոմիտեյին։ յեթե վերջինս մեզանից պահանջելու մինի ձերբակարտթյուններին, գաղտադույի տերրորին, զրահապատի զինաթափմանը և այն չպատասխանել իշխանության զրավումով, առա մենք մեզանից վերցնում ենք ամեն մի պատասխանատվություն այն անխուսափելի հետեւանքների նշանամամբ, վորը պետք եւ նախանձնի և Հայաստանի կոմիտեն։

Հայաստանի կոմիտեն Ռուսաստանի Խորհրդություն իշխանության և պատմության առաջ պատասխան պիտի առ կուսակցության կազմակերպության ջախջախման և իշխանության զրավումը մեկ ամսով, գուցե և յերկու ամսով հետաձելու համար Մենք իննդրում ենք Հայաստանի կոմիտեյին այսոր և յեթ պատասխան տալ մեզ, համաձայն եւ արդյոք նա մեզ բռնած դիրքին, այն եւ մենք ամեն ջանք գործ ենք դնում եքսցեները կանխելու համար մինչև ձևանից հրահանգները սուսնալը իսկ մասսայական ձերբակարտթյունների, անկյունից կատարվող տեղրսուների, և առավել ևս զրահապատի զինաթափ անելու փորձերի գեղքում, մենք ընդունում ենք մարտակոչը և զրավում ենք իշխանությունը։ Յեթե Հայաստանի կոմիտեն սրան համաձայն չե, խնդրում ենք անհապաղ կերպով հրահանգներ տալ։

1. Յեթե զուք լիովին համաձայն եք մեր տեսակետին, առա հայտնեցնք ուղիղ գծով—«Միան առողջ ե»։ 2. Յեթե զուք կարծում եք, թե անհրաժեշտության դեպքում պետք եւ հանձնել զրա-

հասպատը, կազմակերպությունը ցըիլ տալ և մինչև ձեր հրահանդ-ներն ուղարկելը յիշույթը չունենած տողանակն ուղիղ գծով առացէք «Միանի վախճանվեց»։ 3. Ավարը—Գրիշան ե։ 4. Զրահապատը՝ «Նիվալինդանոցը»։ 5. Ապատամբությունը՝ «Վեղուայք»։ 6. պարենավորամբ քիչ ե, չի բավականացնի իշխանությունը զրամիլու գլուքում՝ մինչև Ռուսաստանից ոստանալը, — «անմիջապես փող փխադիրէ»։ 7. Տարը—տամնիքով որ լիովին կրավի նացը և այլ մթերքները—«վաղը փխադրած ե»։ 8. Մնացածն ամբողջ այնպիս կարմիրեց, վոր մասավորակիս կարելի լինի հասկանալը։

Այսոր յերեկօյան ժամը 9-ից մինչև 10-ը դուք ուղիղ գծով կանչեցնք Ալեքսանդրովովից ան ընկերոջը վորին դուք պիտիք և խոռոչեք հիշյալ 8 կետերի համաձայն։ Յեթե ուղիղ գծով չհաջող-վի, հեռազեր ամենք Ալեքսով ընկ. — ի. հասցեյով նույն կետերի համաձայն։

Ավիս.

Ալեքսովի կոմիտեի կնիքը
3-ն մալիսի. 20 թ.

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՈՎԻ ԿԱՄԻՏԵՅԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ ՀԱ- ՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻՆ

Ռ. Կ. Կ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻՆ.

Դրությունը նույնն ե։ Զրահապատն ամեն ըոպե պատրաստ ե. որ ու գիշեր զալիս են զինվորական մասերի ներկայացուցիչները, ստանում են հրահանգներ և զրականություն ու զնում են։ Յերեկ մի կերպ կարողացանք հացի պակասության հետեանքով ծագող յերկաթուղային գործադուլի առաջն առնել։ Այսոր այդ մենք ան-կարող կիննենք անել, յեթե նորից այդ հարցն առաջ քաշվի։ Ըսդ-սմին ուղարկում եմ Քյավթառու գյուղի մայիսեկյան միտինզի բանաձեւ։ Գավառն ել ճիշտ այլպես ե արամազրված։ Յերեկ Յե-րեանից ժամանեց ամերիկացիների գնացքը, բայց մենք բռնեցինք թե նրանց և թե աեղիս ամերիկացիներին։ Բանն այսպես եր. դեռ յերեկ առավոտյան զրահապատ յեկավ գավառային կոմիտար կոռե-ցյանը և մորիկացիայի կոմիտար Վալադյանը մոմենտի մասին բա-նակցելու համար։ Մեր կողմից ներկա եյին. — Ավիսը, Մուսայելյանը և Արշակ Գողովնցը։ Մերոնք վորոշակի հայտարարեցին, վոր կոմ-մունիստական կուսակցությունը ձգտում ե իշխանության, սակայն այժմ, այս ըոպեիս այդ անելու մտադրություն չունի։ Մերոնք մի

շարք առաջարկներ դրին 1. Յերկաթուղային կենտրոնական կոմիտեյի¹⁾ ցրումը, 2. Յերկաթուղագծի արտակարգ հանձնաժողովի ցրումն, 3. Նրանց ֆունկցիաների հանձնումը գեղոյին, 4. Վերջինիս ձեռքով բանվորական կոնֆերանս կազմակերպելը, 5. Զերբակտղված ընկերների ազատ արձակումը և այլն։ Մեր գլխավոր նպատակն եր՝ ուշացնել կոնֆլիկտը գոնե մի առ ժամանակ, մինչև Հայաստանի կոմիտեյից հրահանգներ ստանալը։ Ի՞նչ և լինելու բանակցությունների արդյունքները։ Դաշնակներն այսոր առավոտյան խոստացել են պատասխան տալու համեմայն գեպս, նրանք այս գիշեր (նույն Վալագյանը իր բանգայի հետ) շատ ընկերների մոտ են գընացել խուզարկությունների, բայց վոչ վոքի չեն գտել։ Հասկանալի յե, վոր հապաղումը նրանց ձեռնատու յե։

Պահանջներից մեկը սա յեր—դաշնակները պետք ե անմիջապես կալանեն ամերիկացիների գնացքը, պահանջելով անհապաղ կերպով ուղարկել Հայաստան ամբողջ նրան հատկացված պարենավորումը (Բաթումի կողմից յեկող բեռները)։ Յեթե դաշնակները հրաժարվում են այդ բանը կատարելուց, ապա դա կանի կոմմունիստական կուսակցության կոմիտեն։ Ամերիկացիների գնացքի գալու ժամանակ մենք դաշնակներից գեռես պատասխան չունեյինք և ինքներս գործի անցանք։ Շոգեկառք չտվինք, գնացքի առաջ շարեցինք կոմմենդատային վաշտը և ընկ։ Ավելի կոմմունիստական կուսակցության անունից հայտարարեց նրանց—վորոշման մասին։ Բանակցությունների հետևանքով պարզվեց, վոր ամերիկացիներից մեկը մնում է, վոր նրանք յերաշխափորում են, վոր հացը կուղարկվի անկախ նրանից թե ինչ իշխանություն ե լինելու Հայաստանում։ Մովին Ալեքսանդրովովի կոմիտեյի անունով համապատասխան ստորագրություն և գնացքները բաց թողվեցին։ Վաղը մենք նամակ ենք ուղարկում Բագու, խնդրելով Դիլիջան հասցնել բավականաշափ պարենապաշար ապագա խորհրդային Հայաստանի համար։ Պաշարներն որեցոր հալվում են և թալանվում։ Զեր ձգձգման հետևանքով շարժումը տարերային ձեկ կվերածվի և պատմության կամքով մենք կանցնենք սոված, ամեն բանի ընդունակ ազգաբնակության դուխը։ Այն ժամանակ արդեն ուշ կվինի։ Մեր թշնամին մառագերիստանները չեն, այլ սովու ե. այս բոպեյիս թալանում են պարենավորման պաշարները։ Խնդրում ենք պատասխանն շտապեցնել։ Այսոր Հարաբեկայից հեռագիր ստացանք՝ գորքը, բանվորներն

1) Դեղին Պրոֆմիութ. ծանոթ. խմբ.

ու զյուղացիները միացած են կոմմունիստական դրոշակի տակ, վողջունում են Ալեքսանդրոսպոլի պրոլետարիատին:

Ավիս

5-ն մայիսի 29 թ.

Ալեքսանդրոսպոլ.

Շատ կարճ եմ գրում զեկուցումը և հայտարարում եմ, վոր հարցի հետազա ձգձգումը և նրա հետևանքները մենք մեզանից վերցնում ենք և ամբողջ պատասխանատվությունը դուք պետք ե ձեզ վրա վերցնեք, Ձեր փորձումը նախ սկսել Պազախում յեվ հետո այսեղ, յեվ այն ել դեռ կապ հաստատել յեվ ապա հանդես գալ, համարում եմ նիմունին սիսալ, Նախ պետք ե գրավել և ապա առաջ շարժվել: Յեկ առաջինը, պետք ե սկսենք Ալեխանդրովում, վորտեղից սենք կակսենք Պազախի վրա շարժվել: Ինչպես կամենում եք, բայց մենք բոլորս տերրորի կենթարկվենք, յեթե մեր ամբողջ ուժը նրանց հանճնեցինք: Յես ձեզ խրնդրում եմ մեր կուսակցության, բանվորների և զրահապատի անունից շուտով հարավորություն տալ մեզ, կամ թե գալ այստեղ տեղում ծանոթանալու համար: Յես գրում եմ և չգիտեմ թե ինչ կարող ե լինել մի քանի ժամկեց հետո: Հասկացեք վերջապես: Սպառում ենք: Զեզ հաղորդող Ավիս:

Վորքան կարելի յե մեր ընկերների հետ շուտ կապվեցեք, հասցեք: Սույն նամակը հանճնողը մեր ընկեր « Տ-ն և, զեպոից, Կնիքը հետո չեր, վոր կնքեյի...»

Ավիս

Մայիս 5

Ավիսի Յերկարություն

Կամ մենք, կամ նրանք, այսպես ե գրված հարցը: Թալանում են պարենապորումը: Թուլաւթյունն զգում եմ որեցոր: Յերեսունից ավելի մասսան սպասում են մեզ: Պարենը կրավի 15 որ, կկապվենք, յեթե բանալով գեպի չեղոք զանան: Յերկաթուղայինների գործադուլ: ամեն մի պատասխանատվություն վերցնում ենք: Հիվանդանոցը ձեռքներից կառնեն բոլոր զինվորական հիվանդանոցների հետ միասին:

Գրիշա

Մայիսի 6-ին կամ 7-ին

ԶԻՆՎՈՐԸ-ՀԵՊԱՓՈԽԸԿԵՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԿՈՉՔ

ՀՆԿԵՐՆԵՐ ՑԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Դաշնակցական հականեղափոխական կառավարության որերը հաշված են: Կարմիր զորքերը և բանվորությունն արդեն գրավել են Կարսը և Ալեքսանդրոպոլը, պահանջելով գավաճան կառավարությունից հանձնել իշխանությունը հեղափոխական պրոլետարիատին և Կարմիր բանակին: Այժմ՝ քաղաքում գաջնակցականները զլուխ կորցրած հոգեվարքի վերջին փորձեր են անում, վորագեսզի խաղաղ քաղաքացիներին զրգուն զորքի և բանվորության գեմ, առաջ բերելու յեղբայրասպան կորիք: Զինվորանեղափոխական կոմիտեն հենվելով հայաստանի բանվորների, զյուղացիների և զինվորների կամքի վրա, գաջնակցական կառավարության այդ պրովոկացիոն քայլերին հակազրում և այն համակրանքը, վոր քաղաքացիները ցույց են տալիս դեպի նոր և յերջանիկ Սովետական Հայաստանը:

Ընկերներ և քաղաքացիներ, գաջնակցական կառավարության աղենանները հույյմները կարած, քաղաքից փախչում են զյուղերը, վորագեսզի մութ մինոլորտի մեջ իրազործեն իրենց նենդ դավերը, բայց զյուղացու բառոցքը ևս կծանրանա նրանց զլիին:

Զինվորանեղափոխական կոմիտեն հայտարարում է, վոր շուտով քաղաք պիտի մտնի Կարմիր բանակը, ապահովելով քաղաքացիների կյանքն ու զյուքը, թե արտաքին և թե ներքին թշնամիներից:

Ամեն մի փորձ դիմադրության, բնական կյանքի ընթացքի խանգարման, կենթարկվի ամենախիստ պատժի հեղափոխական տրիբունալի կողմից:

Հայաստանի խորհրդային իշխանության

Զինվորանեղափոխական կոմիտե

10 մայիսի 1920 թ.

Ալեքսանդրոպոլ.

ԿՈՄՄԱԿՆԵԱՏԾՎԵՐ ՄԱՐԱՆ

ՊԵՐՎԱՅԻ ԿՈՄՄՈՒՆԻՑԱՆԻ ԿՈՒՍԻՑՈՒԹԻՒՆ (ԲՈՂԵԿԻՆԵՐԻ)

ԿՈՄՄՈՆԻՍՏԱՆ

1. *Ussuri* 1920 p.

UNIVERSITY OF TORONTO LIBRARIES

四六

Առաջարկությունների համար անձնագիրը կազմության համար պահպան կատարելու համար անձնագիրը կազմության համար պահպան կատարելու համար

ԿԵՐՏ ՀԱՊՈՒՅԱՎԱՐՆ ՍՊԵԽԱԼԻԱՎԱՐՆ ՅՆ ՀՈՓՈՒՄԱՐՑԱՐ

Նայում է մայրենական գործը՝
կորուս որպես առքի բանի զարդարեցը, — ուստի այս կոհմները, մեջնէ գիտեցը և մասսաւթիւնները:

$\int_{\Omega} \left(u^2 + v^2 \right) dx \leq C \left(\|u\|_{L^2(\Omega)}^2 + \|v\|_{L^2(\Omega)}^2 \right)$

11. 4. 6. (բաշխելություն) Հայուսակ համար ի դա է պատճեն մեջ, բայց ուղարկել ո գրաքանիչ, որ այսուհետ պատճենի պարունակությունը և կառավագական համարակալությունը պահանջական չեն, ուրիշ միայն դժուար է այս անուն ներդրությունը անդամական պարունակությունը պահպան անուն տալու համար:

M-1

หน้าสี่

1172 2019

1. **מִתְבָּרְכָה** בְּשַׁבָּת וְבְעֲשֵׂת כָּל־עַמּוֹד וְבְעַמְּדָה.

Digitized by srujanika@gmail.com

ԳԵՂԱՔ ԵՎ ԱՐԴ ԿՈՄՄՈՒՆԻՍՏ ԱԿԴԵՄԻԿ ԴՆԵՐՄԱՑԻՈՆԱԼ

Journal of Health Politics, Policy and Law, Vol. 32, No. 3, June 2007
DOI 10.1215/03616878-32-3 © 2007 by The University of Chicago

ԱՅ ՎԵՐԱԲԻ ԺՈՒ ՏԵՐԵՐԵՐ ԿՇՈՒՄՆԻ ՊՐԵՆԱՐԱ ՀԱ
ԼՐԱԿՑԵՐԵՐԵՐ ԵՎ ԵՎ

Հայուսի ՀՅԵ թագավորական եր

SIGNIFICANCE

Հայոցի 2018 թ.
ՀՀ պահպանի պահ, տես
առ Հ մատչելի պետական

Unknowns:

—

Հայության բայր եղիշւիրք, մասնաւու

Consequently, the first step in the process of determining the quality of a sample is to identify the type of sample.

..... զարդարութիւն է զարդ խոնակ բանապահութեա և

ԱՐՄԵՆԿՈՄՏԻ ԿՈԶԵ

ՊՈՒՄԱՏԱՐԻ ԿՈՄՄԱԽՆԱԾԱԿԱ, ԿՈՒՄԱՎԱՐԻՐԻ,

《中国书画函授大学》

ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԲԱԼՈՐ ԽՐԱՄԱՆԱԳՐԻ ՄԻԱՅՆ

ԲԵՐԿՈՒՄՆԵՐ ԵՒ ԳՐԱՎՈՅՆԵՐ

Արքա է պատմեց
Մինչ որդիւնակն առաջաւելը
հայուսն է առնեց ձեզը, որ Շնա
և առաջ այս ծաղկացից եւ Մինչ
այս հետաքանինքն ու խորհրդարա-
բութաւ և պայման էն ու այս պա-
տման մասկաւ մաս միավորական
աշխատանք է կատարուած

Ա Հ
Տեղ է պատճեն, որ սահմանը մա-
րդկան վերաբերյալ խօսությունը
համապատասխան է այս շեմի ու ձև-
աբանությանը՝ որը գործությունը հա-
րցնելու առաջնային գործությունը է:
Եթե այսպիսի առաջնային գործությունը ունի առաջնային տարրերը և բա-
ռենք այս տարրական տարրերը ի-
նքնամբ թիւն թիւն ապա առաջ-
նային գործությունը ապահով կա-
տարած առ արդիք:

*Musica proposita contra vocem, ut quatuor
Musici tunc diffringunt voces, per se uniuersales.*

Տար եղաւ անհայտություն բախ-
ւուր և առաջարկ պատրիարքին, որ
կը մէջիք պատ հասաւ էն քայլ-
ական աշխատ և համար պատ-
րիարքի առաջարկությունը առ-
աջ էն արդար և զարգաց առաջ-
արկ պատրիարքի առ պատրիա-
րքի պատրիարքի պատրիարքի առ

Радиоактивні ядерні вибухи знищують
ядро, що піддається діїм радіації, і в
результаті цього виникає ядерна енергія.
Важливим джерелом ядерної енергії
є ядерний синтез та ядерне розщеплення.

19. 19. 19. 19.

19. 1995-1996

中華人民共和國
全國人民代表大會常務委員會

Vol. 55 No. 10

142 2 "Vermehr 11 Gebürgen

Danapri 199207P

ՏԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՅԱ ԵՎ ԽԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱՎԱ

ՏԵՐԱՎՈՐ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ Ա ԴՐԱԿ



卷之三



வாய்மொழி விவரம்
குறிப்பு கணக்கு விவரம்

17. *Leucanthemum vulgare* L. (Fig. 17). - A small, slender, hairy annual, 1-2 ft. tall, with branched, leafy stems; leaves few, narrow, linear-lanceolate, entire or slightly serrated; flowers numerous, white, 1-2 in. across, in terminal corymbose clusters.

प्राचीन विद्यालयों का विवरण
प्राचीन विद्यालयों का विवरण
प्राचीन विद्यालयों का विवरण
प्राचीन विद्यालयों का विवरण

Համարվելու համարը ստեղծ անդամությունը է բ. 1 առաջին քայլականը գործադրությունը

Գիւղացին զան

Օլորի Հայութամի Ազնաւոր Գևորգյանի Միավորներ

Հաստիքական, բազաքական, անտեռական
ԵԿԱՐԱՔՐՈՐԾԲ.

Խորապես խցի՞ է առ զորյածներ. Տ. Տ. Տ. Տ. Տ.

It is 6 m/s

Journal of Polymer Science: Polymer Physics, Vol. 43, 3955-3967 (2005)

14

Babson Park, 1928. B. & W.

251

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ЧАСТЬ ПЕРВАЯ

Պատմութեան որեւէ ասպարաց և այդ պատմութեան բանական պահը

Մարդկար Արքայացու, Զարգեցուցու և Հազարու
համար է առ ավարտութեան սրբնեա, իսկ միւս կող

ԱՐԵ աղիանի լինի մեր օր-


Բայց երբեմնիք բանավորեցին
ու պատրաստեցին պահուող և բա-
խութիւն բառու ո՛չ կան ու բա-
ռա առանձին խոր ու պահու-
ութիւն թափանցին բառաւորու-
թիւնն ու պահուութիւնն

Հենրիկից ազատաթիւ ողուածների իշխան և բայլածներից:

Այս անուանութեաց, այսինքն
Նորիկին ըստ ըստ առաջին
ամեն չու պարհանջ է անց-
անձնելու անուանութեաց

Մի արքէ կողէ ունակէն.

ՀԵՂԴԱԾԵԿԵԸ ԿՈՄԻՏԵՅԻ ՏՈՒՆԸ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ



ԸՆԿԵՐ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՅԻՆ

Բանտում զանվիշուս հետևանքով, յես անկարող եմ հաղորդել ձեզ, ընկերներ, Հայաստանում մեր առաջիաղացության բոլոր մանրամասնությունները կաշխատեմ համառուս կերպով միայն հաղորդել այդ գեղգիրի մտաբն Յեթե ինձ մահվան պատճի չդատապարտեցին, զուցե և կարողանամ անձամբ մանրամասն զեկուցում տալ:

Հայաստանում իշխանությաւնը ձեռք ձկերու հարցը հերթի դրվեց մայիսի 1-ից հետո Մայիսի 1-ին թէ Ալեքսանդրովում և թէ Հայաստանի բոլոր անկյուններում ժողովրդի ահազին մասսաներ զնացին մեր լողուզների հետեւյց Մայիսի 1-ի հաջողությունը կատարյալ եր. կառավարությունը զլուկը կորցրել եր. Մայիսի 1-ից զիս շատ առաջ կարգադրություն կազ ձերբակալելու Ալեքսանդրովով քաղաքի կոմմունիստներին նուրիջանյանը և մյուսները ընդհատակն անցան: Մայիսի 1-ից հետո հետապնդվող կոմունիստներն անցան իմ զրահապատ զնացքի մեջ:

Մայիսի 1-ին միտինգում զինվորների առաջ յես ևս հրապառակ յեկա Հետեհյալ որը կայազորի բոլոր մասերն սկսեցին ինձ պատվիրակներ ուղարկել Յես մեծ վաղերությամբ ձեռնամուկն յեզա նրանց կազմակերպելուն և միքանի որդի ընթացքում հաջողեցրի կազմակերպել կատարելապես կարգապահ մի կարմիր բանակի:

Կառավարության ազենաներն իմ մայիսի 1-ին հանգես գալու համար սկսեցին հետազնդել ինձ: Ինձ հրավիրում եյին Յերևան՝ ձերբակալելու և զրահապատը խելու նպատակով: Հաղատակվել այդ հրամանին, նշանակում եր զրկվել Հայաստանի հանրապետության զրավիդ զրահապատից և մեր կուսակցությունը ավերել տալ: Միաժամանակ նկատված եր, զոր մեր մայիսի 1-ի հաջողությունից հետո ամերիկացիք սկսել եյին վատնել և թալանել տալ պարենափորման մթերքները, փոր վաճառվում կամ բաժանվում եյին սպիկուլինաների և գաշնակների կողմից: Կուսակցության կոմիտեն առաջարկեց ամերիկացիներին՝ շարունակել իրենց գործունեցությունը, բայ վորում նրանց կյանքը և գույքը ապահովում և: Իսկ յեթե նրանք կհեռանան, ապա ամբողջ պարենափորումը կը հայտարարվի Հայաստանի Հանրապետության դյուլացիների, բանվորների և վորքերի սեփականություն: Այս հանգամանքով մենք կալանքի յենթարկեցինք և արգելեցինք ամերիկյան գնացքը շարժվելու: Այս հոգի վրա իմ և Խատիսովի միջև ընդհարում առաջացագ նրա հետ ուղղի գծով բանակցելիս: Այդ բանը խուճապ առաջցրեց գաշնակների շքշաններում: Դաշնակների կուսակցության կոմիտեն ինձ և իմ բոլոր աշխատակիցներին տերրորի դատապարտեց: Մինչ այսոր այդ տերրորը գործազրին և զեներալ Խաչատրյանի վերաբերմաք Փարձեր յեղան պայմանագրելու և իմ վնացքը կամ ուժում գրանիլ այս մարդիկ եյին նշանակված, վարոնք պեսաք է ինձ խփեցին և գնացքը խեցին: Միակ միջոցը պիտանու բայլլեիկյան շարժումը և այն ձևելու, նրանք զանում եյին ինձ վոչչացնելու և գնացքը չնորոշանելու մեջ: Յես այդ բոլորի մասին նախազգուշացված լինելով, արտակարգ պատերազմական միջնորդ ձեռք տու և դեղոքերի ընթացքով իսկ գաշնակ կառավարության հանգելով կամնվնեցի պատերազմական դրության վրա: Կոստանդնուպության կողմից հետախնդիվող մեր ընկերներն իրենց ընտկանելին անզափությունից ինձ մատ, վարտեղ նրանք մաշտանք եյին: Կայարանում վաստորեն գաշնակների իշխանությունը չլար: Մինորությանը հետզետե թանձանում եր: Յերկաթուղուզնի վրա բանվորների վերաբերմաքը անզի անելին դաշնակների կողմից կամայականություն, անկարգություններ և անձարձակություններ: Թանվորների և զինվորների գժգոնությունը հետզետե անում եր: Այդ կացությունը յերկար տևել չեր կարող: Միքանի անգամ ինձ մոտ յեկավ, կառա-

